

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԽՍՀՄ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, ՄԵՎՃՈՎՅԱՆ
ՆԵՐՈՒՑՆԵՐԻ ԽՍԴԻՒՐԸ
ԵՎ ԴԱՇՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1945-1947 ԹԹ.)

✓

ՆՎԻՐՈՒՄ ԵՍՀԱՅՐԻԿԻՄ
ՖԵԼԻՔՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
ՀԻՇԱՍՈՎԻ

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԺԿԲ կուսակցությունը
պարզուել պարզությունը
Տ. ՀԵՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

06.09.2013 ԺԿԲ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

ОТНОШЕНИЯ МЕЖДУ СССР И ТУРЦИЕЙ:
АРМЯНСКИЙ ВОПРОС, ПРОБЛЕМА ЧЕРНОМОРСКИХ
ПРОЛИВОВ И СОЮЗНЫЕ ГОСУДАРСТВА
(1945–1947 ГГ.)

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

CHRISTINE MELKONYAN

RELATIONS BETWEEN THE USSR AND TURKEY:
THE ARMENIAN QUESTION, PROBLEM OF THE BLACK
SEA PASSAGES AND ALLIES
(1945–1947)

ЕРЕВАН YEREVAN
2013


977.0 + 956.0 = 947.925

981935

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՏԻՏՈՒՅ

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼքՈՆՅԱՆ

A98967
ԽՍՀՄ - ԹՈՒՐՔԻԱ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, ՍԵՎԾՈՎՅԱՆ
ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ
ԵՎ ԴԱՇՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1945-1947 թթ.)



ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՏԴ 93/99

ԳՄԴ 63.3

Ս 537

Տպագրվում է

*ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ*

Պատասխանատու խմբագիրներ՝

Մանվել Զուլայյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիայի թղթակից

*Ուսուցեած Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիայի թղթակից
անդամ*

Մելքոնյան Քրիստինե

Ս 537 ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հար-
ցը, սևովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պե-
տությունները (1945–1947 թթ.) / Ք. Մելքոնյան. – Եր.,
Հեղինակային հրատարակություն, 2013. – 249 էջ:

Մենագրության մեջ քննարկվում է 1945–1947 թվականներին խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամը: Լուսաբանվում են Հայկական հարցի և սևովյան նեղուցների խնդրի շուրջ ծավալված գործընթացները, ինչպես նաև դրանցում ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի որդեգրած քաղաքականությունը: Մանրամասն ներկայացվում է Հայկական հարցի լուծման ուղղությամբ Հայոց եկե-
ղեցու և Սփյուռքի ծավալած գործողությունները:

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն հան-
րության համար:

ՀՏԴ 93/99

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-0-0794-6

© Մելքոնյան Քրիստինե, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIX-XX դդ. ոռւս-թուրքական և խորհրդա-թուրքական հարաբերությունները սերտորեն միահյուսված են հայոց պատմության հետ: Ռուսական ցարիզմի հայկական քաղաքականությունն աննշան փոխակերպումներով շարունակել է Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, որի գործելակերպում որոշակիորեն նկատվել է հակահայկականություն: Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ու Անդրկովկասի երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև (ՌԽՖՍՀ մասնակցությամբ) 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված պայմանագրերը ամրագրեցին և վավերացրեցին հայկական տարածքների կորուստը: Թուրքիային հանձնվեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Կաղզվանի, Արդահանի, Օյթիի օկրուգները և ուրիշ տարածքները: Խորհրդա-թուրքական 1921 թ. Պայմանագրերից հետո, գլեթե քառորդ դար Հայկական հարցը դուրս մնաց դիվանագիտական քննարկումներից: Այն, սևծովյան նեղուցների խնդրի հետ համատեղ, կրկին օրակարգում հայտնեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945 թ.:

Հատկանշական է, որ 1945 թ. Խորհրդային Միությունն առաջին անգամ էր հանդես գալիս հայկական հողերի պահանջատիրոջ դերում. այդ տարիների համար դա անշափ կարևոր իրողություն է, քանզի սփյուռքահայերից բացի ԽՍՀՄ-ի նման գերտերությունը Թուրքիայից տարածքներ պահանջելով՝ միջազգային հանրության ուշադրությունն էր հրավիրում Հայկական հարցի վրա: Հարկ է նկատել, որ Մոսկվան գործում էր զգուշորեն՝ բացեիբաց չարտահայտելով

իր հետաքրքրությունները, Անկարայի առջև դրված հողերի վերադարձման պահանջը ներկայացնում էր նախ Խորհրդային Հայաստանի, ապա նաև Խորհրդային Վրաստանի անունից: Այդ պահանջի համաձայն՝ Թուրքիան պետք է իր տարածքի մոտ 20%-ը հանձններ ԽՍՀՄ-ին, ինչը մեծ հարված և կորուստ էր լինելու թուրքերի համար: Այս կերպ ԽՍՀՄ-ը, բարձրացնելով հայկական տարածքների վերամիավորման հարցը, մի կողմից հիշեցնում էր Թուրքիային, որ Հայկական հարցը մոռացված չէ, մյուս կողմից էլ հնարավորություն էր ստանում վերականգնել մինչև 1914 թ. ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև եղած սահմանը:

Առաջ քաշելով սեծովյան նեղուցների վերահսկման հարցը՝ խորհրդային դիվանագետները փորձում էին իրականացնել «տաք ծովեր» դուրս զայռու ոռուսական դարավոր երազանքը: Թուրքիայի վրա ԽՍՀՄ-ի դիվանագիտական «հարձակման» դրդապատճառը, երկրի սահմանային անվտանգության ապահովման անհրաժեշտությունն էր. վերահսկելով Սև ծովը՝ ԽՍՀՄ-ը կարող էր իրեն ավելի ապահով զգալ Արևմուտքից: Նկատենք, որ ԽՍՀՄ-ի վլուգումից հետո թեավետ փոխվել է աշխարհաքաղաքական իրավիճակը, սակայն գերտերությունների միջև շարունակվում է այս տարածաշրջանի համար պայքարը:

* * *

1945 թ. միջազգային ասպարեզում հայկական տարածքների շուրջ սկսված գործընթացը Հայկական հարցի նորագույն շրջանի պատմության կարևոր իրադարձություններից է, որն ունի բազում մութ էջեր: Նկատենք, որ շուրջ կես դար խորհրդային պատմաբանների կողմից ինչ-ինչ նկատառումներով այն մոռացության է մատնվել, իսկ թուրք և արևմտյան

հեղինակներն էլ սահմանափակվել են մեկ-երկու նախադասությամբ՝ գրելով, թե ԽՍՀՄ-ը Թուրքիայից պահանջել է Կարսն ու Արդահանը: Թեման հիմնականում շոշափվել է սփյուռքահայերի աշխատություններում, սակայն դա բավարար չէ իրադարձությունների իրական պատկերը Վերականգնելու համար, քանզի դրանք միակողմանի են ներկայացվում, տրվում է այդ ուղղությամբ միայն 1945–1947 թթ. Սփյուռքում ծավալված աշխատանքը: Վերջին տասնամյակներում փորձ է արվում լրացնել այդ բացը: Ուսումնասիրվող հարցին առնչվող գրականության մեջ, կարծում ենք, ուշագրավ է պատմական գիտությունների դոկտոր Ա. Վիրակոսյանի խմբագրությամբ իրատարակված «Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները դիվանագիտական փաստաթղթերում 1945–1946 թթ.» փաստաթղթերի ժողովածուն¹:

Թեմայի գիտական մշակման համար բացառիկ կարևորություն ունեն արխիվային նյութերը, որոնք նոր լույս են սփյուռք իմանահարցի բազմաթիվ կողմերի վրա: Ուսումնասիրության համար իբրև սկզբնադրյուր է ծառայել Հայաստանի ազգային արխիվում պահվող՝ 1945 թ. Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած հայկական հոդային պահանջատիրության շուրջ Խորհրդային Հայաստանի կառավարությունում ընթացած քննարկումներին Վերաբերող փաստաթղթերը և սփյուռքահայերի խնդրագիր նամակները, որոնք ուղղված էին ԽՍՀՄ-ի, Խորհրդային Հայաստանի, Մեծ տերությունների ու միջազգային կազմակերպությունների դեկավարներին²: Մենագրության մեջ օգտագործվել են 1945–1947 թթ. Ամերիկահայ ազգային խորհրդի պատրաստած և միջազգային կազմակերպություններին ներկայացրած Հայկական հարցին վերաբերող

¹ Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945–1946 гг. // Под редакцией Армана Киракосяна, Еր., 2010.

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1, 28, 326, 409, 454 և 823:

հուշագրերը³, որոնցում անդրադարձ է կատարվում հայ ժողովրդի պատմության էջերին, ապա կոչ է արվում բավարարել խորհրդային կառավարության առաջ բաշած հողերի վերադարձման պահանջը: Այս հուշագրերը վկայում են, որ այդ տարիների Հայկական հարցը քննարկվել է Մեծ տերությունների միջև կայացած միջազգային բոլոր հանդիպումներում:

Աշխատության մեջ տեղ են գտել նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում պահպող 1946–1947 թթ. Թուրքական մամուլի տեսությանը վերաբերող արխիվային նյութերը⁴, որոնցում հանգամանորեն ներկայացված են խորհրդա-թուրքական հարաբերությունների, հատկապես սևծովյան նեղուցների ու տարածքային պահանջատիրության վերաբերյալ այդ տարիների թուրքական պարբերականների արած վերլուծությունները՝ արտահայտելով ինչպես պաշտոնական Անկարայի, այնպես էլ Լոնդոնի և Վաշինգտոնի դիրքորոշումները: Դրանք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այս խնդիրների վերաբերյալ Թուրքիայի մոտեցումների մասին:

Օգտագործված փաստաթղթերից հատկապես կարևորում ենք Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության՝ Հայկական հարցին վերաբերող արխիվային փաստաթղթերի ժողովածուն:⁵ Այն պարունակում է 1945 թ. Խորհրդային Հայա-

³ Armenian National Council of America, A Memorandum Relating to the Armenian Question, New York, April, 1945; The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, New York, June 4, 1945; The Armenian Cause, New York, 1945, 4 p.; Text of Memorandum to the Big Three in Session in Potsdam, Germany, New York, July 17, 1945 և այլն:

⁴ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы.

⁵ Burdett A., Armenia, Political and Ethnic Boundaries, 1875–1948, London, 1998.

տանի և Խորհրդային Վրաստանի կողմից Թուրքիային ներկայացված տարածքային պահանջատիրության առնչությամբ Անգլիայի արտաքին գերատեսչության կատարած ուսումնասիրությունները և դրանց հիման վրա պատրաստած զեկույցները: Դրանք վկայում են, որ Լոնդոնի ուշադրության կենտրոնում է եղել այս խնդիրը և ակնդետ հետևել է Անկարայի ու Սոսկայի քայլերին՝ միջոցներ փնտրելով Թուրքիայի տարածքային մասնատումը կանխելու համար: Նկատենք, որ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության արխիվում պահպող Հայկական հարցին վերաբերող այդ տարիների որոշ փաստաթղթեր իրենց աշխատություններում հրապարակել են Զ. Մարքսանը⁶, Յու. Բարսեղովը⁷ և Ա. Կիրակոսյանը: Նրանց ուսումնասիրությունները կարենու նշանակություն ունեն հատկապես 1945 թ. հայկական հողային պահանջատիրության հարցի հետազոտության համար:

Թեմայի ուսումնասիրման համար նշանակալից են ԱՍՍ-ի արտաքին հարաբերություններին վերաբերող 1945–1947 թթ. փաստաթղթերի ժողովածուները, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տարիների Միացյալ Նահանգների դիվանագիտական փաստաթղթերի հետ⁸:

⁶ Զ. Մարքսան, Արևմտահայ բռնագրաված հոդերու հարցը, 1921–1971, Պեյրութ, 1971: Նույնի՝ ԱՍՍ-ի արտաքին քաղաքականությունը և Հայկական հարցը (1900–1976). – «Հայկացյան հայագիտական հանդես», Պեյրութ, 1977: Նույնի՝ Հայկական հարցի մասին, Պեյրութ, 1978: Նույնի՝ Մեծ Բրիտանիա և Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի անունով 1945-ին կատարուած հողային պահանջը. – «Հայկացյան հայագիտական հանդես», Պեյրութ, 1998:

⁷ Ю. Барсегов, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. II, М., 2005.

⁸ Foreign relations of the United States diplomatic papers, (այսուհետ՝ FRUS).

Աշխատության մեջ բերված են նաև նյութեր Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության արխիվից⁹, Ռուսաստանի Դաշնության հետախուզական ծառայության արխիվային փաստաթղթերի ժողովածուից¹⁰: Վերջինում տեղ գտած նյութերը ցույց են տալիս, որ 1945 թ. սկզբներից մինչև պատերազմի ավարտը խորհրդային հետախուզական ծառայությունների ձեռք բերած արտասահմանյան զաղտնի զեկուցներում արդեն կանխատեսվում էր խորհրդա-թուրքական հարաբերությունների զարգացման նման ընթացքը, վկայում են, որ Լոնդոնը և Վաշինգտոնը տեղյակ էին Մոսկվայի ու Անկարայի միջև սպասվող հակամարտության մասին: Ի դեպ, նկատենք, որ աշխատությունը շարադրելիս հանդիպել ենք դժվարությունների նախնառաջ Մոսկվայի արխիվներում պահվող վավերագրերից օգտվել չկարողանալու պատճառով, քանի որ թեմայի համակողմանի լրացքանաման համար բացառիկ կարևորություն ունեցող այդ փաստաթղթերի մի մասի վրայից մինչ օրս չի հանվել զադունխության կնիքը, ինչի հետևանքով մի շարք հարցեր մեզ համար մնացել են չբացահայտված:

1945–1947 թթ. Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած հոդային պահանջասիրության հարցին հայ պատմաբաններից անդրադարձել են Ա. Վիրաբյանը¹¹, Ռ. Կորխմանավանը¹²,

⁹ Архив внешней политики Российской Федерации, ф. 06.

¹⁰ Служба Внешней Разведки Российской Федерации, Архив СВР России, Сборник документов (1935–1945), М., 2006.

¹¹ Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուժով, Հասարակա-քաղաքական կյանքը, 1945–1957թթ., Եր., 2001:

¹² Корхмазян Р., Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании. – Страны и народы Ближнего и Среднего Востока, Еր., 1999, №16.

Կ. Խաչատրյանը¹³ և Ռ. Սաֆրաստյանը¹⁴: Նրանց աշխատությունները պարունակում են փաստագրական և վերլուծական կարևոր նյութեր: Ա. Վիրաբյանն իր գրքում, օգտագործելով Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերը, ներկայացրել է Ստալինի դիրքորոշումը տարածքային հարցում, խնդրի լրիւման ուղղությամբ խորհրդային կողմից ձեռնարկած քայլերը, նաև անդրադարձել է սփյուռքահայերի գործունեությանը: Ռ. Կորխմազյանի հոդվածում մանրամասն վերլուծվել է Պոտսդամի խորհրդաժողովում ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիայի առջև դրված հողային պահանջատիրության հարցը, շրջանառության մեջ են դրվել խորհրդաժողովին վերաբերող մի շարք նոր անհայտ փաստաթղթեր:

Սևծովյան նեղուցների խնդրին անդրադարձել է Ա. Գասպարյանը¹⁵, որը մանրակրկիտ քննարկման է ենթարկել նեղուցների վերաբերյալ Մոսկվայի ու Անկարայի միջև փոխանակված հայտարարագրերը, նաև այս հարցում Վաշինգտոնի ու Լոնդոնի դիրքորոշումը:

¹³ Խաչատրյան Կ., Հայկական հարցը սառը պատերազմի սկզբին. – Հայոց պատմության հարցեր, Եր., 2001, պրակ. 2, էջ 126–131: ‘Նոյնի’ Армянский вопрос и армянская депатриация в 1945–1949 гг. (по материалам армянских архивов). – Вертикали истории, Тбилиси, 2003, №5, с. 106–115. Նոյնի’ Советско-турецкие отношения на начальном этапе холодной войны и Армянский вопрос (1945–1949 гг.). – Вестник РАУ, Еր., 2003, № 1, с. 50–57. Նոյնի’ Армянский вопрос и армянская депатриация в Советскую Армению в 1945–1949 гг. – Историческое пространство (Проблемы истории стран СНГ), М., 2007, №2, с. 124–133.

¹⁴ Սաֆրաստյան Ռ., Սովետական Միուրյունը և Հայկական հարցը. 1945–1947 թթ. – «Հայաստանի Հանրապետություն», 14.XII.1990:

¹⁵ Գասպարյան Ա., Սևծովյան նեղուցների խնդրիը սառը պատերազմի սկզբում. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2004, № 2:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն թուրք հեղինակներ Զ. Արջայուրեքի¹⁶, Դ. Ավշողլուի¹⁷, Ա. Դելիօրմանի¹⁸, Ֆ. Էրքինի¹⁹, Թ. Ունալի²⁰ աշխատությունները, որոնցում պատմական մի շարք փաստեր և իրողություններ միակողմանի են ներկայացվում կամ ուղղակի խեղաթյուրվում են՝ հօգուտ Թուրքիայի շահերի: Դրանցում հիմնականում արտահայտվում է պաշտոնական Անկարայի տեսակետը, ըստ որի՝ Սոսկվան բացահայտորեն մեղադրվում է իր երկրի տարածքները մեծացնելու փորձի համար: Այդ հեղինակների մի մասն ակնարկում է, որ եթե ԱՍՄ-ը չմիջամտեր, ապա ԽՍՀՄ-ը կիրականացներ խորհրդա-թուրքական սահմանի ընդարձակման իր ծրագրերը: Մասնավորապես, Զ. Արջայուրեքի հրատարակած փաստաթորերի ժողովածուն բաղկացած է ԱՍՄ-ի և Մեծ Բրիտանիայի դեսպանատների 1939-1950 թթ. գեկուցազրերից, որոնցում գնահատականներ են տրված ինչպես Երկրորդ համաշխարհյան պատերազմի տարիներին Թուրքիայի վարած քաղաքականությանը, այնպես էլ հետպատերազմյան շրջանում խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած զգնաժամին՝ կապված սեծովյան նեղուցների վերահսկման և հայկական հողային պահանջի հետ: Թուրք հեղինակը չի հերքել տարածքների խնդրի պաշտոնական պահանջը, սահմանափակվել է միայն փաստաթյուրեր ներկայացնելով և որոշակի ենթատերսով հասկացրել, որ ԽՍՀՄ-ի ծրագրերի ձախողմանը նպաստել է Վաշինգտոնը:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում ԱՍՄ-ի խաղացած «փրկչի» դերը կասկածի տակ են դնում թուրք պատմաբաններ Դ. Ավշողլուն և Ա. Շյուրբուն: Առաջինը՝

¹⁶ Arcayürek C., Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, 1987.

¹⁷ Avcioglu D., Milli Kurtuluş Tarihi, Üçüncü kitap, İstanbul, 1974.

¹⁸ Deliorman A., Türkler Karşı Ermeni Komitecileri, İstanbul, 1973.

¹⁹ Erkin F., Türk-Sovyet ilişkileri ve Boğazlar, Ankara, 1968.

²⁰ Ünal T., 1700 den 1958 e Kadar Türk Siyasi Tarih, Ankara, 1958.

«Ազգային ազատազրության պատմություն» աշխատությունում, երկրորդը՝ «Թուրքիայի փրկիչը Ամերիկան է» հոդվածում²¹ այն տեսակետն են զարգացրել, թե ԱՄՆ-ն պատրաստվում էր Թուրքիային միայն տնտեսական օգնություն ցույց տալ և պատերազմի դեպքում ԽՍՀՄ-ի դեմ հանդիման նրան թողնելու էին միայնակ, այլ կերպ ասած՝ այս հարցում ԱՄՆ-ի դերը չափազանցված է:

Հարկ է թուրք հեղինակներից նաև առանձնացնել Թ. Աթայովի²², Ֆ. Արմաօղլուի²³, Ա. Հալիլի²⁴, Ք. Օզթուրքի²⁵ աշխատությունները, որոնցում միակողմանիորեն է ներկայացվում արտաքին քաղաքականության մեջ Թուրքիայի որդեգրած հակախորհրդային ուղղվածությունը, ինչը հանգեցրել է Վաշինգտոն-Անկարա մերձեցմանը:

Այդքանիցից պատմաբաններն ել այսօր հանդես են գալիս Թուրքիայի դիրքորոշման պաշտպանությամբ և վերջինիս ներկայացնում են որպես զնի: «Իսպիֆ Ստալինի «քրդական ծրագիրը» հոդվածում Ա. Բագիրովը գրում է, թե հետպատերազմյան տարիներին Թուրքիային մեկ քայլ էր բաժանում պատերազմից և միայն Ստալինի մահն է փրկել դրանից: Ավելին, իշխանության եկած Ն. Խրուչչովն անձամբ է ներդություն խնդրել Սովորայում Թուրքիայի դեսպանից «ստալինյան անարդարության» համար²⁶: Իսկ Զ. Հասանլըն իր

²¹ «Ulus», (İstanbul), 23. IV. 1975.

²² Ataöv T., Turkish Foreign Policy, Ankara, 1965; Նույնի՝ ССА, НАТО и Турция, М., 1973.

²³ Armaoğlu F., Belgelerle Türk-Amerikan Münasebetleri, Ankara, 1991.

²⁴ Halil A., Atatürkçü dış politika ve NATO ve Türkiye, İstanbul, 1968.

²⁵ Öztürk K., Türkiye Cumhuriyeti hükümetleri ve programları, İstanbul, 1968; Նույնի՝ Cumhurbaşkanlarının Türkiye Büyük Millet meclisinin açış nutukları, İstanbul, 1969.

²⁶ Багиров А., «Курдский проект» Иосифа Сталина. В конце 1945 года СССР был в одном шаге от войны с Турцией. Аналитический интернет-журнал РПМонитор, http://www.rpmonitor.ru/ru/detail_m.php?ID=6605, 2007.

գրքում փորձում է ապացուցել, թե ինչպես է ԽՍՀՄ-ի կառավարությունը, հեղինակի որակմամբ, «քարեկամական Թուրքիայի» նկատմամբ թշնամանք սերմանել խորհրդային միլիոնավոր քաղաքացիների գիտակցության մեջ: Գրքի երկու գլուխները վերաբերում են Հարավային Կովկասում ընթացած «Այարդերի պատերազմին»: Ըստ աշխատության հեղինակի՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում խորհրդային մամուլում «Թուրքիա» և «թշնամի» բառերը դարձել են հոմանիշ և հիմք են հանդիսացել սառը պատերազմի համար: Հասանլըն խորհրդա-թուրքական հակամարտության ողջ մեղքը վերաբերում է ԽՍՀՄ-ի առաջնորդ Ի. Ստալինին, ակնարկելով, որ վերջինիս խաղին ակտիվորեն մասնակցել են պաշտոնական Երևանը և սփյուռքահայությունը: Աղրբեջանական կողմի զնահատմամբ՝ հայերը ցանկացել են ստեղծված իրավիճակն օգտագործել ի նպաստ իրենց՝ Թուրքիայի հաշվին ընդարձակելով խորհրդային Հայաստանի տարածքը²⁷:

Ինչ վերաբերում է խորհրդային հեղինակներին²⁸, ապա վերջիններս խուսափել են մանրամասն ներկայացնել խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ձգնաժամը՝ բավարարվելով միայն այն հայտարարությամբ, թե Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԽՍՀՄ-ը հրաժարվել է երկարաձգել 1925 թ. Փարիզում կնքված խորհրդա-թուրքական պայմանագիրը՝ պնդելով, թե նոր փաստաթուղթը պետք

²⁷ Гасанлы Дж., СССР-Турция: от нейтралитета к холодной войне. 1939–1953, М., 2008.

²⁸ Алексеев В., Керимов М., Внешняя политика Турции, М., 1961; Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, т. I, М., 1946; Исаелян В., Дипломатия в годы войны (1941–1945), М., 1985; История международных отношений и внешней политики СССР, 1917–1963 гг., т. II, 1939–1945, М., 1962; Кузнецова С., У становление советско-турецких отношений, М., 1961; СССР и Турция, 1917–1979, М., 1981; Поцхверия Б., Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976.

Է համապատասխանի երկրի նոր կարգավիճակին: Խորհրդային հեղինակների²⁹ մեծ մասն անդրադարձել է սևծովյան նեղուցների վերահսկման շուրջ ծավալված նոտաների փոխանակման գործընթացին, սակայն երբեք չի խոսել ԽՍՀՄ-ի տարածքային պահանջների, այն է՝ Կարսի ու Արդահանի մասին:

Միայն վերջին տասնամյակում է, որ 1945 թ. Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած հայկական տարածքների պահանջատիրության հարցը սկսել է ակտիվորեն արձարձվել և՛ ոռու, և՛ հայ պատմաբանների շրջանում: Այսպես, Ա. Բալիկը «Մեծ Հայաստանի» մասին երազանքը՝ հոդվածում³⁰ գրում է, թե Ստալինը 1945–1948 թթ. պատրաստվում էր Թուրքիայից խլել հայկական տարածքները: Նա, հիմնվելով 1945 թ. հուլիսին ԽՍՀՄ-ի արտգործնախարարության պատրաստած փաստաթղթի վրա, նկատում է, թե Թուրքիան պարտավոր էր վերադարձնել 26000 կմ² տարածք, որից Հայաստանին նախատեսված էր միացնել 20500 կմ², իսկ Վրաստանին՝ 5500 կմ²: Ի տարբերություն որոշ պատմաբանների՝ Բալիկն այն կարծիքին է, որ այդ ծրագրերի իրականացմանը խոչընդոտել է «սառը պատերազմի» հանգամանքը, և արդեն 1949 թ. Գործընթացը կասեցվել էր:

Վ. Բատյուկի, Դ. Եվստաֆիևի, Ս. Վայսի, Ն. Եգորովայի, Ն. Կոչկինի, Վ. Դանիլովի, Վ. Պեշտանովի, Ա. Ռադիոնովի և

²⁹ Базилевич К., О Черноморских проливах, М., 1946; Бараболя П., Иванщенко Л., Колесник Д., Международно-правовой режим важнейших проливов и каналов, М., 1965; Бараболя П., Современное международное морское право, М., 1984; Дранов Б., Черноморские проливы, М., 1948.

³⁰ Балиев А., Мечта о «Великой Армении». В 1945–1948 годах Сталин готовился отобрать у Турции армянские земли, Аналитический интернет-журнал РПМонитор, http://www.rpmonitor.ru/ru/detail_m.php?ID=9766, 2008.

այլ հեղինակների աշխատություններն³¹ ավելի հստակ պատկերացում են տպիս հետպատերազմյան շրջանի միջազգային իրավիճակի մասին: Անդրադարձ է կատարվել ոչ միայն 1945–1947 թթ. Թուրքիայի հարցում ԱՍԴ-ի և ԽՍՀՄ-ի շահերի բախմանը, այլև մատնանշվել է, որ խորհրդա-թուրքական հակամարտությունը կանխորոշիչ դեր է խաղացել ԱՍԴ-Թուրքիա մերձեցմանը՝ ակնարկելով, թե Անկարայի իրավունքները պաշտպանելով՝ Վաշիգոնն ամրապնդում էր իր դիրքերն այս տարածաշրջանում:

Աշխատության մեջ օգտագործվել է Երկրորդ համաշխարհային պատերազմին և խորհրդա-թուրքական հարաբերություններին վերաբերող տարբեր երկրներում հրատարակված մեծաքանակ գրականություն, որուելով բացահայտորեն ներկայացվում են պատերազմի տարիներին չեզոքության քողի տակ Անկարայի վարած հակախորհրդային քաղաքականությունը և այդ հարցում ԱՍԴ-ի ու Մեծ Բրիտանիայի պահվածքը³²:

³¹ Батюк В., Евстафьев Д., Первые заморозки. Советско-американские отношения в 1945–1950 гг., М., 1995; Ваисс М., Международные отношения после 1945 года, М., 2005; Егорова Н., «Иранский кризис» 1945–1946 гг.: взгляд из российских архивов. Холодная война. Новые подходы, новые документы. М., 1995; Кочкин Н., СССР, Англия, США и «Турецкий кризис» 1945–1947 гг. – Новая и новейшая история (այսուհետև՝ НИНИ), 2002, № 3; Данилов В., Турция после Второй мировой войны: демократический Эксперимент продолжается. – Восток, 1998, № 4; Печатнов В., От Союза к холодной войне. Советско-американские отношения 1945–1947 гг., М., 2006; Родионов А., Записки посла СССР в Турции 1974–1983 гг. – НИНИ, 1999, № 1; Российско-турецкие отношения: история, современное состояние и перспективы, М., 2003.


³² Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, М., 1946; Вторая Мировая война, М., 1966; Гречко А., Битва за Кавказ, М., 1973; Эрман Дж., Большая стратегия, М. 1967; Документы

Մենագրության մեջ օգտագործվել են նաև սփյուռքահայ հեղինակների ուսումնասիրությունները: Այսպես, Գ. Ահարոնյանը, Հ. Աղպաշյանը, Ա. Անդրեասյանը, Ա. Դարբինյանը, Յու. Զաքարյանը, Գ. Լազյանը, Լ. Կյուրելյանը, Հ. Ղազարյանը, Ս. Մխիթարյանը, Վ. Նավասարդյանը, Մ. Սերոբյանը, Զ. Վրթանեսը, Ս. Աղամյանն առնչվող իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են Հայկական հարցին³³: Նրանք

Հ 9896 Հ

министерства иностранных дел Германии, вып. II, Германская политика Турции (1941–1943), М., 1946; История Великой Отечественной войны Советского Союза 1941–1945 гг., М., 1960; История II Мировой войны (1939–45), М., 1979; Корхмазян Р., Турецко-германские отношения в годы Второй мировой войны, Ереван, 1977; Նույնի՝ К вопросу о позиции Турции во второй мировой войне (июнь–декабрь 1941). – Вестник общественных наук АН Арм. ССР (այսուհետ՝ ВОН), 1973, № 8; Лота В., Секретный фронт Генерального штаба, М., 2005; Переписка Председателя Совета Министров СССР с президентом США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941–1945 гг., М., 1976; Поцхверия Б., Турция между двумя мировыми войнами: Очерки внешней политики. М., 1992; Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, М., 1980; Churchill W., The Second World War, London, 1951; Kirk G., The Middle East in the War, London, 1953; Mendelssohn P., The Nuremberg Documents, London, 1946; Woodward L., British Foreign Policy in the Second World War, London, 1975; La politique Allemande (1941–1943). Documents secrets du ministère des affaires étrangères d'Allemagne, Turquie.

³³ Ահարոնյան Գ., Մեծ Երազի ճամբուն վրայ ..., Պէյրութ, 1964: Աղպաշյան Հ., Հայկական հարցը երեկ և այսօր, Պէյրութ, 1945: Դարբինյան Ա., Հայ ազատազրական շարժման օրերն, Փարփակ, 1947: Զաքարյան Յու., Կարս (պատմա-աշխարհագրական տեսությին), Երուսաղեմ, 1946: Լազյան Գ., Հայաստան եւ Հայ Դատը, Կահիրե, 1946: Նույնի՝ Հայաստան եւ Հայ Դատը հայ եւ ոուս յարաբերութիւններու լոյսին տակ, Կահիրե, 1957: Կյուրելյան Լ., Կարս և Արդահան, պատմական հավատիք և հայրենավանդ իրա-



հատկապես խոսել են հետպատերազմյան ժամանակաշրջանում Սևրի պայմանագրի համաձայն տարածքների վերադասավորման խնդրի վերստին արձարծման ու զարգացման ընթացքի մասին, այսինքն՝ Սփյուռքում ազգային խորհուրդների ստեղծմանը և դրանց գործունեությանը, Հայաստան ներգաղթի կազմակերպման գործում եկեղեցու և խորհուրդների ակտիվ մասնակցությանը, Համահայկական համաշխարհային կոնքրեսի հրավիրմանը: Այս աշխատություններում մասնավորապես առկա են փաստեր, որոնք պարզաբանում են Մեծ տերությունների դիրքորոշումը հայկական հողային պահանջատիրության հարցում:

Արևմտյան հեղինակներ Դ. Աշխոնի, Զ. Ալեքսանդրի, Օ. Քարոյեի, Դ. Դալինի, Դ. Բրինկըլի, Է. Վեր Հողջի, Պ. Կալվոկորեսիի, Չ. Հոստլերի, Զ. Հուրվիթսի, Գ. Քրիքի, Ա. Վայի Ֆերենսի, Լ. Ռաֆոնփորթի, Վ. Լեվիսի, Մ. Ստոֆի, Դ. Ռասելի, Ռ. Ֆրայի և այլոց աշխատությունները ևս կարևոր դեր են խաղում խնդրո առարկա թեմայի տարբեր ասպեկտների պարզաբանման գործում, հատկապես Մեծ տերությունների դիրքորոշումը³⁴ լուսաբանելիս: Մասնավորապես, այս աշխատու-

վունք, Վենետիկ, 1949: Ղազարյան Հ., Ուիլսնյան Հայաստանը, Բուտոն, 1945: Հայ ազգային դատը, Թուրքական Հայաստանի ազատագրմանը վերաբերող վավերաթղթեր, Փարիզ, 1946: Մխիթարյան Ս., Հայկական հարցը արխիվային պրայտումների վերլուծումներով, Փարիզ, 1968: Նավասարդյան Վ., Բոլշևիզմը և դաշնակցությունը, Կահիրե, 1949: Աերոբյան Ս., Մեր պայքարը հայ ազատագրության ուղինվ, Կահիրե, 1948: Վրթանես Չ., Հայկական հարցը այսօր, Նյու Յորք, 1945: Նոյնի՝ Հայկական հարցի պատմական ընթացքը, Նյու Յորք, 1946: Նոյնի՝ Armenia Reborn, New York, 1947: Նոյնի՝ The Armenian Question Today, New York, 1946. Atamian S., The Armenian Community, New York, 1955.

³⁴ Acheson D., Present at the Creation, My Years in the State Department, New York, 1969; Alexander G., The Prelude to the Truman Doctrine: British Policy in Greece, 1944–1947, New York, 1984; Caroe

թյուններում անդրադարձ է կատարվում ինչպես Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի թուրքանպաստ քաղաքականությանը, այնպես էլ նեղուցների և տարածքային պահանջատիրության խնդիրներին: Հարկ է նշել, սակայն, որ արևմտյան հեղինակների մեծ մասը նախընտրում էր չխոսել 1945 թ. ԽՍՀՄ-ի կողմից քարձրացված հայկական հողային պահանջատիրության մասին: Այսպէս, Դ. Աշխանը հստակորեն և օրենսդրիվ ընդգծում է հետպատերազմիան ժամանակաշրջանում Վաշինգտոնի թուրքամետ քաղաքականության իրական դրդապատճառները, հետապնդած շահերն ու ակնկալիքները: Նա չի թաքցնում, որ Սպիտակ տունը որոշել էր ամեն գնով ընդդիմանալ Անկարային ներկայացրած Մուսկվայի պահանջներին և այդ ուղղությամբ ձեռնարկել է լուրջ քայլեր: Իսկ, օրինակ, Է. Վեր Հոոդջին իր աշխատության մեջ մանրամասն անդրադարձել է միայն նեղուցների խնդրին, ինչ վերաբերում

O., Soviet Empier, The Turks of Central Asia and Stalinism, London, 1953; Dallin D., Soviet Russia and the Far East, New Haven, 1948; Brinkley D., Dean Acheson and the Making of U.S. Foreign Policy, New York, 1992; Vere Hodge E., Turkish Foreign Policy During 1918–1948, Geneva, 1950; Harcave S., Russia a History, Third Edition, Chicago, 1956; Hostler C., Turkism and the Soviets, London, 1957; Hurewitz J., Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record 1914–1956, New York, 1972; Kirk G., A Short History of the Middle East, London, 1948; Lavis T. and Frye R. The United States and Turkey and Iran, Cambridge, 1952; Rapoport L., Stalin's War Against the Jews: The Doctor's Plot and the Soviet Solution, New York, 1990; Russell D., Soviet-American Relations in Asia, 1945–1954, New York, 1981; Vali Ferenc A., The Turkish Straits and NATO, Stanfard, 1972; Stoff M., Oil, War, and American Security: The Search for a National Policy on Foreign Oil, 1941–1947, New York, 1980; Truman H., Memories by Harry Truman, Year of Decision, New York, 1965; Keylor W., The Twentieth Century World: An International History, London, 1992; Кальвокоресси П., Мировая политика после 1945 г., ч. 1, М., 2000.

Է ԽՍՀՄ-ի տարածքային պահանջին, ապա սահմանափակվել է տեղեկատվությամբ, որ 1945 թ. բարձրացվել է Կարսի և Արդահանի վերադարձման հարցը:

Աշխատության մեջ օգտագործվել են խորհրդային, թուրքական, սփյուռքահայ, անզլիական և ամերիկյան մամուլից քաղված նյութեր:

Գ Լ ՈՒ Խ Ի

ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքականությունը փոփոխական էր: Ըստ ամերիկյան արխիվներում պահպանված վավերագրերի՝ Թուրքիան, թեև պատերազմին չմասնակցեց, սակայն նրա դիվանագետների խաղը, այսպես կոչված, «վարագույրի հետևում», բավականին նկատելի էր¹: Սկզբնական շրջանում Թուրքիան աջակցում էր Անգլիային, այնուհետև ոչ բացահայտ անցավ Գերմանիայի կողմը: Միաժամանակ պատերազմի ողջ ընթացքում թե՛ Անգլիան, թե՛ Գերմանիան, թե՛ պետ անհաջող, փորձում էին Թուրքիային ներքաշել պատերազմի մեջ:

Պատերազմի տարիներին Անկարան նախընտրությունը տալիս էր հաղթող կողմին: Որոշ պատմաբաններ Թուրքիայի արտաքին այս քաղաքականությունն անվանում են «պաշտպանողական»²: Տնտեսապես և ռազմականորեն թույլ պետության համար նման քաղաքականությունը տրամաբանական էր: Անգլիան և ԱՄՆ-ն այն որակում էին որպես «հավատարմության վատ օրինակ»³: Իսկ եթե ավելի ստույգ լինենք, Թուրքիան այդ կերպ փորձում էր բարձացնել իր «զինը»: Այսինքն՝

¹ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 27.

² Նոյն տեղում:

³ Kirk G., A Short History of ..., p. 198.

որքան հնարավոր է «քանկ վաճառել իր հավատարմությունը»: Պահանջներ ներկայացնելով թե՝ Գերմանիային, թե՝ Անգլիային՝ նա սպասում էր, թե որ կողմն ավելի շուտ կարձագանքի: Մինչդեռ երկու կողմերի համար դրանք անընդունելի էին:

Անգլիական և գերմանական արխիվային նյութերից պարզ է դառնում, որ 1938 թ. Թուրքիան նախընտրություն էր տալիս Գերմանիային: Սակայն վերջինիս արտղործնախարարությունն այդ տարիներին չէր տեսնում Թուրքիայի հետ դաշինք կնքելու անհրաժեշտություն, այլ, ընդհակառակը, վերջինիս տարածքների հետ կապված ծրագրեր ուներ, և այդ նկատառումներով երկրի պետական այրերը փորձում էին համագործակցել արաբների հետ⁴: Միաժամանակ մերձեցում էր նկատվում ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև. նախ, Ի. Շիբենտրոպն է այցելում Մոսկվա, ապա Վ. Սոլյոտովը՝ Բեռլին: Գերմանիայի այս դիրքորոշումը հանգեցնում է 1939 թ. թուրքանգլիական համաձայնագրի ստորագրմանը: Ավելի ուշ՝ Բեռլինը Թուրքիայի հետ այդ տարիներին վարած քաղաքականությունը կհամարի իր ամենամեծ սխալը⁵: Թուրքիան հյուսիսից պաշտպանում էր Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան տարածքները: Դա էլ ավելի էր բարձրացնում Թուրքիայի «արժեքը»: Որոշ փաստաթղթերի համաձայն՝ այդ տարիներին Թուրքիան ծրագրեր է ունեցել Հյուսիսային Երարի տարածքների հետ կապված. Անկարային հիմնականում հետաքրքրում էին նավթով հարուստ շրջանները: Սակայն նույն ծրագրերն ուներ նաև Գերմանիան. այստեղ էլ բախվեցին երկու երկրների շահերը: Հետագայում, սակայն, Երարում Գերմանիայի ակնհայտ պարտությունը Բեռլինին ստիպում է այս հարցի շուրջ բանակցություններ սկսել պաշտոնական Անկարայի հետ:

⁴ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 28.

⁵ Նոյն տեղում:

Պատերազմի ողջ ընթացքում Թուրքիան քաջ գիտակցում էր իր որոշիչ դերը. Եթե անցներ Գերմանիայի կողմը, ապա լուրջ հարված կհասցներ Անգլիային և վերջինս կկորցներ Մերձավոր Արևելքի իր տարածքները: Իսկ եթե պատապաներ Անգլիային, ապա Գերմանիայի առջև կփակվեին սևծովյան նեղուցները, և վերջինս կկորցներ վերահսկողությունն այդ տարածաշրջանում: Այդ պատճառով Գերմանիայի օգնելու դիմաց Թուրքիան պահանջում է Սոսուլն իր շրջակայքով⁶: Անգլո-ամերիկյան կողմում էլ հանդես գալու համար առաջարկում էր վերադարձնել Օսմանյան կայսրության տարիներին իրեն պատկանող Էգեյան կղզիները, այդ թվում՝ Կիպրոսը: Բայց ո՞չ Բեղլինը, ո՞չ էլ Լոնդոնը չեին պատրաստվում զիջել այդ տարածքները Անկարային: Ըստ այդ տարիների փաստաթղթերի՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը Թուրքիայի այս ցանկությանը պատասխանել է, որ հնարավոր է իրենք համակերպվեն այն մտքի հետ, որ նա իրենց դաշնակիցը չէ, սակայն երբեք «անգլիական թագի զմրուխտ» համարվող Կիպրոսը չեն հանձննի նրան՝ վստահեցնելով, որ Անգլիայի և ոչ մի կառավարություն նման նախապայմաններով Թուրքիայի հետ համաձայնության չի գա⁷: Լոնդոնը միայն կարող էր բավարարվել Անկարայի չեզոքությամբ, ինչը նվազեցնում էր թուրք-գերմանական դաշինքի ձևավորման հավանականությունը: Պատերազմի ավարտից հետո ամերիկացի պատմաբանները, գնահատելով այդ տարիների իրադարձությունները, գրում են, թե կարևորն այն էր, որ իրենք թույլ չտվեցին, որ Գերմանիան Թուրքիային ներքաշի պատերազմի մեջ, քանզի դա կկանխորոշեր հակաֆաշիստական կոալիցիայի պարտությունը⁸:

⁶ Նոյն տեղում:

⁷ Woodward L., British Foreign Policy in ..., v. IV, p. 124.

⁸ Печатнов В., От Союза к холодной ..., с. 18.

1939 թ. ապրիլի 29-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպանի՝ Բեռլին ուղարկված «Թե ինչպիսին կլինի Թուրքիայի դիրքորոշումը պատերազմ սկսելու դեպքում» վերնագրով գեկուցագրում ասվում է. «Հավաստի աղբյուրների համաձայն՝ Թուրքիան առանցքի պետություններին, հատկապես Իտալիային, թշնամաբար է Վերաբերվում և դրանով է պայմանավորված նրա քաղաքականությունը: Թուրքիան խնդրել է Անգլիայի աջակցությունը: Խոկ Խորհրդային Ռուսաստանից պահանջել է այս հարցում (խոսքը Թուրքիային վերաբերող աջակցության մասին է. – Ք. Ս.) համաձայնագիր: Հավանականությունը մեծ է, որ պատերազմի սկսման դեպքում Թուրքիան կհամագործակցի Անգլիայի հետ: Պետք է աշխատել այնպես անել, որ Թուրքիան ընտրի չեզոքությունը»⁹:

Ի դեպ, 1939 թ. վետրվարին զրած մի գեկուցագրում Գերմանիայի դեսպանը ներկայացնում է Թուրքիայի նախագահի պաշտոնում Սուստաֆա Քեմալ Աթաթյուրքին փոխարինած Իսմեթ Ինյոնյովի որդեգրած քաղաքականությունը՝ տեղեկացնելով, որ վերջինիս իշխանության գալը որոշ հույսեր է արթնացրել Խորհրդային Միության մոտ: «Ենթադրվում է, որ Ինյոնյուին նախագահ ընտրելով՝ կվերականգնվեն խորհրդա-թուրքական նախկին հարաբերությունները՝ ընդունելով, որ Աթաթյուրքի մահվանից հետո Թուրքիայի և Խորհրդային Միության հարաբերություններում նկատվել են փոփոխություններ: Կյանքի վերջին շրջանում Աթաթյուրքը բոլորովին չէր սիրում բոլշևիկներին: Ավելին, դա չէր էլ թաքցնում: Շատ հաճախ Ստալինին անվանում էր «ավագակ»: Ինյոնյուն «կարմիր ոռւսներին» ևս չի սիրում, սակայն խուսափում է իր վերաբերմունքն ի ցույց դնելուց: Նա իր մեծ հարևան Խորհրդային Միության հետ ցանկանում է բարեկամական կապերի մեջ լինել:

⁹ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 67.

Այսօր աշխարհում արտաքին քաղաքականություն կառուցողները (խոսքը վերաբերում է Մեծ Բրիտանիային. - Ք. Ա.) փորձում են թուլացնել Խորհրդային Սիությանը ... Ռուսաստանի (խոսքը վերաբերում է ԽՍՀՄ-ին. - Ք. Ա.) տնտեսական և քաղաքական թուլացման դեպքում Թուրքիան նորից թշնամաբար կնայի Ռուսաստանին»¹⁰, - ասվում է զեկուցագրում:

Քերված փաստաթղթերից պարզ է դառնում, որ 1939 թ. իրադրությունը փոխվել էր. Գերմանիան ցանկանում էր Թուրքիային գրավել իր կողմը և թույլ չտալ, որ նա էլ ավելի մերձենա Անգլիայի հետ: Աթաթյուրքի օրոք Թուրքիայի վարչապետ Զեմալ Բայարը գրում է, որ իր «պաշտոնավարման ընթացքում Գերմանիան Թուրքիային առաջարկել է դաշնակիցներ դառնալ և պատրաստ է եղել վերջինիս տրամադրել 75 միլիոն մարկի չափով օգնություն: Ինքն ու արտգործնախարար Թ. Արասը հարցը քննարկել են և որոշել այն չընդունել: Այնուհետև գնացել են Աթաթյուրքի մոտ, որը հավանություն է տվել իրենց որոշմանը և ասել, որ պատերազմի դեպքում Թուրքիան պետք է չեղորություն պահի ու չպետք է մտնի որևէ միության մեջ: Նա իհշեցրել է, որ Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թույլ տված սխալների համար թանկ է վճարել»¹¹: Հատ Բայարի՝ Աթաթյուրքը Ստալինին անվանել է «ավազակ», Հիտլերին՝ «արկածախնդիր», իսկ Սուսոլինին՝ «դերասան»¹²:

Վերլուծելով պատերազմի սկզբնական շրջանում Թուրքիայի վարած քաղաքականությունը՝ այդ երկրում ԱՍՍ-ի դեսպան Զոն Վան Ա. Մաջմուրայը 1939 թ. Վաշինգտոն ուղարկված իր զեկուցագրում նշում էր, որ Թուրքիային ձեռնուու չէ պատերազմի մեջ մտնելը, քանզի հնարավոր է, որ

¹⁰ Նույն տեղում, էջ 67-68:

¹¹ Նույն տեղում, էջ 69:

¹² Նույն տեղում:

կորցնի իր տարածքների մեծ մասը, այդ պատճառով էլ ընտրել է չեղորությունը: Դեսպանը հետևյալ եզրակացություններն էր անում.

- պատերազմի հարցում Թուրքիայի կառավարությունը շատ «փրատես» է՝ գիտակցելով իր դերը տարածաշրջանում,
- թուրքերն Անգլիային չեն համակրում, սակայն նախընտրությունը տալիս են վերջինիս, քանի որ պատերազմում նրա ռազմական և քաղաքական հեղինակությունը մեծ է,
- Թուրքիան հիմնվում է պատմական դասերի և փորձի վրա. պարտվողների կողքին չհայտնվելու համար, հաշվի շառնելով ստորագրված համաձայնագրերը, ապագայում նախընտրությունը կտա հաղթող կողմին¹³:

1939 թ. նոյեմբերին դեսպան Մաջմուրայը նախագահ Ֆ. Ռուզվելտին հղած գեկուցագրում, ներկայացնելով խորհրդաթուրքական հարաբերությունները, շեշտում էր, որ երկու երկրների միջև համագործակցությունը հաստատվելու ձևավորվել է «ազգային-ազատագրական պատերազմների», այն է՝ խորհրդային հեղափոխության և Թուրքիայում սկսված ազգային շարժման արդյունքում: Ներկայում, գրում էր նա, Թուրքիան դաշնակցում է Անգլիայի ու Ֆրանսիայի հետ և փորձում է իր հարաբերությունները պարզել Խորհրդային Միության հետ, քանի որ դրանցում սառնություն է նկատվել: Դեսպանի բնորոշմամբ՝ 1939 թ. ամռանը պաշտոնական այցով Սոսկվա մեկնած Թուրքիայի արտօրծնախարար Շ. Սարաջողլուն հյուրընկալվել էր «զրոսաշրջիկի» կարգավիճակով, մինչդեռ նա հույս ուներ ԽՍՀՄ-ի հետ համաձայնագիր

¹³ FRUS, 1939. The Far East, The Near East and Africa, v. IV, Washington, 1951, p. 858.

ստորագրել: Գերմանիայի հետ բանակցություններ սկսած ԽՍՀՄ-ը, սակայն, չի ընդունել Սարաջօղլուի ներկայացրած պահանջները: ԱՄՆ-ի դեսպանը հաղորդում է, որ Թուրքիան անհանգստացած է խորհրդա-գերմանական մերձեցմամբ՝ ընդգծելով, որ «երկու բարեկամ, բայց և թշնամի պետություններ» միանալով օկուպացրել են Լեհաստանը: Մոսկվայից վերադարձած Սարաջօղլուի կարծիքով՝ ոռուսներն օգտագործել են նոր տարածքներ գրավելու հարմար պահը: Չի բացառվում, որ ԽՍՀՄ-ի ծրագրերում սևծովյան նեղուցների վերահսկումն էլ կա, հայտնում էր դեսպանը¹⁴: Այս ենթադրությունը հաստատում էր նաև Մոսկվայում Վաշինգտոնի դեսպան Զոն Ա. Մթենիարյանը¹⁵:

Ինչ վերաբերում է պաշտոնական Մոսկվային, ապա վերջինս 1941 թ. սկզբին, հետևելով Թուրքիայի որդեգրած քաղաքականությանը, կանխատեսում էր, որ Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակման դեպքում Անկարան վարելու է հակախորհրդային քաղաքականություն: Այդ մասին են վկայում Կարմիր բանակի զիսավոր շտաբի արխիվում պահպող փաստաթղթերը: Այսպես, 1941 թ. հունվարին խորհրդային բանակի զիսավոր շտաբի հետախուզական բաժնի պատրաստած՝ «Գերմանիայի հնարավոր դաշնակից պետությունների ցուցակում» նշված էր նաև Թուրքիան¹⁶: Նոյն թվականի փետրվարի 14-ի գեկուցագրում էլ տեղեկացվում էր, որ զորքերի մորիլիզացման ակտիվացում է նկատվում Գերմանիայում, Ռումինիայում, Թուրքիայում, Իրանում, Ֆինլանդիայում, Հապոնիայում և Մանջուրիայում: Թուրքիային վերաբերող գեկուցագրերում խորհրդային կողմը նշում էր, թե ենթադրում է, որ Անկարան պատերազմի մեջ մտնելու

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 859:

¹⁶ Лота В., Секретный фронт..., с. 11.

նպատակով է զորահավաք սկսել, սակայն միաժամանակ հույս էր հայտնում, որ վերջինս հավատարիմ կմնա իր պարտավորություններին և չի խախտի 1925 թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը: Նկատենք, որ 1941 թ. մայիսի 2-ին ճապոնիայում զործող խորհրդային հետախույզ Ռ. Զորգեն, կենտրոն ուղարկած իր տեղեկատվության մեջ Սոսկվայի ուշադրությանն էր հրավիրում գերմանա-թուրքական ընթացող քանակցությունների վրա: Նա գրում էր, որ «այդ երկու երկրների համաձայնության զալու դեպքում ԽՍՀՄ-ի շուրջ իրավիճակն էլ ավելի կրաքանակ և պատերազմից խուսափելն անհնար կլինի: Գերմանիան պատրաստ է միաժամանակ պատերազմել և՝ ԽՍՀՄ-ի, և՝ Անգլիայի դեմ»¹⁷:

Հետախույզը իր գնահատականում չէր սխալվում. Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակումից մի քանի օր առաջ՝ հունիսի 18-ին, Թուրքիայի և Գերմանիայի միջև բարեկամության ու շհարձակման զաղտնի պայմանագիր է կնքվում: Գերմանիայի արտգործնախարար Ի. Ռիբենտրոպի կարծիքով՝ այս փաստաթուղթը պետք է Թուրքիային ազատեր այն հարաբերություններից, որոնք նրան կապում էին Անգլիայի հետ, ավելին, նպաստելու էր, որ Անկարան, ի վերջո, ընդգրկվեր առանցքի երկրների շարքերում¹⁸: Պայմանագիրն ապահովում էր նաև գերմանական քանակի հարավային թիկունքն անակնկապներից: Գերմանիան այլևս կախվածության մեջ չէր լինելու իրանից և կարող էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվել Թուրքիայի տարածքով: Բացի այդ, փաստաթուղթը Գերմանիային իրավունք էր վերապահում Թուրքիայի տարածքով զենք ու զինամթերք տեղափոխել, ավելին, վերջինս պետք է նպաստեր Սերծավոր Արևելքում Գերմանիայի ազդեցության մեծացմանը:

¹⁷ Նոյն տեղում, էջ 166:

¹⁸ История Великой Отечественной войны Советского Союза 1941–1945 гг., т. II, М., 1961, с. 193.

Ինչպես ասվեց, Թուրքիան պայմանագիր ուներ ոչ միայն Գերմանիայի, այլև ԽՍՀՄ-ի հետ: 1925 թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում ստորագրված խորհրդա-թուրքական բարեկամության և չեղորության մասին պայմանագիրը երեք անգամ՝ 1929 թ. դեկտեմբերի 17-ին, 1931 թ. նոյեմբերի 7-ին և 1935 թ. նոյեմբերի 7-ին, երկարաձգվել էր տարբեր ժամկետներով: Միաժամանակ ավելացվել էին նոր հավելվածներ, որոնք լուծում էին երկու պետությունների միջև այդ տարիներին ծագած խնդիրները: Վերջին անգամ՝ 1935 թ., այն երկարացվել էր 10 տարով, այսինքն՝ մինչև 1945 թ. նոյեմբերի 7-ը: Անկարայում 1929 թ. ստորագրված արձանագրության Բ հոդվածի համաձայն՝ կողմերը պարտավորվել էին միմյանց տեղյակ պահել երրորդ պետության հետ քաղաքական պայմանագիր կնքելու մասին և առանց մյուս կողմի համաձայնության՝ այն չստորագրել¹⁹: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, Թուրքիան 1941 թ. հունիսի 18-ին պայմանագիր էր ստորագրել ֆաշիստական Գերմանիայի հետ՝ դրանով իսկ խախտելով խորհրդա-թուրքական պայմանագիրը: Այս փաստաթղթի ստորագրումից չորս օր անց՝ 1941 թ. հունիսի 22-ին, ֆաշիստական Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա, որից անմիջապես հետո՝ հունիսի 25-ին, Սովորական Թուրքիայի դեսպան Հայդար Արթայը ԽՍՀՄ-ի արտգործնախարարությանը պաշտոնապես հայտարարեց իր երկրի «չեղորության» մասին²⁰:

Չնայած չեղորությանը՝ պատերազմի տարիներին Թուրքիան չէր թաքցնում բացասական վերաբերմունքը ԽՍՀՄ-ի նկատմամբ: Թուրքիայում ԱՍՆ-ի դեսպան Զ. Մաշմուրայը 1941 թ. հունիսի 22-ին պետքարտուղարին գրած գեկուցագրում տեղեկացրել էր, որ «քուրք իրավասուներն ուրախությամբ են ընդունել խորհրդա-գերմանական պատերազմի սկսվելը», այնուհետև ավելացրել էր, թե «այս ուրախությունը

¹⁹ СССР и Турция, с. 35.

²⁰ Внешняя политика Советского Союза ..., с. 129.

նրանք բացատրում են նրանով, որ երկու զանգստեր, երկար պայքարի վերջում թուլացնելով մեկը մյուսին, հոգնած կընկ-նեն»²¹:

Պատերազմի տարիներին հակախորհրդային քաղաքականություն վարելով՝ Թուրքիան նախնառաջ փորձում էր իրականացնել իր ծրագրերը, և դա չեր էլ թաքցնում: Այդ ժամանակաշրջանում թուրքական մամուլը լեցուն էր հակախորհրդային հոդվածներով: Պատերազմի սկսվելուց հինգ օր անց արդեն ՏԱԱՍ-ը ստիպված էր հերքել թուրքական մամուլում տեղ գտած այն լուրերը, թե ԽՍՀՄ-ը ծրագրել է զավել Թուրքիայի որոշ տարածքներ, այդ թվում սեծովյան՝ Բոսֆոր և Դարդանել նեղուցները²²: Նույնիսկ լուրեր էին տարածվում, որ Անգլիան էլ է ԽՍՀՄ-ին խոստացել սեծովյան նեղուցների վերահսկողությունը, և որ այդ առիթով երկու երկրների միջև արդեն խսկ կնքվել է զաղտնի համաձայնագիր: Իրավիճակը չարելու նպատակով՝ Խորհրդային Սիությունը ստիպված էր արդարանալ Թուրքիայի առջև՝ վստահեցնելով, որ ԽՍՀՄ-ը կողմ է նրա տարածքային ամբողջականության պահպանմանը: 1941 թ. օգոստոսի 10-ին ԽՍՀՄ-ի արտաքին ժողովրդական կոմիսարիատը հայտարարել է, որ Խորհրդային Սիությունը Թուրքիայից տարածքային պահանջներ չունի և պատրաստ է հետևել Մոնտրոյի համաձայնագրին²³: Այս հայտարարությունը, սակայն, իր նպատակին չի ծառայել: Իրավիճակն էլ ավելի է լարվել, եթե նույն թվականի օգոստոսին խորհրդային և անգլիական զորքերը մտել են Իրան²⁴: Դա բացասաբար է ընդունվել Թուրքիայում, և պաշտոնական Անկարան հայտարարել է, որ իր անհանգստությունը տեղին է:

²¹ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 132–133.

²² Внешняя политика СССР, т. V, М., 1982, с. 5.

²³ Նոյն տեղում, էջ 57:

²⁴ Корхмазян Р., К вопросу о позиции Турции во Второй мировой войне (июнь–декабрь 1941). – ВОН, 1973, № 8, с. 21.

1941 թ. օգոստոսի 5-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆրանց ֆոն Պապենը Բեռլին ուղարկած իր մի գրությամբ տեղեկացրել է. «Գերմանիայի հաղթանակները Ռուսաստանում հանգեցրել են նրան, որ Թուրքիայի քաղաքական շրջանակները հետաքրքրություն են ցուցաբերում խորհրդա-թուրքական սահմանից այն կողմ ապրող իրենց հայրենակիցների, հատկապես Աղրբեզանի թուրքերի ճակատագրով։ Այս շրջանակները ցանկանում են իրականացնել իրենց 1918 թ. ծրագրերը և Անդրկովկասը, այդ թվում՝ Բաքվի հարուստ նավթային պաշարները միացնել Թուրքիային»²⁵։ Նույն օրը Բեռլինում Թուրքիայի դեսպանն առաջարկել է Գերմանիային հակախորհրդային քարոզչություն ծավալել թուրք բնակչության շրջաններում, ինչը թույլ կտա միավորել կովկասյան բոլոր ժողովրդներին մեկ «բուֆերային» պետության մեջ և նման կերպ ստեղծել թուրքական մեկ այլ պետություն²⁶։

Նկատենք, որ Աթաթյուրքի մահից հետո (1938 թ.) Թուրքիայում վերստին զարթոնք է ապրում պանթյուրքիստական գաղափարախոսությունը։ 1941 թ. նոյեմբերին Ստամբուլում նշանավոր պանթյուրքիստներ Հ. Էրկիլեսի, Նուրի Փաշայի (Էնվեր Փաշայի եղբայրը), գեներալ Իսիհան Սարիսի և այլոց նախաձեռնությամբ կազմակերպվում է հատուկ կենտրոն՝ հակախորհրդային գործունեություն ծավալելու նպատակով։ Անկարայում և Ստամբուլում հրատարակվում են պանթյուրքիստական թերթեր ու ամսագրեր, որոնք ողողված են հակախորհրդային և պանթյուրքիստական հոդվածներով²⁷։ Այս ամենը կատարվում էր կառավարության գիտությամբ։ 1941 թ. հոկտեմբերի 5-ին «Ուլուս» թերթը գրում էր, թե «Գերմանիան շատ ճիշտ է վարչել սովետների վրա հարձակվե-

²⁵ Документы министерства иностранных ..., с. 34.

²⁶ Նույն տեղում։

²⁷ История дипломатии, т. IV, М., 1975, с. 584.

լով»²⁸: Ավելին՝ նորից հրապարակ էր հանվում «Մեծ Թուրանի» ստեղծման գաղափարը: 1941 թ. թուրքական «Բող քուրթ» («Գորշ գայլ») թերթը հրապարակում է Մեծ Թուրքիայի քարտեզը, որի մեջ ընդգրկված էին Խորհրդային Միության անդրկասայյան և Անդրկովկասի տարածքները²⁹:

Գերմանիան, տեսնելով Թուրքիայում տիրող այս տրամադրությունները, օգտվելով իրավիճակից՝ վերջինիս խոստացել է «չեզոք և չպատերազմելու» դիմաց նրան զիջել ԽՍՀՄ-ի սահմանամերձ որոշ շրջանները³⁰: Գերմանացի ֆելդմարշալ Էրիխ Ֆոն Մանշտենը իր գրառումներում նշել է, որ հաստատելով Դրիմի վրա հարձակման ծրագիրը՝ գերմանական հրամանատարությունը հաշվի է առել նաև այն, որ Գերմանիայի հաղթանակը որոշիչ դեր կիսաղա Թուրքիայի կողմնորոշման վրա³¹:

Պաշտոնական Անկարան միաժամանակ ուշի ուշով հետևում էր դաշնակից երկրների քայլերին: 1941 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայի արտօրքնախարար Ա. Իդենի այցը Մոսկվա՝ Թուրքիայում յուրովի է մեկնաբանվել: Այցի առիթով գերմանական ռադիոն լուրեր էր տարածել, թե Անգլիան և ԽՍՀՄ-ը Եվրոպան բաժանել են ազդեցության գոտիների. ըստ այդ տեղեկատվության՝ Թուրքիան ընկել էր ԽՍՀՄ-ի ազդեցության տակ³²: Անգլիայի դեսպանի վերադարձն Անկարա ձգձգվում էր (նա էլ էր Մոսկվայում), ինչը ևս Թուրքիայի քաղաքական շրջանակներում խորացրել էր անհանգստությունը: Իրավիճակը լիցքաթափելու նպատակով Ա. Իդենը

²⁸ Սահակյան Ռ., Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Եր., 1964, էջ 94:

²⁹ Vere Hodge E., Turkish Foreign Policy..., p. 143.

³⁰ Իսրայելյան Բ., Դիվլոմատիա Ե..., ս. 17.

³¹ Ataöv T., Turkish Foreign ..., ս. 96.

³² Նույն տեղում, էջ 100:

ստիպված էր 1942 թ. հունվարի 8-ին Համայնքների պալատում հանդես գալ հատուկ հայտարարությամբ, որում ժխտել է գերմանացիների կողմից տարածված լուրերը³³: Սակայն դա իր նպատակին չի ծառայել: Իսկ եթե Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանը հունվարի 22-ին հայտարարել է, որ ներկայումս անհնար է վերացնել խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամը, իրավիճակն էլ ավելի էր լարվել:

Մինչդեռ, նկատենք, որ 1942 թ. հունվարի 5-ին ֆոն Պապենը հաղորդել է Բեռլին, որ օրեր առաջ նախազան Ի. Ինյոնյուի հետ ունեցած հանդիպման ժամանակ վերջինս մի քանի անգամ կրկնել է, թե Թուրքիան մեծապես շահագրգուված է Ռուսաստանի պարտությամբ, և որ անզլո-ամերիկյան կողմից ոչ մի քարոզչություն ու ոչ մի ճնշում չեն կարող ստիպել նրան այնպիսի քայլեր անել, որոնք կվնասեն Գերմանիայի շահերը: Ըստ Ի. Ինյոնյուի՝ ներկա պահին Թուրքիայի չեզոք դիրքորոշումն անհրաժեշտ է նախևառաջ առանցքի երկրներին, քան Անգլիային³⁴: Նման կերպ թուրքերը գերմանական կողմին հասկացնում էին, որ նախընտրում են իրենց, սակայն դեռևս պատրաստ չեն հրաժարվել չեզոքությունից:

Այդ տարիներին Թուրքիայի կառավարությունը մեծապես գտնվում էր Գերմանիայի ազդեցության տակ և անհամբեր սպասում էր վերջինիս հաղթանակին: Ինչպես վկայում են փաստերը, 1941–1942 թթ. Թուրքիան քարելավել է քաղաքական և տնտեսական հարաբերություններն առանցքի երկրների հետ: Նա ոչ միայն տնտեսական աջակցություն է ցույց տվել վերջիններիս՝ նրանց մատակարարելով քրոմ, բամբակ, պղինձ և ոպամավարական այլ հումք, այլև, խախտելով սեծովյան նեղուցների վերահսկման հարցում ստանձնած պարտականությունը, 1941 թ. հուլիսից թույլատրել է գերմանական ու

³³ Ancioğlu D., Milli Kurtuluş ..., s. 1517.

³⁴ La politique Allemande (1941–1943)..., pp. 55–56.

խոալական նավերի անցումը նեղուցներով³⁵: Մինչև 1941 թ. դեկտեմբերը պաշտոնական Անկարան ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները կառուցում էր՝ վստահ լինելով վերջինիս պարտության վրա, ինչպես նաև կանխատեսում էր Անգլիայի և Գերմանիայի միջև դաշինքի կնքման հավանականությունը: Երկու կարևոր իրադարձություն, սակայն, ստիպեցին Թուրքիայի կառավարությանը վերանայել իր տեսակետը. Առաջինը՝ Սոսկվայի մատուցյներում գերմանական զորքերի պարտությունն էր, երկրորդը՝ ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը:

1942 թ. իրավիճակն էլ ավելի էր լարվել, քանի որ Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև ծագել էին նոր խնդիրներ: Նախ, փետրվարին Գերմանիայի կառավարությունը Անկարայում մահափորձ էր կազմակերպել իր դեսպան ֆոն Պապենի դեմ ու դրանում մեղադրել ԽՍՀՄ քաղաքացիներ Պավլովին և Կորնիլովին³⁶: Փետրվարի 12-ին ՏԱՍՏ-ը հերքել էր այն լուրը, թե խորհրդա-թուրքական սահմանի մոտ, իբր, տեղի են ունեցել լուրջ բախումներ³⁷: Մարտի 26-ին Գերմանիան ԽՍՀՄ-ին մեղադրել է նաև թուրքական «Զանքայա» նավի խորտակման մեջ³⁸: Հասկանալի է, որ այս բոլոր իրադարձությունները զործողություններ էին Խորհրդային Միության դեմ և մի նպատակ էին հետապնդում. Գերմանիային անհրաժեշտ էր իր կողքին տեսնել Թուրքիային: Դեռևս 1942 թ. հունվարին Թուրքիայի նախագահ Ի. Բնյոնյուի հետ հանդիպման ժամանակ ֆոն Պապենը ցանկություն էր հայտնել Գերմանիայի ծրագրա «Կովկասյան արշավանքի» ժամանակ խորհրդային սահմանի մոտ տեսնել թուրքական զինված ուժերին³⁹: Ավելի ուշ Պապենը հաղորդել է Բեռլին. «Թուրքիայի զինված ուժերի շտաբը ըն-

³⁵ Алексеев В., Керимов М., Внешняя политика ..., с. 211.

³⁶ Внешняя политика Советского Союза в период ..., т. I, с. 445.

³⁷ «Правда» (Москва), 12. II. 1942.

³⁸ Внешняя политика Советского Союза в период ..., т. I, с. 445.

³⁹ Документы министерства иностранных ..., с. 58.

նարկել է այդ հարցը և նպատակ ունի դա դիտել մեզ համար բարենպաստ ուղղությամբ⁴⁰: 1942 թ. մարտին Ս. Հիտլերը Խոտայի վարչապետ Բ. Մուսովինին տեղեկացրել է, որ Թուրքիան չնայած դանդաղ, սակայն մոտենում է առանցքի երկրներին: Դրան հիմնականում նպաստում է թուրքերի և ռուսների միջև եղած թշնամությունը: Ըստ նրա՝ Թուրքիան երբեք չի լինի առանցքի երկրների թշնամին⁴¹:

Գերմանիայի քաղաքական շրջանակների կանխատեսումները մոտ էին իրականությանը: 1942 թ. ամռանը, երբ խորհրդային բանակը բոլոր ռազմաճակատներում պարտություն էր կրում, Թուրքիայում ձևավորվում էր բոլշևիզմի դեմ «խաչակրաց արշավանք» կազմակերպելու գաղափարը: Գերմանական փաստաթղթերից հայտնի է դառնում, որ Թուրքիան ծրագրել էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվել Կովկասի ուղղությամբ (Բարոն գրավելու նպատակով)⁴²: 1942 թ. աշնանը թուրքական 26 դիվիզիաներ էին կենտրոնացված խորհրդա-թուրքական սահմանի մոտ: Նրանք սպասում էին Ստալինգրադի անկմանը՝ Անդրկովկաս ներխուժելու համար⁴³: Որոշ աղյուրներ նույնիսկ հաղորդում էին, որ Թուրքիան ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու է 1942 թ. հոկտեմբերի 17-ին⁴⁴: Հայության համար դա մի նոր ցեղասպանություն էր նշանակում:

1942 թ. օգոստոսին Անկարայում վկսել էին քննարկել խորհրդա-գերմանական ռազմաճակատում ընթացող ռազմական գործողությունների արդյունքները: Պաշտոնական Անկարան հատկապես անհամբերությամբ սպասում էր, թե ինչ արդյունք են ունենալու Վոլգայի և Կովկասի ուղղությամբ գերմանացիների հարձակումները: Ինչպես տեղեկացնում էին

⁴⁰ Նոյն տեղում:

⁴¹ Ataöv T., Turkish Foreign..., s. 102.

⁴² «Правда», 27. III. 1947.

⁴³ Ataöv T., Turkish Foreign..., s. 101.

⁴⁴ Исаакян В., Дипломатия в ..., с. 17.

գերմանական աղբյուրները, Թուրքիան առաջվա պես հետաքրքրված էր Խորհրդային Սիության որոշ տարածքներով: Այդ պատճառով Թուրքիայի և Գերմանիայի միջև շարունակվում էին քննարկումները Դրիմում և Կովկասում բուժերային պետությունների ստեղծման ծրագրերի շուրջ⁴⁵:

Դաշնակից երկրները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն, հասկանում էին ստեղծված իրավիճակի լրջությունը. 1942 թ. ամռանն ու աշնանը մտահոգություն կար, որ Թուրքիան վերջնականապես կանցնի Գերմանիայի կողմը: Հասկանալի է, որ դաշնակից պետությունները պարտավոր էին միջոցներ ձեռնարկել դա թույլ չտալու համար: Ըստ այդմ, 1942 թ. աշնանն ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Ռուզվելտը Թուրքիա է ուղարկել հանրապետական կուսակցության աջքի ընկնող գործիչներից Ու. Ռիֆլին, որի առաքելությունն էր նախագործացնել Ի. Բնյոնյուլի կառավարությանը, թե ինչպիսի մեծ սխալ կգործեն, եթե միանան Գերմանիային⁴⁶: Թուրքիայի կառավարությունը, սակայն, պատրաստ չէր հետևելու նրանց խորհրդներին՝ հակացնելով, որ իրենք գործում են՝ ենելով միայն իրենց պետության շահերից:

Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով գործի էր դրվել հատկապես մամուլը: 1942 թ. հոկտեմբերին ամերիկյան «Կոլերս Մազագին» ամսագրում հրապարակվել էր ԱՄՆ-ի Կոլումբիա համալսարանի պրոֆեսոր Զորց Ռեների հոդվածը, որտեղ հեղինակը կանխատեսում էր, որ պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ-ը կստանա սևծովյան բոլոր շրջանները, այդ թվում՝ նեղուցները⁴⁷: Հոդվածի հրապարակումից մի քանի օր անց Անկարայում ԱՄՆ-ի դեսպանությունը նոտա էր տարածել, որտեղ ասվում էր, որ ամերիկյան մամուլն ազատ է, և որ Ռեների տեսակետը չի կարելի վերագրել պետ-

⁴⁵ Документы министерства иностранных ... с. 67–68.

⁴⁶ Переписка Председателя Совета Министров ..., с. 28.

⁴⁷ Ataöv T., Turkish Foreign ..., s. 103.

քարտուղարության դիրքորոշմանը՝ վստահեցնելով, որ և՝ ԱՄՆ-ն, և՝ Մեծ Բրիտանիան երբեք թույլ չեն տա, որ մերձ-սևծովյան տարածքներն անցնեն ԽՍՀՄ-ին⁴⁸: Իրականում այս հոդվածը գրվել էր Սպիտակ տան պահանջով և Թուրքիային ուղղված բացահայտ սպառնալիք էր: Նրան հասկացնում էին, որ դաշնակիցների հաղթանակի դեպքում Թուրքիան կկորցնի տարածքների մեծ մասը, նույնիսկ իր վրա դրված նեղուցների վերահսկողությունը: Նման հոդվածի հրապարակումը, երբ Ստալինգրադի մատուցներում որոշվում էր ԽՍՀՄ-ի ճակա-տագիրը, կարող էր հետապնդել միայն մեկ նպատակ. դաշնա-կից երկրներն ամեն կերպ ցանկանում էին կասեցնել Թուր-քիայի միացումը գերմանական դաշինքին: Եվ 1942 թ. նոյեմ-բերի 1-ին, երբ Թուրքիայի նախագահ Ի. Բնյոնյուն, բացելով մեջլիսի նիստը, հայտարարեց, որ նախկինի պես Թուրքիան շարունակելու է վարել չեզորության քաղաքականություն, դաշնակից երկրները շտապեցին դա որակել որպես իրենց հաղթանակ⁴⁹: Մինչդեռ Թուրքիան նման կերպ փորձում էր ժամանակ շահել և իրադարձությունների հետագա ընթացքից որոշել, թե պատերազմող ո՞ր կողմին աջակցի՝ չնայած սրտանց ցանկանում էր առանցքի երկրների հաղթանակը:

1942 թ. Վերջին Թուրքիայում կասկածներ էին առաջա-ցել, որ պատերազմը կավարտվի Գերմանիայի հաղթանակով: Ստամբուլում վերջինիս հյուպատոսը հեռազրել էր Բեռլին՝ հաղորդելով, որ Թուրքիան նախկինի պես ցանկանում է, որ Գերմանիան պարտության մատնի ԽՍՀՄ-ին, միայն թե Ան-կարային անհանգստացնում է, որ գերմանացիների ուժերը չեն բավարարի ոռւսներին հաղթելու համար⁵⁰: 1943 թ. հուն-վարի 1-ին էլ թուրքական «Ենի սարահ» թերթը գրում էր. «3-4 ամիս առաջ Գերմանիա այցելած թուրք լրագրողներին Յ.

⁴⁸ Kirk G., The Middle East in ..., p. 445.

⁴⁹ Öztürk K., Cumhurbaşkanlarının Türkiye ..., s. 336.

⁵⁰ История международных отношений ..., с. 226–227.

Գերելսը վստահեցրել է՝ երկու ամսից ոռուսական ռազմական ուժերը կոչնչացվեն: Սակայն պետք է ընդունել իրականությունը. Գերմանիան մինչ օրս իր նպատակին չի հասել ինչպես Լենինգրադի և Մոսկվայի, այնպես էլ Ստալինգրադի ու Կովկասյան ռազմաճակատներում»⁵¹: Ավելին, թերթի գնահատմամբ՝ մոտ ապագայի նկատմամբ սպասումներն այնքան էլ հուսադրող չեն:

1943 թ. սկզբներին Ստալինգրադում գերմանական բանակի ջախջախիչ պարտությունը ստիպեց Թուրքիային փոխել իր քաղաքականությունը, չնայած, ինչպես և սպասվում էր, խորհրդա-թուրքական հարաբերություններում բարելավում չնկատվեց: Ըստիակառակը, Թուրքիայում աշխատմանում էին պանթյուրքիստական ուժերը, որոնց գործունեությունն ուղղված էր ԽՍՀՄ-ի դեմ: Արդի թուրք պատմաբանները իրենց աշխատություններում փորձում են արդարացնել այդ տարիներին ազգայնականների ձեռնարկած քայլերը: Թ. Աթայովը գրում է. «... չի կարելի ասել, որ Թուրքիայում չկային մարդիկ, որոնք տարված չլինեին պանթյուրքիստական զաղափարներով: Միայն թե այդ մարդկանց մեծ մասը թուրք-թաթարական ծագում ուներ»⁵²: Մինչդեռ պատերազմի տարիներին ակնհայտ էր, որ նույնիսկ կառավարությունը չի թաքցնում իր պանթյուրքիստական ուղղվածությունը, քանի որ ոչինչ չէր ձեռնարկում Վերջիններիս գործունեությունը կասեցնելու համար: Բեղլինում Թուրքիայի դեսպանը գերմանացի մի դիվանագետի հետ հանդիպման ժամանակ շեշտել էր, որ «Բաքուն այն քաղաքն է, որտեղ խոսում են թուրքերն»⁵³:

Թուրքիայի նման քաղաքականությունը, հասկանալի է, չէր կարող նպաստել խորհրդա-թուրքական հարաբերութ-

⁵¹ Գրեչկո А., Բիտվա զա ..., ս. 260.

⁵² Ataöv T., Turkish Foreign..., ս. 197.

⁵³ Նոյն տեղում:

յունների բարելավմանը: Դրա փոխարեն Անկարան փորձում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել Անգլիայի ու ԱՄՆ-ի հետ: Այսպես, 1943 թ. հունվարին Թուրքիայի կառավարության ներկայացուցիչները մի քանի անգամ հանդիպել են դաշնակից երկրների ղեկավարներին: Հատկապես հատկանշական է հունվարի 30-31-ին Ադանայում Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուի հանդիպումը Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլի հետ, որտեղ կողմերը հիմնականում անդրադարձել են խորհրդա-թուրքական հարաբերություններում ստեղծված իրավիճակին⁵⁴: Բացի այդ, Անկարայի կառավարությունն աշխատում էր Անգլիային ու Գերմանիային նատեցնել բանակցությունների սեղանի շուրջ: Ի. Ինյոնյուն համոզված էր. «Թուլ տալ Գերմանիայի պարտությունը, նշանակում է վտանգել Թուրքիայի և Եվրոպայի անվտանգությունը»⁵⁵: Վարչապետ Սարաջօղլուն ևս այս տեսակետին էր: Ըստ նրա՝ պարտված պետությունները և ողջ Եվրոպան կհայտնվեն «բոլշևիկների լծի տակ»⁵⁶: Թուրքական կողմը նույնիսկ առաջարկել է իր միջնորդությունը Անգլիայի և Գերմանիայի միջև բանակցություններ սկսելու համար⁵⁷: Սակայն հակակոմունիստական ուղղվածությամբ հայտնի Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը, որը 1946 թ. իր ելույթով կազդարարի «սառը պատերազմի» սկիզբը, պատերազմի տարիներին միայն մեկ նպատակ էր հետապնդում, այն է՝ պարտության մատնել Փաշիստական բլոկին: Իր այդ ծրագրերում, հատկապես՝ բալկանյան հարցում, նա յուրահատուկ տեղ էր հատկացրել Թուրքիային: Վերջինս ևս զիտակցում էր, որ բրիտանական կողմին անհրաժեշտ է, որ առաջինը Բալկանյան թերակղզի մտնի ոչ թե Կարմիր բանակը, այլ՝ թուրքական:

⁵⁴ Churchill W., The Second World ..., p. 635.

⁵⁵ Papen F., Memoirs, p. 495.

⁵⁶ Ataöv T., Turkish Foreign..., s. 197.

⁵⁷ Նոյն սեղում:

Այդ պատճառով է Զերչիլը բոլոր հնարավոր միջոցները կիրառել է՝ Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու համար: Բացի այդ, Ստալինին էլ խստացել էր, որ մինչև տարեվերջ Թուրքիան պատերազմի մեջ կմտնի: Մեծ Բրիտանիայի վարչապետը, անդրադառնալով խորհրդա-թուրքական հարաբերություններին, նշել է. «Իհարկե, թուրքերը անհանգստացած են ստեղծված իրադրությամբ, հասկանալով, որ ԽՍՀՄ-ի հաղթանակի դեպքում պատերազմից հետո Թուրքիան կհայտնվի բավականին ծանր իրավիճակում»⁵⁸: Հիմնվելով նման պատճառաբանության վրա՝ Զերչիլը Ստալինին առաջարկում է բարի կամք դրսերել Թուրքիայի հանդեպ և Անկարային ընդառաջ քայլեր ձեռնարկել: 1943 թ. փետրվարին ԽՍՀՄ-ի առաջնորդը Մեծ Բրիտանիայի վարչապետին ուղարձ իր պատասխան նամակում հիշեցրել է, որ պատերազմի սկզբին Խորհրդային Սիությունը բարեկամական միշտ շարք հայտարարություններ է արել, որոնց Թուրքիան չի էլ պատասխանել: Զբացանելով այն իրողությունը, որ Թուրքիան, հնարավոր է, վախենում էր Գերմանիայի զայրույթից, Ստալինը հույս է հայտնել, թե այս անգամ Զերչիլի ձեռնարկած քայլերը կարող են դրական արդյունք տալ: Նա Թուրքիայի դրությունն ընորոշել է բավականին «նրբանկատ»: Վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ Ստալինը նշել է, որ մի կողմից Թուրքիան կապված է ԽՍՀՄ-ի հետ բարեկամության ու շեղորդության պայմանագրով, Մեծ Բրիտանիայի հետ փոխօնության համաձայնագրով, մյուս կողմից էլ գոյություն ունի Գերմանիայի հետ կնքված բարեկամության պայմանագիրը: Այստեղ էլ, ըստ Ստալինի, հարց է ծագում, թե ինչպես է Թուրքիան կատարելու ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի առջև ստանձնած պարտավորությունները⁵⁹: Չնայած այս

⁵⁸ Переписка Председателя Совета Министров ..., с. 109–110.

⁵⁹ Նույն տեղում, էջ 112:

ամենին՝ Ստալինը շեշտել է Անկարայի հետ հարաբերությունները բարելավելու Սոսկվայի պատրաստակամությունը: Ի պատասխան այս հայտարարության՝ 1943 թ. փետրվարի 13-ին Թուրքիայի արտգործնախարարը Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպանին իր կառավարության անունից ներկայացրել է «բանակցություններ սկսելու առաջարկ»⁶⁰: Խորհրդային կողմն այն ընդունել է, և Սոսկվայում սկսվել են Մոլտով-Աչքալի (ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան) հանդիպումները⁶¹: Այդ բանակցությունները 1939 թ. Շ. Սարաջօղլուի՝ Սոսկվա կատարած այցից հետո երկու երկրների հարաբերությունները բարելավելու ուղղությամբ արված առաջին լուրջ քայլն էր: Այս անգամ էլ, սակայն, կողմերը համաձայնության չեկան: Բանակցությունների խափանման պատճառը դարձավ այն, որ Թուրքիան դեռ հավատում էր Գերմանիայի հաղթանակին: Սակայն 1943 թ. տեղի ունեցած Կուրսկի ճակատամարտից հետո Գերմանիայի պարտության հավանականությունը մեծացավ: Դա հսկգեցրեց նրան, որ Մեծ Բրիտանիան կրկին առաջ քաշեց Թուրքիային պատերազմի մեջ ներգրավելու հարցը:

Արդյունքում՝ Թուրքիայի խնդիրը քննարկվեց 1943 թ. նոյեմբերի 28 – դեկտեմբերի 1-ին Իրանի մայրաքաղաք Թեհրանում տեղի ունեցած Մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Անգլիայի դեկավարներ Ֆ. Ռուզվելտի, Բ. Ստալինի և Ու. Չերչիլի մասնակցությամբ խորհրդաժողովում: Դեկտեմբերի 1-ին մասնակիցների ստորագրած «Թեհրանի խորհրդաժողովի ուազմական որոշումը» խորագրով № 67 փաստաթղթի երկրորդ և երրորդ կետերը վերաբերում էին Թուրքիային: Դրանցում ասվում էր, որ խորհրդաժողովը՝

⁶⁰ Նույն տեղում, էջ 117:

⁶¹ Türkiye dış politikasında 50 yıl. İkinci dünya savaşı yılları (1939–1946), Ankara, 1948, s. 149.

- համաձայնվել է, որ ռազմական տեսանկյունից ցանկալի է, որպեսզի Թուրքիան մինչև տարեվերջ մտնի պատերազմի մեջ՝ ի պաշտպանություն դաշնակիցների,
- ընդունել է մարշալ Ստալինի այն հայտարարությունը, որ եթե Թուրքիան պատերազմի մեջ մտնի Գերմանիայի դեմ, և եթե դրա հետևանքով Բուլղարիան պատերազմ հայտարարի Թուրքիային կամ հարձակվի նրա վրա, ապա Խորհրդային Սիությունն անմիջապես Բուլղարիայի հետ կհայտնվի պատերազմական դրության մեջ: Թուրքիայի հետ սպասվող բանակցություններում այդ մասին նրան կտեղեկացվի⁶²:

Թեհրանի խորհրդաժողովում Թուրքիայի հարցն առաջինը բարձրացրեց Անգլիայի վարչապետ Ու. Չերչիլը: Սակայն Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու հարցը նոր չէր ծագել, ինչպես ասվել է, Լոնդոնն այն վաղուց եր ծրագրում⁶³: 1942 թ. աշնանը Անգլիայի վարչապետը դիմել էր ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարություններին՝ առաջարկելով ակտիվացնել քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Այս առիթով Չերչիլը Ստալինին գրում էր. «Ինձ թվում է՝ մենք մի փորձ են պետք է ձեռնարկենք, որպեսզի ստիպենք Թուրքիային պատերազմի մեջ մտնել առանցքի երկրների դեմ: Այդ նպատակով առաջարկում եմ, որ ԱՄՆ-ն միանա Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանման խորհրդա-անգլիական տված երաշխավորությանը, քանի որ Թուրքիան բավականին բարձր է գնահատում ամերիկացիներին»⁶⁴: Չերչիլը ճիշտ էր նկատել, այդ տարիներին ԱՄՆ-ի ազդեցությունը Թուրքիայի վրա գնալով մեծանում էր, որը, ի դեպ, ել ավելի ընդգծված

⁶² Советский Союз на международных конференциях..., т. II, М., 1980, с. 173.

⁶³ Эрман Дж., Большая ..., с. 129–131.

⁶⁴ Переписка Председателя Совета Министров ..., т. II, с. 95.

դարձավ պատերազմի ավարտից հետո: Իսկ մինչ այդ, պաշտոնական Վաշինգտոնը դանդաղ, բայց վստահ քայլերով իր դիրքերն էր հաստատում այդ տարածաշրջանում, և Զերչիլը ցանկանում էր դա օգտագործել Անգլիայի շահերին: Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար Անգլիան նաև գործ էր կենտրոնացրել Սիրիայում: Սակայն Մեծ Բրիտանիայի կառավարող շրջաններում այն տեսակետն էր տիրում, որ Անկարան իր դիրքորոշումը կփոխի միայն այն դեպքում, եթե Գերմանիայի կովկասյան արշավանքը ձախողվի⁶⁵: Ավելի ուշ՝ 1942 թ. դեկտեմբերին, Զերչիլը Ստալինին հասցեազրած մի նամակում տեղեկացրել է, որ ինքն ու ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտը որոշել են անձամբ հանդիպել Թուրքիայի նախագահ Ինյոնյուի հետ⁶⁶: Ինչպես վերը նշել ենք, այդ հանդիպումը կայացել է Ադանայում: Հանդիպման արդյունքները վկայում են, որ Անգլիայի վարչապետը սպասված արդյունքին չի հասել: Չնայած Զերչիլը Թուրքիայի վրա ուժեղ ճնշում չի գործադրել, սակայն սպառնալիքներ, այսպես թե այնպես, հնչել են: Ադանայում կայացած հանդիպումն ավելի շուտ հիշեցնում էր տեղեկությունների փոխանակում կողմերի միջև: Մեծ Բրիտանիան հասկացել էր, որ թուրքերը դեռևս պատրաստ չեն Գերմանիային պատերազմ հայտարարելու, և անհրաժեշտ է գործի դնել դիվանագիտական բոլոր ուժերը թուրք-գերմանական մերձեցումը կանխելու համար: Ողջ 1943 թ. ընթացքում Զերչիլի կառավարությունը փորձում էր Թուրքիային համոզել, որ պատերազմ հայտարարի Գերմանիային և բալկանյան արշավի ժամանակ միանալ դաշնակցից գորքերին: Հակառակ դեպքում խոստանում էր Թուրքիային շաշակցել և իրականացնել Կասարլանկայի կոնֆերանսում (1943 թ. հունվարի 12–14) տված սպառնալիքը: Այն է, եթե Թուրքիան պատերազմ

⁶⁵ Նոյն տեղում, էջ 95–96:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 106–107:

շհայտարարի Գերմանիային, ապա Անգլիան ԽՍՀՄ-ին թույլ կտա իրականացնել իր նվաճողական ծրագրերը սևծովյան նեղուցների հարցում⁶⁷: Այլ կերպ ասած՝ Անգլիան պատրաստ էր նեղուցների վերահսկումը հանձնել ԽՍՀՄ-ին: Պետք է ընդունել այն իրողությունը, որ Ստալինգրադի ճակատամարտից հետո և՝ Վաշինգտոնը, և՝ Լոնդոնը ԽՍՀՄ-ին օգտագործում էին Թուրքիայի դեմ որպես շանտաժի միջոց: Կասարլանկայում, ըստ ԱՄՆ-ի պետքարտուղար Կ. Խելլի, ամերիկյան և անգլիական կողմերի միջև ձեռք էր բերվել համաձայնություն, ըստ որի՝ Թուրքիան դիտվում էր որպես Անգլիայի ազդեցության գոտի, իսկ Չինաստանը՝ ԱՄՆ-ի⁶⁸: Չնայած այս համաձայնությանը՝ Վաշինգտոնը չէր պատրաստվում հրաժարվել Թուրքիայի հետ կապված իր ծրագրերից: ԱՄՆ-ն միաժամանակ կիսում էր Լոնդոնի այն տեսակետը, թե պատերազմի հետագա ընթացքում մեծ դեր կարող է խաղալ Անկարայի դիրքորոշումը:

Թեհրանի խորհրդաժողովի նախօրեին Մեծ տերությունների միջև էլ ավելի լայն ծավալ էին ստացել թուրքական հարցի շուրջ բննարկումները: 1943 թ. օգոստոսի 11–24-ը Քվերեկում Շերշիլը և Ռուզվելտը վերանայել են բալկանյան արշավանքին Թուրքիայի մասնակցելու հնարավորությունը⁶⁹: Թուրքական հարցը եղել է նաև 1943 թ. հոկտեմբերի 19–30-ը Մոսկվայում կայացած ԽՍՀՄ-ի, Անգլիայի և ԱՄՆ-ի արտգործնախարարների հանդիպման օրակարգում⁷⁰:

Ինչպես ասվել է, թուրքերին պատերազմի մեջ ներքաշելու գործում բոլորից շատ շահագրգոված էր Մեծ Բրիտանիան: Վերջինս այն համոզմանն էր, որ բալկանյան հարցում իրենց անհրաժեշտ է Թուրքիայի աջակցությունը: Անգլիայի արտ-

⁶⁷ Avcioğlu D., Milli Kurtuluş..., s. 1530.

⁶⁸ Кальвокоресси П., Мировая политика ..., с. 32.

⁶⁹ СССР и Турция, с. 180.

⁷⁰ Советский Союз на международных конференциях ..., т. II, с. 234.

զործնախարարությունում պահվող փաստաթղթերի համաձայն՝ արտգործնախարար Ա. Իղենը իր թուրք պաշտոնակցի հետ 1943 թ. նոյեմբերի 5–8-ը Կահիրենում ունեցած հանդիպման ժամանակ ասում էր, թե պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը քաղաքական նպատակ է հետապնդում: Ըստ բրիտանական կողմի՝ դա միակ միջոցն է Բալկանները խորհրդային գերիշխանությունից գերծ պահելու համար⁷¹: Հակառակ պարագայում, եթե Թուրքիան շարունակի իր չեզորության քաղաքականությունը, ապա ոուսական զորքը բրիտանականից շուտ կմտնի տարածաշրջան, ինչը Մեծ Բրիտանիայի համար անթույլատրելի էր, քանի որ իրադարձությունների նման զարգացման դեպքում նա Բալկաններում էլ կկորցնի իր ազդեցությունը:

Թեհրանի խորհրդաժողովում բրիտանական պատվիրակությունը շարունակում էր կողմերին համոզել պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու քայլի անհաժեշտությունը: Անգլիայի վարչապետի կարծիքով՝ այդ ժամանակ դաշնակիցների առջև ճանապարհ կրացվի դեպի սևծովյան Դարդանել և Բոսֆոր նեղուցները, միաժամանակ հնարավոր կլինի օգտագործել թուրքական օդանավակայանները՝ թշնամու դեմ պայքարելու համար⁷²:

Խորհրդային կողմն էլ դեմ չէր պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուն, սակայն, հաշվի առնելով անզլո-թուրքական կայացած բանակցությունների արդյունքները, վստահ էր, որ Թուրքիան երբեք պատերազմի մեջ չի մտնի, որքան էլ նրա վրա ճնշում գործադրվի: Բայց Խորհրդային Սիությանն անհրաժեշտ էր, որ պատերազմը որքան հնարավոր է շուտ ավարտվի: Եվ եթե պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը դրան կնպաստի, ապա ԽՍՀՄ-ը դեմ չէր, որ Անգլիան այդ ուղղու-

⁷¹ Woodward L., British Foreign Policy..., v. IV, p. 147.

⁷² Бережков В., Тегеран 1943, М., 1968, с. 89–90.

թյամբ քայլեր ձեռնարկի: Ստալինը հասկանում էր, որ պատերազմի այդ ծանր տարիներին անզործության մատնված Թուրքիայի ռազմական պոտենցիալը այդ պահին կարող էր վճռորոշ դրական դեր խաղալ: Բացի այդ, դրանով վերջ կդրվեր թե՝ դաշնակիցների, թե՝ ֆաշիստական Գերմանիայի հետ Թուրքիայի վարած երկակի խաղին, և ԽՍՀՄ-ը վերջապես հանգիստ շունչ կքաշեր՝ չկախենալով, որ Թուրքիան պատերազմ կհայտարարի իրեն: Սակայն ինչպես Թուրքիային ստիպել պատերազմի մեջ մտնել ֆաշիստական բլոկի երկրների դեմ: Այս հարցը Թեհրանում հուզում էր բոլորին⁷³:

Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը, ըստ անզիլիական կողմի, դաշնակիցներից այնքան էլ մեծ ջանք չէր պահանջի: Չերշիլն առաջարկում էր երկու-երեք դիվիզիա առանձնացնել Թուրքիայի արևմտյան ափերի հարևանությամբ գտնվող Էգեյան ծովի կղզիները, հատկապես Հոռոդոս կղզին գրավելու համար, որը Էգեյան ծով տանող դարպասն էր: Միաժամանակ դաշնակից երկրները պարտավոր էին Թուրքիային պաշտպանել երկնքից և ծովից հնարավոր հարձակումներից⁷⁴:

Թուրքիայի հետ կապված ծրագրերի իրականացումն առաջ էր բերում մի շարք դժվարություններ: Միջերկրական ծովում նախատեսվող այդ գործողությունները, չնայած իրենց բնույթով երկրորդական էին, կարող էին դառնալ «Օվերլորդ» օպերացիայի (խոսքը պատերազմի երկրորդ ռազմականացման մասին է) հետաձգման հիմնական պատճառը: Խորհրդային Միությունը պնդում էր, որ ռազմական գործողությունները ծրագրավորվեն այնպես, որ դրանք ոչ թե խոչընդոտեն, այլ նպաստեն հիմնական գործողություններին: Ասվեց արդեն, որ ԽՍՀՄ-ի համար ինչպես երկրորդ ռազմականացման մասին է:

⁷³ Советский Союз на международных конференциях ..., т. II, с. 100–102.

⁷⁴ Նույն տեղում, էջ 100:

բացումը, այնպես էլ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելն անհրաժեշտ էր, որպեսզի պատերազմն արագ ավարտվի: ԱՄՆ-ն ևս պահանջում էր Թուրքիային պատերազմի մեջ ներքաշել այնպիսի ճանապարհով, որ դա չանդրադառնար «Օվերլորդ»-ի ժամկետի իրականացման վրա: Նա առաջարկում էր նախ համամածայնության գալ «Օվերլորդ» օպերացիայի սկսման ժամկետի հարցում, ապա Թուրքիայի հարցը հարմարեցնել դրան⁷⁵:

Թեհրանում «Օվերլորդ» օպերացիայի սկսման ժամկետ էր ընդունվել 1944 թ. մայիս ամիսը⁷⁶, սակայն այն տեղի է ունեցել նախատեսվածից ուշ՝ հունիսի 6-ին: Ինչպես վերը նշել ենք, Անգլիան պարտավորվել էր մինչև 1943 թ. վերջը ստիպել Թուրքիային պատերազմ հայտարարել ֆաշիստական բլոկին: Դա, սակայն, Չերչիլի ուժերից վեր է եղել: Վերլուծելով իրադարձությունների ընթացքը՝ կարելի է գալ այն եզրակացության, որ Անգլիան, Թուրքիային ներքաշելով պատերազմի մեջ, դրանով, ինչպես ասվեց, ցանկանում էր ոչ միայն ապահովագրել Բալկանները խորհրդային գերիշխանությունից, այլև փորձում էր Ստալինից կորզել Թուրքիայի նկատմամբ ազրեսիվ քայլեր չկատարելու խոստում: Անշուշտ, Ստալինը պատրաստ էր դրան, թեև, պատերազմի ողջ ընթացքում Անկարան վարում է հակախորհրդային անկաշկանդ քաղաքականություն: Հասկանալի է, որ թուրքերի նման պահվածքը չէր կարող մնալ անպատասխան: Եվ Չերչիլը, ինելով քաղաքական ձկուն գործիչ, աշխատում էր Թուրքիային զերծ պահել ԽՍՀՄ-ի վրեժինդրությունից ու նրան օգտագործել իրեն պատնեշ՝ դեպի Մերձավոր Արևելք և Միջերկրական ծով ոուսների առաջխաղացման դեպքում:

Թեհրանի խորհրդաժողովի ավարտից մի քանի օր անց, կրկին Չերչիլը և Ռուզվելտը նոր քայլեր են ձեռնարկել Թուր-

⁷⁵ Бережков В., Тегеран..., с. 91.

⁷⁶ Советский Союз на международных конференциях ..., т. II, с. 129.

քիային պատերազմի մեջ ներքաշելու համար: Դեռևս Թէհրանից նրանք իրենց դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով հեռազրեր են հղել Թուրքիայի նախագահ Ի. Բնյոնյուին՝ նրան առաջարկելով 1943 թ. դեկտեմբերի 4-7-ը հանդիպել Կահիրենում կայանալիք անզլո-ամերիկյան II խորհրդաժողովի ընթացքում⁷⁷: Շատերը, այդ թվում՝ Ստալինը, կասկածում էին, որ Ինյոնյուն կընդունի այդ հրավերը⁷⁸: Թուրքիայի նախագահը թեև ուշացումով, բայց Կահիրենում հանդիպեց Զերչիլին և Ռուզվելտին:

Ստալինգրադում գերմանական գորքերի ջախջախիչ պարտությունը Թուրքիայի կառավարությանը ստիպել էր հրաժարվել ԽՍՀՄ-ի տարածքների հաշվին իր իշուսիսային սահմանը ընդարձակելու ծրագրերից և սպասել ռազմական գործողությունների հետագա ընթացքին: 1943 թ. առանցքի երկրները պարտություն էին կրում բոլոր ռազմաճակատներում: Չնայած դրան՝ Անկարայի կառավարությունը խուսափում էր անցնել դաշնակիցների կողմը՝ նշելով, որ դեռ վաղ է խոսել ֆաշիստական բլոկի պարտության մասին: Այդ պատճառով Կահիրեի հանդիպումը սպասված արդյունքը չտվեց. դաշնակից երկրները հասկացան, որ Թուրքիան դեռ պատրաստ չէ Գերմանիային պատերազմ հայտարարել:

1944 թ. գարնանը, եթե խորհրդային բանակը մոտեցել էր Ռումինիայի սահմանին, Զերչիլը կրկին փորձում է Թուրքիային ներքաշել պատերազմի մեջ⁷⁹: Վերջինս, սակայն, չի շտապում նման քայլ կատարել և միայն 1944 թ. օգոստոսի 2-ին, այն էլ՝ Հյուսիսային Ֆրանսիայում երկրորդ ճակատի բացումից երկու ամիս անց է հայտարարում, որ խզում է դիվանագիտական հարաբերությունները և տնտեսական կապերը

⁷⁷ Поцхверия Б., Турция между двумя мировыми ..., с. 268.

⁷⁸ Նույն տեղում, էջ 268:

⁷⁹ СССР и Турция, с. 182.

Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ⁸⁰: Չնայած դրան, Թուրքիան 1944 թվականին էլ իր մեջ ուժ չգտավ վերջիններիս պատերազմ հայտարարել:

Ստալինգրադի ճակատամարտից հետո, ինչպես ասվեց, Թուրքիան ստիպված էր վերանայել իր քաղաքական պահ-վածքը, բայց ԽՍՀՄ-ի հանդեպ վերաբերմունքը չի փոխում: Անկարան միայն 1944 թ. է փորձում վերականգնել բարիդրացիական հարաբերությունները Սոսկվայի հետ, և այդ ուղղությամբ մի շարք քայլեր է ձեռնարկում: Նախնառաջ ամռանն աշխատանքից հեռացվում են քաղաքական և զինվորական այն գործիչները, ովքեր համագործակցում էին գերմանացիների հետ. Վերջիններիս թվում էր նաև երկրի զինված ուժերի շտաբի պետ Ֆ. Զարմարը⁸¹: Զերբակալվում են ԽՍՀՄ-ի դեմ «խաչակրաց արշավանք» սկսելու կոչով հանդես եկած պանթյուրքիստական 23 գործիչներ (1944 թ. նրանք կանգնել են Ստամբուլի ռազմական դատարանի առաջ, սակայն ավելի ուշ արդարացվել են)⁸²: Ազատ են արձակվում Գերմանիայի դեսպան ֆոն Պապենի դեմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով դատապարտված ԽՍՀՄ-ի քաղաքացիներ Գ. Պավլովը և Ա. Կորնիլյովը⁸³: 1944 թ. մայիսի 19-ի իր ելույթում Թուրքիայի նախագահ Բ. Ինյոնյուն դատապարտում է պանթյուրքիստներին և հիշեցնում, որ անկախության պատերազմի ժամանակ իրենց միակ դաշնակիցը եղել է խորհրդային պետությունը⁸⁴: Այդ հայտարարությունից երեք օր անց (մայիսի 22-ին) Թուրքիայի արտգործնախարար Ն. Մենեմենչօղլուն Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովի հետ հանդիպման ժամանակ կարևորում է երկու պետությունների հա-

⁸⁰ Вторая Мировая война..., с. 208.

⁸¹ СССР и Турция, с. 182.

⁸² Robinson R., The First Turkish Republic, Cambridge, 1963, p. 307.

⁸³ СССР и Турция, с. 182.

⁸⁴ Ataöv T., Turkish Foreign..., s. 120.

բարերությունների ջերմացման անհրաժեշտությունը⁸⁵: Մայիսի 27-ին էլ խորհրդային Միությունում Թուրքիայի դեսպան Զ. Աչըքալըն է իր կառավարության անունից Մոսկվային այս հարցի առնչությամբ բանավոր առաջարկ անում⁸⁶: Մակայն խորհրդային կառավարությունը չէր պատրաստվում ընդառաջ գնալ Անկարային, քանի դեռ վերջինս չէր խօել հարաբերությունները Գերմանիայի հետ: Անզիայի ճնշման տակ, ինչպես ասվեց, 1944 թ. օգոստոսի 2-ին Թուրքիան ստիպված էր գնալ այդ քայլին: Ամեն դեպքում նկատենք, որ դեսպան ֆոն Պապենի վկայությամբ, Ի. Բնյոնյուն 1944 թ. ամռանը ԽՍՀՄ-ի թիկունքում Գերմանիայի և Անզիայի մերձեցման մի վերջին փորձն է արել⁸⁷:

1944 թ. վերջին և 1945 թ. սկզբին խորհրդա-թուրքական հարաբերություններում բարելավում չի նկատվում: Թուրքիան, չնայած դաշնակից պետությունների անընդմեջ պահանջին, 1945 թ. հունվարին դեռևս պատերազմ չէր հայտարարել առանցքի երկրներին: Եվ եթե Ղրիմի խորհրդաժողովում (1945 թ. փետրվարի 4–11) քննարկվում էր Միավորված ազգերի կազմակերպությանը (ՄԱԿ) երկրների անդամակցության հարցը, և որոշվել էր հիմնական անդամներ ընդունել Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարած երկրներին, ՈՒ. Չերչիլի պնդումով Ի. Ստալինը համաձայնվել է Թուրքիային ևս ընդգրկել ՄԱԿ-ի հիմնական անդամների կազմում՝ Անկարայից պահանջելով մինչև 1945 թ. փետրվարի վերջը պատերազմ հայտարարել առանցքի երկրներին⁸⁸: Ղրիմում Չերչիլը հայտարարել է. «...Թուրքիային ևս հրավիրելու առա-

⁸⁵ Türkiye dış politikasında ..., s. 222–223.

⁸⁶ Նոյն տեղում, էջ 223–225:

⁸⁷ Papen F., Memoirs, p. 527.

⁸⁸ Թեհրան, Յալթա, Պոտսդամ (հակահիտլերյան կոալիցիայի երկրների երեք կոնֆերանսների) փաստաթղթերի ժողովածու, Եր., 1970, էջ 137:

շարկը, հնարավոր է, համընդիանուր ընդունելություն չգտնի: Թուրքիան Անգլիայի հետ դաշինք է կնքել մինչև պատերազմ սկսելը՝ շատ վտանգավոր մի ժամանակաշրջանում: Երբ սկսվեց պատերազմը, թուրքերը կարծում էին, որ իրենց բանակը բավականին լավ զինված չէ ժամանակակից պատերազմների համար: Չնայած դրան, Թուրքիայի պահվածքը շատ հարցերում մեզ համար ձեռնտու էր: Սակայն Թուրքիան չօգտվեց մեկ տարի առաջ իրեն ընձեռված հնարավորությունից և պատերազմ չհայտարարեց⁸⁹: Տերզիլն իր խորքն ավարտել է հետևյալ հարցադրմամբ. «Պետք չէ արդյոք թուրքերին մեկ հնարավորություն էլ տալ մահվան մահճի առաջ»⁹⁰: Հնարավորությունը տրված էր, մնում էր, որ Թուրքիան ընդառաջ զնա և կատարի ներկայացված պահանջը, այն է՝ մինչև մարտի 1-ը պատերազմ հայտարարի առանցքի երկրներին:

Իր հերթին Ստալինը Դրիմի խորհրդաժողովում պահանջել էր վերանայել 1936 թ. Մոնտրոյում կնքված սեծովյան նեղուցներին վերահսկմանը վերաբերող համաձայնագիրը՝ պնդելով, որ այն իրեն չի արդարացրել: Պատերազմի պայմաններում, եթե Թուրքիան մասնակցեր ռազմական գործողություններին, ապա ըստ Մոնտրոյի համաձայնագրի՝ նեղուցների հարցը կտնօրիներ իր հայեցողությամբ, իսկ չեզոքության դեպքում պարտավորվում էր թույլ չտալ պատերազմող կողմերի նավերին անցնելու նեղուցներով⁹¹: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, սակայն, Թուրքիան, որն իրեն չեզոք էր հայտարարել, խախտել էր Մոնտրոյի համաձայնագիրը և գերմանական ու իտալական նավերին թույլ էր տվել ելումուտ անել սեծովյան նեղուցներով: ԽՍՀՄ-ը

⁸⁹ Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. IV, М., 1979, с. 78.

⁹⁰ Նոյն տեղում, էջ 79:

⁹¹ «Правда», 7.II.1956.

Անկարայից բազմից պահանջել էր փակել սևծովյան նեղուցները Վերջիններիս առջև, բայց ապարդյուն. պատերազմի տարիներին խորհրդային կողմի բոլոր նոտաները թուրքիան անտեսել էր: Ուստի զարմանալի չէր, որ Ղրիմում Ստալինը բարձրացրեց այդ հարցը: Չերջին ու Ռուզվելտը ևս համաձայնվեցին Սոնտրոյի համաձայնագրի վերանայման հետ՝ չնայած այն կնքվել էր 20 տարվա ժամկետով: Կողմերը համաձայնության եկան, բայց որի պայմանագիրն իրեն չի արդարացրել՝ հարցի ըննարկումը թողնելով Լոնդոնում կայանալիք երեք երկրների արտգործնախարարների հանդիպմանը: Միաժամանակ կողմերը կարևորել էին թուրքիային նախօրոք տեղեկացնել, որ սևծովյան նեղուցների վերաբերյալ Սոնտրոյի համաձայնագիրը վերանայման է ներկայացվել, և որ թուրքիայի տարածքային ամբողջականությանը ոչինչ չի սպառնում⁹²: Թուրքիայում, սակայն, այդ իրողությունը որպես սպառնալիք է ընդունվել: Իրականում դա հենց այդպես էր. հնարավոր է, որ Անգլիան և ԱՄՆ-ն ցանկանում էին, որ թուրքիան սթափվի ու հասկանա ստեղծված իրավիճակը պատերազմը մոտենում էր ավարտին, Գերմանիան շախչախիչ պարտություն էր կրում, իսկ թուրքիան վերջնական ընտրությունը դեռ չէր արել: Մինչդեռ Անգլիային և ԱՄՆ-ին անհրաժեշտ էր ի դեմս այդ երկրի տեսնել հավատարիմ դաշնակցի:

1945 թ. Անկարայի կառավարությունը ևս քաջ գիտակցում էր, որ պատերազմի տարիներին իր վարած քաղաքականությունը ծանր հետևանքներ է ունենալու: Հասկանում էր, որ Խորհրդային Սիուրյան գերտերության նոր կարգավիճակը թույլ էր տալիս թուրքիայի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ: Թուրք պատմարան Թահինին Ունալը այդ առումով

⁹² Советский Союз на международных конференциях ..., т. IV, с. 81.

զրել է. «Դուսաստանի քաղաքական նպատակը իմանալով և մեր բարեկամներ Անգլիայի ու Ամերիկայի խորհրդից հետո մենք 1945 թ. Գերմանիայի և Ճապոնիայի դեմ պատերազմ հայտարարեցինք ու բնականոն ձևով մտանք պատերազմի մեջ»⁹³: Այսպիսով՝ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ճնշմամբ Թուրքիան 1945 թ. փետրվարի 23-ին պատերազմ է հայտարարել Գերմանիային ու Ճապոնիային՝ ռազմաճակատ չուղարկելով և ոչ մի զինվոր⁹⁴: Թեպես այս քայլով Թուրքիան հնարավորություն ստացավ դառնալ ՄԱԿ-ի անդամ և օգտվել արևմտյան երկրների հովանավորությունից, սակայն այդպես ել չկարողացավ մեղմել ԽՍՀՄ-ի վերաբերմունքը: Խորհրդային մամուլը Թուրքիայի այդ քայլը հեգնանքով որակում է որպես «վերջին բռնկի վախճառություն»⁹⁵:

Դրիմի կոնֆերանսից մեկ ամիս երեք օր անց՝ 1945 թ. մարտի 19-ին, Սոսկվայում Անկարայի դեսպան Ս. Սարպերը հրավիրվել է Կրեմլ՝ արտգործնախարար Վ. Սոլյոտովի հետ հանդիպման: Թուրքական փաստաթղթերի համաձայն՝ նախօրեին դեսպանը ԽՍՀՄ-ի արտգործնախարարի տեղակալ Ս. Կավթարաձեի հետ ունեցած գրույցում տեղեկացրել էր, որ մարտի 25-ին մեկներու է Անկարա, ուստի մինչ այդ ցանկացել է հանդիպել Սոլյոտովին⁹⁶: Խորհրդային բյուրոկրատներին լավ ճանաչող թուրքերը չեն թաքցրել, որ ուսների «արագ արձագանքից» անհանգստացել են, քանզի գիտակցել են, որ դրանից լավ բան չպետք է սպասել⁹⁷: Մարտի 19-ին ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Սոլյոտովը Թուրքիայի դեսպանին ընդունել է «ուսական սառնասրտությամբ, բայց նրբանկատորեն» և տեղեկացրել, որ Խորհրդային Միությունը մտադիր

⁹³ Ünal T., 1700 den 1958 e ..., s. 291.

⁹⁴ История II Мировой ..., т. X, с. 433.

⁹⁵ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 290.

⁹⁶ Նոյն տեղում, էջ 289:

⁹⁷ Նոյն տեղում:

է չեղյալ հայտարարել 1925 թ. դեկտեմբերի 17-ի «բարեկամության» պայմանագիրը⁹⁸: Վերը նշել ենք, մեկ անգամ ևս կրկնենք, որ այս պայմանագիրը ստորագրումից հետո այն երեք անգամ՝ տարբեր ժամկետներով երկարաձգվել է: Տարիների ընթացքում պայմանագրի կետերը լրացվել են, ավելացվել են նոր հավելվածներ, որոնք կարգավորում էին երկու երկրների միջև ծագած խնդիրները: Վերջին անգամ այն երկարաձգվել էր 1935 թ. նոյեմբերի 7-ին՝ 10 տարով, այսինքն՝ մինչև 1945 թ. նոյեմբերի 7-ը: Պայմանագրի համաձայն՝ կողմերը պարտավորվել էին այն չերկարաձգելու դեպքում նախօրոք՝ վեց ամիս շուտ, այդ մասին իրար տեղեկացնել: Ըստ այդմ, Խորհրդային Միությունը, ինչպես նախատեսված էր, մարտին Թուրքիային տեղեկացնում է իր մտադրության մասին՝ պատճառաբանելով, որ աշխարհաքաղաքական իրավիճակը փոխվել է, և իրենք ցանկանում են փոփոխություն մտցնել պայմանագրում: Հայտարարության մեջ ասվել է. «...Խորհրդային կառավարությունը Թուրքիային հայտնում է այս պայմանագիրը խզելու իր ցանկությունը՝ պահպանելով 1935 թ. նոյեմբերի 17-ի փաստաթղթով նախատեսված պայմանագրի խզման պայմանները»⁹⁹: Հանդիպման ժամանակ Թուրքիայի դեսպանը փորձել է պարզել, թե խոսքը ինչ փոփոխությունների մասին է, սակայն չի արժանացել պատասխանի: ԽՍՀՄ-ի արտղործնախարարը հայտարարել է. «Նախ, հաճելի է իմանալ Անկարայի արձագանքն այս որոշման վերաբերյալ, որից հետո ել նախապայմանների մասին կխոսենք»¹⁰⁰:

Պայմանագրի չերկարաձգելու որոշումը ոչ ոքի համար նորություն չէր, քանի որ դա վերջին տարիների քաղաքական ու ռազմական իրադրածությունների տրամարանական հանգուցալուծումն էր: «Իզմեստիա» թերթը, մեկնաբանելով խոր-

⁹⁸ Նոյն տեղում:

⁹⁹ Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, т. III, М., 1947, с. 146.

¹⁰⁰ «Известия» (Москва), 25. III. 1945.

հրդա-թուրքական չեզոքության պայմանագրի վերանայելու ԽՍՀՄ-ի որոշումը, նշել է, որ բոլորը զիտեն, թե աշխարհաքաղաքական ինչ փոփոխություններ են կատարվել, որոնցից ել բխել է այս որոշումը: Թերթը հիշեցրել է, թե վերջին քանի տարիների ընթացքում ԽՍՀՄ-ի և մյուս երկրների հարաբերությունները ինչ խոր փոփոխությունների են ենթարկվել: «Այսպես, քանի տարի առաջ մեր հարաբերությունները, օրինակ՝ Մեծ Բրիտանիայի հետ, նույնը չեն, ինչ որ այսօր է: Ավելորդ չեն նշել նաև, որ ներկա պատերազմի ընթացքում ռուս-թուրքական հարաբերությունները երբեմնի բաղձակի վիճակում չեն եղել¹⁰¹: «Ֆզվեստիա»-ն եզրակացրել է, թե երկու կողմերի համար ել շահավետ չել պահպանել մի պայմանագիր, որը ստորագրվել էր անկայունության շրջանում, երբ Խորհրդային Ռուսաստանն ու քեմալական Թուրքիան նոր էին ավարտում օտարերկրյա նվաճողների դեմ պատերազմը, և կարևորել է դրա վերանայման անհրաժեշտությունը¹⁰²:

Պաշտոնական Անկարան այդ օրերին փորձել է երկրի ներսում թաքցնել տեղի ունեցածը: Մինչ անզիական մասով բուռն քննարկումներ եր ծավալել, թուրքականը, հետևելով կառավարության հրամանին, լուս էր¹⁰³: Կարելի է ենթադրել, թե Անկարան կարծում էր, որ հնարավոր է պահպանել բարեկամական հարաբերությունները հզոր հարևանի հետ: Ինչպես ասվեց, բրիտանական մասով այս առիթով բազմաթիվ կանխատեսումներ եր անում, որոնցից շատերը մոտ էին իրականությանը: Օրինակ, ըստ «Դեյլի էքսպրես» թերթի, Ռուսաստանը Թուրքիայից պահանջելու էր, «որ՝ ջնջուի Տարտանէլի վրայ անոր ունեցած բացարձակ հակակշորի իրաւունքը. Կովկասեան սահմանին վրայ Կարս ու Արդահանը իրեն վերադարձուին եւ թքական սահմանադրութիւնը

¹⁰¹ Նոյն տեղում:

¹⁰² Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 290.

¹⁰³ «Արևմուտք» (Փարիզ), 15. IV. 1946:

փոխուի ժողովրդապետական իհմերու համաձայն»¹⁰⁴:

Թուրքական կողմը միայն 18 օր անց՝ 1945 թ. ապրիլի 7-ին է արձագանքել Խորհրդային Սիուլյան հայտարարությանը: Թուրքիայի կառավարությունը Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովին տեղեկացրել է, որ ընդունում են 1925 թ. պայմանագրի չերկարածզերւ ԽՍՀՄ-ի որոշումը և պատրաստ են կնքել նոր պայմանագիր՝ ցանկացած պայմանով¹⁰⁵: Մայիսի 20-ին Խորհրդային Սիուլյունը չեղյալ է հայտարարել խորհրդա-թուրքական պայմանագիրը¹⁰⁶: Խոկ հունիսի 7-ին Սոսկվայում Խորհրդային Սիուլյան արտաքին գերատեսչության դեկավարի և Թուրքիայի դեսպանի միջև կայացած հանդիպման ժամանակ, ի պատասխան Թուրքիայի այն հայտարարությանը, թե իրենք պատրաստ են ցանկացած պայմանով նոր պայմանագիր կնքել Սոսկվայի հետ, ԽՍՀՄ-ը ներկայացրել է իր պահանջները՝ տեղեկացնելով, որ մինչև նոր պայմանագիր ստորագրելն անհրաժեշտ է լուծել ինչպես սևծովյան նեղուցների վերահսկման հարցը, այնպես էլ կարգավորել խորհրդա-թուրքական սահմանը¹⁰⁷, այն է՝ վերականգնել մինչև 1914 թ. ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև եղած սահմանը: Սա Խորհրդային Սիուլյան այն խաղաքարտն էր՝ պատերազմի տարիներին Անկարայի հակախորհրդային քաղաքականության դիմաց ներկայացրած հաշիվը, որից այդքան վախենում էին թուրքերը:

Հունիսի 7-ին Սոսկվայում կայացած Սոլոտով-Սարգսեր հանդիպման ժամանակ Թուրքիայի դեսպանը հայտարարել է, թե արքած առաջարկներից և ոչ մեկը Թուրքիայի կառավարությունը չի ընդունի, այնուհետև հիշեցրել, որ «սահմանների կարգավորման պայմանագիրը Խորհրդային Սիուլյան հա-

¹⁰⁴ Սույն տեղում:

¹⁰⁵ Armaoğlu F., 20. Yüzyıl Siyasal Tarihi, İstanbul, 2005, s. 584.

¹⁰⁶ Родионов А., Записки посла СССР в Турции 1974–1983 гг. – Новая и новейшая история, 1999, № 1, с. 126.

¹⁰⁷ Küçük Y., Türkiye Üzerine Tezler-2, 1908–1978, İstanbul, 1978, s. 292.

մածայնությամբ կնքվել է 1921 թ.¹⁰⁸: Ի պատասխան Սոլուտովն ասել է. «Բայց այդ ժամանակ Խորհրդային Միությունը թույլ էր, իսկ այժմ ուժեղ է: Այդ պատճառով էլ պայմանագրում փոփոխության առաջարկ է արվել»¹⁰⁹: Այս հանդիպումից հետո Սարպերը հեռազրով Անկարային տեղեկացրել է ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջների մասին¹¹⁰: Հունիսի 12-ին Թուրքիայի նախազան հ. Բնյոնյուի մասնակցությամբ գումարվել է կառավարության նիստ: Այստեղ ընդունված որոշման մասին անմիջապես հեռազրով տեղեկացվել է Սուկվայում Թուրքիայի դեսպանին՝ Ս. Սարպերին: Կառավարությունը հայտնում էր, որ ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջներն իրենց համար անընդունելի են, չնայած Անկարան պատրաստ է Կրեմլի հետ նստել երկխոսության¹¹¹:

Նկատենք, որ թուրքական կողմը բավականին նուրբ քաղաքականություն է վարել և խորհրդա-թուրքական գճամամի հարցն առաջին իսկ պահից ոչ միայն քննարկել է կառավարության շրջանակում, այլև հարցի լուծման նպատակով խորհրդակցել է արևմտյան դիվանագետների հետ: Ինչպես վկայում են թուրքական և ամերիկյան փաստաթղթերը, Անկարան անակնկալի չի եկել այս պահանջներից: Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքան ամերիկացի դիվանագետների հետ հանդիպման ժամանակ խորհրդա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ որոշ պարզաբանումներ է արել՝ տեղեկացնելով, թե Թուրքիայի կառավարությունը սպասում էր ինչպես պայմանագրի խախտմանը, այնպես էլ Սուկվայի առաջ քաշած պայմաններին: Ըստ արտգործ-

¹⁰⁸ Նույն տեղում, թ. 5:

¹⁰⁹ Akalın C., Soğuk Savaş ABD-Türkiye-1. Olaylar-Belgeler 1945-1952, İstanbul, 2003, s. 198.

¹¹⁰ FRUS. Diplomatic Papers, the Conference of Berlin (the Potsdam Conference), 1945, v. 1, Washington, 1960, p. 1021.

¹¹¹ FRUS. Diplomatic Papers, 1945. The Near East and Africa, v. VIII, Washington, 1969, p. 1234.

նախարարի՝ հարցը պետք է քննարկվի ոչ թե երկկողմ, այլ միջազգային հանդիպումներում: Նաև ասվել է, որ իրենք՝ թուրքերը, չեն պատրաստվում գիշումների գնալ. ԽՍՀՄ-ին չի տրվի ոչ մի կտոր հող կամ էլ հանգրվան: Անհրաժեշտության դեպքում կպատերազմեն¹¹², հայտարարել էր Սարան:

Ինչպես վկայում է այդ օրերի դիվանագիտական նամակագրությունը, հունիսի 11-ին Թուրքիայի նախագահ Բ. Խնյոնյուն հանդիպել է Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Է. Վիլսոնին և վերջինիս հետ խոսել Սոսկվայի ներկայացրած պահանջների մասին: Նա վստահեցրել է, որ Սոսկվայի հետ պատրաստ են քննարկել ցանկացած հարց, որոնք չեն սպառնա իրենց երկրի անվտանգությանն ու ամբողջականությանը¹¹³: Ամերիկացի դիվանագետի հետ Սոսկվայից ստացված հեռագրի մասին են խոսել նաև երկրի վարչապետը և արտաքին գործերի փոխնախարարը¹¹⁴: Վիլսոնն այս առիթով գրել է. «Նույն օրը ես հանդիպեցի նաև արտաքին գործերի փոխնախարարի (և. Սամերի. – Ք.Ս.) հետ: Նա ևս ինձ իրազեկեց Սոսկվայից ստացված հեռագրի մասին: Նա ասաց, որ ստեղծված իրավիճակը իրենց ստիպում է լուրջ վերլուծություն անել, ինչն թույլ կտա հասկանալ ԽՍՀՄ-ի հետապնդող նպատակները»¹¹⁵:

Թուրք քաղաքական գործիչները Ս. Սարպերի հեռագիրը քննարկել են նաև բրիտանական կողմի հետ: Անկարայում Մեծ Բրիտանիայի դեսպան Ս. Փիտերսոնը խորհրդա-թուրքական հանդիպման մանրամասները հաղորդել է Լոնդոն, ավելին՝ նկատել, որ Թուրքիայի կառավարությունը ԽՍՀՄ-ի պահվածքից բավականին նյարդային վիճակում է գտնվում¹¹⁶:


¹¹² АВП РФ, ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 07. 06. 1945 г.), л. 1-2.

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ Նույն տեղում:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 12:

¹¹⁶ АВП РФ, ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 18. 06. 1945 г.), л. 33.



1945 թ. ՄԿՐՊՆ ԲՈՒԺՔԱՅԻՆ ԽԱՆՉԱՐԱԳԱ ՏՐԱԴՐԱՅԻ ԴԱՎԱՅԱՋ

Հունիսի 18-ին Մոլոտովի և Սարգսերի միջև կայացել է երկրորդ հանդիպումը, որի ժամանակ թուրք դիվանագետը խորհրդային կողմին առաջարկել է հետաձգել տարածքային պահանջատիրության և նեղուցների հարցերի քննարկումը: Ի պատասխան՝ ԽՍՀՄ-ի արտգործնախարարը հասկացրել է, որ այդ դեպքում անիմաստ է համարում նաև երկու երկրների միջև նոր պայմանագրի ստորագրումը: Նա կրկին հայտնել է, թե նոր պայմանագրի կնքումը հնարավոր է միայն հունիսի 7-ին ներկայացված պահանջների ընդունման դեպքում՝ պատճառաբանելով, թե Խորհրդային Հայաստանը հողի կարիք ունի¹¹⁷: Հանդիպումը տևել է շուրջ մեկուկես ժամ, այն պարտվել է լարված մթնոլորտում: Սարգսերը նշել է, թե ցավում է, որ այդպես էլ որևէ համաձայնության չեկան և ավելացրել, որ այժմ անհրաժեշտ է մտածել բարձրացված խնդիրների շուրջ: Մոլոտովն էլ պատասխանել է, թե ինքն ամբողջովին արտահայտել է իր դեկավարության տեսակետը¹¹⁸:

Հունիսի 18-ի մոսկովյան հանդիպումը կրկին որևէ դրական արյունք չի տվել: Այն էլ ավելի է լարել հարաբերությունները երկու երկրների միջև: Թուրքիայի արտաքին գործերի փոխնախարար Ն. Սամերը ԱՄՆ-ի դեսպան է. Վիլսոնին տեղեկացրել է, որ ծանոթանալով այս գրույցի մանրամասներին հասկացել է, որ առաջընթաց չկա և մոտ ապագայում չի էլ սպասվում¹¹⁹:

Հունիսի 22-ին Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովը Թուրքիայի կառավարությանը մեկ անգամ էլ է հայտնել, որ պաշտոնական Մոսկվայի տեսակետը չի փոխվել, և որ վերջինս պատրաստ է նոր պայմանագիր կնքել, եթե Անկարան կատարի առաջդրված պայմանները¹²⁰: Ըստ

¹¹⁷ Նույն տեղում, թ. 34:

¹¹⁸ Նույն տեղում:

¹¹⁹ FRUS. Diplomatic Papers, The Conference of Berlin ..., p. 1024.

¹²⁰ «Ազդակ» (Բեյրութ), 11. V. 1993:

թուրք պատմաբան Ա. Դելիօրմանի՝ Վիճովրադովն այդ գրուցում նշել է, որ Թուրքիայից պահանջվող Կարսը և Արդահանն անհրաժեշտ են ոչ թե Խորհրդային Ռուսաստանին, այլ Խորհրդային Հայաստանին, քանի որ վերջինիս տարածքը շատ փոքր է¹²¹: Նույն օրը ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Ս. Սարպերը, հետևելով իր կառավարության հրահանգներին, պաշտոնապես մերժել է Մոսկվայի ներկայացրած առաջարկները¹²²:

Հունիսի 25-ին Վաշինգտոն ուղարկած հեռագրում ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի դեսպան Ու. Հարիմանն իր կառավարությանը հաղորդել է Մոսկվայում Թուրքիայի դեսպան Սարպերի հետ մեկ օր առաջ ունեցած հանդիպման մանրամասները: Թուրք դիվանագետը նկատել է, որ իր երկրի որդեգրած քաղաքականությունը ստիպել է Մոսկվային դադար առնել: Նրա գնահատմամբ եթե Թուրքիան համաձայնվի բավարարել ԽՍՀՄ-ի պահանջները, ապա կնշանակի, որ վերջինիս թույլ է տալիս միջամտել իրենց երկրի ներքին գործերին: Ըստ նրա՝ Թուրքիայի վրա իր ազդեցությունը տարածելով՝ Ռուսաստանը երկու նպատակ է հետապնդում: Նախ, սևծովյան նեղուցների հարցը բարձրացնելով, Մոսկվան ցանկանում է փակել նեղուցներն այն երկրների առջև, որոնք չեն մտնում խորհրդային բլոկի մեջ, միաժամանակ այս կերպ ապահովելով իր ազատ ելքը Միջերկրական ծով: Ինչ վերաբերում է հարավային սահմանի վերագծմանը, ապա այն պայմանավորված է նրանով, որ այդ տարածքները հնարավորություն են տալիս ԽՍՀՄ-ին դուրս գալ մի կողմից Ալեքսանդրետի սանջակ և Միջերկրական ծով, մյուս կողմից է՝ Իրանով՝ Պարսից ծոց¹²³:

¹²¹ Deliorman A., Türkler Karşı Ermeni Komiteciler, İstanbul, 1973, s. 117.

¹²² Российско-турецкие отношения: история, современное состояние и перспективы, М., 2003, с. 59.

¹²³ FRUS. Diplomatic Papers, The Conference of Berlin ..., p. 1030.

Որոշ հեղինակների գնահատմամբ՝ Թուրքիայի վրա ԽՍՀՄ-ի գործադրած ճնշումը դաշնակիցներին ստիպել է ձեռնարկել պատասխան գործողություններ, ինչն էլ հանգեցրել է սառը պատերազմին¹²⁴: Ավելին վերջին տարիներին շրջանառության մեջ դրված արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջներն իրական էին, այլ ոչ թե ճնշում գործադրելու միջոց¹²⁵: Թուրքական մամուլի արձագանքմամբ էլ՝ Անկարային Սուլվայի ներկայացրած այս պահանջները հանդիսանում էին ԽՍՀՄ-ի՝ ցարական Ռուսաստանից ժառանգած «ֆիմպերիալիստական քաղաքականության ապացույցը», որոնք չպետք է բավարպեն¹²⁶:

Այսպիսով, 1945 թ. մարտից խորհրդա-թուրքական հարաբերություններում ստեղծվել էր պայթունավտանգ իրավիճակ: Դա զիտակցում էին նաև Անգլիան ու ԱՄՆ-ն: 1945 թ. մայիսի 4-ին Սան Ֆրանցիսկոյում ՄԱԿ-ի վեհաժողովին մասնակցող Անգլիայի վարչապետ Ու. Չերչիլը արտգործնախարար Ա. Իդենին հղած հեռագրում բացահայտորեն ասել է. «Թուրքիայի և Կոստանդնուպոլիսի դրությունը վճռված է և անմիջապես դառնալու է քննարկման թեմա»¹²⁷: Լարվածությունն էլ ավելի ակնհայտ դարձավ Պոտսդամում: Պաշտոնական Անկարան խոստովանում էր, որ զիտակցում է՝ երկու երկրների միջև ջերմ հարաբերությունների մասին խոսք չի կարող լինել, սակայն նման զարգացում ևս չէին սպասում,

¹²⁴ Печатнов В., От Союза к холодной ..., с. 54. Кочкин Н., СССР, Англия, США и «Турецкий кризис» ..., с. 65. Гасанлы Дж., СССР-Турция: от нейтралитета ..., с. 174.

¹²⁵ Кочкин Н., СССР, Англия, США и «Турецкий кризис» ..., с. 66.

¹²⁶ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Об отношениях между Турцией и СССР, «Улус», «Ени Асыр», «Тасвир», с. 2.

¹²⁷ Служба Внешней Разведки Российской Федерации ..., с. 156.

Գլուխ I. Խորհրդա-թուրքական հարաբերությունները Երկրորդ... 63

այն է, որ բանակցային սեղանին սկզբանական նեղուցներից բացի կհայտնվի նաև խորհրդա-թուրքական սահմանի վերագծման հարցը:

Գ Լ ՈՒ Խ Ա Ա Ա Ա Ա Ա

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԽՍՀՄ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

1. Հայկական հարցը խորհրդա-թուրքական հարաբերությունների համատեքստում և դաշնակից պետությունները

Ինչպես արդեն վերն ասվել է, Երկրորդ աշխարհամարտի տարիններին Գերմանիայի օգտին թուրքիայի վարած, այսպես կոչված, «ակտիվ չեղորդության» քաղաքականությունը պատերազմի ավարտից հետո հանգեցրել էր խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացման և նպաստավոր պայմաններ էր ստեղծել Հայկական հարցի բարձրացման ու լուծման համար: Այդպիսով, երկարատև լրությունից հետո, 1945 թ. հայկական հողերի պահանջատիրության հարցը կրկին առաջ է քաշվել ու դարձել Մեծ տերությունների քննարկման առարկա: Նշենք, խոսքը վերաբերում էր ոչ թե ամբողջ Արևմտյան Հայաստանին (թեպետ սփյուռքահայությունը Մեծ տերություններին նման պահանջ էր ներկայացրել՝ շեշտելով, որ եկել է ժամանակը իրականացնելու «Վիլսոնյան Հայաստանի» ստեղծման ծրագիրը), այլ միայն Կարսի ու Արդահանի նահանգներին, որոնք 1921 թ. Կարսի պայմանագրով տրվել էին թուրքիային: Ըստ սփյուռքահայերի՝ ԽՍՀՄ-ը պարտավորություն էր զգում այդ տարածքները վերադարձնելու Խորհրդային Հայաստանին¹:

¹ Կյուրեղյան Լ., Կարս և Արդահան ..., էջ 27: Աղպաշյան Հ., Հայկական հարցը ..., էջ 19:

Ինչպես սևծովյան նեղուցների, այնպես էլ վերոհիշյալ նահանգների հարցը ոչ հրապարակայնորեն առաջ էր քաշվել դեռևս 1940 թ. նոյեմբերին՝ ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովի՝ Բեռլին կատարած պաշտոնական այցի ընթացքում: Գերմանական կողմը Թուրքիային վերաբերող զրույցի ընթացքում ասել էր, թե «իրենք դեմ չեն, որ ԽՍՀՄ-ը նույնիսկ Թուրքիայից վերցնի Կարսը և Արդահանը»: Ըստ նյուրնբերգյան փաստաթղթերի՝ Մոլոտովը համաձայնվել է Թուրքիայի վրա համատեղ ճնշում գործադրելու առաջարկի քննարկմանը²: Մի շարք պատմաբաններ պնդում են, թե իրականում Հիտլերը Մոլոտովին տվել է Թուրքիայի դեմ գործելու ազատություն և նույնիսկ այս խնդրում առաջարկել է օգնություն, սակայն խորհրդային կողմը, վարելով ձկուն քաղաքականություն, դա մերժել է³: Որոշ փաստեր վկայում են, որ Թուրքիայի հարցը քննարկվել է ոչ թե Հիտլերի, այլ Ստալինի նախաձեռնությամբ: Կոմինտերնի գործադրությունը պարտուղար Գ. Դիմիտրովը⁴ իր հուշերում գրել է, որ 1940 թ. նոյեմբերի 25-ին Ստալինի հանդիպման ընթացքում ԽՍՀՄ-ի առաջնորդը հայտարարել է. «Մենք թուրքերին կվոնդենք Ասիա: Ի՞նչ է իրենից ներկայացնում Թուրքիան: Այնտեղ ապրում է երկու միլիոն վրացի, մեկուկես միլիոն հայ, մեկ միլիոն բուրդ և այլն: Թուրքերը ընդամենը 6-7 միլիոն են»⁵: Հասկա-

² Mendelsohn P., The Nuremberg ..., pp. 258–259.

³ Նոյն տեղում, էջ 259:

⁴ Գերգի Դիմիտրով (1882–1949 թթ.) – Բուլղարիայի և Միջազգային բանվորական շարժման գործիչ: 1934 թ. բնակություն է հաստատել ԽՍՀՄ-ում, վարելով այստեղ բարձր պաշտոններ: 1945 թ. վերադարձել է հայրենիք՝ Բուլղարիա և մեծ դեր խաղացել Բուլղարիայի ժողովրդական հանրապետության հոչակման գործում:

⁵ The Diary of Georgi Dimitrov, 1933–1949, New Haven, 2003, p. 137. Նկատենք, որ ներկայացված բնակչության թվաքանակը շափականցված է:

նալի է, որ, օգտվելով Գերմանիայի հետ համագործակցությունից, Ստալինը փորձել է վերջինիս համաձայնությամբ ԽՍՀՄ-ի համար ռազմավարական մեծ կարևորություն ունեցող որոշ տարածքներ վերցնել Թուրքիայից: Դա նախևառաջ վերաբերում էր սևծովյան նեղուցներին, նաև մեծ կարևորություն էր տրվում Թուրքիայի արևելյան վիլայեթներին: Հետագայում՝ 1946 թ., երբ հրապարակվել է նյուրնբերգյան դատավարության ընթացքում Գերմանիայի նախկին արտգործնախարար Ի. Ռիբենտրոպի վկայությունները 1940 թ. խորհրդագերմանական հանդիպումների վերաբերյալ, թուրքական մամուլն անմիջապես մեծ իրարանցում է բարձացրել և մեղադրել ԽՍՀՄ-ին ծավալապաշտական ծրագրերի համար⁶: 1946 թ. թուրքական «Ուլուս» թերթը գրել է, որ այս վկայությունն արդարացնում է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությունը⁷: Այլ կերպ ասած՝ թուրքական մամուլի գնահատմամբ՝ դա ընդամենը պաշտպանողական քաղաքականություն էր ԽՍՀՄ-ի ոտնաձգություններից:

Այսպիսով՝ 1940 թ. խորհրդագերմանական բանակցություններում քննարկվել է Թուրքիայի հարցը, սակայն փաստն այն է, որ դա լուրջ չի ընդունվել ո՞չ ԽՍՀՄ-ի, ո՞չ Էլ Գերմանիայի կողմից, և թեման լայն քննարկման նյութ է դարձել ավելի ուշ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո՝ 1945 թ.:

Մինչ պատերազմի ավարտը բրիտանական դիվանագիտական շրջանակներում այս խնդրի վերաբերյալ արդեն արվում էին առաջին կանխատեսումները: Այսպես, 1945 թ. սկզբներին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության պատ-

⁶ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль–июнь, 1946, Об отношениях между Турцией и СССР, «Улус», «Ени Асыр», «Тасвир», с. 2.

⁷ Նույն տեղում:

րաստած «Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմական միտումները» վերնագրով զեկուցագրում գնահատվել են խորհրդա-թուրքական հարաբերությունները և նշվել է, որ այդ երկրների միջև գոյություն ունեցող խնդիրներից առաջնայինը սևծովյան նեղուցների վերահսկումն է, երկրորդը՝ կովկասյան սահմանի փոփոխումը: Լոնդոնը վստահ էր՝ Սոսկվան Հայկական հարցը դնելու է Անկարայի առջև⁸: «Էկոնոմիստ» թերթը 1945 թ. հունվարին «Ռուսաստան և Միջին Արևելք» խորագրի տակ անվերապահ գրել: «Վերջապես Խորհրդային Հայաստանը կարող է պահանջել վերանայել 1921 թ. Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքված Կարսի պայմանագիրը»⁹:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ միայն 1945 թ. Հայկական հարցը արդիական դարձավ, ի՞նչ էր փոխվել տարիների ընթացքում: Դրա պատասխանը մեկն է. փոխվել էր ԽՍՀՄ-ի վերաբեր մունքը Թուրքիայի նկատմամբ, այդ երկրների միջև նախկին բարեկամական հարաբերությունների մասին այլևս խոսք չեր կարող լինել: Պատերազմի տարիներին Անկարայի հակա խորհրդային քաղաքականությանն ակնդետ հետևող Սոսկվան ներկայացրել էր իր վերջնագիրը: Այլ կերպ հնարավոր չեր. չէ՝ որ փոխվել էր աշխարհաբանական իրադրությունը, այևս ԽՍՀՄ-ը չեր դիտվում մեկուսացված, թույլ մի պետություն, այլ հանդես էր գալիս որպես աշխարհակալ տերություն, որի բանակն անպարտելի էր համարվում:

Խորհրդային կառավարությունը նախևառաջ ցանկանում էր վերականգնել Ռուսաստանի 1914 թ. պետական սահմանները: Այդ ծրագիրն իրագործելու համար Խորհրդային Միությունն արդեն կատարել էր որոշակի քայլեր. այդպես, վերադարձրել էր նախկինում ցարական Ռուսաստանին են-

⁸ Служба Внешней Разведки Российской Федерации ..., с. 168.

⁹ «The Economist» (London), 23. I. 1945.

թակա, իսկ 1918–1939 թթ. իրենց անկախությունը պահպանած մերձալժան էրկրները: 1944 թ. Ֆինլանդիայի հետ կնքված զինադադարի համաձայն վերահաստատվել էին 1940 թ. խորհրդա-ֆինական սահմանները, ԽՍՀՄ-ին էին անցել Պետսամոն և Արևմտյան Կարելիայի մի մասը: Մեծ տերությունների՝ Ռուսինիայի հետ 1944 թ. ստորագրած զինադադարի համաձայն՝ Ռուսինիայից Խորհրդային Սիուլքանը էին անցել Բեսարաբիան և Հյուսիսային Ռուսկովինայի հողատարածքները: Իսկ Դրիմի կոնֆերանսում որոշվել էր պահպանել խորհրդա-լեհական՝ 1941 թ. հունիսի 22-ին եղած սահմանը, այն է՝ ԽՍՀՄ-ին միացան նախապատերազման Լեհաստանի արևելյան շրջանները: Գերմանիայից Խորհրդային Սիուլքանն էին անցել Արևելյան Պրուսիայի հողատարածքների շուրջ կեսը՝ Քյոնինզուբերգ (Կալինինգրադ) քաղաքը՝ իր շրջակայրով, Չեխովովկալիայից՝ անդրկարպատյան շրջանները, Ճապոնիայից՝ 1905 թ. ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով Ռուսաստանի կորցրած Հյուսիսային Սախալինը և Կուրիլյան կղզիների մեծ մասը: Մնում էր միայն վերահաստատել ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության 1914 թ. պետական սահմանները: Այսինքն՝ վերադարձնել Կարսի ու Արդահանի նահանգները: Դա ևս հիմնավոր պատճառ էր, որ 1945 թ. հայկական հողային հարցը կրկին արդիական դառնա:

Բացի այդ, խորհրդային ղեկավարության կողմից միտում կար բավարարելու ԽՍՀՄ-ի այն բոլոր հանրապետությունների պահանջները, որոնք խոչոր ներդրում էին ունեցել Գերմանիայի դեմ տարած հաղթանակի գործում: Այդ հանրապետությունների թվին էր պատկանում նաև Խորհրդային Հայաստանը, որի միակ պահանջը Արևմտյան Հայաստանի տարածքների հարցն էր: Նկատենք, առաջին անգամ էր, որ Խորհրդային Սիուլքան և համայն հայության շահերը համընկնում էին: Ստալինգրադի ճակատամարտից հետո հայկական

Սփյուռքը ևս ակտիվ քայեր էր ձեռնարկում հայկական հողերի հարցը միջազգային հանրությանը ներկայացնելու ուղղությամբ: Պաշտոնական Երևանը գիտակցում էր, որ թուրքերին տարածքային պահանջներ ներկայացնելու Խորհրդային Միության որոշմանը նպաստել էր ոչ թե իր տարածքի ընդլայնման ծրագիրն ու հայ ժողովրդի արդարացի պահանջը, այլ պատերազմի տարիներին չեզոքության քողի տակ Անկարայի վարած հակախորհրդային քաղաքականությունը: Այլ կերպ ասած՝ դա առիթ հանդիսացավ Թուրքիային հողային պահանջներ ներկայացնելու համար: Մինչդեռ այդ փաստը այնքան էլ եսկան չեր, քանի որ հնարավորություն էր ստեղծվել լուծել մոռացության մատնված հողային խնդիրը: Պատմաբան Ա. Վիրաբյանը գրում է. «Խորհրդային Հայաստանի ղեկավարության հիմնական դիրքորոշումը խնդրո առկա հարցում հետևյալն էր.

1. Օգտվելով այն հանգամանքից, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին Թուրքիան ակտիվորեն օժանդակել է Գերմանիային և նույնիսկ պատրաստվում էր պատերազմի մեջ մտնել նրա կողմից, բարձրացնել Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը:
2. Կազմակերպել աշխարհասփյուռ հայերի հայրենադարձությունը պատմական հայրենիք:
3. 1921 թ. անարդարացիորեն Խորհրդային Ազգբեցանին անցած հայկական հողերի միացումը Խորհրդային Հայաստանին»¹⁰:

Նկատենք, որ 1945 թ. մարտի 19-ին ԽՍՀՄ-ի կողմից 1925 թ. ղեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական «բարեկամության» պայմանագրի չեղյալ հայտարարումից անմիջապես հետո պաշտոնական Մոսկվան Անկարային ներկայացվելիք

¹⁰ Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև, Էջ 269-270:

տարածքային պահանջների հետ կապված աշխատանքներ է տարել: Մայիսի 3-ին Հայկական ԽՍՀ արտգործնախարար Ս. Վ. Կարապետյանը ԽՍՀՄ-ի արտգործնախարարի տեղակալ Ս. Ի. Կավլշարաձեի ապրիլի 17-ի գրության համաձայն, Սոսկվային «Թուրքիային անցած նախկին հայկական տարածքների և արտերկրում ապրող հայերի Հայրենիք վերադառնալու հետապորությունների մասին» խորագրով զեկուցագիր է ներկայացրել: Դրանում, ինչպես այդ ժամանակաշրջանի բոլոր փաստաթղթերում, տեղեկատվական նպատակներով տրվել է Հայկական հարցի պատմության համառոտ ակնարկ և Թուրքիայում գտնվող հայկական տարածքների իրավիճակի մասին բազմակողմանի տեղեկագիր և եզրակացություն: Ավելին՝ Ս. Կարապետյանն առաջարկում է տարածքների խնդրի լուծման երեք ընդունելի տարբերակ: Դրանք են՝

- Կարսի, Արդահանի և Սուրբալուի վերամիավորումը ԽՍՀՄ-ին, այլ կերպ ասած 1878–1914 թթ. ռուս-թուրքական պետական սահմանի վերականգնումը:
- Սան Ստեֆանոյի պայմանագրով որոշված սահմանի վերականգնումը: Դա նշանակում է, որ վերը նշված տարածքներից բացի վերադարձվելու էր նաև Ալաշկերտի հովիտը Բայազետ քաղաքի հետ:
- Կարսից, Սուրբալուից և Ալաշկերտի հովիտից բացի ԽՍՀՄ-ին վերադարձնել նաև 6 հայկական վիլայեթներից 3-ը, այն է՝ Երզրումի, Վանի և Ֆիթլիսի¹¹:

Այս երեք տարբերակից Խորհրդային Սիությունը նախընտրել է առաջինը: Եվ ինչպես առաջին զյուում ենք նշել, չնայած Թուրքիան ձգտում էր վերականգնել խորհրդա-թուրքական պայմանագիրը, սակայն մտադիր չէր դա անել այս հոդերը վերադարձնելու հաշվին:

¹¹ Армения и советско-турецкие отношения в дипломатических документах ..., с. 75.

Սկզբնական շրջանում դաշնակից պետությունները խորհրդա-թուրքական հարաբերություններում փորձում էին չեղորություն պահպանել. Լոնդոնին և Վաշինգտոնին հիմնականում հետաքրքրում էր սեծովյան նեղուցների հարցը: Մաս ֆրանշիսկոյում տեղի ունեցած ՍԱԿ-ի հիմնադիր ժողովի թուրքական պատվիրակության անդամ Ն. Էրիմը, ամփոփելով Մեծ տերությունների տեսակետը, տեղեկացրել է. «Խորհրդային Սիոնթեան յուշագիրեն ետք, Թուրքիա Ս. Նահանգներուն դիմեց եւ հաղորդեց թէ Ստալինի պահանջներուն Ժատողական պատասխան պիտի տայ. կրնաք թէ մեզի օգնել»¹²: Ըստ թուրք դիվանագետի՝ ԱՍՍ-ի պատասխանը հետևյալն էր. «Պատերազմէն հոգնած ենք, զինուտրները արձակում կը պահանջեն, տաք հազար մղոնք կտրելով ձեզի օժանդակութեան հասնիլ անկարելի է. համաձայնեցէք Խորհրդային Սիոնթեան հետ»¹³: Անկարայի կառավարությունը դիմել է նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իդենին, որը համակարծիք է եղել Վաշինգտոնի հետ՝ ասելով. «Ու ՚ր որ է՝ բանակին մեջ յեղափոխութիւն պիտի ծագի, համաձայնեցէ՛ք Խորհրդային Սիոնթեան հետ»¹⁴:

Չնայած նման վերաբերմունքին՝ Մեծ տերությունների դեկավարները Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջատիրության հարցը ստիպված են եղել քննարկել 1945 թ. կայացած ֆորմալ և ոչ ֆորմալ բոլոր հանդիպումներում: Հարցն առաջին անգամ պաշտոնապես բարձրացվել է 1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը Բեռլինից ոչ հեռու՝ Պոտսդամում գումարված հակահիտլերյան կոալիցիայի երեք Մեծ տերությունների դեկավարների հանդիպմանը: Ի տարբերություն Թեհրանի և Ղրիմի՝ այս խորհրդաժողովում մասնակիցների հիմնական կազմը որոշակի փոփոխության

¹² «Ազգակ», 5. X. 1977:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

Էր Ենթարկվել մասնակցում էին Ի. Ստալինը, ԱՄՄ-ի նոր նախագահ Հարրի Տրումենը (որն այդ պաշտոնում փոխարինել էր 1945 թ. ապրիլի 12-ին հանկարծամահ եղած Ֆ. Ռուզվելտին): Խորհրդաժողովում անզիական կողմը նախ ներկայացնում էր Ու. Չերչիլը, իսկ խորհրդարանական ընտրություններից հետո նրան փոխարինել է նոր վարչապետ Կ. Էտլին:

Պոտսդամում Մեծ տերությունները Թուրքիայի խնդրանքով անդրադան խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամին: Դեռևս խորհրդաժողովի նախօրեին Հայկական հարցի շուրջ քննարկումները ստացել էին մեծ ծավալ: Չնայած Սան Ֆրանցիսկոյում ընթացող ՄԱԿ-ի հիմնադիր համագումարի շրջանակում թուրքական կողմը ծրագրել էր ԽՍՀՄ-ի արտաքին գերատեսչության դեկավարի հետ հանդիպմանն անդրադառնալ պայմանագրի շերկարածգելու պատճառով խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած խնդիրներին, սակայն, ի զարմանս թուրքերի, մայիսի 7-ին Խորհրդային Միության և Թուրքիայի արտգործնախարարների հանդիպմանը Սոլյուտովն իրեն զուսպ է պահել, Սաքան էլ հետևել է նրա պահվածքին՝ հույս ունենալով, որ Մոսկվան մտափոխ է եղել¹⁵: Հուլիսի 7-ին Մոսկվայում կայացած Սոլյուտով-Սաքան հանդիպումից, սակայն, պարզ դարձավ, որ դա այդպես չէր: Քանի որ շուրջ երեք ամիս տևած իրենց փորձերը՝ այս հարցի շուրջ ԽՍՀՄ-ի հետ համաձայնության գալու, անհաջողության էին մատնվել, ուստի թուրքերն օգնության խնդրանքով դիմեցին Մեծ Բրիտանիային: Պաշտոնական Անկարան Լոնդոնին հավաստիացնում է, որ ԽՍՀՄ-ի պահանջները բավարարելու դեպքում առաջին հերթին տուժելու է Անզիան¹⁶: Այլ կերպ ասած՝ Մերձավոր Արևելյում վերջինիս դիրքերի ամրությունն անմիջականորեն

¹⁵ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 291.

¹⁶ Кочкин Н., СССР, Англия, США и «Турецкий кризис» ..., с. 64.

կապ ունի Թուրքիայի տարածքային ամբողջականության հետ: Այս առիթով, հովանուն Կահիրեկից բրիտանացի դիվանագետ է. Կրիզը արտգործնախարար Ա. Իդենին տեղեկացրել է, որ թուրքական կողմն այն տեսակետին է, որ իրենց «ռուսների ձեռքը հանձնելով՝ առաջատար տերությունները մեծ սխալ են գործում, քանի որ չեն խոշընդոտում Կարմիր ծովի և Պարսից ծոցի շրջանում ռուսական ազդեցության մեծացմանը: Փաստաթղթից պարզ է դառնում, որ բրիտանացի դիվանագետը խուճապի մեջ հայտնված կողմին վստահեցրել է, թե Լոնդոնը մեծ կարևորություն է տալիս Թուրքիայի անկախությանը և անվլո-թուրքական դաշինքին, ավելին՝ Մեծ Բրիտանիան թույլ չի տա, որ նեղուցների հարցը քննարկվի միայն ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև, քանի որ դա միայն նրանց չի վերաբերում¹⁷:

Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքային այդ մասին պաշտոնապես հայտարարել է նաև իր բրիտանացի պաշտոնակիցը: Պուտաղամի խորհրդաժողովի նախօրեկին Մեծ Բրիտանիայից օգնություն խնդրելու նպատակով Լոնդոն մեկնած Հ. Սաքան հայտնվել էր բավականին դժվարին կացության մեջ: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իդենը նրան հասկացրել էր, թե ցանկանում է նեղուցների հարցը զատել «թուրք-սովետական դաշնագրի վերականգնման խնդրեն, այսինքն Կարսի և Արդահանի Ռուսիոյ թողուելու հարցեն»¹⁸: Այս առաջարկը, իհարկե, անընդունելի էր Անկարայի համար, քանի որ նրա համար նեղուցներն ու արևելյան նահանգները նույն կարևորությունն ունեին: Լոնդոնում ևս Սաքան շեշտել էր, որ իրենք ցանկանում են բարելավել խորհրդա-թուրքական հարաբերությունները, սակայն ոչ Կարսի ու Արդահանի կորստի գնով¹⁹: Կրկնենք, Թուրքիան Խորհրդային Միության

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ «Ժողովուրդ» (Փարիզ), 18. VIII. 1945:

¹⁹ Նույն տեղում:

պահանջների հարցում այս նույն տեսակետը հայտնել էր և Սան Ֆրանցիսկոյի ՍԱԿ-ի վեհաժողովում, և Լոնդոնում կայացած արտգործնախարարների հանդիպմանը՝ նշելով, որ «...ինք այս խնդիրը կյանքի և մահու հարց մը կնկատե և հայկական սահմանին վրայ առանց իր համաձայնության կատարած որևէ փոփոխության պիտի չենթարկվի»²⁰:

Պոտսդամյան խորհրդաժողովի նախօրեին Թուրքիան դիմել է նաև Վաշինգտոնին: Հուլիսի 7-ին ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Խ. Բայդուրայի և պետքարտուղարի տեղակալ Զ. Գրյուի միջև կայացած հանդիպման ժամանակ, ամերիկյան կողմը վստահեցրել է, որ Մոլոտով-Սարգս գրուցն ընդամենն ընկերական բնույթ է կրել, և որ Թուրքիայի անհանգստությունը տեղին չէ: Գրյուն տեղեկացրել է նաև, որ Թուրքիայի հարցը քննարկվելու է Պոտսդամի խորհրդաժողովում և նախագահ Շ. Տրումենի պահանջով պետքարտուղարությունը համապատասխան փաստաթղթեր է պատրաստում²¹: Նկատենք, այն վկայում է, որ ինչպես ԱՄՆ-ին, այնպես էլ Մեծ Բրիտանիային հուզում էր միայն սեծովյան նեղուցների հարցը:

Ի դեպ, 1975 թ. թուրքական «Հյուրիեթ» թերթը, անդրադառնալով Պոտսդամի խորհրդաժողովի նախօրեին Թուրքիայի շուրջ ստեղծված իրավիճակին, գրել է, թե «Երբ Պոտսդամյանը ներկայացրեց պահանջները, այն ժամանակ, նրա հարաբերությունները ոչ Ամերիկայի, ոչ էլ Անգլիայի հետ լարված չեին, ավելին, այդ պահանջները քննարկվեցին Պոտսդամում»²²: Ըստ թերթի՝ երկիրը հայտնվել էր բավականին դժվար իրավիճակում, և եթե հետագայում Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ-ն չփոխեին իրենց վերաբերմունքը ինչպես ԽՍՀՄ-ի,

²⁰ «Ժողովուրդ», 16. IX. 1945:

²¹ Olaylarla Türk dış Politikası (1919–1973), Üçüncü baskı, Ankara, 1974, s. 194–195.

²² «Hürriyet» (İstanbul), 23. IV. 1975.

այնպես էլ Թուրքիայի նկատմամբ, ապա իրենք կզրկվեին արևելյան նահանգներից²³:

Թուրքիային Խորհրդային Միության ներկայացրած պահանջների հարցն առաջին անգամ քննարկվել է Պոտսդամի խորհրդաժողովի աշխատանքների սկսման նախօրեին՝ հուլիսի 16-ին՝ Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի արտգործնախարարների միջև կայացած հանդիպման ժամանակ: Ա. Իդենը Վ. Սոլյոտովին տեղեկացրել է, որ Լոնդոնում հանդիպել է թուրքերի հետ: Վերջինիս համար դա, կարծես թե, անակնկալ չէր. նա կրկնում է բազմից արած այն հայտարարությունը, որ 1921 թ. թուրքերն օգտվել են ԽՍՀՄ-ի թուրքականից և նրանից խլել Խորհրդային Հայաստանի տարածքի մի մասը: ԽՍՀՄ-ում հայերը իրենց զգում են վիրավորված՝ այդ պատճառով խորհրդային կառավարությունը բարձրացրել է այդ տարածքների վերադարձման հարցը: Ինչ վերաբերում է սևծովյան նեղուցների հարցին, ապա խորհրդային կառավարությունը վկայուց է նախազգուշացրել, որ Սոնտրոյի համաձայնագիրն իրեն չի արդարացնում²⁴: Իդենը չի թաքցրել, որ ԽՍՀՄ-ի կողմից սևծովյան նեղուցների հարցի առաջ քաշելն իրենց համար անակնկալ չէր: Ինչ վերաբերում է Թուրքիային ներկայացված հողային պահանջատիրությանը, ապա նա հայտարարել է, որ առաջին անգամ է այդ մասին լսում²⁵: Իդենն այդ հարցում չէր սիսալվում, քանի որ Խորհրդային Միությունը Թուրքիային նման պահանջ նախկինում չէր ներկայացրել: Եվ, ըստ այդմ, Իդենն այն կարծիքն էր, որ ԽՍՀՄ-ը և Թուրքիան հողային խնդիր չունեն: Սոլյոտովը, պարզաբանելով ստեղծված թյուրիմացությունը, նշել է, որ հարցը ծագել է այն ժամանակ, երբ պաշտոնական Անկարան հայտարարել է, որ պատրաստ է

²³ Նոյն տեղում:

²⁴ Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., 1980, с. 37.

²⁵ Նոյն տեղում, էջ 38:

Սոսկվայի հետ պայմանագիր կնքել ցանկացած պայմանով: Օգտվելով Անկարայի պատրաստակամությունից՝ Սոսկվան էլ առաջադրել է իր պայմանները: Ավելին՝ ԽՍՀՄ-ի արտաքին գերատեսչության ղեկավարը շեշտել է. «Խոսքն այն հոդերի մասին է, որոնք չեն պատկանում Թուրքիային: Նրանք անարդարացի են վարվել՝ դրանք խլելով Խորհրդային Միությունից: Լեհերը ևս անարդարացի են եղել՝ 1921 թ. զավթելով Խորհրդային տարածքների մի մասը: Սակայն լեհերը որոշեցին վերանայել իրենց պահվածքը և համաձայնվեցին այժմ վերադարձնել այդ տարածքները Խորհրդային Միությանը»²⁶: Մոլոտովն ասել է, որ այս օրինակը բերել է նաև թուրքերին: Իդենն էլ պատասխանել է, որ Թուրքիայում չկա Քենոզոնի գիծ²⁷: Ի վերջո, անզիւճական կողմը ցանկացել է պարզել թե Թուրքիայում որքա՞ն հայ է ապրում: Մոլոտովը տեղեկացրել է, որ Թուրքիայում 400–500 հազար հայ կա, Խորհրդային Հայաստանում ապրում է 1 մլն հայ, իսկ Խորհրդային Հայաստանից դուրս՝ արտասահմանում, հայերի թիվն անցնում է 1 մլն-ից²⁸: Հանդիպման ժամանակ Մոլոտովն առաջին անգամ այն կարծիքն է հայտնել, որ երբ Խորհրդային Հայաստանի տարածքն ընդարձակվի, ապա արտասահմանում ապրող շատ հայեր կշտապեն վերադառնալ հայրենիք:

Նկատենք, որ, հետազոտում միջազգային ասպարեզում անդրադառնալով այս հարցին, խորհրդային կողմը հիմնական շեշտը դրել է այդ պատճառաբանության վրա, այն է՝ Խորհրդային Հայաստանի տարածքը փոքր է և դա խոչընդոտում է սփյուռքահայերի հայրենադարձությանը, որոնք

²⁶ Корхмазян Р., Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании. – Страны и народы Ближнего и Среднего Востока, Еր., 1996, № 16, с. 24.

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

բազմիցս ԽՍՀՄ-ի կառավարությանը դիմել են նման ցանկությամբ:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած հարցերի քննարկումը շարունակվել է Պոտսդամում՝ Ստալին-Չերչիլ-Սրումեն հանդիպման ժամանակ: Նախ այն ոչ պաշտոնապես քննարկվել է հուլիսի 18-ին՝ Մեծ տերությունների ղեկավարների պատվին տրված ճաշի ընթացքում, ապա հուլիսի 22-ին մացվել է վեցերորդ նիստի օրակարգ, որի նախագահողը եղել է Հ. Տրումենը:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլն իր ելույթում կարևորել է Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջատիրության հարցի քննարկումը: Նա ասել է, որ թուրքերն անհանգստացած են Բուլղարիայում բուլղարական և խորհրդային գորքերի կուտակմամբ, բացի այդ՝ Սոսկվայում Սարպերի և Մոլոտովի միջև կայացած բանակցություններում հիշատակվել են Թուրքիայի արևելյան սահմանների փոփոխման և սեծովյան նեղուցներում խորհրդային հանգրվանների տեղակայման հարցերը, ուստի Չերչիլը փորձել է պարզել ԽՍՀՄ-ի դիրքորոշումն այդ խնդրի շուրջ²⁹:

Մեծ Բրիտանիայի վարչապետի և ԱՄՆ-ի նախագահի հետաքրքրությունը բավարարելու պատասխանատվությունը Ստալինը վստահել է Մոլոտովին: ԽՍՀՄ-ի արտգործնախարարը բացատրել է, որ խորհրդա-թուրքական նոր պայմանագիր կնքելը հնարավոր է միայն երկու երկրների միջև գոյություն ունեցող տարածայնությունները կարգավորելուց հետո³⁰: Նա ներկայացրել է այն դրդապատճառները, որոնք ստիպել են իրենց նոր պայմանագիր կնքել ու առաջարկ անել՝ նոր պայմաններով: Ըստ Մոլոտովի՝ միասին պայմանագիր ստորագրելը նշանակում է համատեղ պաշտպանել խորհրդա-

²⁹ Советский Союз на международных конференциях т. VI, с. 134—135.

³⁰ Նոյն տեղում:

թուրքական սահմանները: Նա հիշեցրել է, որ 1921 թ. Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի որոշ տարածքներ անցել է Թուրքիային՝ ավելացնելով «Խոսքը վերաբերում է Կարսի, Արդվինի և Արդահանի շրջաններին: Ահա թուրքերի խլած տարածքների քարտեզը: (Փոխանցում է քարտեզը): Այդ պատճառով իմ կողմից հայտարարվել է, որ միության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է կարգավորել Վրաստանի և Հայաստանի տարածքային խնդիրները, վերադարձնել նրանց այդ տարածքը»³¹:

Հուլիսի 23-ի նիստում Ու. Չերչիլը հանդես է գալիս Թուրքիայի պաշտպանությամբ՝ առաջացնելով Ստալինի զայրույթը: ԽՍՀՄ-ի ղեկավարն այդ առիթով հայտարարել է. «Վատահեցնում եմ՝ բոլղարական զորքը չէ, որ Վախեցրել է թուրքերին: Հնարավո՞ր է, որ թուրքերին վախեցրել է սահմանի ուղղման մեր առաջարկը: Սակայն խոսքն այն մասին է, որ վերականգնվեն մինչև Առաջին համաշխարհային պատերազմը եղած սահմանները: Ես նկատի ունեմ Կարսի մարզը, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում: Սահմանի վերականգման հարցը չերծագի, եթե թուրքերը չղնեին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև պայմանագիր կնքելու անհրաժեշտության հարցը: Իսկ միություն նշանակում է, որ մենք պարտավորվում ենք պաշտպանել Թուրքիայի սահմանը, ինչպես և Թուրքիան պարտավորվում է պաշտպանել մեր սահմանը: Բայց մենք գտնում ենք՝ Կարսի ու Արդահանի շրջանում սահմանը ճիշտ չի գծված, և մենք հայտարարեցինք Թուրքիային, որ եթե նա ցանկանում է մեզ հետ պայմանագիր կնքել, ապա պետք է ուղղել այդ սահմանը, եթե նա չի ցանկանում գնալ դրան, ապա միության հարցը փակվում է»³²:

³¹ Նույն տեղում, էջ 136:

³² Նույն տեղում, էջ 148–149:

Խորհրդա-թուրքական նոր սահմանի հարցը Պոտսդամում, չնայած բուռն քննարկումներին, իր լուծումը չի ստացել: Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն որոշել են այն թողնել երկու երկրների հայեցողությանը, այսինքն՝ հարցը պետք է լուծվեր երկկողմանի բանակցությունների ընթացքում: ԱՄՆ-ի նախագահ Շարի Տրումենն իր հուշերում գրում է, որ Պոտսդամում ինքը հայտարարել է, թե «տարածքային հարցը դա Ռուսաստանի (ԱՄՆ-ի նախագահը նկատի ունի ԽՍՀՄ-ին. այդ ժամանակաշրջանի դիվանագիտական նամակագրությունում Խորհրդային Միությունը հաճախակի հիշատակվել է որպես Խորհրդային Ռուսաստան կամ պարզապես Ռուսաստան. – Ք.Ս.) ու Թուրքիայի գործն է և այն պետք լուծվի երկու երկրների համատեղ երկխոսության արդյունքում»³³:

Պոտսդամյան բանակցություններում խորհրդա-թուրքական հարաբերությունների հարցի քննարկման մանրամասները թուրքական կողմն իմացել է հուլիսի 26-ին՝ Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան U. Փիթերսոնից: Այդ հանդիպմանը վերջինս Թուրքիայի վարչապետ Շ. Սարաջօղլուին խորհուրդ է տվել զգուշություն ցուցաբերել ԽՍՀՄ-ի հարցում: Մինչդեռ թուրք քաղաքական գործիչներին հետաքրքրել է ընդհամենը մեկ հարց. «ԽՍՀՄ-ին իր պահանջածից ի՞նչ որ մի բան խոստացել են, թե ոչ»³⁴:

Արտասահմանյան և սփյուռքահայ պարբերականներն ել այդ օրերին ընդհամենը մեկ նախադասությունով հաղորդում էին, որ Պոտսդամի խորհրդաժողովում խոսվել է նաև Հայաստանի սահմանների մասին: Երկար տարիներ խնդրի շուրջ տեղի ունեցած գրույցի մանրամասները հայտնի չեին: Դրա վերաբերյալ արձանագությունները նույնիսկ չեին ընդգրկվել 1970 թ. Երևանում հրատարակված Պոտսդամի խորհրդաժո-

³³ Truman H., Memories ..., p. 388.

³⁴ Arcayürek C., Şeytan Üçgeninde ..., s. 121.

դովի փաստաթղթերի ժողովածուում՝ ի տարբերություն նրա, որ դրանում տեղ էին գտել նեղուցների հարցին վերաբերող արձանագրությունները³⁵: ԱՄՆ-ի նախագահ Շ. Տրումենն իր հուշերում անդրադարձել է Պոտսդամում Մեծ տերությունների միջև Կարսի ու Արդահանի շուրջ տեղի ունեցած մտքերի փոխանակման մանրամասներին: Նա գրել է. «...ինչ վերաբերում էր սահմանի փոփխմանը, ապա նա (խոսքը Ստալինի մասին է. – Ք.Ս.) փորձում էր բացատրել, որ թուրքերին վախեցրել է մինչ պատերազմը՝ ցարի օրոք, երկու երկների միջև գոյություն ունեցող սահմանի վերականգման հնարավորությունը: Նա ասել է, որ խոսքը գնում է Կարսի (որը նախկինում պատկանել է Հայաստանին) և Արդահանի (որն էլ պատկանել է Վրաստանին) մասին և հավատացրել, որ սահմանի վերագծման հարցը չէր բարձրացվի, եթե թուրքերը հանդես չգային Ռուսաստանի հետ միության պայմանագիր կնքելու առաջարկով: Միություն նշանակում է, որ երկու կողմերը պարտավոր են համատեղ պաշտպանել իրենց միջև գոյություն ունեցող սահմանը: Ռուսական կողմի կարծիքով՝ ներկայում գծված սահմանը սխալ է և, որ նրանք հայտնել են թուրքերին, որ միության պայմանագրի կնքման դեպքում անհրաժեշտ է փոխել սահմանը: Եթե դա անընդունել է թուրքերի համար, ապա միության հարցը կփակվի: Այժմ Ստալինը ցանկանում էր իմանալ՝ ինչի՞ն են վախենում»³⁶:

Ըստ արևմտյան պատմաբանների՝ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ծագած տարածքային հիմնախնդիրը խորհրդաժողովում պաշտոնապես չի ներկայացվել, քննարկումն էլ տեղեկատվական բնույթ է կրել: Ամերիկացի վերլուծաբանները դաշնակից երկրների դեկավարների պոտսդամյան հանդիպումից հետո գրել են. «...ըստ պաշտոնական աղբյուրների,

³⁵ Թէհրան, Յալթա, Պոտսդամ..., էջ 442–443:

³⁶ Truman H., Memories..., pp. 413–414.

Ռուսաստանը երբեք նոտա չի ներկայացրել, որոնք կպարունակեին այդ պահանջները (խոսքը գնում է Կարսի և Արդահանի մասին): Այդ պատճառով պաշտոնական բանակցություններ չեն սկսվել, չնայած խնդիրը երկու անզամ Մոսկվայում բարձրացվել է ոչ պաշտոնական միջավայրում: Թուրքական տեսակետն այն է, որ եթե ռուսները որևէ պահանջ ունեն, ապա պետք է դնեն պաշտոնական քննարկման»³⁷: Նաև այն կարծիքն է եղել, թե ԽՍՀՄ-ն այս հարցին ընթացք չի տալու. «Բավականին անսպասելի էր Թուրքիայի հետ սահմանների վերանայման ռուսական առաջարկը: Այնուամենայնիվ, հավանական է, որ մասնավոր բնույթ ունեցող այս պահանջի իրականացման շուրջ ռուսները չպնդեն»³⁸:

Հարկավոր է արձանագրել, չնայած Պոտսդամում խորհրդային ղեկավարներին չհաջողվեց տարածքային հարցում հաջողության հասնել, սակայն Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած այդ պահանջները դուրս եկան երկու երկրների քննարկման շրջանակից ու հայտնվեցին Մեծ տերությունների բանակցային սեղանին: Խորհրդային Միությունն էլ շարունակեց Թուրքիայի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը: 1945 թ. օգոստոսի 18-ին ԽՍՀՄ-ի արտգործնախարարության պատրաստած փաստաթղթի համաձայն՝ Թուրքիան պարտավոր էր Հայաստանին և Վրաստանին վերադարձնել 26000 կմ² տարածք, որից 20500 կմ² նախատեսված էր Հայաստանի, իսկ 5500 կմ²՝ Վրաստանի համար³⁹: Փաստաթղթում հիմնավորվել է Թուրքիային ներկայացված տարածքային պահանջների հարցը և բերվել է Պոտսդամում Մոլոտովի առաջադրած այն պնդումը, թե Հայաստանը ժամանակակից պետություններից միակն է, որտեղ ապրում են հայ բնակչության միայն

³⁷ «New York Times» (New York), 6. VIII. 1945.

³⁸ Նույն տեղում, 29. VIII. 1945:

³⁹ АВП РФ, ф.06, оп. 7, п. 47, д. 762 (К советско-турецким отношениям. 18.08.1945 г.), л. 13-18.

փոքր մասը, ընդամենը մեկ միլիոն։ Մինչդեռ աշխարհում կա մեկ միլիոնից ավելի հայ, որոնք հիմնականում զաղթել են Թուրքիայից։ Հատ փաստաթղթի՝ նման իրավիճակը պայմանավորված է նրանով, որ հայ ժողովրդի պատմական հողերի մեծ մասը գտնվում է ուրիշի ձեռքում⁴⁰։

Հայկական հարցի շուրջ հաջորդ քննարկումը տեղի է ունեցել 1945 թ. սեպտեմբերին՝ Լոնդոնում կայացած Մեծ տերությունների արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ։ Հատ ամերիկացի հայտնի լրագրող Կոստանդին Բրաունի՝ այսուղև ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովն արծարծել է ինչպես նեղուցների, այնպես էլ Կարսի ու Արդահանի հարցը և հասկացրել, թե «նեղուցներու հակակշիռ միջազգային պետք չէ ըլլայ, և միայն պետք է հանձնվի Ս. Միության և Թուրքիոյ, ինչպես և Կարսն ու Արտահանը պետք է կցուին Ս. Միության»⁴¹։ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Բյորնսը Բրաունին ասել է, որ Լոնդոնից մեկնել է այն տպավորությամբ, «թե Սոսկվայի կառավարությունն ավելի շուտ պզուիկ զիջումներ պիտի ընէ Պալքաններու մեջ, բայց երբեք տեղի պիտի չտայ նեղուցներու և Կարսի–Արդահանի ինդրի մեջ»⁴²։ Թուրքիան էլ հարցի վերաբերյալ Անգլիային և ԱՄՆ-ին հայտնել է, թե «որամադիր չէ Կարսի և Արտահանի հողամասերը Սով. Միությանը թողելու»⁴³։ Ավելին, տեղեկացրել է, որ իր բանակը զորացրված չէ և մեկ միլիոն մարդով «միշտ պատերազմական վիճակի մեջ է»⁴⁴։

1945 թ. հոկտեմբերի վերջին Ռումինիայի և Բուլղարիայի սահմաններում խորհրդային զորքերի կուտակումները թուրքերին ստիպել է ԽՍՀՄ-ի դեմ ռազմական զործողութ-

⁴⁰ Նույն տեղում, թ. 18:

⁴¹ «Զարթօնք» (Բեյրութ), 5. XII. 1967:

⁴² Նույն տեղում:

⁴³ «Ժողովուրդ», 19. IX. 1945:

⁴⁴ Նույն տեղում, 18. IX. 1945:

յունների պատրաստվել: Ըստ դիվանագիտական աղբյուրների՝ այդ օրերին թուրք հասարակության շրջանում իրարարանցում է տիրել⁴⁵: Նկատենք, որ 1945 թ. սեպտեմբերին Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Ա. Օրբեյն բրիտանական կողմի հետ ունեցած գրույցում հայտնել է, թե դեռևս հունիսին ԽՍՀՄ-ը պատրաստվում էր մտնել Կարսի և Արդահանի վիլայեթներ ու դաշնակից պետություններին կանգնեցնել կատարված իրողության առջև: Ըստ փաստաթղթի՝ այդ ժամանակ Լոնդոնը և Վաշինգտոնը թերահավատորեն են ընդունել թուրք պաշտոնյաների նմանատիպ հայտարարությունները⁴⁶: Ավելին՝ սեպտեմբերի սկզբին ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի դեսպան Ա. Հարիմանը պետքարտուղար Զ. Բյորնսին տեղեկացրել է, որ Խորհրդային Սիությունում Թուրքիայի դեմ ռազմական որևէ գործողություն չի պատրաստվում⁴⁷:

Այնուհանդերձ, հոկտեմբերին իրավիճակն այնքան էր լարվել, որ թուրքական պաշտոնական շրջանակները վստահորեն խստում էին հնարավոր պատերազմի մասին: Հոկտեմբերի 27-ին Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան է. Վիլսոնը Վաշինգտոն ուղարկած գրության մեջ տեղեկացրել է, որ մի շաբթ հանդիպումներ է ունեցել որոնցից հետո ընկել է տարակուսանքի մեջ: Նախ հանդիպել է Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքայի հետ, ումից իմացել է, որ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբը նախապատրաստական աշխատանքներ է տանում ԽՍՀՄ-ի դեմ պատերազմելու համար: Այնուհետև հանդիպել էր Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Փիթերսոնին, որն էլ վստահեցրել է, որ «նյարդերի պատերազմ»-ը նոր փուլ է թևակոխում⁴⁸:

⁴⁵ FRUS. Diplomatic Papers, 1945. The Near East ..., v. VIII, p. 1244.

⁴⁶ Մարդկան Զ. Հայկական հարցի մասին, Պեյրութ, 1978, էջ 32:

⁴⁷ FRUS. Diplomatic Papers, 1945. The Near East ..., v. VIII, pp. 1245–1246.

⁴⁸ Սույն տեղում, էջ 1261–1262:

Հավանական պատերազմի հետ կապված հիստերիան Թուրքիայում այնքան էր մեծացել, որ հոկտեմբերի 29-ին Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպան Ա. Հարիմանը ստիպված է եղել հանդիպել ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովին և վերջինից ճշտել՝ «այդ լուրերը իրականությանը մոտ են, թե ոչ»⁴⁹: Այն, որ Մոլոտովը պաշտոնապես հերքել է այդ լուրերը, թուրքական կողմին չի բավարարել: Հոկտեմբերի 31-ին Թուրքիայի զինված ուժերի զինավոր շտաբի պետ, գեներալ Օրբեյը ԱՄՆ-ի դեսպանատան ռազմական հարցերով պատասխանատու Զ. Հարիմանին ասել է, որ իրենց անհանգստությունը հիմքեր ունի. ԽՍՀՄ-ը կովկասյան սահմանի երկանքով տեղակայել է 10-15 դիվիզիա, ինչը վկայում է, որ խորհրդային գորքերը պատրաստվում են ներխուժել Թուրքիա⁵⁰:

Նոյեմբերի 1-ին Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուն մեջ-լսի նստաշրջանի բացման առջիվ ունեցած ելույթում, անդրադառնալով պատերազմի տարիներին Թուրքիայի պահ-վածքին, հաստատել էր, որ Գերմանիայի հետ, իրոք, դաշնագիր է կնքել: Կովկասի սահմանագլխին զրամիավորումների կենտրոնացմամբ էլ, իբր թե, ցանկացել են կանգնեցնել Գեր-մանիայի մուտքը Կովկաս: Վերջում շեշտել էր. «...բացեիրաց կիայտարարենք, որ որևէ մեկուն պարտը չունիք վճարելիք, մեր իրավունքներուն և հողերուն վրայ կապրենք պատվավոր մարդու պես և կը մեռնենք պատվավոր մարդու պես»⁵¹:

Ի. Ինյոնյուի ելույթը լայն արձագանք է գտել թուրքական պարբերականներում: Ինչպես մամուլը, այնպես էլ թուրք հասարակությունը համաձայն էին իրենց նախագահի հետ, որ ոչ ոք իրավունք չունի դատապարտել Երկրորդ համաշխար-

⁴⁹ Նոյեմբերի 1-ին:

⁵⁰ Նոյեմբերի 1-ին:

⁵¹ «Ժողովուրդ», 4. XI. 1945:

հային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությունը⁵²:

Ինյոնյուի ելույթից մեկ օր անց՝ նոյեմբերի 2-ին, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեսպանները Անկարայում հանդիպել են ԽՍՀՄ-ի դեսպանի հետ և նրանից պահանջել որոշակի պարզաբանման: Հանդիպման ժամանակ դեսպան Վինոգրադովը նրանց պաշտոնապես հայտարարել է, որ իր կառավարությունը չի պատրաստվում Թուրքիային նոր պահանջներ ներկայացնել, հիշեցնելով, որ պաշտոնական Մոսկվան իր տեսակետը ներկայացրել է Պոտսդամում: Ըստ խորհրդային դիվանագետի՝ միայն այդ կերպ ԽՍՀՄ-ը կարող է պաշտպանել իր երկրի անվտանգությունը: ԱՄՆ-ի դեսպան Վիլսոնը հայդիպումից հետո պետքարտուղար Չ. Բյորնսին գրել է, թե Վինոգրադովի պահվածքից պարզ է դարձել, որ դա խորհրդային կառավարության պաշտոնական տեսակետն է: Ավելին՝ ամերիկացի դիվանագետը հանգել է այն եզրակացության, որ մոտ ապագայում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հարաբերությունները չեն կարգավորվի⁵³:

«Նյարդերի պատերազմ» արդեն հասել էր գագաթնակետին: 1945 թ. դեկտեմբերի 5-ին ամերիկացի լրագրող Կ. Բրաունը, անդրադառնալով ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող խնդիրներին, տեղեկացրել էր, որ ԱՄՆ-ի պետքարտուղար Բյորնսը «մտահոգած է նեղուցներու եւ Կարսի ու Արդահանի խնդիրներով, որովհետեւ այդ վերջին խնդիրներու լուծումը կրնայ պոռթկում յառաջ բերել, մինչ միւս խնդիրները կրնան իրաւախութեամբ մը կարգադրուիլ»⁵⁴: Բրաունը միաժամանակ մանրամասներ է հաղորդել

⁵² Sever A., Soğuk savaş kuşatmasında Türkiye, Batı ve Orta Doğu 1945-1958, İstanbul, 1997, s. 30.

⁵³ FRUS. Diplomatic Papers, 1945. The Near East ..., v. VIII, p. 1272.

⁵⁴ «Զարթօն», 5. XII. 1945:

Բալկաններում, Կովկասում և Հայաստանում տեղակայված խորհրդային զինուժի թվաքանակի մասին՝ հայտնելով, թէ Սոսկվան ՍԱԿ-ին «վերաբերող հարցը չի նկատեր Թուրքիոյ հետ ունեցած իր վեճը և եթէ որոշ զինու օրութեամբ առնել իր ուզածը, թուրքերը պիտի կողուին, թէեւ շատ լաւ զիտեն թէ զերազանց ուժի հետ գործ պիտի ունենան»: Ըստ լրագրողի՝ Վաշինգտոնը և Լոնդոնն աշխատելու են համոզել Սոսկվային, թէ ԽՍՀՄ-ի համար ձեռնտու կլինի, եթէ համաձայնվի Թուրքիայի հետ ունեցած վեճը լուծել ՍԱԿ-ի միջոցով⁵⁵:

Խորհրդային Սիությունը, սակայն, նախընտրում էր Թուրքիայի հետ իր հարցերը լուծել անձամբ՝ առանց որևէ երկրի միջամտության ու միջնորդության, այդ պատճառով էլ շարունակում է վերջինիս նկատմամբ որդեգրած քաղաքականությունը: 1945 թ. հոկտեմբերին Ստալինն արդեն հաստատել է Թուրքիայից պահանջված տարածքների՝ Կարսի և Արդահանի ապազա ղեկավարներին. Կարսի մարզկոմի քարտուղար է նշանակվել Ա. Քոչինյանը, իսկ Վրաստանի համար նախատեսվող տարածքներինը՝ Ս. Ցիսլայան⁵⁶: Ավելի ուշ՝ նոյեմբերի 21-ին էլ ԽՍՀՄ-ի կառավարությունը հայտարարել է, թէ ծրագրել է ներգաղթ կազմակերպել դեպի Խորհրդային Հայաստան: Ֆրանսիական որոշ թերթեր, հիմնվելով Թուրքիայից ստացած տեղեկությունների վրա, հայտնում էին, թէ Ստամբուլի խորհրդային հյուպատոսարանը հրահանգ է ստացել խորհրդային անձնագիր և վիզա տալ Հայաստան գաղթել ցանկացող բոլոր թուրքահայերին: Մեկնել ցանկացողների թիվը եղել է բավականին մեծ, ինչը Թուրքիայում դժգոհություն է առաջացրել, և կառավարությունը դրան տվել

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Балиев А., Мечта о «Великой Армении». В 1945–1948 гг. Сталин готовился отобрать у Турции армянские земли. – Аналитический интернет-журнал РПМонитор. http://www.rpmonitor.ru/ru/detail_m.php?ID=9766, 2008.

է «քաղաքական երանգ»: Մինչեւ պարբերականները գրում են, որ իրականում թուրքերը լարված են հայերի դեմ, վերջիններս էլ իրենց ապահով շեն զգում և ամեն կերպ ցանկանում են մեկնել⁵⁷:

Խորհրդա-թուրքական հարաբերություններն էլ ավելի սրվեցին, եթք դեկտեմբերի 14-ին՝ Սոսկվայի վեհաժողովի նախօրեին, Վրաստանի «Կոմունիստ» թերթում հրապարակվեց վրացի ակադեմիկոսներ Ս. Զանաշխայի և Ն. Բերձենիշվիլու՝ «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերնագրով նամակը⁵⁸: Դրանում նրանք Թուրքիային ներկայացրած հոդային պահանջները «հիմնափորել» են՝ «քննության առնելով» իրենց պատմությունը, այն սկսել խեթերից ու սուսպիներից և հասնել մինչև ներկա ժամանակաշրջանը: Նամակը ավարտվում է հետևյալ տողերով. «Վրացի ժողովուրդը պետք է եւս ստանա իր հոդերը, որոնցից երբեք չի հրաժարվել և երբեք էլ չի հրաժարվի: Սենք նկատի ունենք Արդահանը, Արդվինիը, Օլթին, Տարտումը, Սպերը, Բայբուրթը, Գյումուշհաննեն և Արևելյան Լազիստանը՝ իր մեջ ընդգրկելով Տրապիզոնն ու Կերասունտը»⁵⁹: Անշուշտ, հասկանալի է, որ այս պահանջները Ստալինի գիտությամբ է ներկայացվել, քանի որ առանց նրա բույլտվության ոչ ոք չէր համարձակվի նման բովանդակությամբ հոդված տպագրել:

Ասվածը հաստատում է նաև այն, որ Սոսկվայի վեհաժողովի բացման օրը՝ դեկտեմբերի 20-ին, «Պրավդա», «Իզվեստիա» և «Վրաստանական Զվեզդա» թերթերն այս հոդվածը վրացերենից թարգմանելով՝ արտատպել են ռուսերեն: Նույն օրը Սոսկվայում տարածքային պահանջների հարցը քննարկել են ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարների ոչ

⁵⁷ «Ժողովուրդ», 25. XII. 1945:

⁵⁸ «Правда», 20. XII. 1945.

⁵⁹ Նույն տեղում:

պաշտոնական հանդիպման ժամանակ⁶⁰: Դեկտեմբերի 22-ին Միացյալ Նահանգների պետքարտուղարությունը տեղեկացրել է, թե խորհրդային մամուլում տպագրված տարածքային պահանջները երեք նախարարների հանդիպման ժամանակ Մոլոտովի կողմից չի հիշատակվել⁶¹: Դա հաստատում է նաև 1946 թ. ԱՄՆ-ի պետքարտուղարության կողմից՝ Անկարա ուղարկված մեկ այլ փաստաթուղթ, որում նշվել է, թե Մեծ տերությունների արտգործնախարարների մուսկովյան հանդիպումներում տարածքային պահանջատիրության հարցը չի քննարկվել պետական մակարդակով՝ վստահեցնելով, որ նույնը կարող է պնդել և բրիտանական կողմից անունից⁶²:

Թուրքիայի համար վրացիների տարածքային նոր հավակնությունները իսկապես անակնկալ եր: Դեկտեմբերի 20-ին Թուրքիայի մեջլիսը ստիպված էր պետական բյուջեի քննարկումների փոխարեն օրակարգում ընդգրկել ԽՍՀՄ-ի նոր տարածքային հավակնությունների հարցը: Առաջինը ելույթով հանդես է եկել Ստամբուլի պատգամավոր, զորավար Քյազիմ Կարաբեքիրը: Նա հայտարարել է. «Լենինը և Զիցերինը շատ անգամ են կրկնել, որ Կարսի դաշնագրով զծված սահմանները վերջնական են: Իսկ եթե Ռուսաստանը ցանկանում է վերագրավել Կարսի լեռնադաշտը, ապա դա նշանակում է, որ ձգտում է ամբողջ Փոքր Ասիայի մեջ ապահովել իր ներկայությունը»⁶³: Ըստ նրա՝ նեղուցները Թուրքիայի կոկորդն են, իսկ «Կարսի լեռնադաշտը» երկրի ողնաշարն է, եթե վերջինս կոտրեն, ապա, իբր, «իբենք ընդմիշտ կկործեն»: Այդ պատճառով՝ թուրքերը պատրաստ են կռվելու և զենքով պաշտպանելու իրենց հողերը, հայտարարել է Կարաբերիրը⁶⁴:


⁶⁰ «Ժողովուրդ», 22. XII. 1945:

⁶¹ Սարբան Զ., ԱՄՆ-ի արտարին քաղաքականությունը, էջ 102:

⁶² Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 302.

⁶³ «Ժողովուրդ», 26. XII. 1945:

⁶⁴ Նոյն տեղում:



1945 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԹՈՒՐՔԱՅԻ ԽՈՂՋՐԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐՈ

ՏԱՐԱԾՔԱՅԻ ՊԱՍԱՋ

Այնուհետև ելույթ է ունեցել արտգործնախարար Հ. Սաքան և հույս հայտնել, որ ԽՍՀՄ-ը կփոխի իր վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ⁶⁵: Հարցի քննարկման վերջում մեջիսի պատգամավորները բանակին կոչ են արել պատվով պաշտպանել երկրի անվտանգությունը, անկախությունը և ամբողջականությունը⁶⁶:

ԱՄՆ-ի դեսպան Է. Վիլսոնը դեկտեմբերի 22-ին իր կառավարությանը տեղեկացրել է, որ Թուրքիայի քաղաքական շրջանակները խիստ անհանգստացած են: Թուրքիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ֆ. Էրքինը Է. Վիլսոնին տեղեկացրել է, որ նախագահի հրամանով՝ ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում իրենց դեսպաններին հանձնարարվել է պարզել պաշտոնական Վաշինգտոնի և Լոնդոնի տեսակետները վրացիների ներկայացրած պահանջների վերաբերյալ⁶⁷:

Ավելին՝ Թուրքիան պարզաբանումներ է պահանջել դաշնակից երկրներից և, մասնավորապես, խնդրել Մեծ Բրիտանիային ճնշում գործադրել ԽՍՀՄ-ի վրա: Հայտնի է, որ անգլիացիները թուրքերին առաջարկել են գտնել մի պատմաբանի, որը կապացուցի, որ այդ տարածքներն իրենց պատմական հողերն են: Ըստ թուրք հեղինակների՝ Անկարան հետևել է այդ խորհրդին և պատմական տեսանկյունից հերքել վրացի ակադեմիկոսների տեսակետները⁶⁸:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա դեսպան Վիլսոնը 1945 թ. դեկտեմբերի 28-ին հանդիպել է ԽՍՀՄ-ի դեսպան Վինոգրադովին: Վերջինս հայտարարել է, որ թեպետ ամբողջովին ծանոթ չէ վրացի ակադեմիկոսների նամակին, բայց վստահ է, որ վրացիները վճռական են տրամադրված իրենց պատմա-

⁶⁵ Sever A., Soğuk savaş kuşatmasında Türkiye ..., s. 33.

⁶⁶ Նոյն տեղում:

⁶⁷ FRUS. Diplomatic Papers, 1945. The Near East ..., v. VIII, p. 1286.

⁶⁸ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 302.

կան տարածքները վերադարձնելու հարցում⁶⁹: Մեկ օր անց էլ՝ դեկտեմբերի 29-ին, ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Հ. Բայդուրը հանդիպումներ է ունեցել պետքարտուղարությունում, որտեղ նրան տեղեկացրել են, որ պետքարտուղարը նոր է վերադարձել Մոսկվայից, այդ պատճառով չեն կարող տեղեկություններ հայտնել բանակցությունների վերաբերյալ, և որ իրենք ևս գիտեն միայն այն, ինչ հաղորդում են թերթերը: Բացի այդ, դեսպանին հասկացրել են, որ պետքարտուղարությանը հանձնարարվել է քննել Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած նոր տարածքային հավակնությունների հետ կապված նյութերը⁷⁰:

Այդ ողջ ընթացքում տարածքային պահանջների հետ կապված հիստերիան Թուրքիայում օրեցօր մեծանում էր, շիկանում էր հակախորհրդային և հակահայկական մքնողորտը: Արևելյան նահանգներում, հատկապես Տրավիզոնում տեղի էին ունենում բազմամարդ ցույցեր: Քաղաքում հրատարակվող «Հայք» թերթը դեկտեմբերի 26-ին գրում էր. «Մինչեւ որ արեան վերջին կաթիլը ցամաքի մեր երակներէն եւ մեր սիրտերը դադրին զարնելէ՝ պիտի կոռվինք պահելու համար մեր հողային ամբողջութիւնը: ...Այս է վարձատրութիւնը մեր զոհողութիւններուն: Մեծ ծառայութիւններու փոխարէն արդար է որ մեր հողերը սակարգութեան նիւթ դառնան»⁷¹: Նույն ոգով էին արտահայտվում նաև Ստամբուլում հրատարակվող պարբերականները: Այսպէս, «Վաթան» թերթում հրապարակված լրագրող Ահմեդ Էմին Յալմանի՝ Մոսկվայի վեհաժողովին ներկա երեք տերությունների արտգործնախարարներին ուղղված բաց նամակը մի կողմից աղացում, մյուս կողմից կը սպառնալով՝ ինդրում էր խնայել Թուրքիային, «որ մահը աչքը առած է ստրուկ չապրելու համար»⁷²:

⁶⁹ FRUS. Diplomatic Papers, 1945. The Near East ..., v. VIII, p. 1287.

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ «Զարթօնք», 26. XII. 1967:

⁷² Նույն տեղում:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում տիրող լարվածությունը շարունակվում է նաև 1946 թվականին: Դրա հետ մեկտեղ Արևմուտքի կողմից ուժեղանում էր «խորհրդային ազրեսիայից» Թուրքիային պաշտպանելու փորձերը:

Ծանր վիճակում հայտնված պաշտոնական Անկարան բանակցում էր թե՝ Մեծ Բրիտանիայի, թե՝ ԱՄՆ-ի կառավարությունների հետ: Հունվարի 3-ին Անկարայում ԱՄՆ-ի դեսպան՝ Վիլսոնը՝ նախ հանդիպել է Թուրքիայի արտգործնախարարության զիսավոր քարտուղար Ֆ. Էրքինի, այնուհետև վարչապետ Շ. Սարաջօղլուի հետ: Հունվարի 5-ին էլ Լոնդոնում Թուրքիայի դեսպան Զ. Աշըրալըն առանձնազրույցներ է ունեցել երկրի վարչապետ Կ. Էտիլիի և արտգործնախար Է. Բևինի հետ: Այդ հանդիպումների մասին իր կառավարությանը մանրամասներ հաղորդած դեսպանը նշել է, որ իհմնականում անդրադարձել են Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջներին: Մեծ Բրիտանիայի վարչապետը լուր լսել է, վերջում հավանության արժանացրել խնդրի շուրջ Թուրքիայի կառավարության ընդունած որոշումները⁷³: Բևին-Աշըրալըն հանդիպմանն էլ կողմերը խոսել են 1945 թ. դեկտեմբերին Սոսկվայում Բևինի և Ստալինի առանձնազրույցի մասին: Բևինը ասել է, թե Ստալինը հայտարարել է, որ անհրաժեշտությունից դրյակա են Թուրքիայի առջև նման պահանջներ լրել: Ինչ վերաբերում է այն իրողությանը, թե Թուրքիայի տնտեսության զարգացմանը խոչընդոտում է մեծ բանակի կերակրումը, ապա ԽՍՀՄ-ի դեկավարն ասել է. «Եթե Թուրքիան ցանկանում է մեծ բանակ կերակրել, ապա դա անում է զիտակցաբար»⁷⁴: Ի դեպ, Ստալինի հետ հանդիպման մանրամասները հունվարի 1-ին Բևինը ներկայացրել էր Համայնքների պալատում և պատրաստվում էր մեկ անգամ էլ

⁷³ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 305.

⁷⁴ Նույն տեղում:

կրկնել Լոնդոն այցելել պատրաստվող Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքայի համար⁷⁵:

Նկատենք, թե՝ բրիտանացի, թե՝ ամերիկացի դիվանագետների հետ հանդիպումների ժամանակ թուրքական կողմը շարունակում էր պնդել թե հողային հարցում չի բանակցելու ԽՍՀՄ-ի հետ: Հունվարի 6-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ վարչապետ Շ. Սաքայողուն հայտարարել էր, որ «Կարսում և Արդահանում ոչ մի հայ չի ապրում»⁷⁶: Նա մասնավորապես ասել էր. «Մի քանի ամիս առաջ ճանաչված խորհրդային թերթերը և ռադիոն հաղորդագրությունները տարածեցին, թե Կարս և Արդահան վիլայեթները պետք է տրվեն աշխարհասփյուտ հայերին, որպեսզի այդ տարածքները նրանց համար հայրենիք ծառայեն: Ողջ աշխարհը գիտի, որ այստեղ ոչ մի հայ չի ապրում»⁷⁷: Սաքայողունի հայտարարությունը նոր անկարգությունների առիթ է տվել. հունվարի 7-ին Անկարայում անցկացվել են հակախորհրդային ցուցեր⁷⁸:

Ի դեպք, Թուրքիայի վարչապետի հայտարարությունը ԽՍՀՄ-ի կողմից անպատճախան չի մնացել. փետրվարի 6-ին, «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակվել է պրոֆ. Վ. Խվոստովի «Պատմական իրողությունները կամբաստանեն» խորա-

⁷⁵ Նոյն տեղում:

⁷⁶ Armenian Claims in the Light of Documents, Memorandum Submitted to the United Nations Organization Meeting in London, January 10, 1946, Alexandria, 1946, p. 6.

⁷⁷ Армения и советско-турецкие отношения в дипломатических документах ..., с. 100.

⁷⁸ «Ժողովուրդ», 9.I.1946:

⁷⁹ Վաղիմիր Խվոստով (1902–1972 թթ.) – Խորհրդային պատմաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: 1945 թվականից ԽՍՀՄ-ի արտգործնախարարության բարձրագույն դիվանագիտական դպրոցի տնօրեն: 1946–1957 թթ. ԽՍՀՄ-ի արտգործնախարարության վարչության պետ և կոլեգիայի անդամ: Իր աշխատություններում անդրադարձել է հայ ժողովուրդի ազատազրական պայքարի տարբեր հարցերին, մասնաւորապես Հայկական հարցի պատմությանը (մանրամասն տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 2010, № 1):

գրով նամակը (նամակը նախ հրատարակվել էր «Известия» թերթում), որտեղ հեղինակը հարց էր տալիս Սարաջօղլուին, թե ինչպէս է եղել, որ այսօր Կարս-Արդահանում ոչ մի հայ չկա, երբ 1916 թ. շուրջ 100 հազար հայ է ապրել միայն Կարսում: Նա ավելացրել է, թե հնարավո՞ր է մի ողջ ազգ բնաջնջել՝ նրա հողին տիրելու համար⁸⁰:

ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հարաբերություններն ավելի են լարվել այն բանից հետո, երբ ֆրանսիական «Պարի Մատեն» թերթը լուրեր է տարածել, ըստ որի՝ Խորհրդային Սիությունը պատերազմ է հայտարարել Թուրքիային, և որ խորհրդային և թուրք սահմանապահների միջև՝ «Լենինականի և թուրք-կովկասյան սահմանում», այրունահեղ ընդհարումներ են տեղի ունեցել: ՏԱՍՍ-ի հունվարի 8-ի հաղորդագրությամբ պաշտոնայես հերքվել է այդ լուրը⁸¹, սակայն այդպես էլ անհասկանալի է մնացել, թե ինչո՞վ է պայմանվորված եղել ֆրանսիական թերթի անպատճանատու նման քայլը: Նույն օրը Թուրքիայի վարչապետ Շ. Սարաջօղլուն ԱՄՆ-ի դեսպան Է. Վիլսոնի հետ հանդիպման ժամանակ կանխատեսել է, որ ԽՍՀՄ-ը չի հրաժարվի իր երկրի հետ կապված ծրագրերից, այլ դրանք կհետաձգի՝ սպասելով հարմար պահի⁸²:

Հունվարի 17-ին Լոնդոնում ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Բյորնսի և Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքայի հանդիպման ժամանակ վերջինս տեղեկացրել է, որ ԽՍՀՄ-ի կողմից պաշտոնական դիմում այդպես էլ չի եղել, միայն վեց ամիս առաջ որոշ պահանջներ են առաջ քաշվել, որոնցից մեկն էլ Կարսի և Արդահանի հարցն է: Ամերիկյան կողմը փորձել է պարզել այդ տարածքների էթնիկական կազմը և բնակչության տրամադրվածությունը խորհրդա-թուրքական

⁸⁰ «New York Times», 6. II. 1946.

⁸¹ «Известия», 8. I. 1946.

⁸² FRUS. Diplomatic Papers, 1946. The Near East and Africa, v. VII, Washington, 1969, p. 806.

սահմանի վերանայման հարցում: Սաքան պատասխանել է. «Կարսում և Արդահանում ապրում են թուրքեր, որոնք խոսում են թուրքերեն և զոհ են թուրքական ժողովրդավարությունից»^{83:} Թե բնակչության որ տոկոսն է դեմ, իսկ որը՝ կողմ, Սաքան պատասխանել է. «Վերջնական թիվ չեմ ասի, սակայն հավանական է, որ մեկ միլիոն մարդ այսօր զենքը վերցրել է ձեռքը: Պատերազմն ավարտվել է, բայց կառավարությունը չի մտածում զորքը ցրելու մասին: Բանակում մարդկանց թիվը նվազելու փոխարեն հնարավոր է ավելանա»^{84:} Արտգործնախարարը նաև հայտարարել է, որ թուրք ժողովուրդը համբերատար է, սակայն եթե ԽՍՀՄ-ը հարձակվի իր երկրի վրա, ապա զինված բախումը կլինի անխուսափելի: Ավելին, կողմերը համաձայնության են եկել հարցը մտցնել ՄԱԿ-ի օրակարգը^{85:}

Թուրքիային Խորհրդային Սիության ներկայացրած պահանջներն հունվարին քննարկման առարկա են դարձել նաև Անկարայում Բուլղարիայի դեսպան Ա. Անտոնովը և արտգործնախարարի գործերը ժամանակավոր վարող ֆինանսների նախարար Նուրուկայ Էսաթ Սումերը (արտգործնախարար Հ. Սաքան երկրից բացակայում էր): Դեսպանը թուրքական կողմին առաջարկել է մոռանալ Կարսի ու Արդահանի վերադարձման մասին պահանջը և միայն խորհրդային տեսանկյունից կարևոր համարվող նեղուցների հարցում զալ համաձայնության^{86:} Այս առաջարկը որոշակի խառնաշվիթ է առաջացրել, սակայն, իրավիճակը շուտով պարզվել է: Փետրվարի 1-ին Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան է Վիլսոնը Վաշինգտոնին տեղեկացրել է, որ հանդիպել է ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովի հետ, որը պաշտոնապես հայտարարել է, թե

⁸³ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 307–308.

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Նույն տեղում, էջ 311–312:

իր երկիրը չի հրաժարվել Կարսի ու Արդահանի պահանջից. երկու պահանջն էլ Խորհրդային Սիուլյան համար կարևոր են: Եվ եթե Թուրքիան ցանկանում է ԽՍՀՄ-ի հետ նոր պայմանագիր կնքել, ապա պարտավոր է լրտեղ տարածքային խնդիրը ևս⁸⁷: Երեք օր անց էլ՝ փետրվարի 4-ին, հանդիպել են Սումերը և Վինոգրադովը: Խորհրդային դիվանագետը հայտնել է, որ հողային պահանջները ԽՍՀՄ-ի համար կարևոր են, իսկ նեղուցները «կենսական նշանակություն» ունեն: Սումերի այն հարցին, թե Սոսկվան պատրաստվու՞մ է հրաժարվել արևելյան վիլայեթների պահանջից, Վինոգրադովը պատասխանել է, որ հողային այդ պահանջը Խորհրդային Հայաստանն է ներկայացրել և ԽՍՀՄ-ի սահմանադրության համաձայն՝ կառավարությունը պարտավոր է պաշտպանել խորհրդային հանրապետության շահերը: Վերլրութելով Վինոգրադովի հետ զրոյցը՝ թուրք պաշտոնյան հանգել է այն եղակացության, որ ԽՍՀՄ-ը չի պատրաստվում հրաժարվել ոչ տարածքային պահանջներից, ոչ էլ նեղուցներից: Ավելին, ժամանակը ԽՍՀՄ-ի օգտին է աշխատում⁸⁸: Միաժամանակ, ըստ նրա, չի բացառվում, որ Սոսկվան դիվանագիտական խաղ է խաղացել. միջնորդ երկրի դեսպանի միջոցով Կարսի ու Արդահանի պահանջից հրաժարվելով՝ փորձել է հասկանալ, թե այդ դեպքում Անկարան նեղուցների հարցում կնստի՝ բանակցությունների սեղանի շուրջ, սակայն դրական պատասխան չստանալով՝ իրադրությունը ներկայացրել է այնպես, թե առանց իր գիտության է նման հայտարարություն արվել:

Հայտնի է հետաքրքիր մեկ այլ փաստ ևս: 1946 թ. փետրվարին «Ֆրանս-Պրես» լրատվական գործակալությունը հաղորդել է, որ Վիճելի խնդիրները քննարկելու համար Սոտամբուլում ոչ պաշտոնական հանդիպում է տեղի ունեցել Թուր-

⁸⁷ FRUS. Diplomatic Papers, 1946. The Near East ..., v. VII, pp. 813–814.

⁸⁸ Նույն տեղում, էջ 814:

թիայի արտգործնախարար Հ. Սաքայի և ԽՍՀՄ-ի արտարին գործերի փոխնախարար Վ. Վիշինսկու միջև: Խորհրդային պաշտոնյայի այցի զաղտնիությունն ապահովելու նպատակով նրան բնակեցրել էին Ստամբուլի «Բարք» հյուրանոցում: Նույն աղբյուրի համաձայն՝ բանակցությունները տևել են երեք օր, և Սաքան այդ ընթացքում համաձայնվել է Կարսի ու Արդահանի նահանգները հանձնել Խորհրդային Միությանը, պայմանով, որ Սոսկվան հրաժարվի ինչպես Դարդանելի ու Բուֆորի, այնպես էլ վրացական պահանջից (խոսքը վրացիների տարածքային հավակնության մասին է): Թուրք նախարարը կարծում էր, որ ԱՍՌ-ն և Անգլիան կհամաձայնվեն ընդունել խորհրդային տարածքային պահանջները, սակայն, նեղուցների հարցում երբեք ԽՍՀՄ-ի հետ համաձայնության չեն գա: Ըստ նրա՝ իր այս առաջարկությունը նպաստելու է միջազգային իրավիճակի հստակեցմանը: «Ֆրանս-Պրես»-ը հաղորդել է, թե Վիշինսկին հստակ որևէ պատասխան չի տվել՝ հայտարարելով, որ առաջարկը պետք է համաձայնեցնի իր կառավարության հետ⁸⁹:

Թուրքիայի և ԽՍՀՄ-ի դիվանագետների միջև նման հանդիպումներ այդ տարիներին, անշուշտ, բազմից եղել են, սակայն թե որքանով է վերոգրյալ տեղեկատվությունը ստուգ, դժվար է ասել: Իրականությունն այն է, որ Անկարան, չնայած իր ռազմատենչ հայտարարություններին, խուսափում էր Սոսկվայի հետ ռազմական բախումից և պատրաստ էր նոյնիսկ որոշակի զիջումների գնալ: Սակայն հարկ է նաև նկատել, որ կան բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ արևմտյան տերությունների դիվանագետների և թուրք պաշտոնյաների կողմից ժամանակ առ ժամանակ տարածել են իրականությանը չհամապատասխանող լուրեր: Որոշ պատմաբանների գնահատմամբ՝ շատ հաճախ նմանատիպ լուրերն ել

⁸⁹ «Ժողովուրդ», 20. II. 1946:

ավելի են խորացրել ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ծագած ճգնաժամը և նպաստել Թուրքիա – ԱՄՆ և Թուրքիա – Մեծ Բրիտանիա մերձեցմանը:

Ինչևէ, 1946 թ. սկզբին Թուրքիայի կառավարությունը հայտնվել էր սպասողական վիճակում. երկրի պաշտոնական օդակները գիտակցում էին, որ Վաշինգտոնից և Լոնդոնից Հ. Սաքայի վերադարձից հետո միայն պարզ կլինի, թե Թուրքիան ինչ քաղաքականություն է որդեգրելու ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում:

1946 թ. սկզբին ԽՍՀՄ-ում շարունակվում էր տարածքային պահանջների շուրջ ակտիվ քարոզարշավը: Խորհրդային Հայաստանն ու Խորհրդային Վրաստանն իրենց գործունեությամբ ևս փորձել են տարածքների հարցում ձևական գործադրել Թուրքիայի վրա: Նախ, փետրվարի 1-ին ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու, ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանն ընտրողների հետ հանդիպման ժամանակ ելույթ ունենալիս հիմնականում խոսել է «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» խնդրին: Հայկոմկուսի ղեկավարը շեշտել է, որ ժամանակն է իրական տիրոջը վերադարձնելու Թուրքիայի ձեռքին գտնվող հայկական հողերը՝ վստահեցնելով, որ այդ հարցում հաստատակամ են լինելու, քանի որ հարցը բարձրացված է ամբողջ հայ ժողովրդի կողմից, ավելին, դրանք պաշտպանում է Խորհրդային Հայաստանի կառավարությունը: Ըստ Հարությունյանի՝ Թուրքիայի կողմից հայկական հողերի իսկական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանին, վերադարձնելն արդարացի է: Միաժամանակ Հայկոմկուսի ղեկավարն անդրադարձել է Սփյուռքում կազմակերպված ներգաղթին և տեղեկացրել որ Հայաստանի ներկա տարածքը կարող է ընդունել միայն 350–450 հազար մարդու, մնացած 500–600 հազարի համար կրկին բարձրանում է հողերի վերադարձման հարցը⁹⁰:

⁹⁰ «Սովետական Հայաստան» (Երևան), 3. II.1946:

Այսինքն՝ Գր. Հարությունյանը պաշտոնավես հայտարարում էր, թե Խորհրդային Հայաստանը չի կարող ընդունել հայրենիք վերադառնալ բոլոր ցանկացողներին՝ մի կողմից հերքելով Թուրքիայի և Արևմտատքի՝ «խորհրդային ծավալապաշտության» վերաբերյալ տարածվող պնդումները, մյուս կողմից ել ճնշում գործադրելով հայկական տարածքների վերադարձման խնդրում:

Գր. Հարությունյանի ելույթն ամբողջությամբ հրատարակվել է սփյուռքահայ բոլոր թերթերում⁹¹, բացի այդ, դրան լայն տեղ է հատկացրել խորհրդային պաշտոնական մամուլը⁹²: Ելույթի նկատմամբ ցուցաբերված այս հատուկ ուշադրությունը հետաքրքրել է Մեծ Բրիտանիային: Մոսկվայում բրիտանական դեսպանատունն այս առիթով Լոնդոնին հաղորդել է, թե, ի տարբերություն արտասահմանում ընթացող շարժմանը, առաջին անգամն է, եթե Թուրքահայաստանի հարցը նման կերպ է արծարծվում: Եվ չնայած ելույթ ունեցողը կուսակցության բարձրաստիճան դեկավար է, սակայն այն տպավորությունն էր, թե նրա խոսքը համաձայնեցված չի եղել խորհրդային դեկավարության հետ⁹³:

Հարկ է նկատել, որ Թուրքիայից Խորհրդային Միության տարածքային պահանջների հարցը հետզիետե ավելի լայն տեղ է գրավում խորհրդային պաշտոնական մամուլում: «Պրավդա»-ն և «Էզվեստիա»-ն հայկական ու վրացական պահանջների վերաբերյալ, կարծես թե, կազմակերպել էին դասախոսությունների շարք: Այսպես, 1946 թ. փետրվարի 20-ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից բարձրագույն դպրոցի գծով կոմիտեի դասախոսական դահլիճում, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ալեքսեյ Զիվելեզովը հան-

⁹¹ «Արարատ» (Բեյրութ), 7. II.1946; «Լրաբեր» (Եյու Յորք), 8. II.1946; «Ժողովուրդ», 13. II.1946:

⁹² «Պրավծա», 6. II.1946.

⁹³ Մարքսան Զ., Հայկական հարցի..., էջ 59:

դես է եկել «Հայաստան և Թուրքիա» թեմայով դասախոսությամբ: Գիտնականն անդրադարձել է հայ ժողովրդի, հատկապես Հայաստանից բռնազրավշած տարածքների պատմությանը և շեշտել, որ «այդ պահանջների բավարարման արդարացիությունը ոչ մի կասկած չի հարուցում»⁹⁴: Մի քանի օր անց էլ «Պրավդա»-ում և «Իզգեստիա»-ում տպազրվել է Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոսի քարտուղար Կ. Թերքվիանի «Խորհրդային Վրաստանի 25-ամյակը» խորագրով հոդվածը, որում մատնանշվում են Խորհրդային Վրաստանի՝ վերջին քառորդում ունեցած տնտեսական և մշակութային նվաճումները: Հոդվածի վերջում, գովաբանելով խորհրդային կարգերը և նրան վերագրելով երկրի առաջընթացը, նա ավելացրել է, թե «մնացել է անիրականանալի միայն վրաց ժողովրդի դարավոր երազանքը՝ Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը: Նրա սահմաններից դեռ դուրս են մնում Արդահան, Արդվին, Օլթի, Տարտումա, Բայրուդի, Խապիրա, Գյումուշհաննե, Լազիստան վրացական տարածքները»⁹⁵: Այս կերպ՝ վրացական կողմը հիշեցնում էր իր հոդային պահանջների մասին:

Փետրվարին խորհրդային մամուլում հրատարակված այս հոդվածների նպատակը խորհրդային հասարակությանը ներկայացնելն էր, որ այս պահանջներն արդարացի են: Սակայն այս հարցում առաջ է գալիս մեկ այլ խնդիր: Հասկանալի է դառնում, որ Երևանն ու Թբիլիսին այս հարցում, կարծես թե, չեն համագործակցել և յուրաքանչյուրն իր անունից պահանջել է նույն տարածքները: Արևմտյան պետությունները դա օգտագործել են Անկարայի շահերը պաշտպանելու համար: Լոնդոնը հայտարարում էր, թե Սոսկվան «նույնատիճանի կուսակցական թիկունք կու տայ վրացական, ինչպէս նաև հայկական պահանջներուն: Ոչ մեկ մեկնաբանութիւն

⁹⁴ «Известия», 22. II.1946.

⁹⁵ «Правда», 25. II.1946.

կայ որ երկունք ալ Արտահանը կը պահանջեն: Վրացական քարտուղարը իր հայկական պաշտոնակիցին հակառակ ուղղակիօրէն Թուրքիան չի մեղադրեր վրացական հողերը առնելու մէջ»⁹⁶:

1946 թ. մարտ ամիսը թուրքերի համար շրջադարձային է դարձել. Կարսի ու Արդահանի խնդրին տրվեց մեկ այլ երանգ: Մարտի 5-ին ԱՍՄ-ի Ֆուլտոն քաղաքում Մեծ Բրիտանիայի նախարարին վարչապետ Ու. Չերչիլի նշանավոր ելույթով սկիզբ էր դրվել «սառը պատերազմին»: Այս պատերազմում Թուրքիան դարձավ Անգլիայի ու ԱՍՄ-ի հավատարիմ դաշնակիցը, և վերջիններս տարածքային հարցին սկսեցին ավելի սառը մոտեցում ցուցաբերել: Դա ակնհայտ է դարձել արդեն իսկ մարտի 8-ին, երբ ԱՍՄ-ի նախագահ Հ. Տրումենը մամուլի ասուլիսում ժխտել է, որ Պոտսդամի խորհրդաժողովում քննարկվել է Կարսի և Արդահանի հարցը (ինչպես վերը նշվեց, հետագայում Տրումենն իր հուշերում առաջիններից մեկն է եղել, որ անդրադարձել է Պոտսդամում Կարսի ու Արդահանի հարցի քննարկումներին): Այս հարցին նույն կերպ է պատասխանել նաև պետքարտուղար Բյորնար, սակայն հետո իհշել ու ավելացրել է՝ «ընդհաննրապես անդրադարձել են Կարսի ու Արդահանի խնդրին»: Նա ասել է, որ պոտսդամյան հանդիպման ժամանակ Սոլյուտովը հայտարարել է, թէ Թուրքիայից ոչինչ չեն պահանջել ընդհակառակը, Թուրքիան է ցանկացել պայմանագիր կնքել ԽՍՀՄ-ի հետ, փոխարենը Մոսկվան էլ առաջ է քաշել արևելյան նահանգների հարցը⁹⁷: Թուրքական «Թանին» թերթն այս կապակցությամբ գրել է, թէ հայտնի է, որ անցած ամառ խորհրդային մա-

⁹⁶ Մաքրյան Զ., Մեծ Բրիտանիա և Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի..., էջ 300:

⁹⁷ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Обзор турецкой прессы, февраль-июнь, Опять турецко-советские отношения, «Акшам», 1946, с. 21-22.

մուլը և ոադիոն բարձրացրել են բառորդ դար առաջ լուծված սահմանների հարցը, իսկ հետազոյում դա ուրացրել են՝ հասցնելով երկարատև վիճաբանության, այլ կերպ ասած՝ «նյարդերի պատերազմի»: Հոդվածում շեշտվել է՝ թուրքերը միասնական են ԽՍՀՄ-ի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու հարցում, բայց ոչ հողերի գնով⁹⁸:

Նկատենք, որ մարտի 8-ին «Նյու Յորք Թայմսը» գրել է, որ պաշտոնական Վաշինգտոնի կարծիքով Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջները կարևոր հարց են, քանի որ այդ հողերի գրավումը կարող է դառնալ պատերազմի պատճառ⁹⁹: Տես այդ օրերին ԱՄՆ-ի նախազահ Հ. Տրումենը պաշտոնապես հայտարարել է, որ խորհրդարութական սահմանը հանդիսանում է Միացյալ Նահանգների սահմանը¹⁰⁰: Մարտի 18-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության խորհրդական Մակ Նեյը նշել է, որ «Անգլիան Թուրքիայի հարցում կկատարի ստանձնած դաշնակցի պարտականությունները»¹⁰¹: Միջազգային հանրության կողմից այս հայտարարություններն ընդունվել են որպես վկայություն, որ ԱՄՆ և Մեծ Բրիտանիան պաշտպանելու են Թուրքիայի շահերը խորհրդային ոտնձգություններից: Այսպիսով՝ 1946 թ. գարնանից դաշնակցի պետությունները պաշտոնապես հանդես են գալիս Թուրքիայի շահերի պաշտպանի դերում:

Տարածաշրջանում, սակայն, Լոնդոնը գնալով սկսում է զիջել իր դիրքերը Վաշինգտոնին: Վերջինս ամեն միջոց գործադրում էր Թուրքիայի վրա իր ազդեցությունը մեծացնելու

⁹⁸ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ, Օբзор турецкой прессы, февраль–июнь, Джеляль Баяр и Русский вопрос, «Танин», 1946, с. 36–37.

⁹⁹ «New York Times», 8. III. 1946.

¹⁰⁰ Холодная война 1945–1963 гг. ..., с. 54.

¹⁰¹ Նույն տեղում:

համար: ԱՍՄ-Թուրքիա հարաբերությունների մերձեցման համար առիթ դարձավ 1944 թ. ԱՄՆ-ում մահացած Թուրքիայի դեսպան Մունիք Էրթիլյունի աճյունը հայրենիք տեղափոխելու կառավարության խնդրանքը¹⁰²: Նախազահ Տրումենը Անկարայի նկատմամբ իր բարի կամքը ցույց տալու նպատակով դրա համար տրամադրել էր ամերիկյան «Միսսուրի» նավը: Այն Ստամբուլ է հասել 1946 թ. ապրիլի 5-ին: Նավով Թուրքիա են ժամանել նաև ԱՄՆ-ի նախազահի անձնական ներկայացուցիչ Վ. Ուենդելն ու ամերիկացի մի խումբ լրագրողներ: Թուրքական մամուլն այս այցին լայն տեղ է հատկացրել՝ ակնարկելով, որ ամերիկացիներն այս կերպ ցանկանում են վախեցնել Թուրքիայի հնարավոր թշնամիներին¹⁰³: Հայտնի է, որ այդ ժամանակ Թուրքիայի միակ թշնամին էր համարվում ԽՍՀՄ-ը: «Թասվիլը» թերթը գրել է. «Մեր ընկերները բավարարված են այդ ընկերությամբ: Թուրքիան, ունենալով նման հզոր ընկեր, ինչպիսին Ամերիկան է, կարող է հանգիստ շարունակել Մերձավոր Արևելքում խաղաղության գործը»¹⁰⁴: Այս առթիվ պարբերականները մեջքերումներ են արել նախազահ Ի. Ինյոնյուի՝ ամերիկացի լրագրողների համար արած հայտարարությունից, թե «որքան մոտ լինեն ամերիկյան նավերը, այնքան լավ» Թուրքիայի համար, և նշել, որ «թուրք-ամերիկյան նավերի՝ իրար ողջունող համազարկերը մեր թշնամիների մոտ դժգոհություն են առաջացնում»: «Թշնամին դժգոհ է, որ օրեցօր ամրացող թուրք-ամերիկյան ընկերությունը ստիպում է նրանց ավելի լավ մտածել, նախքան Թուրքիայի վրա հարձակվելը»¹⁰⁵:

¹⁰² Расизаде А., План Маршалла в Турции. – Народы Азии и Африки, М., 1984, № 3, с. 103.

¹⁰³ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ, Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Отклики прессы на пребывание в Стамбуле линкора «Миссouri», с. 8.

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 10:

Թուրքական մամուլն այդ օրերին անդրադարձել է նաև «քանակի օրվա» առթիվ Տրումենի ելույթին՝ եզրակացնելով, թե ԱՄՆ-ն կպաշտպանի իրենց ցանկացած վտանգի¹⁰⁶: Այդ մասին եր վկայում և ԱՄՆ-ի պետքարտուղար Զ. Բյորնսի՝ ի նպաստ Թուրքիայի արած հայտարարությունները: Դիցուք այս՝ «Թուրքիան պիտի պաշտպանենք, ի պահանջել հարկին՝ զենքով»¹⁰⁷: Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Վիլսոնը ապրիլի 12-ին Վաշինգտոնին տեղեկացրել է, թե «Թուրքերի համակրանքը ամերիկացիների նկատմամբ օրեցօր մեծանում է: ... «Միստրի»-ի այցով, կարծես թե, նոր փուլ է սկսվել ամերիկա-թուրքական հարաբերություններում»¹⁰⁸:

Թուրք-ամերիկյան մերձեցումից պաշտոնական Անկարան ավելի վստահ է սկսել գործել: Դեռևս մարտի 5-ին Անկարայում տեղի ունեցած Սարաջողությունը-Վինոգրադով հանդիպման ժամանակ վարչապետը ԽՍՀՄ-ի դեսպանին հայտարարել է, որ քանի դեռ ինքը կենդանի է՝ տարածքային պահանջների մասին խոսք չի կարող լինել: Քննադատելով ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը՝ նա Սոսկվային մեղադրել է իմպերիալիստական քաղաքականության մեջ¹⁰⁹:

Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքան ապրիլի 16-ին ամերիկացի լրագրողներին տված մամուլի ասուլիսում՝ այն հարցին, թե ի՞նչ կարող է ասել խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացման մասին, հայտարարել է, որ, իբր, ինքը ոչինչ չգիտի, բացի նրանից, ինչ հաղորդում են թերթերը¹¹⁰: Սաքան նույն ոգով է պատասխանել նաև մյուս

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 11:

¹⁰⁷ «Արարատ», 9. IX. 1974:

¹⁰⁸ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 315–316.

¹⁰⁹ FRUS. Diplomatic Papers, 1946. The Near East ..., v. VII, p. 822.

¹¹⁰ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль-июнь, Заявление Хасана Сака на пресс-конференции американских журналистов 16 апреля 1946 г., «Ватан», с. 57.

հարցերին: Արտգործնախարարի պատասխանները կարող է այն տպավորությունը թողնել, թե նա ոչ թե երկրի արտաքին գերատեսչության դեկավարն է, այլ մի սովորական շարքային քաղաքացի, որից փորձում են պարզել՝ ծանոթ է այս խնդիրներին, թե՝ ոչ: Ներկայացնում ենք ասուլիսում տրված հարցերն ու պատասխանները.

« – Կարսի, Արդահանի և նեղուցների վերաբերյալ ներկայացվել են պահանջներ:

– Լուրեր լսել եմ, բայց պաշտոնական հայտարարություն չի եղել:

– Խորհրդային ռադիոն չե՞ք դիտում որպես պաշտոնական օրգան:

– Ինչարկե, ո՞չ:

– Կա՞ ն հաղորդագրություններ կամ ել նշաններ, որ ԽՍՀՄ-ը Կարսի ու Արդահանի շրջանում ռազմական նախապատրաստություններ է տանում:

– Այս խնդիրի շուրջ մամուլում ժամանակ առ ժամանակ ի հայտ են գալիս հաղորդագրություններ, սակայն զորքի կուտակման մասին տեղեկություն մենք չունենք: Իրականում մեզ համար Կարսի ու Արդահանի հարց որպես այդպիսին գոյություն չունի»¹¹¹:

Հարցերին կցկոտուր պատասխաններ տալով, կարծես թե, Սաքան փորձել է թեման փակել: Մինչդեռ ամերիկյան մամուլում հայտարարվել է, որ Մոսկվան թե՝ Վաշինգտոնին, թե՝ Լոնդոնին պաշտոնապես իրազեկել է, որ Անկարայի հետ պայմանագիր կկնքի, եթե վերջինս վերադարձնի Կարսն ու Արդահանը, ավելին, ըստ պարբերականների՝ այս խնդիրը դարձել է ժամանակաշրջանի ամենասուր հարցերից մեկը¹¹²: Հարց է ծագում՝ ինչու եր Թուրքիայի արտգործնախարարը փորձում թաքցնել գոյություն ունեցող խնդիրը, որին անընդ-

¹¹¹ Նույն տեղում:

¹¹² «New York Times», 30. III. 1946.

մեջ անդրադառնում էին և՝ թուրքական, և՝ արտասահմանյան թերթերը: Հնարավոր է՝ նա որդեգրել էր «անտեսման մի քաղաքականություն», որով զլուխը թարցնելով ավագի մեջ՝ ԽՍՀՄ-ին հասկացնում էր, որ չնայած նրա պնդումներին՝ Անկարայի համար նման հարց գոյություն չունի: Սակայն, ավելի հավանական է, որ Թուրքիայի արտաքին գերատեսչության դեկավարի պահվածքը հիմնականում պայմանափոր-ված էր այն իրողությամբ, որ պաշտոնական Սուլվան Անկարային նման պահանջով գրավոր որևէ փաստաթուղթ չի ներկայացրել: Ինչպես վերը նշվեց, նոյնիսկ 1945 թ. հունիսին Վ. Սոլոտովը Ս. Սարգսերին տարածքային պահանջները բանավոր է ներկայացրել և չի բացառվում, որ Սաքան հիմնվել է դրա վրա, այն է՝ եթե չկա փաստաթուղթ, ուրեմն գոյություն չունի և խնդիր:

Այնուհանդեռձ, Թուրքիայի արևելյան նահանգների ազգաբնակչության շրջանում խուժապ էր տիրում: Արտասահմանյան մասունք տեղեկացնում էր, որ Խարբերդը, Դիարբեքիրը և հարավային այլ շրջաններ լցված են բազմահազար թուրք փախստականներով, որոնք տարածվող լուրերից վախեցած՝ թե այս հողերը կամ հանձնվելու են հարևան երկրին, կամ ել խորհրդա-թուրքական պատերազմ է սպասվում, հաշվի չառնելով ձմռան խստաշունչ եղանակը՝ լրել են Կովկասին սահմանամերձ զավաները և զաղթել երկրի խորքերը¹¹³: Դեռ երկար ժամանակ տեղի թուրք բնակչությունը կապրի ահ ու սարսափով՝ վախենալով, որ սահմանամերձ այս շրջանները տրվելու է ԽՍՀՄ-ին:

Այդ խուժապը ստիպել է նախազահ Ինյոնյունին ինքնակառավարման մարմինների ընտրաբշավի քողի տակ 1946 թ. մայիսին շրջագայել արևելյան նահանգներով և քարոզչություն տանել տեղի բնակչության մեջ: Մայիսի 26-ին Կարսում,

¹¹³ «Ժողովուրդ», 2. II. 1946:

իսկ մայիսի 30-ին Տրավիզոնում նա հայտարարել է, «թե երկրի արևելյան նահանգներում իր շրջազայռության ընթացքում փորձել է ազգաբնակչությանը հասկացնել, որ տարածքային ամբողջականությունը կախված է ժողովրդի կամքից»: Նա բնակչությանը կոչ է արել համախմբվել կառավարության շուրջ՝ վստահեցնելով, որ արևելյան նահանգները չեն պատրաստվում տալ ԽՍՀՄ-ին¹¹⁴:

Եվ չնայած 1946 թ. Հայկական հարցը շարունակում էր մնալ միջազգային քաղաքականության ուշադրության կենտրոնում, սակայն արդեն պարզ էր, որ այն լուծվելու է ի նպաստ Թուրքիայի: Օգոստոսի 15-ին, ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դ. Աշխոնը խոսելով «Թուրքիայի և Հունաստանի նկատմամբ ԽՍՀՄ-ի քայլերի լրջության մասին», հայտարարել է, որ իր կառավարությունը վճռել է «ամեն գնով ընդդիմանալ դրանց»¹¹⁵: Մինչեւ, նկատենք, թուրք պատմաբան Դ. Ավշըօղլուն իր աշխատության մեջ գրում է, թե Բյորնար 1946 թ. աշնանը, իբր, բացահայտորեն հայտարարել էր, թե ԱՄՆ-ը միայն տնտեսական օգնություն կարող է ցույց տալ Թուրքիային¹¹⁶: Դրոֆ. Ա. Շյուրքուն էլ 1966 թ. «Ուլուս» թերթում հրատարակած «Թուրքիայի փրկիչը Ամերիկա՞ն է» հոդվածում գրել է, թե Թուրքիայի վիճակը 1945-1946 թթ. շատ ծանր էր: «Եթե Խորհրդային Միության ձեշումը պատերազմի վերածվեր, ապա Թուրքիան ստիպված էր միայնակ պատերազմել: Եվ քննարկելով 1945 թ. անցուղարձերը՝ կարող ենք վստահ լինել, որ ոչ դաշնակից Անգլիան, և ոչ էլ իր փրկարարությամբ հապարտացող Միացյալ Նահանգները օգնության կհասնեին»¹¹⁷:

¹¹⁴ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946. Речь Имета Иненю в Трабзоне, «Улус», с. 4.

¹¹⁵Acheson D., Present at the ..., p. 196.

¹¹⁶Avcioglu D., Milli Kurtuluş..., s. 1471.

¹¹⁷«Uluslararası», 15. V. 1966.

Մեր կարծիքով, հնարավոր է, որ խորհրդա-թուրքական պատերազմ սկսվելու դեպքում Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն նախընտրեին դիտորդի կարգավիճակը, սակայն փաստ է նաև այն, որ վերջիններս շահագրգուված էին Թուրքիայի հետ համագործակցությամբ ու նրա տարածքային ամբողջականության պահպանմամբ:

Ինչևէ, 1947 թ. մարտին ԱՄՆ-ի նախագահ Տրումենը հրապարակել է նշանավոր «Տրումենի դոկտրինան», որով երաշխավորվում էր Հունաստանի և Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այդ օրերին նա հայտարարել է, որ Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանմամբ ապահովվում է կարգուկանոնը Միջին Արևելքում¹¹⁸:

1947 թ. ամերիկյան կոնգրեսը վավերացրել է արտասահմանյան երկրներին որպես տնտեսական և ռազմական օգնություն հատկացվելիք 400 մլն դոլարի բյուջեն, որից 100 մլն տրամադրվելու էր Թուրքիային: Դա հիմք է հանդիսացել թուրք-ամերիկյան հետագա սերտ բարեկամության համար: Այսպես, 1947 թ. մայիսի 2-ին Ստամբուլ է ժամանել ԱՄՆ-ի միջերկրական նավատորմը, հունիսին Անկարա է եկել ամերիկյան զինվորական պատվիրակությունը, իսկ հուլիսի 12-ին երկու երկրների միջև ստորագրվել է ռազմական պայմանագիր՝¹¹⁹

Այս ամենին Սոսկվան հակադրվել է ահա այսպես. Սեպտեմբերի 15-ին ՍԱԿ-ում խորհրդային պատվիրակությունը հայտարարել է, թե ոչ որի համար գաղտնիք չէ, որ Հունաստանին և Թուրքիային տրամադրվող նման աջակցությունը ԽՍՀՄ-ի դեմ օգտագործվելու է որպես քաղաքական գենքը¹²⁰:

Ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանք «Տրումենի դոկտրինայի» հրապարակումից հետո իրենց զգում էին շատ

¹¹⁸ «Արարատ», 9. IX. 1974:

¹¹⁹ Hostler Ch., Turkism and ..., p. 187.

¹²⁰ «Ժողովուրդ», 20. IX. 1947:

ավելի վստահ: Ոիզեռում ունեցած Ելույթում Ինյոնյուն հայտարարել է, որ «ի տարբերություն անցած տարվա՝ Թուրքիայի դրությունն ավելի ամուր է»¹²¹: Թուրքական մամուլն էլ շեփորահարում էր, որ իրենք են հաղթել «նյարդերի պատերազմում»¹²²:

1947 թ. լույս աշխարհ եկավ ԱՍՄ-ի տնտեսական օգնությամբ Եվրոպան վերականգնելու և զարգացնելու վերաբերյալ պետական քարտուղար Զ. Մարշալի ծրագիրը (այստեղից էլ՝ «Մարշալի պլան» անվանումը): 1948 թ. այդ ծրագիրը տարածվել է նաև Թուրքիայի վրա¹²³:

Այսպիսով, «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» իրագործման արդյունքում Թուրքիան ԱՍՄ-ից ստացավ ռազմական ու տնտեսական մեծ օգնություն: Փոխարենը ԱՍՄ-ն և Մեծ Բրիտանիան Թուրքիայի տարածքում կառուցեցին իրենց ռազմական հանգրվանները:

Այնուհանդեռձ, Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջը, այն է՝ Կարսի ու Արդահանի հարցը, 1947 թ. հոկտեմբերի 24-ին ՍԱԿ-ում մեկ անգամ էլ է անուղղակիորեն արձարձվել: Այսպես, երբ Թուրքիայի ներկայացուցիչ Ս. Մարաքերը հայտնել է, թե իսորհրդային մամուլում և ոադիոյում տարվող հակաթուրքական քարոզարշավում լայն տեղ է տրվում Վրացական տարածքային պահանջներին՝ չիշշատակելով հայկականը, ԽՍՀՄ-ի ներկայացուցիչ Վ. Վիշինսկին պատասխանել է, թե ինչ վերաբերում է Թուրքիայի տարածքում գտնվող Կարսի և Արդահանի շրջանների

¹²¹ ՀԱԱ, ֆ. 326, գ. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեֆերենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան վիլայեթների մասին թուրքական մամուլի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին»), թ. 28:

¹²² Նույն տեղում:

¹²³ Պասիզադ Ա., Պլան Մարշալլա ..., ս. 94.

վրացական լինելու մասին Խորհրդային Վրաստանի պատմաբանների նամակին, ապա նրանց հիմնավորումներն անվիճելի են: Նա խորհուրդ է տվել Սարպերին մեկ անգամ էլ կարդալ այդ նամակը, որում վրացի ակադեմիկոսները, ապացուցելով, որ այդ հողերը վրացական են, պահանջում են դրանք վերադարձնել իրենց¹²⁴: Վիշինսկին նույն պես հետեւելով Ս. Սարպերին, իր ելույթում չի հիշատակել հայկական տարածքային պահանջները: Մինչդեռ նկատենք, որ Ի. Ստալինը կամ էլ վրացի ակադեմիկոսները, ի տարբերություն խորհրդային դիվանագետի, Կարսը չեն համարել վրացական:

Վ. Վիշինսկու այս ելույթը հետազայում մեծ իրարանցում է առաջացրել Խորհրդային Միությունում և Սփյուռքում: Խորհրդային մամուլն առանց աղմուկի փորձել է ուղղել դիվանագետի թույլ տված սխալը. մոսկովյան «Տրուդ» թերթը հողված է հրատարակել Կարսի ու Արդահանի մասին՝ հիշեցնելով, որ Սոսկվայի Լենինի թանգարանի պատին կախված է առաջնորդի ձեռքով գծված Կովկասի քարտեզը, որում կարմիր շրջանակի մեջ են առնված հայկական երկու նահանգները՝ Կարսն ու Արդահանը¹²⁵: Սփյուռքում էլ դաշնակցության պարբերականները գրում են, թե ԽՍՀՄ-ն արդեն թաղել է Հայկական հարցը: Այս ամենը ստիպել է խորհրդային դիվանագետին տալ որոշ պարզաբանումներ. «Ես ըսած եմ, թէ վրացի գիտնականներ յայտնած են, թէ Կարսն ու Արտահանը 1500 թուականներէն ի վեր կը պատկանին Վրաստանին: Ես ըստի թէ՝ Կարսն ու Արտահանը կը պատկանին Վրաստանին. ըստի նաեւ, թէ կը պատկանին Հայաստանին: Ես ըսի, որ Խորհրդ. Միութիւնը պիտի առնէ Կարսն ու Արտահանը եւ պիտի տայ անոր, որուն կը պատկանի»¹²⁶:

¹²⁴ «Правда», 28. X. 1947.

¹²⁵ «Труд» (Москва), 29. XI. 1947.

¹²⁶ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը ..., էջ 365–366:

Ինչնէ, 1947 թ. հետո ԽՍՀՄ-ի կողմից Կարսի և Արդահանի պահանջը միջազգային ասպարեզում այլևս չի շոշափվել: Մեր կարծիքով, այն ամենին կապված չէ ԱՄՆ-ի՝ Թուրքիայի պաշտպանի դերում հանդես գալու իրողության հետ, ինչպես դա փորձում են ներկայացնել որոշ պատմաբաններ: Վաշինգտոնի սպառնալիքները չեն վախեցրել Ստալինին, քանի որ Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջները օրակարգից դուրս են եկել միայն նրա մահից հետո: Սակայն չի կարելի նաև բացառել, որ այդ հարցում ԱՄՆ-ում ատոմային ռումբի առկայությունը, «սառը պատերազմը» և 1949 թ. Հյուսիսաստղանույան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի ստեղծումը եական դեր են խաղացել: Փաստ է միայն այն, որ Մոսկվան ստիպված էր ժամանակավորապես սառեցնել «թուրքական ծրագիրը»: Այդ «լոռությունը», սակայն, ևս չի նպաստել խորհրդարարքական հարաբերությունների բարելավմանը: Երկու երկրների միջև լարվածությունն էլ ավելի է խորացել, եթե 1951 թ. աշնանը արևմտյան պետությունները որոշեցին Թուրքիային ընդգրկել Հյուսիսաստղանույան դաշինքի մեջ: Թուրքիայի արտգործնախարար Ֆ. Քյոփուղուն դեկտեմբերի 19-ին մեջլիսում ունեցած իր ելույթում ԽՍՀՄ-ին մեղադրել է միջազգային լարվածություն ստեղծելու մեջ և հայտարարել, որ ՆԱՏՕ-ին անդամակցելով իրենք ապահովագրում են իրենց երկրի անվտանգությունը¹²⁷:

Ինչ վերաբերում է սեծովյան նեղուցների և տարածքային խնդիրներին, ապա վերջիններս օրակարգից դուրս են եկել միայն 1953 թ. մայիսին՝ Ստալինի մահից հետո, եթե Խորհրդային Միությունը պաշտոնապես հայտարարել է, որ Թուրքիայից հողային ոչ մի պահանջ չունի:

¹²⁷ Olaylarla Türk dış ..., s. 426–427.

2. ՄԵծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության արխիվային փաստաթղթերը հայկական հողային պահանջատիրության խնդրի մասին

Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ ՄԵծ Բրիտանիան հայկական հողերի պահանջատիրության հարցում վարել է բավականին կոշտ քաղաքականություն: Ավելին՝ 1945 թ. ամռանը իշխանության եկած լեյբորիստներն պաշտոնական Անկարային վատահեցրել են, որ ՄԵծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը փոփոխության չի ենթարկվելու¹²⁸: Արձանագրենք հետաքրքիր մի փաստ. լեյբորիստական կուսակցությունն ընտրություններում հաղթանակելու դեպքում որոշել էր արտգործնախարարի պորտֆելը հանձնել Հյու Դալթոնին, իսկ Էրնեստ Բևինը պետք է ստանձներ ֆինանսների նախարարի պաշտոնը: Վերջին պահին, սակայն, վարչապետ դարձած Կլիմենտ Էժլին վերանայել է այդ որոշումը: Արդյունքում՝ Դալթոնը նշանակվեց զանձարանի պետ, իսկ Բևինը՝ արտգործնախարար: Այդ փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ գործին միջամտել էին թագավոր Գեորգ VI-ը, նախկին վարչապետ Ու. Չերչիլը և նախկին արտգործնախարար Ա. Իդենը: Վերջիններս նորանշանակ վարչապետին հասկացրել էին, որ, ի տարբերություն Դալթոնի, Բևինն ունակ է կոշտ քաղաքականություն վարել ԽՍՀՄ-ի դեմ և կանխել նրա Թուրքիայի նկատմամբ ունեցած նկրտումները¹²⁹: Բևինը¹³⁰, ինչպես և սպասվում էր կոշտ քաղաքականություն իրա-

¹²⁸ The Diplomats, 1939–1979, Princeton University Press, 1994, p. 213.

¹²⁹ Նոյն տեղում:

¹³⁰ Էռնեստ Բևին (1881–1951 թթ.) – անգլիական քաղաքական գործիչ, լեյբորիստական կուսակցության և թքեղ-յունիոնների աջ պարագույններից: 1940–1945 թթ. Ու. Չերչիլի կոալիցիոն կառավա-

կանացրեց ԽՍՀՄ-ի դեմ: Այս առումով թուրքական կողմը նույնիսկ նշում է, որ լեյբորփաստների կառավարության հետպատերազման քաղաքականությունը ԽՍՀՄ-ի դեմ Թուրքիայի համար «լավ աջակցություն էր»¹³¹:

Ինչպես վերը տեսանք, խնդրո առարկա տարիներին խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամը այդ անհանգստություն է առաջացրել ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում: Դա ստիպել է այդ երկրների արտգործնախարարություններին ուսումնասիրություններ կատարել և զեկուցագրերի տեսքով իրենց վերլուծություններն արտահայտել Հայկական հարցի վերաբերյալ: Հատկապես ուշագրավ է Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության 1945–1948 թթ. Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջատիրության խնդրի շուրջ պատրաստած զեկուցագրեր-տեղեկագրերը, որոնք ամբողջական պատկերացում են տալիս այդ խնդրի վերաբերյալ պաշտոնական Լոնդոնի դիրքորոշման մասին: Այդ փաստաթղթերի մեծ մասը տեղ են գտնել Անիտա Բուրդերի խմբագրությամբ 1998 թ. հրատարակված «Հայաստան. քաղաքական ու էթնիկական սահմանները. 1878–1948 թթ.» խորագով ժողովածուում¹³²:

բությունում վարել է աշխատանքի և ազգային պարհակի նախարարի պաշտոնը, իսկ 1945–1951 թթ. Կ. Էտլիի լեյբորփաստական կառավարությունում ստանձնել է արտաքին գործերի նախարարի պորտֆելը: Նպաստել է «Մարշալի պլան»-ի իրականացմանը, ինպես նաև 1948 թ. Արևտաեվրոպական միության (Բրյուսելյան պակտ) ստեղծմանը և 1949 թ. Հյուսիս-ատլանտյան դաշինքի (ԽՍՕ) ստորագրմանը:

¹³¹ Sever A., Soguk savaş kuşatmasında Türkiye ..., s. 32.

¹³² Burdett A., Armenia, Political and Ethnic Boundaries, 1875–1948. Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության արխիվում պահվող Հայկական հարցին վերաբերող այդ տարիների որոշ փաստաթղթեր վերը նշված իրենց աշխատություններում հրապարակել են Զ. Մարտիրոսյանը և Յ. Բարսեղովը:

Ուսումնասիրելով Մեծ Բրիտանիայի արտաքին գերատեսչության կողմից պատրաստված այդ գեկույցները՝ պարզ է դառնում, որ Լոնդոնն ուշադրությամբ հետևել է Անկարայի ու Սուլվայի միջև ընթացած գործընթացին՝ միջոցներ փնտրելով Թուրքիայի տարածքային մասնատումը կանխելու համար: Նախ, նկատենք, որ մինչ պատերազմի ավարտը բրիտանական դիվանագիտական շրջանակներում խորհրդա-թուրքական սահմանի վերագծման շուրջ արդեն արվում էին առաջին կանխատեսումները: 1945 թ. սկզբներին պատրաստված «Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմական միտումները» վերնագրով գեկուցագրում գնահատվել են խորհրդա-թուրքական հարաբերությունները և նշվել է, որ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև առկա խնդիրներից առաջնայինը սևծովյան նեղուցների վերահսկումն է, երկրորդականը՝ կովկասյան սահմանի փոփոխումը: Լոնդոնը վստահ էր՝ Սուլվան այս հարցը ևս դնելու է Անկարայի առջև¹³³: Ինչպես վերը նշել ենք, Լոնդոնին և Վաշինգտոնին հիմնականում հետաքրքրում էր սևծովյան նեղուցների հարցը, իսկ ինչ վերաբերում էր Կարսին և Արդահանին, ապա այս տարածքների խնդրում նախընտրում էին չեզոքություն պահպանել:

Վերլուծելով, խնդրո առարկա այդ ժամանակահատվածում միջազգային ասպարեզում ստեղծված իրավիճակը՝ հանգում են այն եզրակացության, որ դաշնակից պետությունները ևս հայտնվել էին դժվարին իրավիճակում, քանի որ մի կողմից չեին ցանկանում թուրքիայի պատճառով բախվել ԽՍՀՄ-ի հետ, մյուս կողմից էլ՝ Թուրքիային թույլ տալ զիջել այս տարածքները: Ըստ այդմ՝ քայլեր էին ձեռնարկում Թուրքիայի շահերը պաշտպանելու համար: Այսպես, Պոտսդամի խորհրդաժողովի նախօրեին տեղում իրադրությունը ուսումնասիրելու նպատակով ամերիկյան և բրիտանական պատվիրակությունների այցելություններ են կազմակերպվում դեպի

¹³³ Служба Внешней Разведки Российской Федерации ..., с. 168.

Թուրքիայի արևելյան նահանգներ: Դրանցից ուշագրավ են ամերիկյան զինվորականության հարցերով պատասխանատու գեներալ Ա. Հարիմանի այցը Վանի շրջակայք և բրիտանական դեսպանատան մամլո խոսնակ Ու. Ի. Տ. Ալենի հունիսի 28-ից հուլիսի 30-ը կատարած շրջազայռությունը: Հատկանշական է վերջինիս այցի մասին արտօնության ներկայացված գեկուցազիրը: Փաստաթղթում մամլո խոսնակը գրում է. «Բնակվելու առնչությամբ և ապահովության նկատառումով վստահությունը վերահաստատված չէ և այսօր Մուշի ու Ալաշկերտի դաշտերը շատ նոր են բնակեցված, մինչև Վանի ավագանը հրապուրում է միայն Բուլղարիայից եկող մահմեդական գաղթականներին»¹³⁴: Ալենի գնահատմամբ՝ Կարսը համեմատաբար ավելի խիտ էր բնակեցված, քայլ «Արդվինի, Կարսի, Էրզրումի, Վանի և Չոլամերկի սահմանային նահանգներում գործարաններ չկան: ... Այս տեղերը մնում են ավերված վիճակում (գնահատում եմ, որ Կարսի տների երկու երրորդը լրված և անմարդաբնակ է): Ճին Վանը լրված է, իսկ նոր բնակավայրը պարունակում է նախկին քաղաքի բնակչության շուրջ մեկ վեցերրորդը:....»¹³⁵: Այնուհետև գեկուցազրի հեղինակը եզրակացնում է, թե սահմանամերձ նահանգներում բնակչության բնակեցումը և զարգացումը խոչընդոտվում է ապագայի նկատմամբ ժողովրդի վախով, ավելին, կառավարությունը ևս այս տարածքների ապագան «կասկածելի» է համարում և այդ պատճառով էլ նախընտրում է չփինանսավորել: Փաստաթղթում նշված է, թե թուրք պաշտոնյաներն ու ժողովուրդը վստահ են, որ Խորհրդային Միության հետ պատերազմն անխուսափելի է: Նաև տեղեկացվում է, որ 12–15 թուրքական զորաբաժանումներ կան Տրապիզոն-Էրզրում-Մուշ գծով դեպի արևելք¹³⁶:

¹³⁴ Burdett A., Armenia, Political..., p. 998.

¹³⁵ Ըստն տեղում, էջ 998–999:

¹³⁶ Ըստն տեղում, էջ 1000:

Ինչպես տեսնում ենք, զեկուցագիրը հիմնավորում է այն տեսակետը, թե խոսքը գնում է «թուրքական տարածքների» մասին, քանի որ դրանցում հայեր չեն բնակվում: Հարկ է նկատել նաև, որ Ալենի դիտարկումները կարևոր դեր են ունեցել տարածքային պահանջատիրության հարցի վերաբերյալ բրիտանական դիրքորոշման ներկայացման գործում, քանի որ Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջատիրության վերաբերյալ հետազայում Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության պատրաստած զեկուցագրեր-տեղեկագրերը մեծապես հիմնվել են այս փաստաթղթի վրա:

Այդ զեկուցագիր-տեղեկագրերից կարելի է առանձնացնել երեքը: Առաջինը՝ «Թուրքական տարածքների հայկական պահանջները» խորագրով հինգ էջանոց տեղեկագիրն է, որը պատրաստվել է 1945 թ. հոկտեմբերի 5-ին՝ Լոնդոնում սեպտեմբերին կայացած Մեծ տերությունների արտգործնախարարների հանդիպումից հետո: Իր բնույթով այն ճանաչողական է և ներկայացվել Գեորգ VI թագավորին ու Լորդերի պալատին¹³⁷:

Փաստաթղթում նշվել է, թե մինչև 1945 թ. սկիզբը Թուրքիայից հողային պահանջի մասին խոսք չի եղել: Ըստ բրիտանական կողմի՝ այդ պահանջը հիմնված է հետևյալ տրամաբանության վրա.

- պետք է հնարավորություն ստեղծվի, որ արտասահմանում ապրող հայերը (ըստ տարբեր հաշվարկների՝ 1-1,5 մլն մարդ) կարողանան վերադառնալ հայրենիք,
- դա արդարացի կլինի մի ժողովրդի նկատմամբ, որին անցյալում պատճառել են զարիուրելի չարիք,
- Կարսի ամրոցը ռազմաստրատեգիական տեսակետից անհրաժեշտ է Խորհրդային Միությանը:

¹³⁷ Մաքրայան Զ., Մեծ Բրիտանիա և Խորհրդային Հայաստանի, էջ 297:

Այնուհետև տեղեկագրում հարցը ներկայացվել է պատմական, ազգագրական, իրավական, տնտեսական, ռազմական տեսանկյունից: Վերջում բերվել է թուրքական դիրքորոշումը՝ տեղեկացնելով, որ ԽՍՀՄ-ի տարածքային պահանջները Թուրքիայում խփառ բացասաբար են ընդունվել: Վարչապետը հայտարարել է, որ թուրքերը նախընտրում են կովել քան թե Կարսը, Արդահանն ու Արդվինը հանձնել ԽՍՀՄ-ին:

Փաստաթղթում ներկայացվել է նաև թուրքական մամուլի հիմնավորումները, թե ինչու պետք է խնդրո առարկա տարածքները մնան Թուրքիայի կազմում: Դրանք են՝

- Երկրամասում հայեր չեն ապրում,
- Թուրքիայի համար այս շրջաններն ունեն ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն,
- 1920 թ. խորհրդային կառավարությունը պահանջվող տարածքները զիջել է կամովին (Նկատենք, որ խորհրդային կառավարությունը Կարսը և Արդահանը զիջել է ոչ թե 1920, այլ 1921 թ.)՝ Սոսկվայի ու Կարսի պայմանագրով)¹³⁸:

Դեկտեմբերի 22-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը կառավարությանը ներկայացրել է երկու էջից բաղկացած երկրորդ զեկուցագիր-տեղեկագիրը՝ «Թուրքական հողերի վրացական պահանջը» խորագրով: Այս փաստաթուղթը օրակարգում հայտնվել է Մեծ տերությունների արտգործնախարարների մոսկովյան հանդիպման ընթացքում՝ վրացի ակադեմիկոսների նամակի հրապարակումից հետո¹³⁹:

Վերը նշված փաստաթուղթը նույնպես տեղեկատվական բնույթ ուներ և ծանոթացնում էր հիմնախնդրի հետ: Տեղեկագրում շեշտվել է, որ Թուրքիայից պահանջված տարածքներում հայեր ու վրացիներ չեն ապրում, միաժամանակ ակնարկում են, որ հայերն ավելի մեծ իրավունքներ ունեն այդ հողե-

¹³⁸ Burdett A., Armenia, Political ..., pp. 1001–1005.

¹³⁹ «Правда», 20. XII. 1945.

րի նկատմամբ, քանի որ տեղի հայերն անցյալ դարավերջին և այս դարասկզբին կոտորվել են թուրքերի կողմից¹⁴⁰:

Ըստ տեղեկագրի՝ Մոսկվան վրացական պահանջներ է ներկայացրել՝ իր նախնական պահանջն ավելի չափավոր ցույց տալու և Անկարային վախեցնելու համար, որպեսզի նա կատարի ավելի փոքր պահանջները¹⁴¹: Ի դեպ, ավելի ուշ ԽՍՀՄ-ը հստակեցրել է, որ հայկական պահանջները չի փոխարինել վրացականով, այլ երկուսն էլ հետապնդում է:

Նկատենք, այս զեկուցագիր-տեղեկագրերը ծառայել են իրենց բուն նպատակին: Դրանց շնորհիվ բրիտանացի դիվանագետները, մանրամասն ծանոթ լինելով հիմնահարցերին, կարողացել են տարբեր ամրիոններից իրենց տեսակետը հիմնավոր հայտնել: Այսպես, 1946 թ. փետրվարի 20-ին Համայնքների պալատում արտգործնախարար է. Բնինը, անդրադառնալով Կարսի ու Արդահանի խնդրին, հայտարարել է. «Խորհրդա-թուրքական սահմանը պարտադրված չի եղել, այլ երկկողմանի բանակցությունների արդյունք է, և որ հայ ազգարնակշությունն այստեղից տեղահանված է»¹⁴²: Նա հիշեցրել է, որ 1939 թ. ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Սոլոտովը պաշտոնապես հերքել է տարածված այն լուրերը, թե իր երկիրը Թուրքիայից տարածքային պահանջներ ունի¹⁴³: Բնինի խոսքերից՝ պարզ է դառնում, որ, հիմնավելով այդ տեղեկագրերի վրա, նա փորձում է հիմնավորել հետևյալ տեսակետները.

- նախ, որ 1921 թ. սահմանի գծմանը Ստալինը մեծ առնչություն ունի,
- ապա՝ այստեղ հայեր չեն ապրում, ել ինչ հողային պահանջատիրության մասին է խոսքը: Այսինքն՝ հայերի բացակայությունն այդ տարածքներում Թուր-

¹⁴⁰ Burdett A., Armenia, Political ..., p. 1006.

¹⁴¹ Մաքսան Զ., Մեծ Բրիտանիա և Խորհրդային Հայաստանի ... էջ 299:

¹⁴² «New York Times», 22. II. 1946.

¹⁴³ Սույն տեղում:

թիային իրավասու է դարձնում հանդես զալու այդ հողերի իրական տիրոց դերում:

Թուրքական մամուլը բարձր է գնահատել Մեծ Բրիտանիայի արտօռծնախարարի ելույթը՝ ակնարկելով, թե դա պաշտոնական Լոնդոնի դիրքորոշումն է¹⁴⁴: Վարչապետ Սարաջօղուն կ մարտի 6-ին արտասահմանյան լրագրողներին տված մամուլի ասուլիսում խորհին շնորհակալություն է հայտնել Քնինից՝ տված երաշխիքի համար¹⁴⁵:

Հարկ է, սակայն, նկատել որ Մեծ Բրիտանիայի քաղաքական ոչ բոլոր շրջանակներն են կիսում այս մոտեցումը: Անգլիական «Դեյլի Կորեք» թերթը դատապարտել է Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը և զարմանալի չի համարել, որ 1921 թ. Խորհրդային Սիովյունից խլված հողերի հարցը ներկայում դարձել է արդիական¹⁴⁶: Բայց 1946 թ. մարտի 14-ին Քեմբրիջի համալսարանի պրոֆ. Վ. Սինորսկին¹⁴⁷, մեկ օր անց ել՝ մարտի 15-ին պահպանողական կուսակցության և խորհրդարանի երիտասարդ անդամ Թ. Դրայբերգը է. Քնինին նամակներ են հղել¹⁴⁸, որոնցում քննադատել են նրա ելույթը և մանրամասներ ներկայացրել Հայաստանի ու Հայկական հարցի վերաբերյալ¹⁴⁹: Մի քանի օր անց՝ մարտի 23-ին, արտգործնախարարը պատասխանել է նրանց նամակով և իր ելույթի

¹⁴⁴ ΣΣ ԳԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ, Օբզօր տուրեցկոյ պրեսս, փերալ-իոն, Ռечь, отклики на которую продолжаются, «Ոլց», 1946, с. 46.

¹⁴⁵ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ուժեթենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան վիճակների մասին թուրքական մամուլի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին»), թ. 26:

¹⁴⁶ «Ծողովուրդ», 5. III. 1946:

¹⁴⁷ Սարրյան Զ., Հայկական հարցի, էջ 73:

¹⁴⁸ Բարսեղով Յ., Գеноцид армян: ответственность ..., с. 411.

¹⁴⁹ Burdett A., Armenia, Political..., p. 1011.

հետ կապված պարզաբանումներ տվել: Բնինը գրել է, որ այս-
տեղ այլսա չկան ազգային խնդիրներ և թեպետ չի արդարաց-
նում անցյալում թուրքերի կողմից հայերի կոտորածները,
սակայն ընդունում է այն իրողությունը, որ խորհրդային կա-
ռավարության՝ հայերի ներկայությամբ պատճառաբանվող,
պահանջները ներկա պայմաններում անընդունելի են¹⁵⁰:

Բնինի ելույթի շուրջ ծավալված քննարկումները հան-
գեցրել են նրան, որ Մեծ Բրիտանիայի արտզործնախարարու-
թյունը 1946 թ. ապրիլի 4-ին նոր զեկուցագիր-տեղեկագիր է
պատրաստել՝ «Հայկական և Վրացական պահանջները՝
թուրքական տարածքների նկատմամբ» խորագրով¹⁵¹: Ուժ
էջանց այս փաստաթուղթն իր մեջ ընդգրկում էր 1945 թ.
հոկտեմբերի 5-ին և դեկտեմբերի 22-ին պատրաստված
զեկուցագիր-տեղեկագրերը, սակայն պատմական մասերը
վերանայված և ընդլայնված տեսքով: Դրանում հերքվում էր
թուրքական այն պնդումը, թե իրենց տիրապետությունը
Հայաստանի վրա հաստատվել է 1071 թ.: Փաստաթղթում
հիշեցվում էր, որ այդ ժամանակաշրջանում տարածաշրջանի
տերերը սելջուկ թուրքերն էին, իսկ օսմանյան տիրապետու-
թյունն այստեղ հաստատվել է միայն 1534 թ.¹⁵²: Այս
զեկուցագրից կարելի է առանձնացնել հետևյալը.

- մանրամասն անդրադարձ կա Սոսկվայի 1921 թ. մար-
տի 16-ի և Կարսի հոկտեմբերի 13-ի խորհրդա-թուր-
քական պայմանագրերին՝ նշումով, որ հայերն ու
ուսները Կարսի շրջանն ուզում էին պահել, սակայն
թուրքերը պարտադրեցին, որ այդ տարածքները զիջեն
իրենց: Պատերազմում հաղթանակած ԽՍՀՄ-ը ցան-
կանում էր վերադարձնել իր կորցրած հողերը¹⁵³:

¹⁵⁰ Նոյն տեղում:

¹⁵¹ Burdett A., Armenia, Political ..., pp. 1023–1030.

¹⁵² Նոյն տեղում, էջ 1024:

¹⁵³ Նոյն տեղում, էջ 1024–1025:

- Կարսի-Արդահանի կորուստը տնտեսական տեսանկյունից Թուրքիայի համար էական նշանակություն չունի, ավելին, ճիշտ էր համարվում այդ հողերի Խորհրդային Միությանը կցելը, քանի որ այդ դեպքում քրդերն իրենց անջատողական ձգումներով կարող են մեծ հարված հասցնել ԽՍՀՄ-ին¹⁵⁴: Միաժամանակ իրազեկվում էր, թե թուրքերը պնդում են, որ Կարսի բարձրավանդակն իրենց անհրաժեշտ է ԽՍՀՄ-ի առաջխաղացումը Միջերկրական ծով և Պարսից ծոց կասեցնելու համար¹⁵⁵:
- Փաստաթղթի եզրակացության մեջ արծարծվում է նաև հայոց Մեծ եղեռնի հարցը. «Անխոհեմ կլինի նաև անտեսել հողային հատուցման պահանջը, որը կարող է հիմնված լինել թուրքերի՝ հայերի նկատմամբ իրականացրած ջարդերի վրա: Դրանք այնքան դաժանորեն եին իրականացվել, որ մարդկության հիշողության վրա տևական մեծ հետք են թողել ու եթե խորհրդային կառավարությունը ցանկանա պայքար ձեռնարկել՝ վերիիշելով այս ամենը, ապա շատ հավանական է, որ համաշխարհային հանրության շրջանում կարող է ձեռք բերել մեծ համակրանք, ինչը կարող է Թուրքիային դնել ծանր իրավիճակում՝ որպես «համար մեկ սև ոչխար»»¹⁵⁶:
- Չնայած փաստաթղթում ակնարկվում էր, որ այդ տարածքները չպետք է տալ ԽՍՀՄ-ին, սակայն միաժամանակ հայկական պահանջներն ավելի լուրջ էր ընդունվում, քան վրացականը: Նշում էր նաև, որ երկու երկրների պահանջները հիմնվում են արդարության վրա: Այստեղ ասվում է. «Ներկայումս թվում է՝ սխալ և

¹⁵⁴ Նոյն տեղում, էջ 1026:

¹⁵⁵ Նոյն տեղում, էջ 1027:

¹⁵⁶ Նոյն տեղում, էջ 1028–1029:

անհեռատես է թույլ տալ, որպեսզի հայերի պատմական պահանջները և նույնիսկ կասկածելի համարվող վրացիներինը օգտագործվեն Խորհրդային Սիության ռազմավարական նպատակների համար: Ցանկացած դեպքում Խորհրդային Սիությունը եթե պահանջի վրացիներին տալ այն տարածքները, որոնք նրանք պահանջում են, ապա դժվար թե կարողանաւ պնդել, որ նույն տարածքներն անցնեն նաև հայերին»¹⁵⁷:

Ձեկուցագիրը բացահայտորեն ներկայացնում էր Սեծ Բրիտանիայի դիրքորոշումը, այն է՝ պահանջող հողերը ԽՍՀՄ-ին անհրաժեշտ են երկրի սահմանները ընդլայնելու նպատակներով: Հենց դա ել նրան թույլ էր տալիս պաշտպանել Թուրքիայի շահերը միջազգային հանդիպումներում:

Ստորև անդրադառնանք հայկական տարածքային պահանջատիրությանը վերաբերող բրիտանական փաստաթղթերից ևս մեկ-երկուսին: 1946 թ. հունվարի 31-ին արտգործնախարարությունը պատրաստել է Կարսի պայմանագրի վերաբերյալ մի գրություն, որում հղումներ կան 1921 թ. բրիտանացի դիվանագետների գեկույցներից¹⁵⁸: Փաստաթղթի եզրակացությունը հետևյալն է. ԽՍՀՄ-ի հայտարարությունը պարունակում է միայն իրականության մի մասը, ակնարկվում է, որ բավականին անհեթեր են «այն պնդումները, թե տարածքները տրվել են Թուրքիային ստիպողաբար և, որ խորհրդային հավակնությունները հիմնավորված են էթնիկական նկատառումներով: Միաժամանակ հակասելով իրենք իրենց ընդունում են, որ Կարսի պայմանագրի ստորագրման պահին Թուրքիան ավելի ուժեղ էր, քան ԽՍՀՄ-ը: Սակայն դա շամարելով էական, շեշտում են, որ Խորհրդային Սիությունը այս տարածքները կորցրել է իր «մաքիավելի քաղաքականու-

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 1029–1030:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 667:

թյան արդյունքում», նպատակադրվելով հետազայում վերադարձնել դրանք»¹⁵⁹: Ինչն էլ, պաշտոնական Լոնդոնի գնահատմամբ, այդ տարիներին փորձում էր իրականացնել Սոսկվան:

1948 թ. ապրիլի 24-ին Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Դ. Քելիին Լոնդոն ուղարկած իր նամակում՝ «Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած Թուրքահայաստանը հայերին վերադարձնելու պահանջի վերաբերյալ», կառավարությանը տեղեկացրել է, որ Թուրքիային ԽՍՀՄ-ը տարածքային նոր պահանջներ է ներկայացրել: Փաստաթղթում նաև թվարկվում է, թե տարածքային հավակնություններ հետապնդելով Ռուսաստանը ինչի է ձգուում¹⁶⁰, այնուհետև համառոտ ներկայացվում են այդ տարածքները վերադարձնելու ուղղությամբ Սոսկվայի ձեռնարկած քայլերը¹⁶¹: Բացի այդ, նամակից պարզ է դառնում, որ եթե նախկինում Թուրքիայից Խորհրդային Սիությունը պահանջում էր Կարսը, Արդահանը և Արդվինը, ապա 1948 թ. դրանց ավելացել է Վանը, Բիթլիսն ու Էրզրումը¹⁶²: Ըստ դիվանագետի՝ Խորհրդային Սիությունը նպատակադրվել է ցանկացած գնով ստանալ Արևելյան Անատոլիայի տարածքը, ինչ նրա գնահատմամբ՝ ծավալապաշտություն է¹⁶³: Այլ կերպ ասած՝ ԽՍՀՄ-ը ցանկանում էր իր կազմում տեսնել ամբողջ Թուրքահայաստանը, այսինքն՝ ներկայիս Թուրքիայի մոտ մեկ քառորդը:

Այսպիսով՝ ներկայացված արխիվային փաստաթղթերը վկայում են, որ պաշտոնական Լոնդոնը ուշադրությամբ հետևել է Անկարայի ու Սոսկվայի քայլերին՝ միջոցներ փնտրելով Թուրքիայի տարածքային մասնատումը կանխելու

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 668:

¹⁶⁰ Նույն տեղում, էջ 1056–1058:

¹⁶¹ Նույն տեղում, էջ 1056:

¹⁶² Նույն տեղում, էջ 1058:

¹⁶³ Նույն տեղում, էջ 1059:

համար: Դրանցից կարելի է եզրակացնել նաև, որ բրիտանացի դիվանագետներն լավ են կատարել Թուրքիայի իրավապաշտպանի իրենց ստանձնած դերը և օգտագործել են բոլոր հնարավորությունները ԽՍՀՄ-ի տարածքային պահանջատիրության հարցը փակուղի մտցնելու համար:

3. Թուրքական և արևմտյան մամուլի արձագանքը Հայկական հարցի վերաբերյալ

Թուրքական մամուլը, որը պատերազմի տարիներին աջակից է եղել իր կառավարության հակախորհրդային քաղաքականությանը, 1945 թ. միահամուտ թիկունք է կանգնել կառավարության որդեգրած տարածքային ամբողջականության պահպանման քաղաքականությանը: Հուսեին Զահիդ Յալչըն՝ «Թանին»-ում, Յունուս Նադին՝ «Զումիյուրիիկը»-ում բացեիրաց արտահայտում էին հակախորհրդային և հակահայկական գաղափարներ:

Թուրքական մամուլը այս խնդրին առաջին անգամ անդրադարձել է 1945 թ. հունիսին¹⁶⁴: Հատկապես թերթերը քննարկում էին հունիսի սկզբին Մոսկվայում ընթացող խորհրդա-թուրքական բանակցությունները, որոնց մասին տեղեկացել էին ոչ թե պաշտոնական աղբյուրներից, այլ ամերիկյան «Թայմս» թերթի ստամբուլյան լրագրողից¹⁶⁵: Այն լուրը, որ

¹⁶⁴ ՀԱԱ, ֆ. 326, գ. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեժիսուրի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան վիլայեթների մասին թուրքական մամուլի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին») թ. 20:

¹⁶⁵ ՀԱԱ, ֆ. 28, գ. 4, գ. 23 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեժիսուրի տեղեկանքները «Խորհրդային Միության պահանջների հետ կապված թուրքական մամուլի արձագանքների մասին»), թթ. 105:

Խորհրդային Սիությունը Թուրքիայից պահանջել է նաև Կարսը և Արդահանը մեծ արձագանք է գտել պարբերականներում: Ավելին՝ այդ օրերին թուրք լրագրողներն ահազանգել են հավանական երրորդ համաշխարհային պատերազմի մասին: Այդ առիթով Յալչինը հույս է հայտնել, որ անզիր-սակոնական պետությունները թույլ չեն տա, որ պավոնները «կուլ տան Թուրքիան»¹⁶⁶: Անկարայում գտնվող խորհրդային դիվանագետների գնահատմամբ՝ 1945 թ. Թուրքիայում սկիզբ առած հակախորհրդային գործողությունների մեկնարկը տվել է հունիսի 22-ի Յալչինի հոդվածը¹⁶⁷: «Եսպանատան աշխատակիցները քավթարաձեին տեղեկացրել են, որ ԽՍՀՄ-ի դեմ սկսված քարոզարշավը հրահանգվում էր Թուրքիայի դեկավարության կողմից, նշելով, որ թուրք լրագրողներ Յալչինը և Սադակը Անկարա են հրավիրվել և երկրի նախագահ Ի. Բնյոնյուի հետ առնձնազրույց ունենալու համար»¹⁶⁸:

Այսպիսով՝ 1945 թ. հունիսին Թուրքիայի կառավարության նախաձեռնությամբ մամուլ տվել է հակախորհրդային քարոզության մեկնարկը: Արտահայտելով հակախորհրդային գաղափարներ՝ նախնառաջ ԽՍՀՄ-ին մեղադրել են ծավալապաշտության մեջ: Յալչինը «Ֆաշիզմը, որ կարմիր գույն ունի» հոդվածում գրել է. «Ֆաշիզմը քայրայված չէ, այն միայն փոխել է իր գույնն ու միջավայրը: Հոռմում՝ սև, Բեղլինում ել գորշ էր: Բայ այսօր Սոսկվայի մեջ ունի կարմիր գույն»¹⁶⁹:

Նույն հոդվածում նա ԽՍՀՄ-ի դեմ ուղղված իր հարձակումները պատճառաբանել է հետևյալ կերպ. «Սոսկվայի ձայնը այսօր ուղղված է ուղիղ մեզ և ասում է. «Եթե ուզում ես բարեկամս լինել, ապա պեսք է ինձ հոգիդ տաս», այսինքն՝ Կարսը, Արդահանը, Արդվինը, նեղուցները, որոնք մեր պա-

¹⁶⁶ Նույն տեղում:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 106:

¹⁶⁸ Նույն տեղում:

¹⁶⁹ Vertanes Ch., The Armenian Question ..., p. 21.

տիվը, անկախությունը և հոգին են»¹⁷⁰: Հատկանշական է, որ թերթերում հրապարակված այս թեմայի շուրջ բոլոր հոդվածները ունեին նույն բովանդակությունը և, կարծես թե, «շափված ու ձևած էին նույն ձևով»:

Ավելի ուշ, թուրքական մամուլում տարածքային պահանջները որակվել ե իբրև «մի նոր Սյունիսեն»¹⁷¹ (խոսքը վերաբերում է 1938 թ. սեպտեմբերի 30-ին Սյունիսենում Մեծ տերությունների կողմից ստորագրված համաձայնագրին, ըստ որի Սուլեյթական մարզը Շեխովլովակիայից անօրինականորեն խվեց և հանձնվեց Գերմանիային – Ք. Ս.)»:

Ավելին՝ թերթերը հետևողական լինելով իր կառավարությանը պնդել են, որ Կարսն ու Արդահանը 1921 թ. իրենց են անցել իրավականորեն, քանի որ մինչև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը այս տարածքները պատկանել են Օսմանյան Թուրքիային, իսկ 1878 թ. դրանք տրվել են ցարական Ռուսաստանին: Խորհրդային Ռուսաստանը վերադարձնելով այդ տարածները, ըստ իրենց՝ վերականգնել է արդարությունը: Իսկ ինչ վերաբերում է խորհրդա-թուրքական սահմանին, ապա թուրքական կողմը հիշեցնում էր, որ այն գծել է համաձայն Սոսկվայի և Կարսի պայմանագրերի: Այսինքն, թուրքերի գնահատմամբ՝ այս տարածքները «թուրքական» են, և որ ԽՍՀՄ-ը ծավալապաշտական ծրագրեր է հետապնդում¹⁷²: Թուրքական մամուլն այս առիթով գրել է, որ «խորհրդային պահանջները բացահայտ ուժի քաղաքականության անցկացում է»՝ վստահեցնելով, թե ԽՍՀՄ-ը վճռական չէ քայլերում, քանի որ վախենում է հանդիպել ուժեղ հակամարտության և, որ իրենք պատրաստ են պատե-

¹⁷⁰ Նույն տեղում:

¹⁷¹ «Ժողովուրդ», 2. IX. 1945:

¹⁷² ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, փевраль-июнь, Об отношениях между Турцией и СССР. 1946, с. 1-2.

բազմելու ու պաշտպանելու իրենց հայրենիքի տարածքային ամբողջականությունը¹⁷³: Օրինակ՝ «Թասվիր» թերթը նշում էր. «Ռուսաստանը շատ լավ հասկանում է, որ ցանկացած փորձ այս ուղղությամբ անմիջապես պատերազմ կիրակի»¹⁷⁴:

Նկատենք, խորհրդային մամուլն այս առիթով գրել է. «Գրեթե ամբողջ թուրքական մամուլը, աննշան բացառություններով, աղմկալի պայքար է սկսել Խորհրդային Միության, Բուլղարիայի, Հարավալավիայի և Ռումինիայի դեմ: ...Թուրքական մամուլի զիսավոր հարվածը հիմնականում ուղղված է ԽՍՀՄ-ի և Կարմիր բանակի դեմ»¹⁷⁵:

Թուրքական մամուլի հակախորհրդային քարոզարշավը նախևառաջ նպատակառուղղված էր երկրում հակախորհրդային հասարակական կարծիք ձևավորելու համար: Այլ կերպ ասած՝ ժողովրդի շրջանում թշնամանք սերմանել ԽՍՀՄ-ի դեմ: Ավելին՝ պետք է ընդունել, որ այդ հոդվածները ծառայել են իրենց նպատակին: Թուրքիայում օրեցօր մեծանում էր հակախորհրդային մթնոլորտը: Օրինակ՝ հերթական հակախորհրդային անկարգությունների պատճառ էր դարձել 1945 թ. դեկտեմբերի 4-ին «Վարիթ» թերթում «Դիմակները ընկան» խորագրով հոդվածը: Արդյունքում, դեկտեմբերի 4-ին Ստամբուլում անցկացված հանրահավաքն ուղեկցվել էր անկարգություններով, հնչել են հակախորհրդային կոչեր, ավտորուսների և տրամվայների վրա թողնվել են հակախորհրդային գրություններ, զազազած ամբոխը հարձակվել և քարուքանդ էր արել խորհրդային գրականություն վաճառող երկու գրախանութ, իսկ խորհրդային հեղինակների գրքերն այրել են: Երկրի քաղաքական որոշ շրջանակներ տեղի ունեցածն որակել են որպես «ժողովրդավարության» արտահայտում¹⁷⁶:

¹⁷³ Նույն տեղում, էջ 2:

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 3:

¹⁷⁵ «Правда», 15. VII. 1945.

¹⁷⁶ «Правда», 6. XII. 1945.

Մինչդեռ ԽՍՀՄ-ը չէր կիսում այդ տեսակետը. դեկտեմբերի 8-ին Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան U. Վինօքրաղովը իր պետության անունից Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքային է հանձնել բողոքի նոտա, որում չէր թաքրել, որ դեկտեմբերի 4-ի հակախորհրդային գործողությունների անմիջական մեղավորը հենց Անկարայի կառավարությունն է¹⁷⁷: Երեք օր անց էլ՝ դեկտեմբերի 11-ին, թուրքական կողմը պատասխան նոտան է ներկայացրել, որում վստահեցրել է, որ հանրահավաքները եղել են ինքնարուխ, զուտ ներքին բնույթ ունեին և ուղղված չեն եղել որևէ պետության դեմ¹⁷⁸: Իհարկե, Թուրքիայի կառավարությունն անմիջական կապ ուներ վերը նշված հակախորհրդային գործողությունների հետ, քանի որ թույլատրելով թուրքական մամուլի հակախորհրդային քարոզարշավը՝ խրախուսել է այդ անկարգությունները:

Ավելին՝ Թուրքիայում հակախորհրդային և հակահայկական մթնոլորտը հետազգութ էլ ավելի է բորբոքվել: Հատկապես դա հատկանշական է դրածել վրացի ակադեմիկոսների նամակի հարապարակումից հետո: Դեկտեմբերի 22-ին Անկարայի ռադիոն անդրադառնալով ԽՍՀՄ-ի Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջներին նշել է, որ Թուրքիան չի հավակնում հարեանների տարածքներին և իր տարածքներն էլ չի զիջում¹⁷⁹: Դեկտեմբերի 21-22 էլ «Թանին» թերթը հրատարակել է երկու հոդված՝ «Հայկական հարցը» ու «Այժմ էլ վրացինները...» վերնագրերով¹⁸⁰: Հետաքրքիր է, որ այդ օրերին նմանատիպ հոդվածներ կարելի եր հանդիպել ոչ միայն թուրքական առաջատար թերթերում, այլև նահանգային: Դրա վառ օրինակն է դեկտեմբերի 27-ին Տրապիզոնի «Զալը» թերթում լույս տեսած հոդվածը¹⁸¹:

¹⁷⁷ «Известия», 15. XII. 1945.

¹⁷⁸ Ըույն տեղում:

¹⁷⁹ «Արևոստք», 24. XII. 1945:

¹⁸⁰ «Լրաբեր», 26. XII. 1945:

¹⁸¹ «Զարթօնք», 26. XII. 1967:

1945 թ. դեկտեմբերի վերջին «Ֆրանս-Պրես» գործակալության լրագրողներից Անդրե Վլոն հետևելով թուրքական մամուլին հանգել է այն եզրակացության, որ թուրք գործընկերների մոտ Կարսի և Արդահանի խնդրի հետ կապված ձևավորվել է երեք տեսակետ.

- Խորհրդային Սիուլյունը նպատակադրվել է Թուրքիայից խլել 8 շրջաններ,
- ԽՍՀՄ-ը պահանջում է շատ տարածքներ՝ այդ կերպ ցանկանալով վերցնել դրա մի մասը,
- ԽՍՀՄ-ը ներկայացնելով այս պահանջները հույս ունի այլ պահանջներում հաջողության հասնել, հիմնականում խոսքը գնում է Բալկանների մասին¹⁸²:

Թուրքական մամուլում տեղ գտած հոդվածները, ինչպես վերը նշվել է, զերծ չեն մնացել նաև Խորհրդային Սիուլյան ուշադրությունից: Խորհրդային մամուլը ամեն կերպ արձագանքել է դրանց, նույնիսկ խորհրդա-թուրքական դիվանագիտական փոքրիկ բախումներ ել են տեղի ունեցել: 1946 թ. հունվարի 12-ին Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրայդովը բողոքի նոտա է ներկայացրել Թուրքիայի կառավարությանը՝ տեղեկացնելով, որ այդ օրերին թուրքական մամուլում հրատարակվել են հակախորհրդային մի շարք հոդվածներ, որոնց վերնագրերը պաշտոնական Առողջապահության նախարարության կողմէն այժմ Սոլոտովն է» կամ ել «Ստալինը Հիտլերի շարունակողն է»: Ի պատասխան՝ պաշտոնական Անկարան հայտարարել է, որ խորհրդային ռադիոն և թերթերն ել լայն տեղ են տալիս վրացի որոշ պրոֆեսորների գրածներին, որտեղ բացահայտ առաջ է տարվում, թե թուրքական հոդերի մի մասը պատկանում է Վրաստանին¹⁸³: Այսինքն՝ Թուրքիայի կառավարությունը խրախուսել է այդ

¹⁸² «Ժողովուրդ», 25. XII. 1945:

¹⁸³ Arcayürek C., Şeytan Üçgeninde ..., s. 307.

հակախորհրդային քարոզարշավը՝ համարելով, որ դա լավագույն պայքարի միջոցներից մեկն է:

Նկատենք, որ թուրքական մամուլում այդ տարիներին տիրող հակախորհրդային մինուրոտը անհանգստացրել է նույնիսկ արևմտյան դիվանագետներին: Հունվարի 3-ին Թուրքիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ֆ. Զ. Էրքինը Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Վիլսոնի հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարել է, որ անցած տարվա մարտ ամսից ԽՍՀՄ-ը Թուրքիայի վրա ճնշում է գործադրում: Նա չի թաքցրել, որ սպառնալիքի վտանգը լցրել է Անկարայի «համբերության բաժակը»՝ շեշտելով, որ խորհրդային մամուլը շարունակում է հարձակումները Թուրքիայի վրա և շաբաթը մի քանի անգամ քննադատում է Թուրքիայի ներքին կարգը և պատերազմի տարիներին նրա վարած հակախորհրդային քաղաքականությունը: Հասկանալի է, որ թուրքական պարբերականները չեն կարող դա անպատասխան թողնել: Վիլսոնը հետաքրքրվել է, թե արդյոք թուրքաբնակ հայերին որևէ վտանգ սպառնում է: Էրքինը դեսպանին վստահեցրել է, թե հայ հասարակության դեմ գործողություններ չեն ձեռնարկվելու¹⁸⁴: Դիվանագետների այս զրուցից կարելի է եգրակացնել, որ կողմերը զիտակցում էին՝ ստեղծված իրավիճակը չի կարող տևականորեն երկարաձգվել, իսկ երկու երկրների միջև բախումը ծանր հետևանքներ է ունենալու հատկապես թուրքաբնակ հայերի համար:

Մեկ օր անց՝ հունվարի 4-ին, Վիլսոնը իր կառավարությանը տեղեկացրել է. «Անկարայի ռադիոն ամբողջ օրը անզերեն և այլ լեզուներով հաղորդումներ է հեռարձակել, որտեղ շեշտվել է, որ Թուրքիայի սահմաններում ընդգրկված հողերից ոչ մեկը երբեք Վրաստանի մաս չի եղել և ավելացրել, որ իրական փաստերին ծանոթանալ ցանկացողները ինչ-որ մի հանրագիտարանից կարող են վերցնել անհրաժեշտ տեղեկու-

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 302–303:

թյունը»¹⁸⁵: Բացի այդ, ԱՍԴ-ի դեսպանը փաստաթղթում անդրադարձել է հունվարի 3-ին վարչապետ Սարաջօղլուի հետ ունեցած հանդիպմանը՝ հայտնելով, որ վերջինս իրեն իրազեկել է, որ Անկարայում խորհրդային ներկայացուցիչները Սուսկվային հայտնում են, թե «Թուրքիան պատրաստ է զիջումների»: Վարչապետը վստահեցրել է, որ Թուրքիային Հայաստանի և Վրաստանի ներկայացրած տարածքային պահանջները կազմում են ընդհանուր ծրագրի մի մասը: Նրա կարծիքով՝ խորհրդային կողմը Թուրքիայի վարչակազմի դեմ մասում միջոցով ծրագրավորված քարոզարշավ է տանում, որը կարող է հանգեցնել ներքաղաքական ճգնաժամի, ավելին, նման իրավիճակում Անկարայում իշխանության կարող է գալ ԽՍՀՄ-ին բարեկամ մի կառավարություն¹⁸⁶:

Դիվանագիտական շրջանակներում հակախորհրդային հոդվածների հետ կապված քննարկումները շարունակվել են նաև 1946 թ. փետրվարին: Փետրվարի 1-ին Վիլսոն-Վինոգրադով հանդիպմանը խորհրդային դիվանագետը կրկին անդրադարձել է թուրքական մասուլում տեղ գտած հակախորհրդային հոդվածներին: Ս. Վինոգրադովը շեշտել է, որ չնայած այդ հոդվածների թիվը որոշակիորեն նվազել է, սակայն, դեռ հրատարակում են այնպիսիները, որոնք ել ավելի են սրում լարվածությունը երկու երկրների միջև¹⁸⁷: Իսկ փետրվարի 4-ին արտգործնախարար Սարային ժամանակավորապես փոխարինող Սումերի հետ հանդիպմանը ԽՍՀՄ-ի դեսպանը հասկացրել է, որ թուրքական մասուլում հրատարակվող հակախորհրդային հոդվածները չեն կարող նպաստել խորհրդաթուրքական հարաբերությունների բարեկամմանը¹⁸⁸:

¹⁸⁵ Նոյն տեղում, էջ 303:

¹⁸⁶ Նոյն տեսում:

¹⁸⁷ FRUS. Diplomatic Papers, 1946. The Near East ..., v. VII, pp. 813–814.

¹⁸⁸ Նոյն տեղում, էջ 814:

Չնայած Խորհրդային Միության նախազգուշացումներին թուրքական մամուլը շարունակել է հակախորհրդային քառոզությունը: Ի պատասխան Մոսկվայի պահանջներին, փետրվարի սկզբներին Ստամբուլում լույս է տեսել Ֆարուկա Գյուրտունջուլի «Մի ձեռք տուր այս հայրենիքը» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն: Գրքի առաջաբանում բերվում է ինչպես անգլիական մամուլի և ռադիոյի, այնպես էլ թուրք քաղաքական գործիչների՝ Կարսի, Արդահանի ու այլ շրջանների մասին արած հայտարարությունները: Բանաստեղծությունների բնույթն էլ մեկն էր. «Թշնամին կրկին բարձացրել է իր դրոշը և հայացքն ուղղել է մեր հայրենիքի ուղղությամբ: ... Կարսից մինչև Մարիցա հողերը մերն են: ... Ինչպես այսօր, այնպես էլ վաղը ամբողջ Թուրքիան պատրաստ է նետվել կրակի մեջ՝ հանուն իր հողի: Մենք պատրաստ չենք դառնալու աղվեսի զոհերը և կտրենք այն սոված գայլերի կոկորդները, որոնք կհարձակվեն մեզ վրա»¹⁸⁹: Այս ոգով գրված «այսպես կոչված, բանաստեղծությունների» ողջ ժողովածուի միակ նպատակն էր ԽՍՀՄ-ի նկատմամբ թշնամանք սերմանել թուրք ժողովրդի մոտ: Նույն նպատակով գրքում բերված են մի շարք նկարներ: Դրանցից մեկում պատկերված է Կրեմլ, որի վրայով՝ կրակի միջով, անցնում են թուրքական ձիերը, մեկ ուրիշում էլ շղթայակապ մարդիկ են, որոնք, իբր, ցանկանում են ազատագրել թուրքերին¹⁹⁰:

Հակախորհրդային բովանդակությամբ հոդվածների կարելի է հանդիպել նաև հետազայում: Թերթելով հետպատերազմյան թուրքական թերթերը այն տպավորությունն է ստեղծվել, որ 1945–1948 թթ. վերջիններիս առաջնային խնդիրն էր վարկաբեկել ԽՍՀՄ-ին և երկու երկրների հարաբերություններում նկատվող լարվածությունը էլ ավելի սրել:

¹⁸⁹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստուտի արխիվ, Օբзор турецкой прессы, февраль–июнь, 1946, Краткое резюме книги Фарука Гюргюнджю «не троиь эту родину», с. 1.

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 2:

Թուրքական և խորհրդային մամուլի հետ միասին արևմտյան պարբերականները ևս մեծ տեղ են հատկացրել Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջատիրության խնդրին: Թերթելով խնդրո առարկա հարցում արտասահմանյան մամուլ՝ նկատում ենք, որ այստեղ գերակշռող էին Թուրքիայի շահերը պաշտպանող հոդվածները, նաև հիշատակվել են Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ իրականացված ջարդերը:

Ամերիկյան մամուլից հիմնականում «Նյու Յորք Թայմս»-ն է ժամանակ առ ժամանակ անդրադարձել խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած այս ճգնաժամին: Պարբերականներում տպագրված նյութերում մի կողմից փորձ էր կատարվում հիմնավորել որ ԽՍՀՄ-ի պահանջներն ընդամենը նրա ծավալապաշտական ծրագրի մի մասն են կազմում, մյուս կողմից էլ խոսվում էր հայերի արդարացի պահանջի մասին:

1945 թ. օգոստոսի 7-ին «Նյու Յորք Թայմս»-ը տպագրել է մի հոդված, որում շեշտվում էր, թե անհասկանալի է ինչո՞ւ է պայմանավորված Խորհրդային Միության կողմից Կարսի և Արդահանի պահանջը: Թերթը, զերծ մնալով մեկնաբանություններից, միայն տեղեկացրել է, որ վերջին ամիսներին Մերձավոր Արևելյում Ռուսաստանի խրախուսմամբ հայ ազգանականները լայնածավալ քարոզչական գործունեություն են ծավալել¹⁹¹: Դեկտեմբերի 25-ին էլ ամերիկացի վերլուծաբան Ու. Դեփտսոնը Մերձավոր Արևելյում ԽՍՀՄ-ի վարած քաղաքականությանը հետևյալ գնահատականն է տվել. «Խորհրդա-թուրքական պայմանագրի չեղյալ հայտարարումը, Թուրքիային ներկայացրած պահանջները, ինչպես նաև Հյուսիսային Իրանում ստեղծված իրավիճակը ներկայիս ռուսական

¹⁹¹ «New York Times», 7. VIII. 1945.

իմպերիալիզմի արտահայտման ձևն է»¹⁹²: Ավելի ուշ՝ 1946 թ. մարտի 8-ին, պարբերականում հրապարակված մի հոդվածում ներկայացվել է Թուրքիային Խորհրդային Սիության առաջարկած պահանջների լրջությունը: Թերթը նշել է, որ պաշտոնական Վաշինգտոնի գնահատմամբ՝ այդ պահանջները Պոտսդամի խորհրդաժողովում դարձել են անզլո-խորհրդային հարաբերությունների վատթարացման պատճառը: Ըստ ամերիկացի պաշտոնյաների՝ խորհրդային ոչ մի պահանջ իրենից այնպիսի մեծ կարևորություն չի ներկայացնում, որքան Թուրքիային ներկայացրածը, ավելին՝ պարբերականը, հիմնվելով նրանց խոսքերի վրա, վստահեցնում էր՝ եթե ԽՍՀՄ-ը փորձի գրավել այդ տարածքները, ապա պատերազմը անխուսափելի կլինի¹⁹³:

ԽՍՀՄ-ի քաղաքականությունը դատապարտող դիրքուումներին զուգահեռ ամերիկյան մամուլում հնչել են նաև Անկարային Սոսկվայի ներկայացրած տարածքային պահանջները հիմնավորող տեսակետներ: Այդ մոտեցման ձևավորման գործում հատկապես մեծ դերակատարում է ունեցել 1945 թ. նոյեմբերին 9-ին Նյու Յորքում ստեղծված հայերի իրավունքների պաշտպանության հանձնախումբը, որի անդամները մի խումբ նշանավոր ամերիկացի գործիչներ եին: Արդեն իսկ դեկտեմբերին հնչել են Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջներն արդարացնող առաջին հայտարարությունները: Այդպես, դեկտեմբերի 22-ին հանրածանաշ ամերիկացի ռադիովերլուծաբան Ռ. Ստիլլը իր հաղորդման ընթացքում հայտարարել էր, որ ԽՍՀՄ-ի պահանջները պատմական, ազգագրական և քաղաքական տեսանկյունից արդարացի են, քանի որ դրանք հայկական

¹⁹² Армения и советско-турецкие отношения в дипломатических ..., с. 164–165.

¹⁹³ «New York Times», 8. III. 1946.

են¹⁹⁴: Մի քանի շաբաթ անց էլ ամերիկյան կողմը քննադատության էր Ենթարկել 1946 թ. հունվարի 6-ին Թուրքիայի մեջլիսում վարչապետ Շ. Սարաջօղլուի ունեցած ելույթը, որում հայտարարել էր, թե «Կարսում և Արդահանում ոչ մի հայ չի ապրում և այդ պատճառով դրանք հայկական չեն կարող լինել»¹⁹⁵: Դրան ի պատասխան, ինչպես վերն արդեն նշվել է, մեկ ամիս անց՝ փետրվարի 6-ին «Եյու Յորք Թայմս»-ում հրապարակվել էր պրոֆ. Վ. Խվոստովին նամակը, որտեղ նա փորձում էր Սարաջօղլուից պարզել, թե արդյոք թույլատրելի՞ է մեկ ազգ բնաջնջել որպեսզի տիրեն նրա հողին¹⁹⁶: Մեկ ամիս անց՝ 1946 թ. մարտի 6-ին, ռադիովերլուծարան Ռեկսա Միլերը խոսելով հայկական տարածքների մասին, նշել է, որ ԽՍՀՄ-ը հայերի նկատմամբ արդարացի վերաբերմունք է ցուցաբերում: «Ես ինքս եմ ականատես եղել նրանց (հայերին. – Ք. Ա.) տառապանքներին և մասնակցել եմ նրանց ազատագրման գործողություններին, – ասել է նա: – Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքերը, օգովելով ստեղծված իրավիճակից, Հայաստանի նկատմամբ ռազմական գործողություններ են ծավալել և իրենց են կցել անկախ Հայաստանի մի մասը: Դժբախտաբար, իրականություն է թուրքերի այն պնդումը, որ այդ տարածքներում ոչ մի հայ չի ապրում, սակայն իրականություն է նաև այն, որ տեղի հայ բնակչությունը կոտորվել է թուրքերի կողմից»¹⁹⁷: Միլերը մեծ կարևորություն է տվել հայենադարձության վերաբերյալ ԽՍՀՄ-ի

¹⁹⁴ Армения и советско-турецкие отношения в дипломатических ..., с. 167.

¹⁹⁵ Armenian Claims in the light of documents, Memorandum submitted to the United Nations organization meeting in London, January 10, 1946, Alexandria, 1946, p. 6.

¹⁹⁶ «New York Times», 6. II. 1946.

¹⁹⁷ Армения и советско-турецкие отношения в дипломатических ..., с. 169.

ընդունած որոշմանը և նկատել, որ մեծ թվով հայերի բնակեցումը Թուրքիային սահմանակից Խորհրդային Հայաստանի հանրապետությանում՝ տարածաշրջանում պայթունավտանգ իրավիճակ է ստեղծում: Ըստ նրա՝ ամերիկյան կառավարությունը պետք է աջակցի Խորհրդային Միությանը հայկական հողերի վերադարձման հարցում¹⁹⁸:

Ինչ վերաբերում է բրիտանական մամուլում տեղ գտած հողվածներին, ապա նկատենք, որ դրանք այնքան ել չեն տարբերվում ամերիկյանից: Այդ նյութերում ևս նպատակաւում կերպով փորձ էր արվում հիմնավորել, որ ԽՍՀՄ-ի պահանջներն ընդհամենը նրա ծավալապաշտական ծրագրի մի մասն են կազմում: Այսպես, դեռևս 1945 թ. հունվարին «Էկոնոմիստ» թերթը «Ռուսաստան և Միջին Արևելք» խորագրով հոդվածում՝ կանխատեսելով ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը գրել է. «Վերջապես Խորհրդային Հայաստանը կարող է պահանջել վերանայել 1921 թ. Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքված Կարսի պայմանագիրը»¹⁹⁹: Իսկ արդեն տարեվերջին՝ դեկտեմբերի 20-ին, թերթը «Կովկասի շախմատային տախտակը» վերնագրով հոդվածում, տարածաշրջանում ԽՍՀՄ-ի վարած քաղաքականությանը և Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջատիրությանը հետևյալ զնահատականն է տվել. «Խորհրդա-թուրքական սահմանը գծվել է Լենինի և Սուսատաֆա Քեմալ փաշայի միջև ընթացած ազատ բանակցությունների արդյունքում (խոսքը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայում քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև ստորագրված բարեկամության և եղբայրության պայմանագրի մասին է, որով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային զիջեց Հայաստանի տարածքները՝ Կարսը, Սուրմալուն, Արդահանը և Արդվինը. – Ք. Ա.)»²⁰⁰:

¹⁹⁸ Նոյն տեղում:

¹⁹⁹ «The Economist», 23. I. 1945.

²⁰⁰ «The Economist», 20. XII. 1945.

Միաժամանակ հողվածագիրը կարևորել է հայկական գործոնը և նկատել, որ թուրքերին դժվար է դիմակայել արտերկրում ապրող հայերի՝ Մեծ Հայաստան ստեղծելու պահանջին: «Գործի ուժեղ կողմը տարածքները հայերի անունից պահանջելն է, քանի որ դրանք վերջիններիս պատմական հողերն են: Իսկ թույլը օգակն այն է, որ այս տարածքներում այլևս հայեր չեն ապրում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրանց տեղահանել են իրենց բնակավայրերից, որն ել ընթացել է հայերի կոտորածներով», — գրել է «Էկոնոմիստ»-ը²⁰¹:

1945 թ. հուլիսի 24-ին «Թայմս» պարբերականը խնդրու առարկա հարցին հետևյալ կերպ է արձագանքել. «Այդ պահանջը (խոսքը Կարսի և Արդահանի մասին է. – Ք.Ս.) հանդիսանում է ԽՍՀՄ-ի ընդհանուր քաղաքականության մի մասը, որի նպատակն է կրկին Ռուսաստանին միավորել թույլ ժամանակ Թուրքիային զիջած տարածքները»²⁰²: Ըստ թերթի՝ այդ հողերը ոչ մի նշանակություն չունեն ոչ Ռուսաստանի, ոչ էլ Թուրքիայի համար, դրանք մեծ կարևորություն ունեն միայն հայերի համար²⁰³: 1946 թ. հունվարի 11-ի համարում տպագրված մի հողվածում նման տեսակետ է հայտնել նաև «Եյու Ստեյսմեն Էնդ Նեյչն» ամսագիրը²⁰⁴: Նույն թվականի փետրվարին «Նեյշնլ Ռեվյու» պարբերականն էլ հրատարակել է «Ռուսաստանը և Մենք» խորագրով հողված, որում անդրադարձել է ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությանը և խորհրդա-բրիտանական հարաբերություններին: Հողվածագիրը փորձում էր պարզաբանել, թե ինչո՞ւ է պայմանավորված ԽՍՀՄ-ի կողմից հայկական տարածքների ձեռք բերելու

²⁰¹ Նույն տեղում:

²⁰² «The Times» (London), 24. VII. 1945.

²⁰³ Նույն տեղում:

²⁰⁴ Армения и советско-турецкие отношения в дипломатических ..., с. 168.

ձգտումը: Ըստ նրա՝ չնայած այս շրջաններն ունեն ռազմավարական կարևոր նշանակություն, սակայն Ռուսաստանի նպատակն այլ է. պաշտոնական Մոսկվան ձգտում է ցույց տալ իր առավելությունն Անկարայից: Հոդվածագիրը գրել է. «Թուրքիան, Ռուսաստանին զիջելով Կարսը և Արդահանը, աշխարհին ցույց կտա, որ ճանաչում է Ռուսաստանի ուժը և իր գլուխն է խոնարհում տիրակալի առջև: Ավելին՝ Թուրքիայի կողմից այդ տարածքների զիջումը կնշանակի, որ Ռուսաստանի խոսքն օրենք է Անկարայի, Սոֆիայի և Բուլարեստի համար»²⁰⁵: Այլ կերպ ասած, ըստ հեղինակի, ԽՍՀՄ-ի միակ նպատակն է՝ այս հարցի լուծումով մեկ անգամ էլ հաստատել գերտերության իր կարգավիճակը: Հետաքրքիր է, որ, չնայած նմանատիպ հայտարարություններին, բրիտանական պարբերականները ևս մեծ կարևորություն են տվել հայկական գործոնին, չհերքելով, որ խոսքը հայկական տարածքների մասին է:

Ֆրանսիական մամուլը, ի տարբերություն ամերիկյան և բրիտանական պարբերականների, խնդիրն այլ տեսանկյունից է դիտարկել: 1946 թ. մարտի 19-ին «Ֆիգարո» թերթը մի հոդված է տպագրել, որում ֆրանսիացի հայտնի դիվանագետ Անդրե Ֆրանսուա Պոնտեն պնդում էր, որ Խորհրդային Միությունը ձգտում է իր գերիշխանությունը հաստատել միջերկրական ավագանի տարածաշրջանում և դրան հասնելու ճանապարհներից մեկն էլ համարում է Կարսի և Արդահանի պահանջը²⁰⁶: Մեկ օր անց էլ «Հյումանիտե» պարբերականը, ի պատճենան «Ֆիգարո»-ի հոդվածի, մի նյութ է հրապարակել որի մեջ հետևյալ գնահատականն է տվել խնդրո առարկա հարցին. «Իրականում, Կարսի և Արդահանի խնդիրը արդիական է: Դրանում ԽՍՀՄ-ը նվաճողական ոչ մի ծրագիր չի

²⁰⁵ Նույն տեղում:

²⁰⁶ «Le Figaro» (Paris), 19. III. 1946.

հետապնդում: Զէ՞ որ ոչ մի ֆրանսիացի իրեն թույլ չի տա Էլզասը և Լոթարինգյան հիշատակելով՝ օգտագործել «նվաճել» կամ «միացնել» արտահայտությունները, այլ ընդհակառակը, կասի՝ վերադարձնել Մայր Հայրենիքին: Եվ այնպիսի նշանավոր դիվանագետ՝ ինչպիսին Անդրե Ֆրանսուա Պոնսեն է, պետք է իմանա, որ Կարսը և Արդահանը Հայաստանի անբաժանելի մասն են կազմում»²⁰⁷: Հոդվածում պատմական ակնարկով անդրադարձ կա նաև հայերի նկատմամբ թուրքերի իրականացրած կոտորածներին: Ազգային փոքրամասնությունների պաշտպանությամբ հանդես եկող պետությունները փորձում են այդ փաստերը մոռացության մատնել. ահա հոդվածագրի եզրակացությունը²⁰⁸:

«Մարսելեզ» թերթում էլ «Հայերը և նրանց պահանջները» խորագրով հոդվածաշար է տպագրել Անրի Վերնեյը: Պատմական, աշխարհագրական և ազգագրական տվյալներով, նա հիմնավորել է, որ հայերի պահանջն արդարացի է: Ա. Վերնեյը գրել է: «Տարածքի 70%-ից ավելին, որ իրավականորեն ճանաչվել է հայկական, մնացել է Թուրքիայի տիրապետության տակ, իսկ տեղի հայ բնակչության մեծ մասը Առաջին աշխարհամարտի տարիներին կոստրվել է թուրքերի կողմից ... կես միլիոն հայեր էլ այսօր ցրված են աշխարհով մեկ»²⁰⁹: Ի դեպ, հոդվածների այս շարքը թարգմանվել է հայերեն և տպագրվել Փարիզում լուս տեսնող «Ժողովուրդ» թերթում:

Հայկական հողերի պահանջատիրության հարցը արձարձվել է նաև արտասահմանյան այլ երկրների մամուլի էջերում: 1945 թ. դեկտեմբերի 22-ին Եզիպտոսում լուս տեսնող «Լա Բուրս Էջիպսեն» ֆրանսալեզու թերթը «Հայ ժողովուրդի նոր զարթոնքը» խորագրով հոդվածում գրել է, որ «հայ ժողո-

²⁰⁷ «L'Humanité» (Paris), 20. III. 1946.

²⁰⁸ Նույն տեղում:

²⁰⁹ «La Marseillaise» (Paris), 9. III. 1946.

վուրդը պետք է վերածնվի իր նախնիների հողում»²¹⁰: Դեկտեմբերի 27-ին ֆիննական «Հուվուդստադլադես» թերթի գնահատմամբ էլ՝ Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած հայկական տարածքային պահանջը պայմանավորված էր Ֆինլանդիայում առկա ազգային փոքրամասնության գործոնի հետ: Պարբերականը գրել է. «Այսօր Թուրքիայում ապրող հայերն ավելի բարենպաստ վիճակում են գտնվում, քան կոտորածների ժամանակ: Չնայած դրան՝ նրանք լուրջ պատճառներ ունեն երազելու իրենց եղբայրներին միանալու համար: Հայերը դեռևս չեն մոռացել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրենց նկատմամբ թուրքական կառավարության իրականացրած կոտորածները»²¹¹: Նորվեգական «Արբեյդերլադես» թերթը, անդրադառնալով տարածքային պահանջատիրության հարցին, նոյնպես քննադատել է Թուրքիայի պահվածքը՝ գրելով. «Թուրքերը պետք է շատ զգույշ լինեն իրենց պատճառաբանություններում: Հայերի նկատմամբ թուրքերի դաժան հետապնդումը հիմք հանդիսացավ նացիստների համար՝ իրեաների դեմ զազանություններ իրականացնելիս»²¹²: 1946 թ. հունվարին հունգարական «Նեպսավա» թերթն էլ հայկական տարածքների պահանջը հետևյալ կերպ է գնահատել. «Խորհրդային մամուլում վերջերս բազմից են հայտնվում հողվածներ, որտեղ նշվում է, որ Կարսը, Արդահանը և Արդվինը տարածքներ են, որոնք Առաջին համաշխարհային պատերազմից հետո ցարական Ռուսաստանից խլվել և միացվել են Թուրքիային: Եթե Թուրքիայի համար այդ տարածքները չունենային ուազմավարական մեծ նշանակություն, ապա դրանց շուրջ նման իրարանցում չեր բարձրանա: Ե՛վ Կարսը, և՝ Արդահանը հանդիսանում են Կովկասի

²¹⁰ Армения и советско-турецкие отношения в дипломатических ...
с. 167.

²¹¹ Նոյն տեղում, էջ 168:

²¹² Նոյն տեղում:

կարևոր հենակետերը: Այն, որ Խորհրդային Միությունը բարձրացրել է այդ հարցը՝ պայմանավորված է Թուրքիայի նկատմամբ նրա ունեցած ոչ բարիացկամ վերաբերմունքով»²¹³: Այսինքն, ըստ հունգարական կողմի, Խորհրդային Միությունն այս տարածքները պահանջում է՝ հաշվի առնելով միայն դրանց ռազմավարական նշանակությունը:

Այսպիսով, արձանագրենք. դիտարկելով խնդրո առարկա ժամանակահատվածում արևմտյան առաջատար պարբերականներում հայկական տարածքների պահանջատիրությանը վերաբերող հոդվածները՝ հանգում ենք այն եզրակացության, որ դրանցում հիմնականում արտահայտվել է տվյալ երկրի պաշտոնական դիրքորոշումը: Այն է՝ իրենց երկրի իշխանությունների նման ԽՍՀՄ-ին մեծամասամբ մեղադրում էին ծավալապաշտական ծրագրեր իրականացնելու մեջ: Եվ չնայած նման մոտեցմանը՝ հոդվածագիրները չեն փորձում հերքել այն փաստը, որ խոսքը գնում է հայկական հոդերի մասին: Ցավալին, սակայն այն է, որ հայկական գործոնի հիշատակումը էական որևէ դեր չի խաղացել. հարցը, միշտ անտեսվել է՝ ի նպաստ Մեծ տերությունների շահերի:

4. Հայ եկեղեցին և Սփյուռքը հայկական տարածքների պահանջատիրության հարցում

1938 թ. Խորեն Ա կաթողիկոս Մուրադբեկյանցի մահից ի վեր Ս. Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռը թափուր էր, և խորհրդային կառավարությունը չէր շտապում նոր կաթողիկոսի ընտրության հարցում: 1945 թ. սկզբներին նկատվում են որոշ տեղաշարժեր: Ապրիլի 19-ին Խորհրդային

²¹³ Նոյն տեղում:

Միուրյան ղեկավար Ի. Ստալինն ընդունում է 1941 թ. Ազգային-եկեղեցական ժողովի կողմից Մայր Աթոռի ազգընտիր տեղապահ ընտրված Գևորգ արք. Չեռքեցյանին²¹⁴: Այս հանդիպումը նշանակալից է նրանով, որ Չեռքեցյանը քույլտվություն ստացավ անցկացնելու կաթողիկոսական ընտրություններ: Հնարավոր է Ստալինը գիտակցում եր, որ դա հոյակապ առիթ է հայկական բոլոր գաղթօջախներից Երևանում պատվիրակություններ հավաքելու համար, որոնք կպաշտպանեին Մոսկվային՝ Թուրքիային ներկայացրած հողային պահանջների հարցում: Եվ Կրեմլն իր հաշվարկներում չսխալվեց. հայ ժողովրդի բազմադարյան պատմության հիմնական ակունքներից մեկը՝ Հայ առաքելական եկեղեցին, որը հայոց պետականության չգոյության պայմաններում միշտ էլ ստանձնել է քաղաքական իշխանության գործառնություններ, այս անգամ էլ խնդրու առարկա հարցում ձեռնարկեց սպասված անհրաժեշտ քայլերը:

Կաթողիկոսի ընտրությունը կայացել է 1945 թ. հունիսին: Հունիսի 16-ին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դահլիճում բացվել է Ազգային-եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին աշխարհի չորս ծայրերից Հայաստան ժամանած 113 եկեղեցական ու աշխարհիկ պատգամավորներ²¹⁵: Հունիսի 22-ին կաթողիկոս է ընտրվել Գևորգ արք. Չեռքեցյանը, իսկ 24-ին կատարվել է կաթողիկոսի օծումը: Հունիսի 26-ի նիստի ընթացքում ներկաները Ի. Ստալինին ուղղված խնդրագիր են պատրաստել, որտեղ հիմնականում անդրադառնում էին Խորհրդային Հայաստանին Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերի միացման հարցին: Ավելին, սիյուրահայերը ցանկանում էին ներգաղթել հայրենիք²¹⁶:

²¹⁴ «Էջմիածն» (Էջմիածն), մարտ-ապրիլ, 1945, էջ 3: «Սովետական Հայաստան», 20. IV. 1945:

²¹⁵ «Սովետական Հայաստան», 17. VI. 1945:

²¹⁶ Նոյն տեղում:

Ազգային-եկեղեցական ժողովի այս նամակը բացահայտ ապացույց էր, որ համայն հայությունը Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած հողային պահանջատիրության հարցում միասնական է: Ավյուտքահայերն արդեն ստեղծել էին ազգային խորհուրդներ և առանձին-առանձին այդ հարցում իրենց պայքարն էին մղում: Կաթողիկոսի ընտրությունը սկիզբ դարձավ համատեղ շարժման համար: Ս. Էջմիածնից վերադառնալուն պես՝ պաղեստինահայության պատգամավորը Երուսաղեմում հրապարակային մի հայտարարություն է արել որը սփյուտքահայ մամուլում ներշնչանքի թեմա դարձավ: Նշելով, որ աշխարհիկ պատգամավորների մի մասը պատիվ է ունեցել հանդիպելու Խորհրդային Հայաստանի արտգործնախարար Ս. Կարապետյանին, նա հայտնում է, որ արտաքին գերատեսչության ղեկավարը ամրապնդել է պատգամավորների հույսերը և վստահեցրել «որ շուտով կարելի պիտի ըլլայ Արարատը դիտել երկու կողմեն...»²¹⁷: Անշուշտ, Ս. Կարապետյանն այս հայտարարությունն արել է Մոսկվայի գիտությամբ, քանի որ առանց Ստալինի թույլտվության ոչ ոք չէր համարձակվի նման խոստումներ շռայլել: Ակնհայտ է նաև, որ Հայաստանի ղեկավարությունն այս կերպ աշխատանք էր տանում սփյուտքահայության շրջանում և փորձում էր ստանալ նրանց աջակցությունը: Դա է վկայում նաև ԽՄԿԿ Վենտկոմի օրգան «Պրավդա» օրաթերթի՝ Ազգային-եկեղեցական ժողովի վերը հիշատակված նամակի հետ կապված արձագանքը: Թերթը գրել է. «Արտասահմանի մեկուկես միլիոն հայությունը Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսի և Հայաստանի կառավարության միջոցով դիմում է հղել, որպեսզի իր ծննդավայր հայրենիքը հանդիսացող Վանը, Բիթլիսը և Կարինը կցվեն Խորհրդային Հայաստանին: Կասկած չկա, որ Խորհրդային Հայաստանի ժողովուրդն ու կառա-

²¹⁷ Զարարեան Յ., Կարս ..., էջ 8:

վարությունը չէին կարող այլ կեցվածք ընդունել արտասահմանյան եղբայրների հանդեպ, եթե ոչ նրանց առջև լայն բացել հայրենիքի դրուերը... Մեծ անարդարություն էր նույնիսկ Ռուսական Կովկասի մաս կազմող Սուրմալուի, Կարսի և Արդահանի նահանգները թուրքերին տալը... Կովկասահայության իրավունքն է Սուրմալու, Կարս ու Արդահան, իսկ թրքահայության իրավունքն է Վան, Բիթլիս ու Կարին վիլայեթների պահանջելը»²¹⁸:

Խորհրդային Հայաստանից դուրս ապրող հայերի համար տեղի ունեցածը կարեոր իրադարձություն էր: Նրանց կարծիքով, վերջապես սկսվել է ողջ հայության միավորման գործընթացը, հուսալով, որ հայկական հողային այս պահանջատիրության հարցում ԽՍՀՄ-ին աջակից կլինի համաշխարհային հանրությունը, որը դատապարտում է Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի հետ կատարված ողբերգությունը:

Ս. Էջմիածնի համաժողովին հրավիրված Մեծ Բրիտանիայի Քենտերբերիի տաճարի վանահայր Հյուրեթ Ջոնսոնը Երևանից մեկնելուց առաջ՝ հունիսի 29-ին, խորհրդային և արտասահմանյան լրագրողներին տված մամուլի ասովիսում ասել է. «Ես լիովին և ի սրտե համաձայն եմ, որ Թուրքիայի կողմից խլված մարզերը պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն Հայաստանին: Ամերիկահայերի Ազգային խորհրդի դեկլարացիան, իմ կարծիքով, միանգամայն արդարացի է ու հիմնավոր»²¹⁹: Ջոնսոնի հայտարարությունը Անկարայի համար անակնկալ էր. այն ընդունվել էր որպես անզիական եկեղեցու պետ Քենտերբերիի արքեպիսկոպոսի կողմից արված հայտարարություն: Ավելին, Թուրքիայի նախագահ Ի. Խնոնյուն Լոնդոնից բացատրություններ էր պահանջել:

²¹⁸ «Правда», 18. VIII. 1945.

²¹⁹ «Սովետական Հայաստան», 26. VI. 1945:

Իրավիճակը հարթվել է միայն այն ժամանակ, երբ Թուրքիայում բրիտանական դեսպանը՝ Սեր Սորիս Փիթերսոնը, լուսանկարներով և փաստերով ապացուցել է, որ Զոնսոնը արքեպիսկոպոս չէ: Ավելի ուշ Լոնդոնը պաշտոնական հայտարարությամբ է հանդես եկել և վստահեցրել, թե անզիական եկեղեցու հոգևորականների հայտարարությունները պաշտոնական ուժ չունեն²²⁰:

Մինչդեռ Զոնսոնը մեծ ընդունելության է արժանացել Սուլվայում: Հուլիսի 6-ին նա հանդիպել է Ստալինին, որին պատմել է Էջմիածնի եկեղեցական ժողովի մասին: Չի բացառվում, որ նրանք անդրադարձել են նաև հայկական տարածքների հարցին²²¹: Տասը օր անց՝ հուլիսի 16-ին, Պոտսդամում Մոլոտով-Իդեն հանդիպման ժամանակ ԽՍՀՄ-ի արտաքին գերատեսչության դեկազրն անզիացի պաշտոնակցին իշշեցրել է, որ անզիական կառավարությունը բազմից հանդես է եկել ի պաշտպանություն հայերի, իսկ բոլորովին վերջերս էլ հայերի հողային պահանջը պաշտպանել է դրկտոր Հ. Զոնսոնը²²²:

Հայկական տարածքներն իրենց իրական տիրոջը վերադարձնելու պահանջի պաշտպանությամբ՝ հանդես են եկել նաև եկեղեցական այլ կազմակերպություններ: Այսպես, Ամերիկայի հայկական ավետարանական միությունը 1945 թ. սեպտեմբերին Պրովիդենսում (Ըոդ Այլենդ նահանգ) կայացած նիստում ուղերձով դիմել է Լոնդոնում ընթացող Մեծ տերությունների արտադրծնախարարների հանդիպմանը: Դիմումում ասվում է. «Մենք՝ Ամերիկայում հայկական ավետարանական միության հոգևորականներս, հավաքված հատուկ նիստում, խնդրում ենք արտգործնախարարների խոր-

²²⁰ Սալլիան Ջ., Համաշխարհային երկրորդ պատերազմի ... , էջ 184:

²²¹ «Սովետական Հայաստան», 7. VII. 1945:

²²² Կօրխմազյան Բ., Территориальные проблемы советско-турецких отношений ..., с. 23.

հրդին հանուն արդարության և մարդասիրության դիտարկել հայ ժողովրդի դարավոր պահանջը, որը դարերի ընթացքում տառապել է թուրքական լծի տակ: Հայ ժողովուրդը, որը ժամանակին եղել է հպարտ ու մեծ ազգ և մեծ ներդրում է արել քաղաքակրթության ու քրիստոնեության գործում, վերջին 50 տարիների ընթացքում բնաջնջվում է թուրքերի կողմից իրականացվող մասսայական սպանությունների, արսորների, խտրականությունների և գույքի անօրինական բռնագրավման միջոցներով: Կենդանի մնացած մեր ժողովրդի մի մասը առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական քաղաքականության հետևանքով ցրված է աշխարհի բոլոր ծայրերում: Մենք խնդրում ենք արդարություն ցույց տալ այս հայերին, ինչպես հնարավոր անելով նրանց վերադարձը Թուրքիայում գտնվող իրենց վաղնջական հողերը, այնպես էլ վերադարձնել այդ հողերն ազատության և անվտանգության մեջ ապրող Խորհրդային Հայաստանին»²²³: Փաստաթուղթը ստորագրել էին միության քարտուղար Ա. Գեորգեզյանը և նիստը նախագահող Վ. Էռնազյանը:

Պահանջատիրության խնդրի հետ համատեղ քննարկվել է նաև Խորհրդային Հայաստան հայերի ներզադթ կազմակերպելու հարցը: Վերն արդեն ասվել է, որ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն դա դիտում էին որպես «խորհրդային ծրագիր՝ շեշտելով, թե այս կերպ ԽՍՀՄ-ը ցանկանում է իրականացնել իր զավթողական ծրագրերը: Ներզադթի վերաբերյալ ԽՍՀՄ-ի կառավարության ընդունած որոշումը նախնառաջ քաղաքական քայլ էր՝ համաշխարհային հանրության շրջանում արդարացնելու Անկարային ներկայացրած պահանջները, քանի որ միջազգային ֆորմալ և ոչ ֆորմալ բոլոր հանդիպումներում խորհրդային կողմը պատճառաբանում էր, որ դա անհրաժեշտ է ոչ թե Խորհրդային Միությանը, այլ Խորհրդա-

²²³ Վրքանես Չ., Հայկական հարցը, էջ 147:

յին Հայաստանին, որի տարածքը փոքր է և այդ պատճառով չի կարող բավարարել հայրենիք վերադառնալու սփյուռքահայերի ցանկությունը:

Եվ չնայած ներգաղթ կազմակերպելու հարցը Սոսկվայում բարձրացվել էր դեռ 1945 թ. ապրիլին, սակայն խորհրդային կառավարությունը միայն նոյեմբերի 21-ին է պաշտոնապես հայտարարել սփյուռքահայերի ներգաղթը դեպի Խորհրդային Հայաստան կազմակերպելու մասին²²⁴: Հայտարարությունից մի քանի օր անց՝ նոյեմբերի 27-ին, Ամենայն հայոց Գևորգ Զ կաթողիկոսը հուշագրով դիմել է ԽՍՀՄ-ի դեկապար Ստալինին, ԱՍՍ-ի նախագահ Տրումենին և Մեծ Բրիտանիայի վարչապետ Էտլիին՝ պահանջելով Թուրքիայի կողմից գրավված հայկական տարածքները վերադարձնել Խորհրդային Հայաստանին: Փաստաթղթում նշված է, թե Մեծ Եղեռնից հետո «ի լուսն հայ ժողովուրդի գլխին եկած նժրախստութիւնների, թիւրքեր 1920 թուին ուխտադրուժ կերպով յարձակեցին ու խլեցին Հայաստանի կարեւոր կենսական մասերը՝ Ղարսը, Արտահանը, Սուրբալուն: Սովետական նորածին Միութիւնը ազատեց հայկական պատմական հողերի մի փոքր մասը, որով փրկեց նա այնտեղ ապրող հայերին վերահաս բնաջնջությունը: Այսպէսով ստեղծուեցաւ Հայկական Սովետական Ռեսպուբլիկան (Հանրապետութիւնը) ...»²²⁵: Ամենայն հայոց կաթողիկոսը գրում էր, թե հայ ժողովուրդը իր դառն փորձից գիտի, թե ներկա կամ հին Թուրքիայի միջև տարրերություն չկա, ու միակ ելքը Թուրքահայաստանի ազատագրումն ու կցումն է Խորհրդային Հայաստանին: «Ուստի, վերստին խնդրում ենք, որ Թիւրքիայի հայկական վիլայեթնե-

²²⁴ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74 (ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների Սովետի 1945 թ. նոյեմբերի 21-ի, նո. 2947 որոշումը «Արտասահմանայն երկրերից հայերի ներգաղթի հետ կախված միջոցառումների մասին»), թ. 1:

²²⁵ «Էջմիածին», նոյեմբեր-դեկտեմբեր, 1945, էջ 8-10:

բը միացուին Սովետական Հայաստանին, որպէսզի հայութիւնը ամրողանայ՝ հաւաքուելով հայրենի երկրում և ապահովութեան ու խաղաղութեան մեջ շարունակէ իր ընդհատուած քաղաքակրթութեան աշխատանքը եւ ի յայտ է բերէ իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը»²²⁶: Ըստ էռթյան, հուշագրում Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացրածն ավելին էր, քան Կարս-Արդահանի պահանջը. արված ձևակերպումով նա պահանջում էր Սևրի դաշնագրով երաշխավորված հայկական հողերը:

Նոյեմբերի 29-ին Էջմիածնում հրավիրած մամուլի ասուլիսում Գևորգ Զ-ն խորհրդային կենտրոնական և հանրապետական թերթերի թղթակիցներին տեղեկացրել է, թե ինչու է դիմել նման քայլի: Նա հայտարարել է. «Արտասահմանի հայության ճակատագրի մասին մեր հոգատարությունը և նրանցից ստացած բազմաթիվ նամակները ու հեռագրերը մեզ մղեցին դիմելու երեք տերությունների դեկավարներին՝ Ստալինին, Տրումենին և Էտլիին՝ խնդրելով վերացնել բազմաշարշար հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տրված պատմական մեծ անարդարությունը: Մեր դիմումով մենք խնդրում ենք Թուրքիայից վերցնել նրա կողմից բոնի կերպով զավթված և այժմ ամայի հողերը, վերադարձնել նրանց վաղեմի տերերին և այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին: Դա զարթական հայերին հնարավորություն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց այրունակից եղբայրների հետ, աշխատելու և զարգացնելու իրենց ազգային կուլտուրան»²²⁷:

Ամենայն հայոց կաթողիկոսը չի բավարարվել միայն հայտարարություններով, նա հատուկ կոնդակով շեշտել է ներզարդի կարևորությունը և դրա հետ կապված հրահանգներ տվել արտասահմանի թեմական առաջնորդներին: Այսպէս, 1946 թ. հուլիսի 1-ին Եվրոպայում կաթողիկոսի պատվի-

²²⁶ Նոյեմբերի:

²²⁷ «Սովետական Հայաստան», 2. XII. 1945:

բակ Արտավազդ արք. Սյուրմենյանին հասցեագրած հրովարտակում հանձնարել է. «Մեր առաջարկն է շտապ կարգով տեղական պայմանների համաձայն՝ կազմակերպել նիւթական աջակցութեան հարցը և գործի անցնել, եւ ձեր ձեռնարկների եւ նոցա ելքի մասին պարբերաբար իրազեկ անել մեզ ի գիտութիւն, ի միամտութիւն և յաջակցութիւն»²²⁸: 1947 թ. ապրիլի 20-ին կաթողիկոսը հրապարակել է ընդարձակ մեկ այլ կոնդակ «Հայ ժողովրդի արդար դատի և բոնադատված իրավունքների մասին» խորագրով²²⁹:

ՀԽՍՀ Մինհատրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախազահ Ս. Հովհաննիսյանի՝ ՀԽՍՀ Մինհատրների խորհրդի նախազահ Ս. Կարապետյանին ուղղած 1947 թ. ապրիլի 14-ի գրությունից տեղեկանում ենք, որ Գևորգ Զ կաթողիկոսը նամակով դիմել է Անգլիական եկեղեցու առաջնորդին: Փաստաթղթում ասվում է. «Նա, որպես անգլիական խորհրդարանի անդամ ձայն բարձրացնի ի պաշտամանություն հայերի արդարացի պահանջի հայկական հողերը Խորհրդային Հայաստանին միավորելու, որի մասին նա խոսել էր երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիայի և ԱՍՄ-ի, դեկավարներին հասցեագրված իր ուղերձում»²³⁰: Անգլիայի հոգևոր առաջնորդին նույն բովանդակությամբ հուշագրով դիմել է նաև Եվրոպայի թեմի առաջնորդ Արտավազդ արք. Սյուրմեյանը: Այդ կապակցությամբ Գևորգ Զ կաթողիկոսը գրել է. «Արտավազդ արքեպիսկոպոսը, այցելության ժամանակ, իր իրավունքների սահմանից դուրս գալով՝ թույլ է տվել իրեն գրավոր հուշագրով դիմել Քենթրքերիի

²²⁸ Հատաց (Փարիզ), 12. XI. 1946:

²²⁹ ՀԱԱ, ֆ. 454, գ. 1, գ. 157 (Գևորգ Զ կաթողիկոսի «Հայ ժողովրդի արդար դատի և բոնադատված իրավունքների մասին» կոնդակը):

²³⁰ ՀԱԱ, ֆ. 823, գ. 1, գ. 19 (ՀԽՍՀ Մինհատրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախազահ Ս. Հովհաննիսյանի 1947 թ. ապրիլի 14-ի գրությունը ՀԽՍՀ Մինհատրների խորհրդի նախազահ Ս. Կարապետյանին), թ. 9:

ըստ միացուին Սովետական Հայաստանին, որպեսզի հայութիւնը ամբողջանայ՝ հաւաքուելով հայրենի երկրում և ապահովութեան ու խաղաղութեան մեջ շարունակէ իր ընդհատուած քաղաքակրթութեան աշխատանքը եւ ի յայտ է բերէ իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը»²²⁶: Ըստ Էռլյան, հուշագրում Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացրածն ավելին էր, քան Կարս-Արդահանի պահանջը. արված ձևակերպումով նա պահանջում էր Սկրի դաշնագրով երաշխավորված հայկական հոդերը:

Նոյեմբերի 29-ին Էջմիածնում հրավիրած մամուլի ասուլիսում Գևորգ Զ-ն խորհրդային կենտրոնական և հանրապետական թերթերի թղթակիցներին տեղեկացրել է, թե ինչու է դիմել նման քայլի: Նա հայտարարել է. «Արտասահմանի հայության ճակատագրի մասին մեր հոգատարությունը և նրանցից ստացած քազմաթիվ նամակները ու հեռագրերը մեզ մղեցին դիմելու երեք տերությունների դեկավարներին՝ Ստալինին, Տրումենին և Էտլիին՝ խնդրելով վերացնել քազմաշարժար հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տրված պատմական մեծ անարդարությունը: Մեր դիմումով մենք խնդրում ենք Թուրքիայից վերցնել նրա կողմից բոնի կերպով զավթված և այժմ ամայի հողերը, վերադարձնել նրանց վաղեմի տերերին և այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին: Դա գաղթական հայերին հնարավորություն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց այրունակից եղբայրների հետ, աշխատելու և զարգացնելու իրենց ազգային կուլտուրան»²²⁷:

Ամենայն հայոց կաթողիկոսը չի բավարարվել միայն հայտարարություններով, նա հատուկ կոնդակով շեշտել է ներգաղթի կարևորությունը և դրա հետ կապված հրահանգներ տվել արտասահմանի թեմական առաջնորդներին: Այսպես, 1946 թ. հուլիսի 1-ին Եվրոպայում կաթողիկոսի պատվի-

²²⁶ Նոյն տեղում:

²²⁷ «Սովետական Հայաստան», 2. XII. 1945:

րակ Արտավազդ արք. Սյուրմենյանին հասցեազրած հրովարտակում հանձնարարել է. «Մեր առաջարկն է շտապ կարգով տեղական պայմանների համաձայն՝ կազմակերպել նիւթական աջակցութեան հարցը և գործի անցնել, եւ ձեր ձեռնարկների եւ նոցա ելքի մասին պարբերաբար իրազեկ անել մեզ ի գիտութիւն, ի միամտութիւն և յաջակցութիւն»²²⁸: 1947 թ. ապրիլի 20-ին կաթողիկոսը հրապարակել է ընդարձակ մեկ այլ կոնդակ «Հայ ժողովրդի արդար դատի և բոնադատված իրավունքների մասին» խորազրութիւնը²²⁹:

ՀԽՍՀ Սինհիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախազահ Ս. Հովհաննիսյանի՝ ՀԽՍՀ Մինհիստրների խորհրդի նախազահ Ս. Կարապետյանին ուղղած 1947 թ. ապրիլի 14-ի գրությունից տեղեկանում ենք, որ Գևորգ Զ կաթողիկոսը նամակով դիմել է Անգլիական Եկեղեցու առաջնորդին: Փաստաթյում ասվում է. «Նա, որպես անգլիական խորհրդարանի անդամ ձայն բարձրացնի ի պաշտապանություն հայերի արդարացի պահանջի՝ հայկական հողերը Խորհրդային Հայաստանին միավորելու, որի մասին նա խոսել էր երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիայի և ԱՍՏ-ի, դեկավարներին հասցեազրած իր ուղերձում»²³⁰: Անգլիայի հոգևոր առաջնորդին նույն բովանդակությամբ հուշագրով դիմել է նաև Եվրոպայի թեսի առաջնորդ Արտավազդ արք. Սյուրմեյանը: Այդ կապակցությամբ Գևորգ Զ կաթողիկոսը գրել է. «Արտավազդ արքեպիսկոպոսը, այցելության ժամանակ, իր իրավունքների սահմանից դուրս գալով՝ թույլ է տվել իրեն գրավոր հուշագրով դիմել Քենթրբերիի

²²⁸ Հառաջ (Փարիզ), 12. XI. 1946:

²²⁹ ՀԱԱ, ֆ. 454, գ. 1, գ. 157 (Գևորգ Զ կաթողիկոսի «Հայ ժողովրդի կոնդակը»):

արդար դատի և բոնադատված իրավունքների մասին» կոնդակը»:

²³⁰ ՀԱԱ, ֆ. 823, գ. 1, գ. 19 (ՀԽՍՀ Մինհիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախազահ Ս. Հովհաննիսյանի 1947 թ. ապրիլի 14-ի գրությունը ՀԽՍՀ Մինհիստրների խորհրդի նախազահ Ս. Կարապետյանին), թ. 9:

արքեպիսկոպոսին և խնդրել, որ նա՝ Հայկական դատի առթիվ՝ «պատշաճ դիմումներ կատարի իրավասու նախարարներին»: Նրա այս քայլը, բնականաբար, կարժանանա նկատողության: Այս առթիվ մտադիր ենք նաև ընդհանուր շրջաբերականով զգուշացնել բոլոր թեմակալներին օտար եկեղեցիների առաջնորդներին այցելելիս զգույշ լինել և դուրս չգալ իրենց իրավունքների սահմաններից»²³¹:

Կաթողիկոսի նման արձագանքը վկայում է, որ նրա դիմանագիտական բոլոր քայլերը համաձայնեցված են եղել ԽՍՀՄ-ի դեկավարության հետ, և նա գիտակցել է, որ ցանկացած չհամաձայնեցված քայլ կարող է ճակատագրական լինել հայ եկեղեցու համար: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. պահպանվել է 1949 թ. Ի. Ստալինին Գևորգ Չիզու գրած հույժ գաղտնի նամակը, որտեղ կաթողիկոսը տեղեկացրել է իր ծրագրերի մասին: Նամակում մասնավորապես ասվում է. «Սկսել ենք նյութեր հավաքել ու շուտով նաև կազմել հասուկ հուշագիր ՍՍԿ Գլխավոր համաժողովի Փարիզյան նստաշրջանին նեկայացնելու համար: Հուշագիրը կկազմվի ոռուերեն և հայերեն, կթարգմանվի ֆրանսերեն և անգլերեն ու կտպագրվի նստաշրջանի նախօրեին, կառաքվի ոչ միայն Համաժողովի մասնակիցներին, այլև պարբերական մամուլին, հասարակական կազմակերպությունների, քաղաքական գործիչների, գրողների, եկեղեցիներ և այլն: Հուշագիրը ծառայելու է Թուրքահայաստանի վիլայեթները Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու հայ ժողովրդի պահանջի պատմաքաղաքական և միջազգային իրավական հիմնվորմանը: Բոլոր ձեռնարկվող քայլերը անպայման կհամաձայնեցվեն ԽՍՀՄ կառավարության հետ ինչպես հուշագրի բովանդակության ու ձևի, նույնպես պահի ընտրության եւ Համագումարին ներկա-

²³¹ ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 26 (Գևորգ Չ կաթողիկոսի տեղեկագիրը Արտավազդ արք. Այուրմեյանի Անզիհական եկեղեցու առաջնորդին հուշագրով դիմելու կապակցությամբ), թ. 22:

յացնելու կանոնակարգի առումով։ Անհրաժեշտ է Զեր համաձայնությունը, որպեսզի պահպանելով ձեռնարկվելիք քայլերի խորհրդապահությունը, այնուամենայնիվ սաստկացնենք ու աշխուժացնենք հայ և հայասեր կազմակերպությունների գործունեությունը խորհրդային իշխանությանը և հայ ժողովրդին ցանկալի ուղղությամբ»²³²։ Այսինքն՝ կաթողիկոսը գիտակցել է, որ միայն խորհրդային կառավարության հետ համագործակցելով է հնարավոր ինչ-որ արդյունքի հասնել:

Այսպիսով, կարելի է ամենայն համոզվածությամբ փաստել, որ հայկական տարածքների պահանջատիրության հարցում պաշտոնական Սոսկվային անհրաժեշտ էր հայոց եկեղեցու աջակցությունը։ 1945 թ. թույլատրելով կաթողիկոսի ընտրությունները՝ Ի. Ստալինը, կարծես թե, դնում էր հայ եկեղեցու հետ համագործակցության հիմքը, ավելին, ամբողջ աշխարհի հայկական գաղթօջախներից Երևան ժամանած պատվիրակությունների միջոցով Թուրքիային ներկայացրած պահանջների հարցում փորձում էր ստանալ սփյուռքահայերի աջակցությունը։ Ազգային-եկեղեցական ժողովի՝ Ստալինին ուղղած նամակը համայն հայության երազանքի բացահայտ արտահայտությունն էր ինչպես տարածքային պահանջատիրության, այնպես էլ ներգաղթի հարցում։ Ավելին՝ Գևորգ Զ կաթողիկոսի կոնդակներն ու դիմում-նամակներն ել իրենց հերթին նոր էջ են բացել հայկական հողերի պահանջատիրության տարեգրության մեջ։

²³² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 807 (Գևորգ Զ կաթողիկոսի նամակը Ի. Ստալինին), թթ. 1-7։

5. Հայկական ազգային խորհուրդները և հողային պահանջատիրության հարցը

1942 թ. վերջերին Սփյուռքում ձևավորվել և լայն ծավալ էր ընդունել «ազգային ուժերի միասնության» զաղափարը: Սփյուռքահայերը հասկացել էին, որ իրենց գործելու ճիշտ ժամանակն է, և որ «խաղասեղանի» վրա դրված է Հայաստանի ապագան: Այս առումով 1943 թ. դրական տեղաշարժ էր նկատվել կուսակցությունների և կազմակերպությունների քաղաքական վարքագծում: Կարելի է վստահորեն ասել, որ դրան նպաստել էր երկու հանգամանք առաջինը Ստալինգրադի հաղթանակն էր, որը կանխատեսում էր ֆաշիստական բլոկի երկրների պարտությունը, երկրորդը Թեհրանի կոնֆերանսում Մեծ տերությունների կողմից՝ պատերազմում համատեղ գործողությունների և հետպատերազմյան համագործակցության մասին ընդունված որոշումն էր: Շատ տրամաբանական ու բնական էր, որ դաշնակից երկրների հաղթանակի հեռանկարը սփյուռքահայերի մեջ հույսեր էր արթնացրել հայկական հողերի վերադարձման խնդրի շուրջ, քանի որ թեպետ Թուրքիան պատերազմին չէր մասնակցում, սակայն չեղոքության բոլի տակ աջակցում էր առանցքի երկրներին, ավելին, վարում էր հակախորհրդային քաղաքականություն:

Առաջ անցնելով նշենք, որ սփյուռքահայերի միջավայրում ծագած այս ակնկալիքները չեն վրիպել Մեծ տերությունների, նախևառաջ ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի ուշադրությունից: Սպահանի բրիտանական հյուպատոսը 1945 թ. մարտին հեռագրել էր Լոնդոն՝ հաղորդելով, թե տեղի նորանշանակ հայոց հոգևոր առաջնորդ Վահան Վրույր Կոստանյանը Նոր Ջուղա հասնելուն պես անցել է իր պարտականություններին և իր ելույթում հայտարարել. «Ժամանակը հասել է հայերին

իրենց հայրենի երկիրը վերադառնալու...»²³³: Իսկ 1945 թ. ապրիլի 11-ին Կահիրեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իղենին անգլիացի դիվանագետների ուղարկած նամակում էլ ասվում էր. «Մենք տեղեկություններ ենք ստացել այն մասին, թե հայերը և՛ Եգիպտոսում, և՛ Միջին Արևելքում քարոզություն են տանում: Հայերը երազում են Թուրքիայից ազատագրված տեսնել հայկական նահանգները և միացված Հայկական Խորհրդային Հանրապետության հետ...»²³⁴:

Եվ, ահա, 1943 թ. հոկտեմբերի 8-ից սկսած՝ Հայկական դեմոկրատական լիբերալ կուսակցության և Ամերիկայի հայկական առաջադիմական լիգայի անդամներն աշխատանքներ սկսեցին արտերկրում գործող հայկական կազմակերպությունների միավորման ուղղությամբ²³⁵: Արդյունքում՝ ստեղծվեցին ազգային խորհուրդներ:

Առաջինը Ամերիկահայ ազգային խորհուրդն էր, որը կազմավորվել է 1944 թ. մարտի 19-ին՝ Հայկական դեմոկրատական լիբերալ կուսակցության, Ամերիկայի հայկական առաջադիմական լիգայի և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության անդամներից: Խորհրդի առաջին նախագահը ռամկավարների առաջնորդ Պետրոս Ս. Թերզյանն էր, որին հաջորդել են Նշան Շահինյանը, Զեմս Չանգայյանը: Մարտին հաստատվել էր կազմակերպության քաղաքական ծրագիրը, ըստ որի՝ Ամերիկահայ ազգային խորհրդի նպատակն էր համերաշխություն և համագործակցություն ստեղծել գաղութի ներսում, ինչպես նաև աշխատել հայ ժողովրդի գերազույն շահերի պաշտպանության համար²³⁶: Կողմերը համաձայնվել էին «օգնել (դաշնակցներին) պատերազմական ջանքերում», «կազմակերպել ձեռնարկներ և օգնել ձեռնարկներ պատերազմական ջանքերում»:

²³³ Մսլլյան Ջ., Հայկական հարցի էջ 27:

²³⁴ Նույն տեղում:

²³⁵ Vertanes Ch., Armenia Reborn, p. 111.

²³⁶ Atamian S., The Armenian Community, p. 372.

նարկներու՝ ի նպաստ Սովետ Միության և Սովետ Հայաստանի», «պաշտպանել տարագիր հայերու իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով և աշխատել՝ ի խնդիր անոնց հայկական հողին վրա վերաբնակեցման»: Փաստաթղթի վերջում ասված էր. «Ամերիկահայ ազգային խորհուրդը հայկական իրավունքներու տերը կճանաչնա Հայաստանի կառավարությունը»²³⁷:

Այս խորհրդից զատ ԱՄՆ-ում գործել է նաև ՀՅԴ կուսակցության կողմից ստեղծված Հայկական ազգային կոմիտեն՝ Ռուբեն Դարբինյանի և Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ²³⁸:

Ազգային խորհուրդներ են ստեղծվել հայկական այլ գաղթօջախներում ևս: Ֆրանսահայերի ազգային խորհուրդը զլսավորել է գրող, քննադատ, բանասեր, լրագրող և հասարակական գործիչ Ա. Չոպանյանը²³⁹, եղիազտահայերինը՝ նշանավոր երգիծանկարիչ Ալ. Սարուխանը²⁴⁰: Ազգային խորհուրդներ կազմավորվեցին Սիրիայում և Լիբանանում, Հունաստանում, Պաղեստինում, Ուրուգվայում և հայկական մասցալ գաղութներում:

Վերորժվարկյալ ազգային բոլոր խորհուրդները մեծ նվիրումով և հույսով սկսեցին իրենց գործունեությունը. Հրատարակեցին գրքեր ու գրքույկներ, տպագրեցին հոդվածներ, թերթիկներ, պատրաստեցին հուշագրեր և դիմումներ, ի նպաստ Հայոց դասի կազմակերպեցին հանրահավաքներ ու հավաքույթներ: Սակայն պետք է ընդունել այն իրողությունը, որ Ամերիկահայ ազգային խորհուրդը այս պայքարում դարձավ

²³⁷ Թոփիուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), Եր., 1986, էջ 252:

²³⁸ ՀԱՍ. ֆ. 1. գ. 034, գ. 95 (Նյութեր Սան Ֆրանցիսկոյի հայկական հուշագրի վերաբերյալ), թթ. 283–284:

²³⁹ Դարբինյան Ա.., Հայ ազատագրական էջ 14:

²⁴⁰ Սերոբյան Ս., Մեր պայքարը հայ էջ 269:

այն ուժը, որը միավորեց աշխարհասփյուռ հայկական բոլոր կազմակերպություններին և ստանձնեց կառավարման դեկը:

Ստեղծման առաջին խև օրից Ամերիկահայ ազգային խորհուրդը ծավալել է բուռն գործունեություն: Սակայն խորհրդի կատարած ամենակարևոր քայլը ամերիկաբնակ հայերի անունից ՍԱԿ-ին ներկայացրած «Հայ ժողովրդի գործը» պատմական հուշագիրն է: Բացի այդ, Հայկական ազգային կոմիտեն խորհրդի հետ գուցահեռ 1945 թ. մայիսի 7-ին ՍԱԿ-ին է փոխանցել մեկ այլ հուշագիր ևս՝ «Հայկական հարցի առթիվ» վերնագրով, որը ստորագրել էր Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանը²⁴¹: Այս երկու փաստաթղթերի բովանդակությունը նույնն էր, միայն Հայկական ազգային կոմիտեն, ի տարբերություն Ամերիկահայ ազգային խորհրդի, առաջարկում էր հայկական տարածքներից ստեղծել նոր «Հայկական հանրապետություն»: Հետագայում, սակայն, փոխել է դիրքորոշումը և իր գործունեության հիմքում դրել Արևմտյան Հայաստանի հողերի միացումը «Մայր հայրենիքին», այսինքն՝ Խորհրդային Հայաստանին:

«Հայ ժողովրդի գործը» հուշագրում պահանջվում էր հայկական հողերի միացումը ազատ, անկախ գոյություն ունեցող Խորհրդային Հայաստանի հանրապետությանը և արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող հայերի վերադարձը Մայր հայրենիք: Փաստաթղթում մասնավորապես նշվել է. «...հասել է ժամանակը, որ Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական տարածքը միացվի Հայաստանին, ինչը հնարավորություն կտար տարբեր երկրներում բնակվող մեկուկես միլիոն հայերին վերադառնալ հայրենիք»: Հուշագրի վերջում էլ ասվում էր, որ ժամանակն է, որպեսզի թուրքական տիրապետության

²⁴¹ «Արևելք Տարեգիրը» (Հայեա), 1948, էջ 73–77:

տակ գտնվող հայկական նահանգները միացվեն Խորհրդային Հայաստանին՝ հույս հայտնելով, որ զոնե այս անզամ հայ ժողովուրդը խաղալիք չի դառնա «ուժի քաղաքականության միջազգային շախմատային տախտակի վրա»^{242:}

Այս հուշագիրը մեծ արձագանք է ունեցել ինչպես արտերկրում, այնպէս էլ Մայր հայրենիքում: Այն տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում՝ ոգևորություն առաջացնելով Հայաստանի բնակչության ամենալայն շրջանակներում: Սփյուռքահայության առաջ քաշած հարցերը Խորհրդային Հայաստանում ապրող հայությունը համարում էր միանգամյան բնական և արդարացի: Եվ այդ էր պատճառը, որ խորհրդային թերթերում ի նպաստ Հայկական դատի տպագրվել են նամակներ՝ «Արդարության ձայն», «Հասել է ժամանակը», «Մեկուկես միլիոն մարդկանց ձայնը» և նման խոսուն վերնագրերով^{243:} Դրանցից հատկապես հատկանշական է անվանի գրող Դ. Դեմիքճյանի հայրենասիրական ոգով գրված նամակը^{244:} Խորհրդային Հայաստանում հուշագրի նման ընդունելությունը սփյուռքահայերի համար անսպասելի էր և դա նոր հույսեր առաջացրեց, որ Հայկական հարցը վերջապես կստանա արդարացի լուծում:

Սան Ֆրանցիսկոյի հուշագիրն արձագանք գտավ ոչ միայն Խորհրդային Հայաստանի ու արտասահմանյան, այլև թուրքական մամուլում: «Զուսմիտրիեթ» թերթը 1945 թ. մայիսի 9-ին խմբագրության անունից տեղեկացրել է. «Հայերը, հանդիսանալով թուրքական հպատակներ, օգտվում են մեր օրենքների բոլոր իրավունքներից, որոնք տարածվում են մեր քաղաքացիների վրա: Այդ դեպքում վերոհիշյալ հաղորդա-

²⁴² Armenian National Council of America, The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, June 4, 1945, New York, 1945, p. 1-7.

²⁴³ «Սովետական Հայաստան», 15. VI. 1945:

²⁴⁴ Նոյն տեղում:

գրությունը կոնֆերանսի հավաքված երկրների ներկայացուցիչներին հայերի դիմումի մասին տեղին չէ և անմիտ է»²⁴⁵: Թերթի թղթակիցներից մեկն ավելի ուշ հանդիպում է ունեցել և զրուցել Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարք Արսլանյանի հետ: Վերջինս նշել է, որ, լինելով հայերի հոգևոր ներկայացուցիչը, զբաղվում է միայն կրոնական հարցերով, և քանի որ քննարկվող հարցը զուտ քաղաքական է, ինքը լիազորված չէ հայկական հասարակության անունից ինչ-որ քան ասել այդ առումով²⁴⁶: Թե նման պատասխանը որքանո՞վ է գոհացրել թուրք լընթերցողին և Թուրքիայի կառավարությանը, հայտնի չէ, սակայն այն, որ սփյուռքահայերը շարունակում են իրենց գործունեությունն այս ուղղությամբ, բավականին ցալագին է ընդունվել թուրքերի կողմից:

ՍԱԱ-ին ներկայացված այս հուշագրերը միակը չէին. հայկական ազգային խորհուրդները խնդրագրեր են ուղարկել նաև Պոտսդամի, Մուկվայի, Լոնդոնի, Փարիզի և Նյու Յորքի խաղաղության խորհրդաժողովներին:

Հայկական ազգային կոմիտեն 1945 թ. հուլիսի 5-ին՝ Պոտսդամի խորհրդաժողովի նախօրեին, հուշագիր է ներկայացրել Ստալինին, Տրումենին և Չերչիլին: Այն նախօրդից չէր տարբերվում: Դրանում ասվում էր. «Յանձնախումբս կը հավատայ և կը խնդրէ ձեզմէ արդար լուծում մը հայկական խոռովիչ հարցին, այն է՝ կցել ներկայ վերածաղկյալ Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան ոչ միայն Կարս և Արտահանի շրջանները, այլև Թուրքահայաստանը, որ դաշնակից պետութեանց առաջարկով սահմանուած է նախագահ Ուիլսոնի կողմէ»²⁴⁷:

²⁴⁵ ՀԱԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95 (Նյութեր Սան Ֆրանցիսկոյի հայկական հուշագրի վերաբերյալ), թ. 146:

²⁴⁶ Նույն տեղում, թթ. 146–148:

²⁴⁷ Նույն տեղում:

1945–1947 թթ. սփյուռքահայերը դիմել են Մեծ տերությունների ղեկավարներին, այդ երկրների արտաքին գործերի նախարարներին, ՍՍԿ-ի գլխավոր քարտուղարին և միջազգային այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին, Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Աշխարհի ողջ հայության կողմից տասնյակ հազարավոր նամակներ են ուղարկվել Ստալինին, Մոլոտովին, Զարությունյանին, Կարապետյանին և ուրիշներին: Հասկանալի է, որ դրանց բովանդակությունը նույնն էր, պահանջը՝ մեկը: Այդ խնդրագրերը լուսաբանվել և մեկնաբանվել են ինչպես սփյուռքահայ, այնպես էլ խորհրդային ու արևմտյան մամուլում: Այդ տարիներին, ինչպես վերև տեսանք, արտասահմանյան պարբերականներում լուս են տեսել հայկական հողային պահանջին վերաբերող բազմաթիվ հոդվածներ ու նամակներ: Այսպես, օրինակ, 1945 թ. հուլիսի 4-ին «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակվել է գրող Լևոն Զավեն Սյուրմեյյանի նամակը, որտեղ նա պաշտպան է կանգնում Կարսի և Արդահանի՝ Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջին²⁴⁸:

Հայկական հարցում օտարերկրյա տերությունների աջակցությունը ստանալու ակնկալիքով սփյուռքահայերը 1945 թ. սկսեցին համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, գիտության և արվեստի ճանաչված ներկայացուցիչների հետ: Այսպես, 1945 թ. աշնանը Ամերիկահայ ազգային խորհուրդը ի նպաստ Հայ դատի հավաքել է 20 հազար ստորագրություն և ներկայացրել Սենատ²⁴⁹: Նոյեմբերի 9-ին Նյու Յորքի «Բելմոնթ Փլազ» հյուրանոցում մի խումբ նշանավոր ամերիկացիներ էլ ստեղծել են Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտե՝ սենատոր Էդվին Սմիթի (Ամերիկա-խորհրդային բարե-

²⁴⁸ «New York Times», 4. VII. 1945.

²⁴⁹ Ահարոնյան Գ., Մեծ երազի ..., էջ 67:

կամության ազգային խորհրդի նախկին ղեկավար) նախագահությամբ և կոնգրեսական Ռոբերտ Վ. Սելրի (Նյու Յորքի բողոքական եկեղեցիների դաշնության զլիավոր քարտուղար) քարտուղարությամբ: Կոմիտեին կից ձևավորվել է Ազգային իրավունքների խորհուրդ, որի 150 անդամների թվում էր նաև մեծ վիճական Թ. Դրայգերը²⁵⁰:

Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն լայն գործունեություն է ծավալել: Այսպես, 1945 թ. ղեկատեմբերին դիմում է հղել Սոսկվայում հավաքված երեք ՄԵծ տերությունների արտգործնախարարներին՝ նրանց կառավարություններից պահանջելով բավարարել հայ ժողովրդի արդարացի պահանջները, այն է՝ վերադարձնել հայկական պատմական հողերը Խորհրդային Հայաստանին և արտասահմանյան հայերին հնարավորություն տալ վերադարձնալու իրենց հայրենիքը²⁵¹: 1946 թ. հունվարին կոմիտեն ուղերձ է հղել նաև Լոնդոնում գումարված ՍԱԿ-ի Գլխավոր ասամբ-լեայի առաջին նստաշրջանի մասնակից ամերիկյան ներկայացուցիչներին²⁵²:

Ապրիլի 28-ին Նյու Յորքի «Քարնեգի Հոլի» մեջ Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն մեծ միջոցառում է կազմակերպել՝ ի նպաստ Հայկական դատի: Իրենց ելույթներում սենատոր Չ. Թորին, կոնգրեսականներ է. Սելլը, Չ. Սևիչը և ուրիշներ Հ. Տրումենի վարչակազմից պահանջել են «արդարություն հայերի համար», այն է՝ հայկական հողային պահանջների լուծում²⁵³: Միջոցառման մասնակիցներն ընդունել են բանաձև, որում ՍԱԿ-ին կոչ էին անում «ուշադրություն ցուցաբերել և արագ լուծել Հայկական հարցն այդ բանաձևի առաջարկությունների համաձայն», այսինքն՝

²⁵⁰ Vertanes Ch., Armenia Reborn, p. 114–115.

²⁵¹ Նոյն տեղում:

²⁵² «Զարթօն», 21. II. 1970:

²⁵³ Նոյն տեղում:

օժանդակել Արևմտյան Հայաստանի տարածքները Խորհրդային Հայաստանին վերամիավորելու գործին: Բանաձևի պատճեններն ուղարկվել են ՍԱԿ-ի բոլոր անդամներին, ԱԱՌ-ի նախագահ Տրումենին և պետքարտուղար Բյորնսին²⁵⁴:

«Արդարություն հայերի համար» կոչք, սակայն, մնաց անարդյունք, քանզի արդեն 1946 թ., ինչպես վերև ասվել է, սկսվել էր «սառը պատերազմը»: 1946 թ. մայիսի սկզբին Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեի նախագահ Է. Սմիթը հանդես եկավ բաց նամակով, որտեղ բացահայտ ասվում էր, որ ամերիկյան քաղաքական ազդեցիկ որոշ շրջաններ դեմ են հայերի պահանջներին, որովհետև այն ծառայում է Խորհրդային Միության ռազմավարական և տնտեսական շահերին: Սմիթը խորհուրդ էր տալիս չմոռանալ, որ այդ դիրքորոշումը չի համապատասխանում այն զաղափարներին, որոնց համար կովել և զոհվել են ամերիկացիները, ռուսները, անգլիացիներն ու հայերը: Ըստ նրա՝ «Հայկական հարցը ստեղծվել է Թուրքիայի անցած պատմության մութ էջերում և ոչ թե Խորհրդային Միության մեջ»²⁵⁵: Այս նամակում արծարծված հարցերը նույնպես մնացին ձայն բարբառո անզորի:

Սփյուռքահայերի ձեռնարկած գործողություններից ամենահատկանշականը Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումն էր, որը կայացել է Նյու Յորքում 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 6-ը: Այդ օրերին խորհրդային, սփյուռքահայ և ամերիկյան թերթերը կոնգրեսի հրավիրման փաստն անվանել են պատմական ու եզակի իրադարձություն: Իրենց ուղերձներում այն բարձր են գնահատել Խորհրդային Հայաստանի դեկավար այրերը՝ Գրիգոր Հարությունյանը, Մացակ

²⁵⁴ Նույն տեղում:

²⁵⁵ «New York Times», 3. V. 1945.

Պայյանը, Սահակ Կարապետյանը, նաև գիտության ու մշակույթի բազում գործիչներ²⁵⁶: Ավելի ուշ, սակայն, խորհրդային պատմաբանները կփորձեն շրջանցել և մոռացության տալ Նյու Յորքում տեղի ունեցած այդ մեծ իրադարձությունը: Սփյուռքահայ պատմաբաններն էլ այն կհամարեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հայկական հարցի լուծման նպատակով ստեղծված ազգային խորհուրդների գործունեության գագաթնակետը:


Ինչևէ, Համաշխարհային հայկական կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար Նյու Յորք էին ժամանել 22 երկրներից 720 հայ պատգամավորներ՝ հայության օրախնդիր հարցերը քննարկելու համար: Կոնգրեսի օրակարգում ընդգրկվել էին Հայկական հարցը, հայրենադարձության, զաղութահայերի համագործակցության և այլ խնդիրներ: Հայերից բացի կոնգրեսի նիստերում հանդես են եկել ամերիկյան քաղաքական գործիչները: Այսպես, օրինակ, ելույթ ունեցած սենատոր Չ. Թորին ասել է. «Արդարությունը պահանջում է, որ Հայաստանը ընդգրկվի նախագահ Վիլսոնի գծած սահմաններում»: Ավելին, մասնակից բոլոր պատգամավորների ելույթներում հնչել է հետևյալ արտահայտությունը. «Ժամանակը եկել է, որ Հայկական հարցը իր վերջնական լուծումը ստանա»²⁵⁷: Ամենայն Հայոց Գեորգ Զ կաթողիկոսը կոնգրեսին հղած ուղերձում նշել է. «Մենք անվերապահ իրավունք ունենք և պահանջելու, և ակնկալելու մեր արդար դատի պաշտպանությունը մանավանդ այսօր, եթե Ատլանտյան Խարժիան և ՄԱԿ-ի կանոնադրությունը ազդարաբել են մարդկային իրավունքների, ազգերի ազատագրության, քաղաքական արդարության և այլ բարձր սկզբունքներ»²⁵⁸:

²⁵⁶ Համառոտ տեղեկություն Համաշխարհային Հայկական քոնգրեսի ապրիլի 30-մայիսի 4, 1947, Նյու Յորք, 1947, էջ 11-12:

²⁵⁷ Նույն տեղում, էջ 6:

²⁵⁸ Նույն տեղում, էջ 9:

ԱԵՎՐԱՊԱՏԱԿԱԳՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱԻ ՀԱՄԱՐԱՐԱՐ ԳՈՎԱՐԱՐԱՐ ԱՐԵՎԵՆ



Համաշխարհային հայկական կոնգրեսի մասնակիցները խնդրագրերով դիմել են ՍԱԿ-ին և Սեծ տէրությունների կառավարություններին՝ պահանջելով Հայկական հարցի վերջնական ու արդարացի լուծում²⁵⁹:

Նյու Յորքում կայացած Համաշխարհային հայկական կոնգրեսը մեծ դեր է խաղացել սփյուռքահայերի կյանքում. այն միավորել է իրարից անջատ գործող հայկական ազգային խորհուրդներին և աշխարհին մեկ անգամ ևս հիշեցրել, որ Հայկական հարցը սպասում է իր արդար լուծմանը:

Հայերի ներկայացրած այս պահանջը, սակայն, կրկին անտեսվել է: Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի շահերը չեն համընկնում հայկական շահերի հետ: Սփյուռքահայերի համար դա հատկապես ակնհայտ է դարձել, եթք Համաշխարհային հայկական կոնգրեսի պատվիրակությունը փորձել է վերոհիշյալ խնդրագիրը հանձնել ԱՄՆ-ի կառավարությանը: 1947 թ. մայիսի 12-ին ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դ. Աշխոնի հետ կայացած հանդիպման ժամանակ ամերիկացի պաշտոնյան խոսել է Հայկական հարցի լուծման ճանապարհին առկա դժվարությունների մասին²⁶⁰: Աշխոնն ասել է. «...այն չափով, որ մեծանա և հզորանա Հայաստանը, նույն չափով կաճի ուժը մեր զիսավոր թշնամու՝ Սովետական Միության»²⁶¹: Այլ կերպ ասած՝ Կաշինգտոնը որոշել էր ամեն գնով թույլ չտալ Թուրքիայի անդամականությունը:

Այսպիսով՝ Հայկական հարցի լուծման ուղղությամբ սփյուռքահայերի ձեռնարկած վերոհիշյալ քայլերը՝ հեռագրե-

²⁵⁹ Armenian National Council of America, A Memorandum on the Armenian Question, Presented to the Council of Foreign Ministers, March 7, 1947, New York, 1947, p. 1-7; The Resolution to the United Nations Submitted by the World Armenian Congress, New York, 1947, p. 1-11; An Appeal, To the Member Governments and Their Delegates to the United Nations, July 1, 1947, New York, 1947, p. 1-5.

²⁶⁰ Սհարունակ Գ., Մեծ երազի ... էջ 199:

²⁶¹ Նույն տեղում:

րը, դիմում-նամակները, հուշագրերը, այցերը, կազմակերպած այլսայլ միջոցառումները, հակառակ ազդեցություն են ունեցել Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի վրա: Եվ չնայած այդ տարիներին հայկական տարածքների պահանջի շուրջ Սփյուռքի ծավալած շարժումը դրական արդյունք չի ունեցել սակայն սփյուռքահայերի կողմից մշակվել է գործողությունների նոր ռազմավարություն: Հստ այդմ՝ Սփյուռքում ձևավորված, կազմավորված հայկական ազգային խորհուրդները Հայկական հարցի շուրջ սկսել են համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, գիտության և արվեստի ներկայացուցիչների հետ: Հետպատերազմյան շրջանում սկսված նման քաղաքականությունը հիմք է հանդիսացել հետազայում օտարերկրյա խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի համար, որը շարունակվում է մինչ օրս:

Գ Լ ՈՒ Խ III

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Սևծովյան նեղուցների հարցը որպես միջազգային խնդիր

XVIII դարից սևծովյան նեղուցների վերահսկման համար անզիջում պայքար է ընթացել Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի միջև, քանի որ միայն այս նեղուցներով է հնարավոր ելումուտ անել Սև ծով։ Այս հարցի ուսումնասիրությամբ զբաղվել են ոչ միայն քաղաքագետներ, դիվանագետներ ու ռազմական իրավաբաններ, այլև պատմաբաններ, աշխարհագետներ, տնտեսագետներ։

Սևծովյան նեղուցները՝ Բոսֆորը և Դարդանելը, միացնում են Ազովի ու Սև ծովերը Միջերկրական ծովի հետ։ Բոսֆորը, գտնվելով Եվրոպա մայրցամարի և Փոքր Ասիա թերակղզու միջև, կապում է Սև ու Մարմարա ծովերը, իսկ Դարդանելի նեղուցը Եվրոպան բաժանում է Փոքր Ասիայից՝ միացնելով Մարմարա և Էգեյան ծովերը։ Այսպիսով, հիշատակված նեղուցները համարվում են «բանալի» դեպի Սև ծով, և հնագույն ժամանակներից սևծովյան պետությունների համար եղել են ջրային միակ ճանապարհը դեպի միջազգային շուկաներ։ Մինչ օրս նեղուցները պահպանում են իրենց ռազմավա-

րական մեծ ու կարևոր նշանակությունը: Այսօր ՄՆ ծովի ջրերը ողողում են Ռուսաստանի, Օւկրախնայի, Վրաստանի, Թուրքիայի, Ռումինիայի և Բուլղարիայի ափերը: Ըստ այդմ՝ նեղուցներով ելումուտի ապահովությամբ հետաքրքրված են թվարկված բոլոր պետությունները:

Պատմությունը ցույց է տվել, որ պատերազմների ընթացքում սևծովյան նեղուցներն օգտագործվել են ի վեաս Ռուսաստանի: Այդպես է եղել 1853–1856 թթ. Ղրիմի, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ. Այդպես էր նաև Առաջին համաշխարհայինի տարիներին, երբ Թուրքիան նեղուցները բացել եր գերմանական «Գերեն» և «Բրեսլաու» ռազմանավերի առջև: Այնուհետև 1918–1920 թթ. նեղուցներն օգտագործել են Անտանտի երկրները Խորհրդային Ռուսաստանի դեմ ինտերվենցիա կազմակերպելու համար¹: Այդ պատճառով, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմից հետո, սևծովյան նեղուցներով հետաքրքրված պետությունները որոշել են, որ անհրաժեշտ է սահմանել նեղուցներով նավարկելու միջազգային իրավական կարգ: Հարցն առաջին անգամ քննարկվել է Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայի պայմանագրի ստորագրման ընթացքում, որտեղ որոշվել էր մշակել սևծովյան նեղուցներով ելումուտի վերահսկման կարգը: Այդ նպատակով կողմերը պարտավորվել են հատուկ խորհրդաժողով իրավիրել, որին մասնակցելու էին սևծովյան բոլոր պետությունները:

Հանդիպումը տեղի է ունեցել Լոզանում 1922 թ. նոյեմբերից 1923 թ. հուլիսի ընթացքում, որին մասնակցում էին ՄԵծ Բրիտանիան, Ֆրանսիան, Հունաստանը, Ռումինիան, Հարավալիան, Ճապոնիան, ԱՍՍ-ն և Թուրքիան: Խորհրդային ռուս-ուկրախնա-վրացական միացյալ պատվիրակությունը

¹ Дранов Б.,Черноморские проливы, с. 4.

Գ. Չիչերինի գլխավորությամբ մասնակցել է միայն սևծովյան նեղուցների հարցի քննարկմանը²: Լոզանի խորհրդաժողովի նպատակը Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախապատրաստումն ու սևծովյան նեղուցների ռեժիմի սահմանումն էր: Խորհրդային կողմից ներկայացրած նախագծի համաձայն՝ անհրաժեշտ էր նեղուցները փակել բոլոր ռազմանավերի առջև ու ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ թույլատրել միայն առևտրական ազատ նավագնացություն: Մյուս նախագիծը, որ ներկայացրել էին Անտանտի երկրները, նախատեսում էր բոլոր պետությունների ռազմանավերի համար ազատ ելումուտ նեղուցներով ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ, եթե միայն Թուրքիան չեղորդություն պահպանի: Վերջինիս՝ պատերազմին մասնակցելու դեպքում, նեղուցներով ազատ ելումուտ էր նախատեսվում միայն չեղորդություն պահպանող երկրների ռազմանավերի համար: Անզիհան պահանջում էր նաև սևծովյան նեղուցների ապահովմականացում և միջազգային վերահսկողության հաստատում³: Թուրքիան նախընտրությունը տվել է անզիհական նախագծին:

Լոզանի խորհրդաժողովում սևծովյան նեղուցներով ելումուտի սահմանված ռեժիմի վերանայման նպատակով Թուրքիայի առաջարկով 1936 թ. Սոնտրոյում իրավիրվել է նոր հանդիպում, որին մասնակցում էին ԽՍՀՄ-ը, Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բուլղարիան, Ռումինիան, Հունաստանը, Հարավսլավիան, Ավստրալիան և Ճապոնիան: Այս խորհրդաժողովում ստորագրվել է նոր համաձայնագիր, ըստ որի՝ Թուրքիան իրավունք էր ստանում վերանայմականացնել նեղուցների գոտին: Բոլոր երկրների առևտրական նավերին թույլատրվում էր ինչպես խաղաղ, այնպես էլ պա-

² Базилевич К., О Черноморских ..., с. 9.

³ Бараболя П., Иванщенко Л., Колесник Д., Международно-правовой ..., с. 51.

տերազմի պայմաններում ազատ ելումուտ անել նեղուցներով։ Սևծովյան երկրների ռազմանավերը խաղաղ պայմաններում նեղուցներից կարող էին օգտվել թուրքական իշխանություններին նախօրոք նախազգուշացնելու դեպքում, իսկ մյուս երկրների ռազմանավերի ելումուտը նեղուցներով սահմանափակվելու էր ինչպես քանակով, կարգով, այնպես էլ՝ տոննաժողով։ Պատերազմի պայմաններում, եթե Թուրքիան ևս մասնակցում էր դրան, ապա իրավունք էր ստանում նեղուցների հարցը տնօրինել իր հայեցողությամբ, իսկ չեղորդության պահպանման դեպքում պարտավորվում էր հակամարտող երկրների նավերին թույլ չտալ անցնել նեղուցներով⁴։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, սակայն, Մոնտրոյի համաձայնագիրը խախտվել է։ Պատերազմի ողջ ընթացքում չեղորդություն հայտարարած Թուրքիան աջակցում էր Գերմանիային՝ խախտելով այդ համաձայնագրով ընդունված նեղուցների ռեժիմը, վտանգ էր ստեղծում ԽՍՀՄ-ի սևծովյան շրջանների համար։ Այն դեպքում, եթե Թուրքիայի կառավարությունը նեղուցները փակել էր ԽՍՀՄ-ի ու նրա դաշնակիցների առջև, ֆաշիստական բլոկի երկրներին թույլ էր տալիս նեղուցներով ազատ ելումուտ անել։ Ուստի, հասկանալի է, որ պատերազմի ավարտից հետո, ԽՍՀՄ-ը Թուրքիային մեղադրելու էր նեղուցների հարցում իր դիրքի չարաշահման մեջ։ Խորհրդային կողմը նեղուցների վերահսկման հարցն առաջին անգամ բարձրացրել է 1944 թ. հոկտեմբերին՝ Մոսկվայում Ստալին-Շերշլ հանդիպման ժամանակ⁵։ Ինչպես վերը նշել ենք, հարցը Մեծ տերությունների կողմից ավելի ուշ քննարկվել է Ղրիմի խորհրդաժողովում։ Եվ չնայած Մեծ տերությունները որևէ համաձայնության չեն

⁴ Попов В., Конференция в Монре 1936 г. – Вопросы истории, 1963, № 11, с. 60.

⁵ Бараболя П., Иванщенко Л., Колесник Д., Международно-правовой ..., с. 66.

եկել, սակայն մի հարցում նրանք համակարծիք էին. Մոնտրոյի համաձայնագիրը պետք է վերանայել:

Դեռևս 1943 թ. անզիյական գաղտնի ծառայությունները տեղեկացնում էին, որ սևծովյան նեղուցների հարցը հայտնվելու է միջազգային ասպարեզում: Այդ մասին է վկայում Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության հետախուզական վարչության պատրաստած «Խորհրդային Միության հետապատերազմյան արտաքին քաղաքականության հավանական միտումները» թեմայով հովժ գաղտնի գեկուցագիրը, որի բաժիններից մեկը վերաբերում էր խորհրդա-թուրքական հարաբերություններին: Դրանում, մասնավորապես, ասվում էր. «ԽՍՀՄ-ը կփորձի պահպանել և ըստ հնարավորին ընդլայնել իր իրավունքները նեղուցներում, որոնք սահմանվել էին Մոնտրոյում: Նրա ու Թուրքիայի միջև փոխադարձ անվստահությունն անցյալի մնացորդ է, իրավիճակը կարող է մեղմել այն իրողությունը, որ Մեծ Բրիտանիան դառնա նրանց ընդհանուր դաշնակցը և վերացնի այն բոլոր սուր պահերը, որոնք անցյալում նրանց միջև լարվածություն են առաջացրել»⁶: Ավելի ուշ՝ 1945 թ. հունվարին, Լորդերի պալատի տարեկան առաջին նիստում կառավարական շրջանակները կրկին նախազգուշացնում էին, թե սևծովյան նեղուցների հարցը դառնալու է խորհրդաժողովների քննարկման թեմա⁷:

Մարտի 19-ին, եթե ԽՍՀՄ-ը չեղյալ հայտարարեց խորհրդա-թուրքական պայմանագիրը, արտասահմանյան մամուլն առանց վարանելու սկսեց պնդել, որ Խորհրդային Միության պահանջներից մեկը լինելու է սևծովյան նեղուցներով ելումուտի ռեժիմի վերանայումը: Ֆրանսիական «Լե Օրտեր» թերթը գրել է. «Թուրքիայի յապահած պատերազմի յայտարարութիւնը որեւէ բան չի փրկեր: Նեղուցներու խնդիրը – որով-

⁶ Служба Внешней Разведки Российской Федерации ..., с. 129.

⁷ Նոյն տեղում:

հետեւ հարցը ատոր մասին է – պետք է սեղանի վրայ դրուի եւ վճռուի»⁸: Ամերիկյան պարբերականներն ել վստահեցրել են, որ խորհրդա-թուրքական պայմանագիրը վերանայելու ԽՍՀՄ-ի որոշումը ԱՄՆ-ին որևէ անհանգստություն չի պատճառել՝ հիշեցնելով, որ Ստալինը Ղրիմի խորհրդաժողովի ընթացքում Ռուզվելտին և Չերչիլին տեղեկացրել էր, թե «պատերազմը փոխել է քաղաքական և դիվանագիտական իրավիճակը Սև ծովի մեջ»: Հետևաբար, ամերիկացի վերլուծաբանները ենթադրում էին. «Ռուսիոյ նպատակն է Տարտանելի ներկայ կացութեան վերաքննութիւնը, զոր պիտի կրնայ ձեռք ձգել քարեկամականօրէն, իր հակակշիռը հաստատելով Նեղուցներուն վրայ»⁹:

1945 թ. ապրիլի 17-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության հետախուզական վարչությունը ներկայացրել է մեկ այլ զեկուցագիր՝ «Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմական միտումները» խորագրով: Փաստաթղթի «Թուրքիա և նեղուցներ» բաժնում ասվում էր. «Ռուսաստանը նեղուցներում ունի երկու հիմնական հետաքրքրություն՝ ռազմավարական և տնտեսական: Վերջինս ծագել է 1829 թ., երբ Աղրիանուապուսի պայմանագրով խաղաղ տարիներին թույլատրվում էր անզեն նավերին ելումուտ անել նեղուցներով: Նախահեղափոխական Ռուսաստանի համար կարևոր էր ցորենի, այնուհետև և նավթի փոխադրման իրավունքը: Եվ չնայած 1917 թվականից արտահանման չափերը նվազել են, սակայն այդ անցմանը մեծ առավելություն է տրվում:

Ռուսների ռազմավարական պահանջները հիմնականում փոփոխվում են, դրանք բացառապես կախված են նրա հզորությունից: Եթե Ռուսաստանը թույլ է (իրականում դա վերաբերում է ծովային հարաբերություններին), ապա քայլեր է ձեռնարկում այլ երկրների նավատորմերը Սև ծովից վտա-

⁸ «Արևմուտք», 25. V. 1945:

⁹ «Լրաբեր», 17. VI. 1945:

թելու ուղղությամբ: Եթե ուժեղ է, ապա ձգտում է իր նավատորմի համար ստանալ օգտվելու իրավունք...»¹⁰: Այնուհետև զեկուցագրում նշված է. «Հնարավոր է՝ այս պատերազմից հետո (ԽՍՀՄ-ը. - Ք.Ս.) կրկին պահանջի վերափոխել Սոնտրոյում կնքված համաձայնագիրը, քանի որ խորհրդային կառավարությունը հազիվ թե բավարարված է Թուրքիայի չեղորությունից: Նախկին Ռուսաստանի քաղաքականությունը սովորաբար սահմանափակվում էր նեղուցների վերահսկումը վատահեկով թույլ Թուրքիային, ինչը, ըստ նրանց, փոքրագույն չարիք է, ի դեմս նրա, որ դա կհանձնվեր ծովային ուժեղ պետություններին կամ խոսմբ երկրներին, կամ էլ կփորձի անձամբ գրավել դրանք, եթե (ինչպես XIX դ. Վերջին և հետագայում նորից 1915 թ.) Թուրքիան կրկին հայտնվի պարտության վտանգի շեմին, կամ թշնամացած լինի արևմտյան տերությունների հետ: Ռուսների տեսանկյունից Անկարայի կողմից նեղուցների ոչ լիարժեք վերահսկումը հիմնականում արտահայտվում է պատերազմի ժամանակ, երբ թույլ Թուրքիան կարող է ընկնել Ռուսաստանի հակառակորդների ազդեցության տակ, անկախ նրանից, դրանք ծովային պետություններ են, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան (ինչպես Դրիմի պատերազմի ժամանակ, 1878 թ. և 1918-1920 թթ.) կամ Գերմանիան (ինչպես 1914-1918 թթ. և ներկայիս պատերազմում): Անհրաժեշտ է հիշեցնել որ ինչպես Անգլիան Ֆրանսիայի հետ դաշնակցելով, այնպես էլ Գերմանիան ամեն կերպ փորձել են փակել ուսւների մուտքը Բալթիկ, ինչպես նաև Ան ծով, այն էլ մի քանի անգամ՝ 1853-1856 թթ., 1914-1918 թթ., 1918-1919 թթ. և 1941-1944 թթ.»¹¹:

Հնարավոր է՝ վերը նշված պատճառների հետևանքով ԽՍՀՄ-ը խոշնութիւն ծովային ուժեղ տերությունների, օրինակ՝ Մեծ Բրիտանիայի հետ, Թուրքիայի միությանը, հատ-

¹⁰ Служба Внешней Разведки Российской Федерации ..., с. 167.

¹¹ Նոյն տեղում, էջ 168:

կապես, եթե այն եռակողմ չէ: Խորհրդային Սիությունն ամեն կերպ կփորձի որոշակի վերահսկում ստանալ նեղուցների վրա, քանի որ դա երաշխիք կհանդիսանա, որ Թուրքիան առանց ԽՍՀՄ-ի համաձայնության նեղուցները չի բացի այլ երկրների առջև: ԽՍՀՄ-ի համար նեղուցներով ելումուտի վերահսկման իրավունքն անշափ կարևոր է, քանզի նրան ձեռնուու չէ, որ այդ վերահսկումը իրականացվեր ծովային ավելի հզոր պետության կողմից: Այդ պատճառով եւ, քանի դեռ «արքայական ծովային» նավատորմը գերիշխում է Սիցերկրական ծովում, Խորհրդային Սիության շահերից է բխում եռակողմ՝ ԽՍՀՄ-ի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի միջև պայմանագրի կնքումը: Դա հնարավոր է ապահովել՝ անզլոխորհրդային պայմանագրին Թուրքիայի միացումով (համապատասխան փոփոխություններով): Սակայն եթե ԽՍՀՄ-ի շահերը չարժանանան դաշնակից պետությունների հավանությանը, ապա վտանգ կա, որ Խորհրդային Սիությունը կօգտագործի իր ազդեցությունը Բուլղարիայի վրա կամ կաջակցի Բուլղարիայի՝ դեպի Էգեյան ծով ելք ստանալու հավակնություններին, կամ ել Բուլղարիայում կատանա օդային բազաներ, որոնք սպառնալիք կլինեն նեղուցների համար: Վերջինս հնարավոր է ամեն դեպքում: Եթե ԽՍՀՄ-ը իրականում պատրաստվում է Սիցերկրական ծովում իրականացնել հարձակողական քաղաքականություն, ապա կարող է Էգեյան ծովում պահանջել հանգրվաններ»¹²:

1945 թ. պարզ դարձավ, որ սևծովյան նեղուցների հարցում Մեծ տերությունների միջև տարածայնությունները բավականին լուրջ են: Կողմերից ոչ մեկը չէր պատրաստվում զիջումների գնալ. Խորհրդային Սիության ներկայությունը նեղուցների տարածքում ցանկալի չէր ոչ միայն Թուրքիայի, այլև Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի համար: Դա են վկայում Պոտսդամի խորհրդաժողովում նեղուցների հարցով Մեծ տերությունների պահանջման մասին համաձայնությունը և առաջարկը առաջարկելու մասին:

¹² Նոյն տեղում, էջ 169:

յունների միջև ընթացած քննարկումները և ընդունված որոշման համաձայն՝ Անկարային Վաշինգտոնի, Լոնդոնի և Սուկ-Վայի ներկայացրած նոտաները:

Պոտսդամում խնդրո առարկա հարցի առնչությամբ առաջին քննարկումը տեղի է ունեցել հուլիսի 22-ին: Անդրադառնալով Թուրքիայի խնդրին՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլն իր ելույթում նշել է, որ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել Սոնտրոյի համաձայնագրում՝ վստահեցնելով, որ իրենք կողմ են փաստաթղթի վերանայմանը: Ըստ նրա՝ դա պետք է իրականացվի համաձայնագիրը ստորագրած պետությունների հետ համաձայնեցնելու ճանապարհով: Ավելին, Չերչիլն ասել է, որ մշակվող նոր համաձայնագիրը պետք է իրավունք տա խորհրդային ռազմական ու առևտրական նավերին ազատ նավարկել Աև ու Միջերկրական ծովերով¹³: Իր խոսքում Մեծ Բրիտանիայի վարչապետը հիշատակել է նաև խորհրդա-թուրքական հունիսյան բանակցությունները և, ինչպես վերը նշվել է, ցանկացել է պարզել նեղուցների հարցում ԽՍՀՄ-ի դիրքորոշումը: Ի պատասխան՝ արտգործնախարար Վ. Սոլոտովն ասել է, որ իր երկիրը բազմիցս հայտարարել է, որ Սոնտրոյի համաձայնագիրը պետք է վերանայվի, քանի որ դրա համաձայն՝ սևծովյան նեղուցների հարցում ԽՍՀՄ-ն ունի նոյն իրավունքներն ինչ Ճապոնիայի կայսրը: Մոլոտովը Չերչիլին և Տրումենին ծանոթացրել է պաշտոնական Անկարային բանավոր ներկայացված՝ նեղուցների խնդրի կարգավորման հետ կապված առաջարկներին¹⁴: Դրանք են՝

- Սոնտրոյում ստորագրված համաձայնագիրը պետք է չելյալ հայտարարվի, քանի որ այն չի համապատասխանում ժամանակակից պահանջներին,

¹³ Советский Союз на международных конференциях ..., т. VI, с. 134–135.

¹⁴ Корхмазян Р., Территориальные проблемы советско-турецких ..., с. 27.

- Նեղուցների նոր ռեժիմի հաստատում, որի վերահսկումը ԽՍՀՄ-ը և Թուրքիան, որպես նեղուցներում առևտրական նավագնացությունն ու դրանց անվտանգությունն ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգիռ պետություններ, պետք է միասին իրականացնեն,
- ԽՍՀՄ-ը և Թուրքիան համատեղ ուժերով պետք է կանխեն սեծովյան պետությունների դեմ այլ տերությունների կողմից թշնամական նպատակներով նեղուցների օգտագործումը¹⁵:

Այս առաջարկները կողմերի միջև թեժ քննարկման թեմա են դարձել: Թուրքիայի շահերի պաշտպանի դերում հանդես եկող Շերջիլը բացահայտ դեմ է արտահայտվել դրանց: Նա ասել է. «Խոսքը գնում է նեղուցներում խորհրդային ռազմական հանգրվանների տեղակայելու մասին, ինչպես նաև ԽՍՀՄ-ից և Թուրքիայից բացի, որևէ այլ պետություն իրավունք չունի միջամտել Բուֆորի և Դարդանելի հարցում: Ես վստահ եմ, որ Թուրքիան երբեք չի համաձայնվի դրան»¹⁶: Ի պատասխան՝ Մոլոտովը հայտնել է, որ Թուրքիայի և Ռուսաստանի միջև նման պայմանագրեր նախկինում ստորագրված եղել են: Ավելին՝ ասել է, որ խոսքը 1805 թ. և 1833 թ. պայմանագրերի մասին է: Մեծ Բրիտանիայի վարչապետը ցանկություն է հայտնել ծանոթանալ դրանց հետ: Ի վերջո, կողմերի միջև ծագած բանավեճին միջամտել է Տրումենը՝ ասելով, որ ինքը դեռևս պատրաստ չէ այս հարցի շուրջ որևէ դիրքորոշում հայտնելու:

Հուլիսի 23-ի նիստում կողմերը մեկ անգամ ել են անդրադարձել սեծովյան նեղուցներում նոր ռեժիմի հաստատման ԽՍՀՄ-ի առաջարկներին: Քննարկումներից կրկին պարզ է դառնում, որ դրանք անընդունելի են ոչ միայն Թուրքիայի,

¹⁵ Советский Союз на международных конференциях ..., т. VI, с. 134–135.

¹⁶ Նույն տեղում:

այլև Անգլիայի համար: Բրիտանական կողմը, ինչպես նշվեց, դեմ էր ոչ միայն նեղուցներում խորհրդային հանգրվանների տեղակայմանը, այլև ԽՍՀՄ-ի և Թուրքիայի կողմից նեղուցների համատեղ վերահսկմանը՝ պատճառաբանելով, որ «Թուրքիան երբեք չի համաձայնվի այս առաջարկներին»¹⁷:

Մինչդեռ Ստալինը վճռական էր տրամադրված խնդրո առարկա հարցում: Նա հասկացրել է՝ խնդրի կարգավորումը իրենց համար խիստ կարևոր է, ավելին՝ նկատել է, որ Սոնտրոյի համաձայնագիրն ամբողջովին ուղղված է Ռուսաստանի դեմ: ԽՍՀՄ-ի առաջնորդը ծիծառելի է համարել այն իրողությունը, որ նեղուցների հարցում իրենք այնքան իրավունք ունեն, որքան Ճապոնիայի կայսրը: Նա զուգահեռներ է անցկացրել Զիբրալթարի նեղուցով և Պանամայի ջրանցքով նավերի ելումուտը կարգավորող ռեժիմների միջև՝ հայտարարելով, որ եթե նմանատիպ պայմանագիր գործեր այդ երկու դեպքերում, ապա և՝ Անգլիան, և՝ ԱՄՆ-ն մեծ աղմուկ կբարձրացնեին: Իր խոսքի վերջում Ստալինն ասել է. «Դուք համարում եք, որ նեղուցներում ռազմածովային բազան անընդունելի է: Լավ, այդ դեպքում մեզ տվեք մեկ այլ հանգրվան, որտեղ ռուսական նավատորմը կկարողանար հանգրվանվել, վերանորոգվել և դաշնակիցների հետ համատեղ պաշտպանել Ռուսաստանի (ԽՍՀՄ-ի. – Ք.Ս.) շահերը: Ահա թե ինչպիսին է իրավիճակը»¹⁸:

Ստալինի անգիծում պահվածքը անհանգստություն է պատճառել ինչպես Թուրքիային, այնպես էլ Անգլիային: Վերջիններիս օգնության է հասել ԱՄՆ-ն: Հատ Տրումենի՝ «Տարածքային իիմնախնդիրը վերաբերում է միայն ԽՍՀՄ-ին ու Թուրքիային և այն պետք է լուծվի վերջիններիս միջև: Սակայն ինչ վերաբերում է սեծովյան նեղուցներին, ապա այն վերաբե-

¹⁷ Նույն տեղում, էջ 137:

¹⁸ Корхмазян Р., Территориальные проблемы советско-турецких ..., с. 28.

րում է մեզ բոլորիս և շատ այլ երկրների»¹⁹: Չերչիլի կարծիքով էլ՝ այդ հարցում Մեծ տերությունների և շահագրգուված պետությունների «երաշխիքն ավելի էֆեկտիվ է»²⁰: Ե՛վ Չերչիլը, և՝ Տրումենը կողմ էին Մոնտրոյի համաձայնագրի վերանայմանն ու նեղուցներով ԽՍՀՄ-ին ազատ ելումուտ անելու իրավունք տալուն, սակայն միաժամանակ առաջարկում էին նեղուցների վերահսկումն իրականացնել համատեղ՝ բոլորը միասին, և ոչ թե միայն Խորհրդային Սիության ու Թուրքիայի ուժերով²¹:

Հովհան 24-ին սեծովյան նեղուցների հարցը դարձալ քննարկման առարկա է եղել խորհրդաժողովին մասնակից երկրների միջև, և վերջիններս կրկին համաձայնության չեն եկել: Դարգ է դառնում, որ Անգլիան և ԱՄՆ-ն դեմ են, որ ԽՍՀՄ-ն ու Թուրքիան համատեղ տնօրինեն նեղուցները: Դրան կտրականապես դեմ է եղել հատկապես Անգլիան: Նկատենք, պատերազմի տարիներին սեծովյան նեղուցների հարցում Անկարայի վարած քաղաքականությունը բավարար էր, որպեսզի Լոնդոնը գիտակցեր, որ ռազմավարական այս կարևոր անցակետը չի կարող գտնվել միայն Թուրքիայի վերահսկողության տակ: Սակայն ոուսների ներկայությունն այստեղ ևս նախընտրելի չէր: Ուստի, սեծովյան նեղուցները համատեղ վերահսկելու Տրումենի առաջարկը բրիտանական կողմը դրական է ընդունել: Մինչդեռ Խորհրդային Սիության գնահատմամբ՝ դա սահմանափակում էր իրենց իրավունքները:

Այսպիսով, Պոտսդամի խորհրդաժողովում սեծովյան նեղուցների հարցում վերջնական որոշում այդպես էլ չի ընդունվել, քանի որ կողմերի միջև տարածայնությունները

¹⁹ Նոյն տեղում:

²⁰ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 295.

²¹ Советский Союз на международных конференциях ..., т. VI, с. 326–327.

մեծ են եղել: Մեծ տերությունների միջև օգոստոսի 1-ին ստորագրված փաստաթղթում միայն արձանագրվել է. «Երեք երկրների ղեկավարները միանշանակ են այն հարցում, որ Մոնտրոյի համաձայնագիրն անհրաժեշտ է վերանայել, քանի որ այն չի համապատասխանում ներկայիս իրավիճակին: Համաձայնվել են, որ հաջորդ քայլը լինելու է այն, որ այդ հարցի շուրջ յուրաքանչյուրն առանձին քանակցի թուրքիայի կառավարության հետ»²²:

Ի դեպ, զնալով ավելի ու ավելի էր նկատելի դառնում նեղուցների հարցում ԱՄՆ-ի հետաքրքրությունը: Դրա խոսուն վկայությունն է այն, որ Վաշինգտոնն առաջինն է՝ 1945 թ. նոյեմբերի 2-ին, Թուրքիային հանձնել սեծովյան նեղուցներին վերաբերող նոտան²³: Փաստաթղթում, մասնավորապես, անդրադարձ կար Մոնտրոյի համաձայնագրի վերանայման անհրաժեշտությունը կարևորող հանգամանքների վրա: Նախևառաջ հիշատակվում էր, որ սեծովյան նեղուցների վերահսկման ու օգտագործման հարցերն անմիջականորեն վերաբերում են «միջազգային անվտանգությանը», նաև նշված էր, որ դրանց անվտանգությամբ շահագրգրված են ինչպես Թուրքիան, այնպես էլ սեծովյան պետությունները: Վերջում առաջարկվում էր նեղուցների հարցը քննարկելու նպատակով մի նոր խորհրդաժողով հրավիրել՝ հետևյալ դրույթներով.

- նեղուցները պետք է միշտ բաց լինեն առևտրական բոլոր նավերի առջև,
- նեղուցները պետք է միշտ բաց լինեն սեծովյան երկրների ռազմական նավերի նավարկության համար,
- ոչ սեծովյան պետությունների ռազմական նավերի անցումը նեղուցներից, բացառությամբ հատուկ դեպքերի

²² Նոյն տեղում, էջ 326–327:

²³ Батюк В., Евстафьев Д., Первые заморозки ..., с. 29.

կամ էլ առանց ՍԱԿ-ի թույլատվության, արգելվում էր²⁴:

Նկատենք, սեծովյան նեղուցների հարցի լուծման այս տարրերակը ԱՄՆ-ի նախագահ Տրումենը, ստանալով Չերչիլի համաձայնությունը, ներկայացրել էր դեռևս Պոտսդամում²⁵: Այն հնարավորություն էր տալիս ապահովել նեղուցներով սեծովյան երկրների ուսամանավերի ազատ անցումը «բոլոր ժամանակներում»: Սակայն ամերիկյան կողմի այս առաջարկը չէր արժանացել Ստալինի հավանությանը, քանի որ դրանում տեղ չէին գտել Թուրքիային խորհրդային կողմի ներկայացրած պահանջները: Իսկ դրանցից կարևորագույնն այն էր, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայի հետ համատեղ չէր մասնակցելու նեղուցների վերահսկման գործընթացին:

Անզին ևս նեղուցների հարցում, իր շահերից ենելով, հանդես էր գալիս Թուրքիայի պաշտպանությամբ: Նոյեմբերի 21-ին Անկարային Լոնդոնի ներկայացրած նոտան այնքան էր նման ամերիկյանին, որ թուրք հեղինակները այդ փաստաթուղթը որակել են որպես «ամերիկյան կրկնօրինակ»²⁶: Դա վկայում է, որ սեծովյան նեղուցների հարցում երկու կողմն էլ համակարծիք էին: Սակայն Մեծ Բրիտանիան Թուրքիայում արդեն իր դիրքերը զիջում էր, փոխարենն ԱՄՆ-ն էր ամրապնդվում այս տարածաշրջանում: Եթե պատերազմի տարիներին Թուրքիային վերաբերող ամերիկյան դիվանագետների գեկուցագրերը միայն դիտարկումների բնույթ էին կրում, ապա պատերազմից հետո դրանցում մշակվում էին այն հնարավոր քայլերը, որոնք ձեռնտու էին այդ երկրին:

1945 թ. դեկտեմբերի 19-ին ԱՄՆ-ի պետքարտուղարության միջազգային կազմակերպությունների բաժնի աշխատա-

²⁴ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 296.

²⁵ Советский Союз на международных конференциях ..., т. VI, с. 150–151.

²⁶ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 298.

կից Հարի Հարվորդի պատրաստած զեկուցագրի՝ «Նեղուցների հարցը» ենթազվական ասվում է. «ԱՄՆ-ն նորից է առաջարկել վերանայել Մոնտրոյի համաձայնագիրը: Թուրքական պատվիրակությունը խորհրդային պահանջին ընդառաջ գնալով՝ այս հարցը վերջնական ձևով կարող է առաջարկել ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդում կամ Անվտանգության հանձնաժողովում: Այդ դեպքում ԱՄՆ-ի պատվիրակությունը խորհուրդ կտա կողմերին ՄԱԿ-ի սահմանադրության 10-րդ և 11-րդ կետերի համաձայն հարցը լուծել բանակցությունների միջոցով»²⁷:

1946 թ. մարտի 18-ին էլ թուրքական «Վարչիք» թերթը հաղորդել է, որ Վաշինգտոնը Անկարային և Թեհրանին երաշխիքներ է տվել անվտանգության հարցում՝ վստահեցնելով, որ վերջիններիս կպաշտպանեն արտաքին ուժերի, այսինքն՝ ԽՍՀՄ-ի ազգեսիայից: Ըստ թերթի՝ ամերիկյան կողմը հիշեցրել է, որ Թուրքիայի քաղաքականությունը հիմնվում է ՄԱԿ-ի կանոնակարգի վրա: Այլ կերպ ասած՝ ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջները կարող են դառնալ նորաստեղծ այս կազմակերպության քննարկման առարկան՝

Սյապիսով, Միացյալ Նահանգները սեծովյան նեղուցների հարցը փորձում եր բերել ՄԱԿ-ի օրակարգ: Հիշեցնենք, որ այդ մասին նրանք ակնարկել են դեռևս 1945 թ. նոյեմբերի 2-ի նոտայում: Առաջարկելով հարցը լուծել ՄԱԿ-ի շրջանակում՝ Վաշինգտոնը երկու նպատակ էր հետապնդում: Մի կողմից դա հնարավորություն կտար որոշ չափով թուլացնել Թուրքիայի վրա ԽՍՀՄ-ի ճնշումը, մյուս կողմից էլ կրարձրացներ նորաստեղծ միջազգային այս կազմակերպության հեղինակությունը: 1946 թ. մարտի 16-ին ԱՄՆ-ի Ֆուլտոն քաղաքում

²⁷ Նոյն տեղում:

²⁸ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецկոյ պրեսսի, փետրար-մայոն, 1946, Պոսլե сообщения об американской гарантии, «Вакит», с. 46.

ունեցած ելույթում Զերչիլը կիսել է այս տեսակետը և չի թաքրել, որ Անգլիան ու ԱՄՆ-ն չեն պատրաստվում սկզբով՝ յան նեղուցների հարցում պաշտպանել ԽՍՀՄ-ին, քանի որ Վերջինիս ռազմական հանգրվանների տրամադրումը միանշանակ սահմանափակումներ կրերի և նեղուցներում ազատ ելումուտի մասին այլևս խոսք չի կարող լինել²⁹: Թուրքական «Թասվիր» թերթը մարտի 17-ին նշել է, թե Զերչիլի ելույթից են իմացել որ Պոտսդամում նման հարց է քննարկվել³⁰:

Անկարայի կառավարությունը ևս նախընտրում էր ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի առաջարկած տարբերակները, քանի որ, ի տարբերություն խորհրդային առաջարկների, ինչպես նշում են թուրք հեղինակները, ամերիկյանը և անգլիականը չեն վնասում Թուրքիայի «անկախությանը և տարածքային ամրողականությանը»: Այդ մասին բազմիցս հայտարարել են վարչապետ Շ. Սարաջօղլուն, արտգործնախարար Շ. Սաքան և արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ֆ. Էրկինը: Շ. Սաքան 1946 թ. ապրիլի 16-ին ամերիկացի լրագրողներին տված հարցազրույցում ասել է, թե Թուրքիան պատրաստ է վերանայել Մոնտրոյի համաձայնագրի որոշ կետեր, եթե միայն դրանք չեն խախտում նեղուցներում Թուրքիայի ինքնիշխան իրավունքը: Ավելին, նա նշել է, որ այս հարցում իրենց տեսակետը համընկնում է Անգլիայի և Ամերիկայի տեսակետներին³¹: Թուրքական «Ենի Սաքա» և «Ենի Ասիր» թերթերը, անդրադառնալով երկրի արտործնախարարի այս հայտարարությանը, նշում էին, որ նեղուցների հար-

²⁹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Проливы и Черчиль, «Тасвир», с. 41.

³⁰ Նույն տեղում:

³¹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Заявление Хасана Сака на пресс-конференции американских журналистов 16 апреля 1946 года, «Ватан», с. 56-57.

ցում Թուրքիան երբեք զիջումների չի գնա³²: Ապրիլի 18-ին «Ենի Սարահ»-ը գրում էր. «Աններելի կլինի, եթե նախօրոք շասենք, որ մենք ցանկացած հանգամանքում ել թույլ չենք տա, որ այս տարածքում ստեղծվեն ռազմական բազաներ կամ որպեսզի մեր իրավունքներին նույնիսկ փոքրագույն վնաս հասցվի»³³: Թուրքական մամուլը խորհրդային պահանջները ներկայացնում էր որպես նվաճողական ծրագիր՝ Միջերկրական ծով դուրս զալու նպատակով: «Անկարա» թերթն ել հուլիսի 6-ին «Մեր նեղուցները» վերնագրով հոդվածում նշում էր, որ Ռուսաստանը, Պետրոս I-ից սկսած ձգտել է վերահսկել նեղուցները և դուրս զալ Միջերկրական ծով³⁴:

2. Սևծովյան նեղուցների խնդիրը խորհրդա-թուրքական քննարկումներում և դաշնակից պետությունները

Խորհրդային Միությունը, որը 1936 թ. կնքված Սոնտրոյի համաձայնագրի վերանայման հիմնական շահագրվոր կողմն էր, Պոտսդամի խորհրդաժողովից մեկ տարի անց է միայն Թուրքիային ներկայացրել իր նոտան: Այն ԽՍՀՄ-ը հղել է 1946 թ. օգոստոսի 7-ին (Պոտսդամում ձեռք բերված համաձայնությամբ՝ այդ մասին նա տեղեկացրել է ԱՄՆ-ին ու Մեծ

³² ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Об отношениях между Турцией и СССР, «Ени Сабах», «Ени Асыр», с. 4-5.

³³ Նոյն տեղում:

³⁴ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, февраль-июнь, 1946, июль-ноябрь, 1946, Наши проливы, «Анкара», с. 26-27.

Բրիտանիային)³⁵: Թուրքիային առաջարկելով վերանայել Մոնտրոյի համաձայնագիրը՝ խորհրդային կողմը նշում էր, որ Պոտսդամի խորհրդաժողովում երեք Մեծ տերությունները սկզբունքային համաձայնության են եկել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նեղուցներում գործող ռեժիմն իրեն չի արդարացրել և չի ապահովել դրանց անվտանգությունը³⁶: Անդրադառնալով այդ տարիներին թուրքերի կողմից համաձայնագրի խախտման բազում դեպքերին և ժամանակին իրենց կողմից ներկայացված բողոքի նոտաներին, փաստաթղում, մասնավորապես, ասվում էր. «Քերլած փաստերից երեսում է, որ Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ մղված անցած պատերազմի ընթացքում նեղուցների վերաբերյալ համաձայնագիրը թշնամական պետություններին չխանգարեց նեղուցներն օգտագործել ու ազմական նպատակներով՝ Խորհրդային Միության և դաշնակից այլ պետությունների դեմ, ըստ որում՝ թուրքական կառավարությունը չի կարող պատասխանատվություն չկրել նման վիճակի համար»³⁷: Խորհրդային կողմը թուրքերին հիշեցնում է, որ պաշտոնական Մոսկվան պատերազմի տարիներին բազմաթիվ անզամ հայտարարագրերով դիմել է Թուրքիային՝ պահանջելով նեղուցների մուտքը փակել գերմանական և իտալական նավերի առջև: Մինչդեռ անտեսելով այդ նախազգուշացումները, Թուրքիան շարունակում էր աջակցել առանցքի երկրներին՝ դրանով իսկ խախտելով Մոնտրոյում հաստատված նեղուցների ռեժիմը:

Նոտայում ԽՍՀՄ-ը Թուրքիային առաջարկում էր հաստատել նեղուցների ելումուտի նոր ռեժիմ, որը բխելու էր հետևյալ դրույթներից.

³⁵ Erkin F., Türk-Sovyet ilişkileri ..., s. 415.

³⁶ «Известия», 13. VIII. 1946;

³⁷ Սահակյան Ռ., Մովսես-թուրքական հարաբերությունների..., էջ 112–113:

- Նեղուցները միշտ պետք է բաց լինեն բոլոր երկրների առևտրական նավերի համար,
- Նեղուցները միշտ պետք է բաց լինեն սևծովյան պետությունների ռազմանավերի համար,
- Նեղուցներով ոչ սևծովյան պետությունների ռազմանավերի անցումը, բացառությամբ հատուկ դեպքերի, պետք է արգելվի,
- Նեղուցների կանոնակարգի սահմանումը պետք է մտնի Թուրքիայի և սևծովյան մյուս երկրների իրավասության մեջ,
- Թուրքիան և Խորհրդային Միությունը, որպես նեղուցներում առևտրական նավագնացությունն ու դրանց անվտանգությունը ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգիռ պետություններ, համատեղ պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը՝ այլ տերությունների կողմից սևծովյան պետությունների դեմ թշնամական նպատակներով դրանց օգտագործումը կանխելու համար³⁸:

Արձանագրենք, որ խորհրդային այս նոտան իր բնույթով վերջնագիր էր հիշեցնում:

Նկատենք, Թուրքիան, մինչև օգոստոսի 7-ի նոտան, դեռ հույս ուներ, որ Խորհրդային Միությունը կիրաժարվի Մոնտերոյի համաձայնագրի վերանայման պահանջից: Թուրքական որոշ թերթեր նույնիսկ օրերն էին հաշվում, թե երբ է ավարտվելու համաձայնագրի գործողության հերթական հնգամյա ժամկետը, ինչը հնարավորություն կտար թուրքերին հաջորդ հինգ տարիներին ևս շարունակել կառավարել նոյն ձևով: Հուլիսի 21-ին «Թասավիր» թերթում տպագրված հոդվածում հեղինակը, շփոթելով համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը՝ դրա ստորագրման օրվա հետ, շնորհակալություն էր հայտնում Խորհրդային Միությանը, որ վերջինս չի օգտագործել

³⁸ Erkin F., Türk-Sovyet ilişkileri..., s. 415.

այս հնարավորությունը նեղուցների առնչությամբ իր ծրագրերն իրականացնելու համար³⁹: Որոշ թերթեր էլ արձանագրել են, որ հուլիսի 20-ը համաձայնազրի ստորագրման օրն է, և դրա ժամկետն ավարտվում է միմիայն օգոստոսի 9-ին⁴⁰: Այսինքն՝ ԽՍՀՄ-ը դեռ ժամանակ ուներ ներկայացնելու սեծովյան նեղուցների կառավարման ռեժիմում փոփոխություններ կատարելու իր առաջարկները: Դրանք ներկայացնելու դեպքում էլ պաշտոնական Անկարան վատահեցնում էր, որ պատրաստ է այդ առաջարկները քննարկել, եթե դրանք չեն սպառնում Թուրքիայի տարածքային ամբողջականությանն ու անվտանգությանը⁴¹:

Թուրքական թերթերը, հետևելով երկրում ընդունված սովորությներին, Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած նեղուցների վերաբերյալ նոտայի մասին լուրը հրապարակել են ուշացումով՝ օգոստոսի 12-ին, իսկ դրա բովանդակությունն իր առաջարկներով հրապարակվել է միայն օգոստոսի 15-ին:

Մինչ այդ՝ օգոստոսի 12-ին, «Թան» թերթը գրում էր, որ արդեն մեկուկես տարի է՝ ինչ գոյություն ունի սեծովյան նեղուցների հարցը, և որքան էին սխալվում երկրի քաղաքական այն ուժերը, եթե վստահեցնում էին, որ Մուսկվան Թուրքիայի դեմ վճռական քայլեր չի ձեռնարկի⁴²: Թուրքական մամուլն այդ օրերին չէր սխալվում, եթե նշում էր, որ նեղուցների վերաբերյալ այս նոտան խորհրդային պահանջները արտահայտող «առաջին պաշտոնական փաստաթուղթն է», ինչը,

³⁹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, июль–ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, с. 5.

⁴⁰ Նոյն տեղում, էջ 6:

⁴¹ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 315.

⁴² ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецкой прессы, июль–ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, с. 7–8.

ըստ նրանց, վերջինիս մեծ կարևորություն է տալիս⁴³: Թուրքական մամուլում հրատարակված հոդվածները նույնանման են. մի կողմից խոսում էին, թե նեղուցների հարցի շահարկումը կարող է «միջազգային հակամարտության» հանգեցնել՝ սպառնալով Մերձավոր և Միջին Արևելքի խաղաղությանը, մյուս կողմից ել չեին բացառում, որ Թուրքիայի համար գոյություն ունի արտաքին վտանգ՝ շեշտելով, որ Խորհրդային Միությունը նպատակ ունի «բոլշևիկացնել» հարևան երկրները, այդ թվում՝ Թուրքիան: Օգստոսի 14-ին ել «Վաթան»-ը գրում էր, որ Ռուսաստանը Ուրուգվայ չէ, Թուրքիայի հարևանությամբ գտնվող հզոր պետություն է, որին մեծ սխալ է անտեսելը⁴⁴:

Ինչևէ, խորհրդային նոտայի բովանդակությունը վերլուծելով՝ թուրքական մամուլը պնդում էր, թե Սոսկվայի ներկայացրած մեղադրանքներն անհիմն են, Թուրքիան երբեք չի խախտել Մոնտրոյի համաձայնագիրը և ազնվորեն կատարել է նեղուցների պահակի իր դերը: Լրագրող Նիկատ Էրիմն այս առիթով «Ռուսու»-ում գրել է. «Զկա որևէ օրինակ, որը ցույց կտա, թե Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Միջերկրական ծովից անցել է ինչ-որ նավասորմ, որը դժվարին իրավիճակում կդներ սևծովյան պետություններին»⁴⁵: Լրագրող Ասիմ Ռասն էլ այն կարծիքին էր, թե Թուրքիան նեղուցների հարցում այն աստիճան լավ է կատարել իր պարտականությունները, որ գրեթե փրկել է դաշնակից երկրներին պարտությունից: Ակնարկվում էր, որ եթե իրենք թույլ տային խտալական նավատրոմին մտնել Սև ծով, ապա հայտնի չէ, թե պատերազմն ինչ ընթացք կունենար⁴⁶: Ինչ վերաբերում է պատերազմի տարիներին գրանցված ֆաշիստական

⁴³ Նոյն տեղում, էջ 5:

⁴⁴ Նոյն տեղում, էջ 7:

⁴⁵ Նոյն տեղում, էջ 8:

⁴⁶ Նոյն տեղում, էջ 10:

բլոկի երկրների նավերի՝ նեղուցներով ելումուտ անելու բազմաթիվ դեպքերին, ապա, ըստ թուրք լրագրողների, ոս իրենց երկրի մեղքը չէ: Պատճառաբանում էին, որ այդ նավերը չէին պատկանում այն նավերի թվին, որոնց անցումն արգելված էր Մոնտերոյի համաձայնագրով: Այսինքն՝ ողջ մեղավորությունը թուրքերը դնում էին փաստաթղթի վրա, միաժամանակ՝ վստահեցնում, որ այդ թերություններն ընդամենը տեխնիկական են, և դրանք ուղղելուց հետո համաձայնագիրն ամբողջությամբ կհամապատասխանի ժամանակի պահանջներին⁴⁷:

Մոնտերոյի համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով ԽՍՀՄ-ի ներկայացրած դրույթների հատկապես IV և V կետերն են թշնամաբար ընդունվել: Այն, որ նեղուցների հարցը վերաբերում է միայն սեծովյան պետություններին, Թուրքիայում միանշանակ ունեցել է բացասական արձագանք: «Ուլքե» թերթը գրում է. «Հարցի նման դրվածքը Թուրքիայի համար անընդունելի է... Եթե հաշվի առնենք միայն այն հայտնի իրողությունը, որ Ռումինիան և Բուլղարիան գտնվում են Ռուսաստանի ազդեցության տակ, ինչը թույլ է տալիս Ռուսաստանին ունենալ երեք ձայն, իսկ Թուրքիային՝ ընդամենը մեկ»⁴⁸: Բացի այդ, Անկարան պնդում էր, թե ներկայացված դրույթների հարցում միայնակ որոշում չի կարող ընդունել, քանի որ նեղուցների խնդիրը մեծ կարևորություն ունի ոչ միայն սեծովյան պետությունների, այլև այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Անգլիան և ԱՍՍ-ն: Եթե նույնիսկ Թուրքիան «մեծ զոհողությունների գնա» և համաձայնվի, ապա վերջիններս դրան կընդդիմանան: Այս կապակցությամբ «Աքշամ» թերթը օգնատոսի 17-ին գրել է. «Այդ առաջարկները որքան Թուրքիային, այնքան էլ Անգլիային ու Ամերիկային են վերաբերում, և եթե մենք ընդունենք եւ

⁴⁷ Նույն տեղում, էջ 9:

⁴⁸ Նույն տեղում, էջ 7:

ո՞չ նրանք, ո՞չ էլ նույնիսկ Ֆրանսիան դրանց չեն համաձայնվի»⁴⁹:

Խորհրդային Սիության հետ նեղուցների վերահսկման առաջարկը ևս մտահոգում էր Թուրքիային: Վերջինս գտնում էր, որ նման կերպ ԽՍՀՄ-ը փորձում է նեղուցների շրջանում ձեռք բերել ռազմական բազաներ: Որոշ թերթեր նույնիսկ հաղորդել են, թե, իբր, Խորհրդային Սիությունը Թուրքիայից պահանջել է 400 հեկտար տարածք: Ըստ «Թան» թերթի՝ «ԽՍՀՄ-ը նպատակադրվել է գրավել Ստամբուլը և Թուրքիան վերածել երկրորդ Թուրքմենստանի, որն այսօր տանջվում է Սոսկվայի և բոլշևիկների լծի տակ»⁵⁰: Սևծովյան նեղուցներում Խորհրդային Սիությանը ռազմական հանգրվաններ տրամադրելու պահանջը թուրքերի համար որակվում էր որպես իրական «սպանություն»: Բացի այդ, նշվում էր, որ Եթե Սոսկվան ցանկանում է պաշտպանվել Միջերկրական ծովի երկրներից, ապա Թուրքիային սպառնում են երկու ուղղությունից՝ և Միջերկրական, և՝ Սև ծովից: Դա էլ թույլ է տալիս ասել, թե թուրքերի կյանքում նեղուցները եղել ու մնում են որպես «արյունատար անոթներ»⁵¹:

Այսպիսով, Թուրքիան չէր բարցնում, որ ԽՍՀՄ-ի առաջարկներն իր համար անընդունելի են, հայտարարում էր, որ սևծովյան նեղուցների հարցի շուրջ Սոսկվայի հետ բանակցելու անհրաժեշտությունը չի տեսնում, քանի որ այդ խնդրի վերաբերյալ համաձայնագիրը ստորագրվել է 1936 թ. Սոնտրոյում:

Մերժելով խորհրդային առաջարկները՝ Անկարայի կառավարությունը հաշվի էր առել նաև պատերազմի հավանականությունը: «Թան» թերթը գրում էր. «Եթե ոուսները շարունակեն պնդել, ապա մեր առջև հարց կբարձանա՝ պատե-

⁴⁹ Նույն տեղում, էջ 8:

⁵⁰ Նույն տեղում, էջ 9:

⁵¹ Նույն տեղում:

բազմ,թէ՝ խաղաղություն։ Իսկ նման պայմաններում մենք նախընտրում են պատերազմը։ Նախընտրությունը տալով պատերազմին՝ թուրք լրագրողները գտնում եին, «որ պետք է խելազար լինել, որպեսզի համաձայնվեն խորհրդային առաջարկներին»⁵²։

Անկարային հուզում էր նաև այն հարցը, թէ խորհրդային առաջարկներին ինչ վերաբերմունք ցույց կտան Անգլիան և ԱՄՆ-ը։ Հնչում էին տարբեր կարծիքներ։ Մամուլի մեծ մասը վստահ էր, որ ԽՍՀՄ-ի նախակին դաշնակիցները պաշտպանում են Թուրքիային։ Մի մասը մեղադրում էր Լոնդոնին ու Վաշինգտոնին ԽՍՀՄ-ի նկատմամբ մեղմ քաղաքականություն վարելու մեջ՝ նշելով, որ հակառակ դեպքում վերջինս երբեք իրեն թույլ չէր տա Թուրքիային նման պահանջներ ներկայացնել։ Մյուս մասն էլ գտնում էր, որ ԽՍՀՄ-ը, առաջադրելով այդ պահանջները, վստահ է եղել, թէ ԱՄՆ ու Անգլիան, խուսափելով լուրջ տարածայնություններից, կնախընտրեն բավարարել դրանք կամ էլ նեղուցների հարցի փոխարեն կիամաձայնվեն զիջումների գնալ մեկ այլ հարցում⁵³։

Մինչդեռ շուտով հայտնի դարձավ, որ Անգլիան և ԱՄՆ-ը նեղուցների հարցում իրենց դիրքորոշումը չեն փոխել։ Նրանք Անկարայից օպերատիվ էին գործում, և պատասխան նոտաններն առաջինն են հղել ԽՍՀՄ-ին։ Վաշինգտոնում այս հարցի շուրջ քննարկումներն սկսվել էին օգոստոսի 9-ից։ Անկարան բավականին արագ էր գործել, խորհրդային նոտան ստանալուն պես այն ուղարկել էր այդ պահին Փարիզում գտնվող ԱՄՆ-ի պետքարտուղար Զ. Բյորնսին։ Հատ ամերիկյան փաստաթղթերի՝ Սպիտակ տունը խորհրդային կողմի պահանջներին մոտեցել է ամենայն լրջությամբ, քանի որ չէր

⁵² Նոյն տեղում, էջ 10։

⁵³ Նոյն տեղում, էջ 11։

դադարում իրեն կշտամբել «իրանական ճգնաժամում» ԽՍՀՄ-ի գործողությունների հարցում ցուցաբերած «փափկության» համար և այս անզամ ձգտում էր ցուցաբերել ավելի «կոշտ քաղաքականություն»⁵⁴: Օգոստոսի 15-ին Վաշինգտոնից Բյորնսին ուղարկված մի գրության մեջ տեղեկացվում էր, որ սևծովյան նեղուցների վերաբերյալ նախագահ Տրումենին զեկուցագիր է ներկայացվել, ըստ որի՝ ԽՍՀՄ-ի հիմնական նպատակը Թուրքիային վերահսկելն է: Դրա առաջն առնելու համար հարկ է կանխել Թուրքիայի վրա ձեռնարկվող խորհրդային հարձակումները: Եվ եթե դա չարվի ՄԱԿ-ի կողմից, ապա այլ պետությունների հետ ԱՄՆ-ն հակահարված կտա ԽՍՀՄ-ին⁵⁵: Երկու օր անց էլ՝ օգոստոսի 17-ին, Փարիզ ուղարկված հեռագրում ԱՄՆ-ի պետքարտուղարությունը Բյորնսին տեղեկացնում էր, որ պատրաստվում են ԽՍՀՄ-ին պատասխան նոտա ներկայացնել⁵⁶:

Եվ, ահա, օգոստոսի 19-ին ԱՄՆ-ի պետքարտուղարությունը Վաշինգտոնում ԽՍՀՄ-ի գործերով հավատարմատարին է հանձնել վերջինիս կողմից Թուրքիային ներկայացված օգոստոսի 7-ի նոտայի պատասխանը: Դրանում, մասնավորապես, ասվում էր, որ խորհրդային կողմի առաջարկած սկզբունքների նկատմամբ ամերիկյան դիրքորոշումը պարզ կդառնա այն բանից հետո, եթե համեմատվեն թուրքական կառավարությանն ուղղված 1945 թ. նոյեմբերի 2-ի ամերիկյան և 1946 թ. օգոստոսի 7-ի խորհրդային նոտաները⁵⁷: Այսպիսով, թուրք-ամերիկյան հարաբերությունները կարևոր փուլ էին թևակոխում: Ակիզր էր դրվում այս երկու պետությունների համագործակցությանը:

⁵⁴ Егорова Н., «Иранский кризис» ..., с. 114.

⁵⁵ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 320.

⁵⁶ Նոյն տեղում:

⁵⁷ Hurewitz J., Diplomacy in the Near ..., pp. 270–271.

Անգլիական կողմը ԽՍՀՄ-ին իր նոտան ներկայացրել է օգոստոսի 21-ին: Փաստաթղթում նշված էր, որ «նեղուցների ռեժիմը /պետք է համապատասխանի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին»⁵⁸:

Թուրքիային խորհրդային կողմի առաջարկած հինգ սկզբունքներից երեքի շուրջ ԽՍՀՄ-ը, ԱՍԴ-ն և Մեծ Բրիտանիան համակարգիք էին: Քննարկումներն ընթանում էին IV և V կետերի շորջ: Թուրքիայի նման Անգլիան և ԱՍԴ-ը դեմ էին նեղուցների տարածքում խորհրդային ազդեցության մեծացմանը: Առաջարկված IV կետը, ըստ ամերիկյան կողմի, չէր կարող ընդունվել, քանի որ «նեղուցների ռեժիմի հարցը գտնվում է ոչ միայն սևծովյան, այլ նաև այլ տերությունների, ներառյալ և Միացյալ Նահանգների մտահոգությունների շրջանակում»⁵⁹: Բրիտանական կողմն էլ գտնում էր, թե «վաղուց միջազգայնորեն ընդունված է, որ նեղուցների ռեժիմում, քայլ սևծովյան տերություններից, շահագրգուված են նաև մյուս երկրները»⁶⁰: Ինչ վերաբերում է V կետին, ապա այս հարցում ևս ԱՍԴ-ի և Անգլիայի կարծիքները համընկնում էին. ԽՍՀՄ-ը Թուրքիայի հետ համատեղ չի կարող իրականացնել նեղուցների վերահսկումը, թուրքական կողմը պիտի մնա նեղուցների պաշտպանության հիմնական պատասխանատուն, նեղուցների շորջ ծագած խնդիրները պետք է լուծվեն ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի շրջանակում⁶¹:

Հետաքրքիր է, եթե օգոստոսի 19-ին իրապարակվել է ամերիկյան կողմի պատասխանը խորհրդային նոտային, թուրքական մամուլում նշվել է, թե իրենք իրմանականում աջակցություն էին սպասում հենց ԱՍԴ-ից և ուրախ են, որ վերջինիս տեսակետը համընկնում է իրենց մոտեցմանը:

⁵⁸ Капитанец И., Битва за Мировой океан ..., с. 82.

⁵⁹ Hurewitz J., Diplomacy in the Near..., pp. 270–271.

⁶⁰ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 309.

⁶¹ Hurewitz J., Diplomacy in the Near..., p. 271.

Ավելին՝ ամերիկյան տեսակետն իր բովանդակությամբ բավականին կտրուկ է և թուրքերից շուտ է ներկայացվել, ինչը վկայում է, որ Վաշինգտոնը շահագրգուված է նեղուցների հարցը լուծել Թուրքիայի օգոստին: Շեշտվում էր, որ ամերիկացիները նույնիսկ առաջարկել են հարցը ներկայացնել ՄԱԿ-ի քննարկմանը: Լրագրող Ասին Ուսը դրա «անհրաժեշտությունը» պատճառաբանել է յուրովի: Օգոստոսի 22-ին «Վարիթ» թերթում հրապարակած հոդվածում նա գրել է. «Խուսական նոտան Երրորդ համաշխարհային պատերազմի բացահայտ նախանշում է: ...Եվ ԽՍՀՄ-ի կողմից հրահրվող պատերազմի պատասխանատվությունը չպետք է դրվի միայն Թուրքիայի վրա՝ չնայած որ Թուրքիան անհրաժեշտության դեպքում պատրաստ է կատարել իր պարտականությունը: Սակայն պետք է պարզել նաև, թե Միացյալ Ազգերը ևս կկատարի իր պարտականությունը...»⁶²:

Այսպիսով, ԽՍՀՄ-ին ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի ներկայացրած նոտաներից պարզ է դառնում, որ սևծովյան նեղուցների խնդիրը դուրս է եկել խորհրդա-թուրքական հետաքրքրության շրջանակից ու դարձել է միջազգային հարց: Ամերիկան ու Անգլիան արդեն շահագրգուված կողմ էին, ինչը Թուրքիային թույլ էր տալիս առանց վարանելու մերժել խորհրդային Միության առաջարկները: Դրա վկայությունը օգոստոսի 14-ին մեջլիսում վարչապետ Ռեզեփ Փերերի ունեցած ելույթն է⁶³: Այդ այլիթով պատմաբան Թ. Ունալը գրել է. «Թուրքական կառավարությունն անզլիական և ամերիկյան կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո խորհրդային պահանջները մերժեց»⁶⁴: Այլ կերպ ասած՝ Վաշինգտո-

⁶² ՀՀ ԳԱԱ արևելագիտության խնստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы, июль-ноябрь, 1946. Высказывания печати по вопросу проливов (7 августа), «Вакит», с. 10.

⁶³ Öztürk K., Türkiye Cumhuriyeti ..., с. 290–291.

⁶⁴ Սահակյան Ռ., Սովետա-թուրքական հարաբերությունների... էջ 115:

նից և Լոնդոնից հետո միայն պատասխան նոտան ներկայացնելով Սոսկվային՝ Անկարան դրանով իսկ ապահովագրել է իրեն միջազգային ասպարազում ԽՍՀՄ-ի դեմ միայնակ մնալուց:

ԽՍՀՄ-ին Թուրքիան իր նոտան հղել է 1946 թ. օգոստոսի 22-ին: Դրանում Անկարան նախնառաջ փորձում էր արդարացնել պատերազմի տարիներին իր վարած քաղաքականությունը⁶⁵: Փաստաթղթում հերքվում էր խորհրդային կողմին ներկայացրած այն փաստերը, թե ֆաշիստական բլոկի երկրների ռազմական նավերն առևտրական դրոշի ներքո քողարկված ազատ ելումուտ են արել սևովյան նեղուցներով: Եթե հերքում գերմանական «Զեեֆալկե» և խոլազական «Տավրիզիո» ռազմանավերի՝ նեղուցներով Սև ծով մտնելու, նաև գերմանական «Էմս» ու «Կրիզոստրանսպորտ» տիպի տարբեր ջրատարողությամբ 13 նավերի՝ Սև ծովից Էգեյան ծով անցնելու դեպքերը: Ըստ Անկարայի՝ գրանցված այս միջադեպերը որևէ կերպ չին սպառնում ԽՍՀՄ-ի անվտանգությանը: Ավելին, Սոսկվայի նախազգուշացումներից հետո նմանատիպ դեպքերը կանխվել են: Ինչ վերաբերում է խորհրդային նոտայում բարձրացված հարցի բուն եռթյանը, ապա թուրքական կառավարությունը, որոշ վերապահումներով, քննարկման համար հիմք էր ընդունում առաջին երեք կետերը՝ ընդգծելով, որ դրանք կրկնում են համաձայնագիրը ներկայիս պայմաններին հարմարեցնելու վերաբերյալ 1945 թ. նոյեմբերի 2-ին ԱՍՄ-ի արած առաջարկները: Հետևելով ԱՍՄ-ին ու Անգլիային՝ Թուրքիան ևս մերժում էր IV ու V կետերը՝ միաժամանակ պատճառաբանելով, թե ինչու չեն կարող ընդունել խորհրդային կողմի առաջարկները: Ըստ թուրքական կողմի՝

- համաձայնագրի վերանայումը բացառում է նոր ռեժիմի մի մշակումը, որի ընդհանուր կառուցվածքը կտարբերվեր Սոնտրոյի ռեժիմից,

⁶⁵ Пощверия Б., Внешняя политика ..., с. 186.

- խորհրդային հայտարարագրում անտեսվում են համաձայնագրի անդամ մյուս երկրների շահերը,
- պետական և ազգային տեսանկյունից նեղուցների համատեղ պաշտպանության վերաբերյալ խորհրդային առաջարկն անընդունելի է, քանի որ դա կնշանակեր Թուրքիայի անվտանգության թուլացում:

Նոտայում Թուրքիայի կառավարությունը խորհրդային կողմին կոչ էր անում վերականգնել բարեկամական հարաբերությունները, ինչը Սև ծովում ԽՍՀՄ-ի անվտանգության երաշխիքն է: Ինչ վերաբերում է Թուրքիայի անվտանգությանը, ապա նշվում էր, որ դրա երաշխիքը ՄԱԿ-ի միջազգային ուժերն են⁶⁶:

Խորհրդային Միությանն ուղղված նման բովանդակությամբ պատասխանը վկայում է, որ թուրքական մամուլում մինչ այդ օրը տեղ գտած հոդվածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ Անկարայի կառավարության պատվեր: Թերթերում հրապարակված այդ հոդվածների միջոցով Թուրքիայի կառավարությունը հող էր ստեղծում հետագա անակնկալ զարգացումների համար՝ ժողովրդին հասկացնելով, թե ԽՍՀՄ-ի առաջարկները սպառնում են երկրի ինքնիշխանությանը:

Այսպիսով, թուրքական կողմի պատասխանով ավարտվում էր սևծովյան նեղուցների շուրջ սկսված քննարկումների առաջին փուլը: Այն կարևորվում է նրանով, որ պարզաբանում էր ոչ միայն ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի, այլև այս հարցի շուրջ շահագրգիռ մյուս կողմերի՝ ԱՍԽ-ի և Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը: Ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է ֆրասիական «Լե Ռեսպուբլիկ» թերթը, «Նեղուցների հարցը կարելի է համարել ոռւս-անգլո-սաքսոնական խնդիր, քան ոռւսթուրքական»⁶⁷: Փաստ էր, որ մեկ տարվա ընթացքում՝ հատ-

⁶⁶ 50 yılın Tutanağı 1923–1973, İstanbul, 1973, s. 122–123.

⁶⁷ Ваисс М., Международные отношения ..., с. 214.

կապես ԱՄՆ-ի պահվածքը կտրուկ փոխվել էր, որը նույնիսկ անակնկալ էր Թուրքիայի համար: Թուրք հեղինակները գրում են, որ եթե Պոտսդամում ամերիկայն պատվիրակությունը պատրաստ էր պաշտպանել Սոնտրոյի համաձայնագրի վերանայման խորհրդային առաջարկը, ապա Ֆուլտոնում Ու. Չերչիլի ելույթից հետո ԱՄՆ-ի, ինչպես նաև Անգլիայի կառավարությունները խրախուսում էին Անկարայի՝ ԽՍՀՄ-ի հետ բանակցությունների մեջ շմտնելու ցանկությունը⁶⁸:

Սևծովյան նեղուցների հարցի շուրջ քննարկումների առաջին փուլի արդյունքները ի մի բերելով՝ հարկ է նշել, որ իրավիճակը պարզաբանվել էր: Հարցի վերաբերյալ հայտնի էր ինչպես ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի, այնպես էլ Անգլիայի և ԱՄՆ-ի դիրքորոշումը: Ինչպես վերը նշեցինք, այն այլևս չեր վերաբերում միայն Խորհրդային Միությանն ու Թուրքիային, վերջինս այդ հարցում այլևս ԽՍՀՄ-ի միակ հասցեատերը չեր: Այսինքն՝ խորհրդային կողմի օգոստոսի 7-ի նոտային տրված ԱՄՆ-ի և Անգլիայի՝ Թուրքիայից ավելի վաղ հղված պատասխանները վկայում էին, որ նեղուցների հարցը վերջիններիս ել է վերաբերում: ԱՄՆ-ը դեմ էր ԽՍՀՄ-ի առաջադրած վերջին երկու կետերին և պահանջում էր նեղուցների հարցը լուծել ՄԱԿ-ի շրջանակում⁶⁹: Անգլիան և Թուրքիան ամերիկյան դիրքորոշման կողմնակիցներն էին, ինչն էլ խոսում է այն մասին, որ Խորհրդային Միության դեմ ձևավորվել է միասնական դաշինք: Առաջին հայացքից թվում է, որ հետագա գործընթացի ճակատագիրը ևս հայտնի է: Սակայն դա այդպես չեր: Անկարայի, Վաշինգտոնի և Լոնդոնի քայլերը կախված էին միմիայն Սուսկվայի պահվածքից: Այդ առումով թուրքական մամուլը տարբեր կանխատեսումներ էր անում՝ ենթադրելով, որ՝

⁶⁸ Halil A., Atatürkçü dış politika ..., s. 92.

⁶⁹ Russell D., Soviet-American ..., p. 57.

- Խորհրդային Սիությունը կիրաժարվի իր պահանջներից և, որպես հիմք ընդունելով ամերիկյան առաջարկները, որի հետ համամիտ է և Թուրքիան, կհամաձայնվի մասնակցել սնծովյան նեղուցների հարցի առնչությամբ հրավիրված միջազգային խորհրդաժողովին,
- ԽՍՀՄ-ը կշարունակի ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որի արդյունքում հնարավոր է պատերազմի սանձազերծում,
- ԽՍՀՄ-ը ոչ կիրաժարվի, ոչ էլ ճնշում կգործադրի՝ թույլ տալով, որ նեղուցների հարցը օդում կախված մնա⁷⁰:

Ըստ թուրք լրագրողների՝ հավանականությունը շատ քիչ է, թե իրադարձությունները կզարգանան 1-ին և 2-րդ կետերում նշված սցենարների հիման վրա: Բացառվում էր, որ Խորհրդային Սիությունը կիրաժարվի իր պահանջներից, քանի որ այդ դեպքում կհեղինակազրկվի միջազգային ասպարեզում, այն էլ այժմ, եթե հայտնվել է «գերտերության» կարգավիճակում⁷¹: Անկարան, սակայն, նախընտրություն էր տալիս հարցի լուծման հենց այս տարբերակին՝ պատճառաբանելով, թե միայն նման զարգացումը հնարավորություն կտա վերականգնել խորհրդա-թուրքական հարաբերություններն ու ապահովել նեղուցների անվտանգությունը: Հասկանալի է, դա միակ միջոցն էր Թուրքիայի համար՝ ստեղծված իրավիճակից «առանց վնասների» դուրս գալու: Ինչ վերաբերում է 2-րդ կետին, ապա թուրքական մամուլը նշում էր, թե հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմը նոր է ավարտվել, և ԽՍՀՄ-ը դեռևս ամբողջությամբ չի վերականգնել իր ուժերը, պատերազմ սկսելու վարկածը ևս հավանական չէր

⁷⁰ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, с. 12.

⁷¹ Նոյն տղում:

համարվում: Ըստ թուրքերի՝ խորհրդային կողմը նախընտրություն էր տալու 3-րդ վարկածին՝ պնդելով, որ դա բխում է ԽՍՀՄ-ի շահերից⁷²: Ավելին, նրանք վատահ էին, որ խնդրո առարկա հարցը հնարավոր չէ «արագորեն և հեշտությամբ լուծել», և որ անհրաժեշտ է Անզլիայի ու ԱՍՄ-ի միջամտությունը՝ վերջիններից պահանջելով ԽՍՀՄ-ի դեմ վճռական քայլեր ձեռնարկել: Թուրք լրագրող Հ. Յալշինը օգոստոսի 22-ին Մեծ Բրիտանիային ու ԱՍՄ-ի կոչ է արել «Ապագայում իրենց չպահել այնպես, ինչպես մինչ օրս՝ մեղմ և հանդուրծող, քանի որ ծագող նորանոր տարածայնությունները կարող են իրենց ծանրությամբ ճգմել նույնիսկ նրանց»⁷³: Օգոստոսի 25-ին «Թան» թերթում հրապարակած հոդվածում էլ նա գրել է. «Ռուսական արշը նորից ցույց տվեց իր ատամներն ու ժանիքները: Եվ այդ պատճառով հանուն մարդկության երջանկության և բարօրության՝ նրան անհրաժեշտ է վնասազերծել: Ողջ աշխարհը կանգնած է այս ճանապարհին, Թուրքիան ևս պատրաստ է գնալ ցանկացած զոհորությունների՝ հանուն համամարդկային խնդրի իրականացման: Մեր հայտարարագիրը դրա վառ օրինակն է»⁷⁴:

Այսպիսով՝ թուրքերը Անզլիային և ԱՍՄ-ին փորձում էին հավատացնել, որ չեն վախենում ԽՍՀՄ-ի սպառնալիքներից, և ցանկացած դժվարություն կհաղթահարեն, եթե միայն համաշխարհային հանրությունն իրենց աջակցի:

Իհարկե, ԽՍՀՄ-ին չէր կարող բավարարել Թուրքիայի պատասխանը, քանի որ ներկայացված պահանջների կարևոր կետերում՝ նեղուցների համատեղ պաշտպանության ու նոր կանոնակարգի վերաբերյալ ապագա խորհրդաժողովի մասնակից երկրների հարցերում, հստակորեն նկատելի էին տարածայնությունները: Մյուս կողմից՝ ԱՍՄ-ն, Անզլիան և

⁷² Նոյն տղում, էջ 13:

⁷³ Նոյն տղում, էջ 10:

⁷⁴ Նոյն տղում, էջ 11:

Թուրքիան համաձայն էին նեղուցներով ռազմանավերի անցման կանոնակարգի փոփխմանը՝ հօգուտ սևծովյան պետությունների: Չնայած դրան՝ Սոսկվան չեր պատրաստվում նահանջել իր ներկայացրած պահանջներից, իսկ Անկարան՝ սևծովյան նեղուցներում ամրագրված իր դիրքերը զիջել ԽՍՀՄ-ին: Ամերիկյան և անգլիական փաստաթղթերը վկայում են, որ Թուրքիայի վերնախավում նույնիսկ խոսում էին ԽՍՀՄ-ի դեմ ռազմական գործողություններ սկսելու մասին: Սեպտեմբերի 9-ին արտգործնախարար Սարգս նեղ շրջանակում ասել է, որ Թուրքիան պատրաստ է հարձակվել ԽՍՀՄ-ի վրա՝ չնայած վստահ է, որ դրա անհրաժեշտությունը չի լինելու: Նա ակնարկել է, թե սևծովյան նեղուցներում համատեղ հանգրվաններ ստեղծելու և դրանք միասին կառավարելու ԽՍՀՄ-ի առաջարկն անընդունելի է, քանզի հետո թուրքերի վզին կփաթաթվեն այլ պայմաններ են⁷⁵:

Խորհրդային կառավարությունը սևծովյան նեղուցներին վերաբերող երկրորդ նոտան Թուրքիային հղել է 1946 թ. սեպտեմբերի 24-ին⁷⁶: Թուրքական մամուլը սեպտեմբերի 28-ին է միայն անդրադարձել այս փաստաթղթին: Իսկ սեպտեմբերի 29-ին արդեն թուրքական բոլոր թերթերը հրապարակել են նոր նոտայի բովանդակությունը⁷⁷:

Փաստաթղթում Անկարան կրկին մեղադրվում էր Սոնտրոյի համաձայնագրի խախտման, նեղուցներով ֆաշիստական բլոկի երկրների նավերի անցումը թույլատրելու մեջ, քացի այդ՝ չեին ընդունվում այդ հարցի հետ կապված թուրքական կառավարության քացատրությունները: Նոտայում նշվում էր, որ իրականությանը չեն համապատասխանում

⁷⁵ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 321.

⁷⁶ Внешняя политика СССР, т. VI, с. 664.

⁷⁷ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Օբзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Первые комментарии новой ноты Советского Союза о проливах, с. 15.

թուրքական կողմի այն պնդումները, թե, իբր, նեղուցներով թշնամական նավերի անցումը սպառնալիքի տակ չեր դնում ԽՍՀՄ-ի անվտանգությունը, թե Թուրքիան իրեն լիովին արդարացրել է նեղուցների պահակի դերում, թե նրա շնորհիվ առանցքի երկրները չեն հանդգնել խախտելու նեղուցների կանոնակարգը: Հարց էր տրվում՝ այդ դեպքում ինչո՞ւ էր պատերազմի տարիներին խորհրդային գլխավոր շտաբը սևծովյան շրջանի պաշտպանության նպատակով հարկադրված ռազմական գործողությունների գլխավոր ուղղությունից հանել զգալի քանակությամբ զինված ուժեր: Խորհրդային կողմի պնդմամբ՝ դա վկայում է, որ Սոնտրոյի համաձայնագիրը չի համապատասխանում սևծովյան երկրների անվտանգության շահերին՝ մեկ անգամ ել առաջարկելով նեղուցներով անցուղարձի նոր ռեժիմը համաձայնեցնել ինչպես Թուրքիայի, այնպես ել հիշյալ երկրների հետ: Խորհրդային Սիությունը հիշեցնում էր, որ Սև ծովը փակ ծով է, ըստ այդմ՝ նեղուցները ծովային միակ ճանապարհն են սևծովյան պետությունների համար: Ուստի, ԽՍՀՄ-ի և մյուս երկրների կենսական շահերից է բխում, որ Խորհրդային Սիությունը ևս անմիջականորեն մասնակցի նեղուցների պաշտպանությանը: Նոտայում նշվում էր, որ ԽՍՀՄ-ի հետ համատեղ նեղուցների պաշտպանությունից Թուրքիայի հրաժարվելը սևծովյան տերություններին գրկում է տարածաշրջանում պատշաճ մակարդակի անվտանգություն ապահովելու և երաշխավորելու հնարավորությունից: Սոսկվան կողմ էր նեղուցների հարցի քննարկման նպատակով խորհրդաժողով հրավիրելուն⁷⁸:

Թուրք հեղինակների գնահատմամբ՝ ԽՍՀՄ-ի ներկայացրած այս երկրորդ փաստաթուղթը չեր տարրերվում առաջինից և կրկին վերջնագիր էր հիշեցնում: Պատմաբան Թ. Ունալի կարծիքով՝ խորհրդային կողմի այս երկու նոտաները

⁷⁸ Внешняя политика СССР, т. VI, с. 664–670.

վկայում են, որ նեղուցների հարցում ԽՍՀՄ-ը վերադարձել է ցարիզմի քաղաքականությանը և, իբր, դա է պատճառը, որ Թուրքիան խզել է իր հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ թերվելով դեպի ժողովրդավարական աշխարհը⁷⁹: Թուրքական մամուլը համամիտ էր այս կարծիքի հետ: Եթե ուսումնասիրում ենք այդ օրերի թերթերը, ապա ակնհայտ է դատնում, որ դրանցում տպագրված հոդվածների բովանդակությունն ամեննին չէր տարբերվում օգոստոսի 7-ի նոտայից հետո եղած հրապարակումներից: Խորհրդային երկրորդ նոտան կրկին դիտարկվում էր որպես նոր ապացուց Խորհրդային Միության նվաճողական քաղաքականության՝ վստահեցնելով, որ ԽՍՀՄ-ի միակ նպատակն է «բազաներ ստանալ նեղուցներում, նման կերպ գրավել նեղուցներն ու Ստամբուլը և ճանապարհ հարթել դեպի Միջերկրական ծով»⁸⁰: Մեծ ուշադրություն էր հատկացվում Խորհրդային Միության այն առաջարկին, որ նեղուցների ռեժիմը պետք է կարգավորվի սեծովյան պետությունների կողմից: Թուրք լրագրողներ էսմերը, Նիխատ Էրիմը և Սադակն իրենց հոդվածներում պնդում էին, թե սեծովյան նեղուցներում ևս պետք է գործի ռեժիմի այն նույն համակարգը, ինչ բոլոր ծովերում է, քանի որ Սև ծովը «բաց ծով» է, այլ ոչ թե «փակ»: Լրագրողները իրենց այս տեսակետը հիմնավորում էին այն փաստով, որ սեծովյան պետությունները ՍՍԿ-ի անդամ են և, ըստ այդմ, պետք է հաշվի նստել վերոհիշյալ կազմակերպության մեջ մտնող բոլոր երկրների հետ: Հատկապես շեշտվում էր, որ Ֆրանսիայի և Անգլիայի համար նեղուցները միշտ ել կենսական նշանակություն են ունեցել: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա նրան ևս պետք է տալ այն նույն իրավունքները, ինչ սեծովյան պե-

⁷⁹ Ünal T., 1700 den 1958 e Kadar Türk..., s. 291.

⁸⁰ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Обзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Первые комментарии новой ноты Советского Союза о проливах, с. 17.

սովորյունների համար էր նախանշված: Ըստ այդմ՝ Սաղակը, օրինակ, հանգել է այն եզրակացության, որ եթե Թուրքիան ցանկանա էլ, չի կարող համաձայնվել ԽՍՀՄ-ի այս առաջարկի հետ, քանի որ չի ստացել ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համաձայնությունը⁸¹: Զարկ է նշել, որ թե՛ իշխանամետ, թե՛ ընդդիմադիր թերթերում խնդրու առարկա թեմայով հրապարակված նյութերի բովանդակությունը չի փոխվել, ավելին, ընդդիմադիր կողմը նույնիսկ պնդում էր, թե արտաքին քաղաքականության, հատկապես նեղուցների հարցում թուրքերը չեն կարող ունենալ տարածայնություն կամ էլ տարբեր տեսակետներ: Այսպես, «Բաշկենտ» պարբերականի «Բ՞նչ են պահանջում ոռուսները» նյութում կարդում ենք. «Արտաքին վտանգի դեպքում թշնամին իր առջև կտեսնի մեկ կուսակցություն՝ թուրքական զինվորի»⁸²: Այսինքն՝ այս հարցում քաղաքական բոլոր ուժերը համակարծիք էին և պատրաստակամ համատեղ պայքարել արտաքին թշնամու՝ ԽՍՀՄ-ի դեմ:

ԱՄՆ և Մեծ Բրիտանիան սեծովյան նեղուցներին վերաբերող խորհրդային երկրորդ նոտային կրկին առաջինն են արձագանքել: Այսպես, Անկարայից Վաշինգտոն ուղարկված մի տեղեկատվության մեջ նշվել է, որ Խորհրդային Միությունը «հանգրվանների վրա չի կանգնել, միայն համատեղ պաշտպանությանն է անդրադարձել»: Միաժամանակ ընդգծվել է, որ Սոսկվան Անկարային առաջարկել է հանդիպել, սակայն թուրքական կողմը նախընտրում է մինչ այդ տեսակցել ԱՄՆ-ի ու Անգլիայի հետ⁸³: Հոկտեմբերի 5-ին դեռ Փարիզում գտնվող ԱՄՆ-ի պետքարտուղար Բյորնսին Վաշինգտոնից հեռագիր է ուղարկվում, որում նրան հայտնում

⁸¹ Նոյն տեղում, էջ 18-19:

⁸² ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Օբзор турецկой прессы, սентябрь-октябрь, 1946, Что требуют русские?, «Башкент», с. 19.

⁸³ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 321.

են,թե «ԱՄՆ-ի օգոստոսի 19-ի տեսակետուն անփոփոխ է: Պոտսդամում երեք Մեծ տերությունների կողմից ընդունվել է որոշում նեղուցների և Մոնտրոյի համաձայնագրի հետ կապված»⁸⁴: Հեռագրի վերջում ասվում է, որ նեղուցների պաշտպանությունը Թուրքիայի պարտականությունն է, իսկ նեղուցներին սպառնացող վտանգի դեպքում խնդիրը պետք է հանձնվի ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հայեցողությանը⁸⁵: Բրիտանական «Օբսերվեր» թերթի գնահատմամբ էլ՝ «Խորհրդային նոտան մի ծայրից մյուսը խմբագրված է կծու, և երբեմն սպառնալից բառերով: Մեծ Բրիտանիան հաստատապես որոշել է մնալ իր նախկին տեսակետին, որը կիսում է նաև Միացյալ Նահանգները: Ըստ այդմ՝ նեղուցների խնդիրը չի կարող լուծվել միայն Ռուսաստանի և Թուրքիայի միջև և որ դրա կարգավորմանը պետք է անպայման մասնակցեն այն բոլոր երկրները, որոնք ստորագրել են Մոնտրոյի համաձայնագրը, բացառությամբ Հապոնիայի, որին պետք է փոխարինի Ամերիկան»⁸⁶: Այլ կերպ ասած՝ դա նշանակում էր, որ Անծովյան նեղուցների խնդրում փոփոխություն չի սպասվելու:

1946 թ. հոկտեմբերին 9-ին Վաշինգտոնի պատասխան նոտան ԽՍՀՄ-ին՝ չեղ տարբերվում նախորդից և կրկին հաստատում էր, որ ԱՄՆ-ն հետազոտում ևս առաջադրելու է այն նույն դրույթները, որոնք շարադրված էին օգոստոսի 19-ին խորհրդային կառավարությանն ուղղած իր նոտայում: Մասնավորապես, ամերիկյան կողմը կիսում էր թուրքերի այն տեսակետը, որ նեղուցների խնդիրը «վերաբերում է ոչ միայն Անծովյան տերություններին, այլև մյուս պետություններին, ներառյալ և ԱՄՆ-ին»: Ըստ այդմ՝ Թուրքիայի կառավարությունն այսուհետ էլ պետք է պատասխանատու լինի նեղուցների պաշտպանության համար, իսկ եթե դրանք դառնան հարձակման կամ ազրեսորի սպառնալիքի օբյեկտ, ապա այդ

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Коккин Н., СССР, Англия, США и «Турецкий кризис» ..., с. 67.

⁸⁶ «The Observer» (London), 27. IX. 1946.

հարցը պետք է դառնա ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի վարույթի տակ գտնվող գործ: Բացի այդ, ԱՍՆ-ն հայտարարում էր, որ գումարվելիք խորհրդաժողովում կարծիքների փոխանակմանը կարող են մասնակցել շահագրգիր բոլոր կողմերը⁸⁷: Նոտայի հանձնումից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 11-ին, ԱՍՆ-ում Թուրքիայի դեսպանն այս փաստաթղթի առիթով ամերիկյան կողմին իր կառավարության անունից շնորհակալություն է հայտնել⁸⁸:

Վաշինգտոնի օրինակին հետևում էր նաև պաշտոնական Լոնդոնը: Նեղուցների հարցի վերաբերյալ անզիհական կառավարության դիրքորոշումը՝ կապված ԽՍՀՄ-ի երկրորդ նոտայի հետ, արտահայտված էր Խորհրդային Միությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Ս. Ջեֆերսոնի՝ պաշտոնական Մուկվային ուղղած հոկտեմբերի 9-ի նամակում: Բրիտանական կողմը տեղեկացնում էր, որ Պոտսդամի խորհրդաժողովով նախատեսված երեք պետությունների և Թուրքիայի կառավարությունների միջև կարծիքների փոխանակման փուլը՝ նոտաների փոխանակման ճանապարհով, ավարտված է: Դեսպանը գրել է. «Իմ կառավարությունը նպատակահարմար և անհրաժեշտ չի համարում հիշյալ խնդրի շուրջ ուղղակի նամակագրության շարունակումը»: Նամակում նշվում է, որ Լոնդոնը պատրաստ է մասնակցել ՍԱԿ-ի կողմից կազմակերպվող խորհրդաժողովին⁸⁹:

Հոկտեմբերի 10-ին թուրքական մամուլը ոգևորվածությամբ քննարկել է ԱՍՆ-ի և Մեծ Բրիտանիայի նոտաները՝ նկատելով, որ դրանք հեշտացնում են իրենց կառավարության գործը⁹⁰: Թուրքիան, սովորության համաձայն, խորհրդային

⁸⁷ Armaoğlu F., Belgelerle Türk-Amerikan ..., s. 150–151.

⁸⁸ Arcayürek C., Şeytan Üçgeninde..., s. 322.

⁸⁹ Caroe O., Soviet Empier, The Turks ..., p. 118.

⁹⁰ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Обзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, с. 4.

նոտային պատասխանել է վերջինը: Պարզելով ԱՄՆ-ի և Անգլիայի տեսակետը՝ Անկարայի կառավարությունն առանց տատանվելու կարող էր հանգիստ մերժել խորհրդային առաջարկները: Իսկ մինչ պաշտոնական նոտայի հրապարակումը, այս հարցի վերաբերյալ խոսել է Թուրքիայի վարչապետ Ռեշեփ Փեկերը: Բրիտանական «Դեյլի Թելեգրաֆ»-ին տվյալ հարցազրույցում նա ասել է, թե նեղուցների հարցում Թուրքիայի դիրքորոշումն անփոփոխ է, քանի որ ԽՍՀՄ-ի առաջարկած IV և V կետերը հակասում են Սոնտրոյի համաձայնագրին ու վտանգում Թուրքիայի ինքնավարությունը: Ավելին, վարչապետը մի կողմից անհմաստ է համարել Սոսկվայի հետ ցանկացած բանակցություն, մյուս կողմից ել, հակասելով ինքն իրեն, հույս է հայտնել, որ խորհրդային կառավարությունը կհամաձայնվի միջազգային վեհաժողով հրավիրելու ԱՄՆ-ի առաջարկին: Ըստ նրա՝ Անկարան շահազգրոված է Սոնտրոյի համաձայնագրի իիմնական դրույթների պահպանման գործում: Հարցազրույցի վերջում Ռ. Փեքերը ԽՍՀՄ-ին մեղադրել է տնտեսական ճգնաժամի մեջ իր երկրին ներքաշելու համար՝ հայտարարելով, թե հարևան երկրի սպառնալիքները ստիպում են Թուրքիայի կառավարությանն ունեցած վերջին կոպեկը ներդնել ոչ թե տնտեսության, այլ բանակի ամրապնդման մեջ⁹¹:

Վարչապետի այս հարցազրույցից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 18-ին, Անկարան Սոսկվային հղեց իր նոտան, որտեղ կրկին հերքում էր Սոնտրոյի համաձայնագրի խախտման և նեղուցներով «թշնամական նավերի» անցման վերաբերյալ խորհրդային կողմի բոլոր մեղադրանքները: Թուրքիան ընդունում էր սեծովյան պետությունների շահերը պաշտպանելու նպատակով Սոնտրոյի համաձայնագիրը վերանայելու, հատկապես նեղուցներով անցուղարձի և դրանց վերահսկության պայմանները, ինչպես նաև համաձայնագրի հավել-

⁹¹ «The Daily Telegraf» (London), 13. X. 1946.

ված 2-ը փոփոխելու անհրաժեշտությունը: Առաջարկվում էր համաձայնագրի վերահսկումը հանձնել ՍՍԿ-ին, Ճապոնիայի փոխարեն դրանում ներգրավել ԱՄՆ-ին: Նոտայում նաև նշվում էր, որ Թուրքիան ոչ միայն սեծովյան, այլև միշերկրածովյան տերություն է, ուստի ապագա հանդիպման մասնակիցների կազմը չի կարող սահմանափակվել սեծովյան երկրներով, իսկ նեղուցները համատեղ պաշտպանելու ԽՍՀՄ-ի առաջարկի հարցում Թուրքիայի համաձայնությունը կնշանակեր սեփական ինքնիշխանության կիսում օտար տերության հետ, ինչին պատրաստ չեր: Թուրքերը պատրաստակամություն էին հայտնում քննարկելու Մոնտրոյի համաձայնագիրը վերանայելու նպատակով ՍՍԿ-ում խորհրդաժողով հրավիրելու հարցը⁹²:

Այսպիսով, Խորհրդային Միությանն ուղղված Թուրքիայի պատասխան նոտայով կարելի է ավարտված համարել սեծովյան նեղուցներով ելումուտի հարցի շուրջ քննարկումների նաև երկրորդ փուլը: Այն ևս անարդյունք էր. կողմերն այդպես էլ համաձայնության չեկան:

Սեծովյան նեղուցների հարցի շուրջ հետազայում ևս փոփոխություններ չարձանագրվեցին. Մոսկվան և Անկարան շարունակում էին պնդել իրենց տեսակետները: ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարարությունը Թուրքիային հղած 1946թ. Ինկտեմբերի 26-ի իր պատասխան նամակում նշում էր, որ խորհրդային կառավարությունը համաձայն չէ այն դիրքորոշմանը, թե Պոտսդամի վեհաժողովի որոշմամբ երեք՝ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կառավարություններից յուրաքանչյուրի ու Թուրքիայի միջև նախատեսված բանակցությունները հարկավոր է ավարտված համարել: Մոսկվայի գնահատմամբ՝ նաև վաղ է քննարկել նեղուցների նոր կանոնակարգի հաստատման նպատակով խորհրդաժողով հրավիրե-

⁹² Vali Ferenc A., The Turkish Straits ..., pp. 278–297.

լու հարցը⁹³: Նկատենք, որ այն այդպէս էլ չհրավիրվեց, չնայած խնդիրը դեռ շարունակում էր մնալ օրակարգում:

ԱՄՆ-ու ու Մեծ Բրիտանիան զգուշանում էին, որ խորհրդային այս նոտային կիաջորդեն Թուրքիայի դեմ Կարմիր բանակի ռազմական գործողությունները⁹⁴: Համեմատելով Մուսկ-Վայի քայլերը Հունաստանի իրավիճակի սրման հետ՝ արևմտյան վերլուծաբանները եկել էին այն եզրակացության, թե ԽՍՀՄ-ը պատրաստվում է հարձակման անցնել Բալկանյան, Արևելյան Միջերկրածովյային և Մերձավոր Արևելքի ուղղություններով: Դեռևս 1946 թ. գարնանը և հատկապես աշնանը ամերիկյան ու բրիտանական հետախուզական ծառայությունները տեղեկացնում էին, որ Ռումինիայի, Բուլղարիայի և Խորհրդային Անդրկովկասի սահմանային շրջաններում նկատվում է խորհրդային բանակի կենտրոնացում: Ըստ որոշ աղյուրների՝ Ռումինիայում բանակավորվել էր 600000, Բուլղարիայում՝ 235000 զինվոր⁹⁵, խորհրդա-թուրքական սահմանի մոտ էլ ԽՍՀՄ-ը տեղակայել էր մոտ 30 դիվիզիա⁹⁶: Արևմտյան հեղինակների ուշադրությունից չի վրիպել նաև այն փաստը, որ օգոստոսին Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով ԽՍՀՄ-ը սևծովյան և կովկասյան տարածաշրջանում սկսել է զորավարժություններ, ինչը, խսուն վկայությունն էր, որ Ստալինը պատերազմի նախապատրաստական

⁹³ Архив внешней политики Российской Федерации (АВП РФ), Черноморские проливы. Сборник документов 1917–1946 гг., М., 1947, с. 247.

⁹⁴ Данилов В., Турция после Второй мировой ..., с. 56; Rapoport L., Stalin's War Against ..., р. 149.

⁹⁵ Российско-турецкие отношения: история ..., с. 73.

⁹⁶ Багиров А., «Курдский проект» Иосифа Сталина. В конце 1945 года СССР был в одном шаге от войны с Турцией. – Аналитический интернет-журнал РПМонитор, http://www.rpmonitor.ru/ru/detail_m.php?ID=6605, 2007.

աշխատանքներ էր տանում⁹⁷: Շուտով, սակայն, իրավիճակը փոխվել է. Անկարայի և Սոսկվայի ամերիկյան դիվանագիտական շրջանակները Սպիտակ տանը տեղեկացրել են, որ ԽՍՀՄ-ը չի պատրաստվում քայլեր ձեռնարկել Թուրքիայի դեմ: Դա հիմնականում պայմանավորված էր այս հարցում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ցուցաբերած պահվածքից. Խորհրդային կառավարությունը չէր ցանկանում հակամարտության մեջ մտնել իր նախկին դաշնակիցների հետ: Ամերիկյան և բրիտանական զաղտնի ծառայությունները հոկտեմբերին արդեն գրանցել են, թե Թուրքիայի հետ սահմանամերձ շրջաններում ԽՍՀՄ-ը նվազեցրել է ռազմական ակտիվությունը⁹⁸:

Խորհրդային կառավարությունը 1946 թ. հետո այլևս չի բարձրացրել նեղուցների ռեժիմի վերանայման հարցը, ի տարբերություն թուրքական կողմի, որը երբեք բաց չի թողել հարմար պահը անդրադառնալու այս խնդրին՝ ԽՍՀՄ-ին մեղադրելով ծավալապաշտության մեջ: Մյուս կողմից է՝ Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուն 1946 թ. նոյեմբերի 1-ին մեջլիսում ունեցած իր ելույթում հայտարարել էր, որ ցանկանում է բարիդրացիական հարաբերություններ հաստատել Խորհրդային Միության հետ⁹⁹: Այս հայտարարությունը, սակայն, այդպես էլ իրականություն չի դարձել, քանի որ Անկարան շարունակել է վարել հակախորհրդային քաղաքականություն: Թուրք պատմաբան Թ. Աթայովի գնահատմամբ՝ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ 1947–1948 թթ. Թուրքիայի ու ԱՄՆ-ի միջև ստորագրվել են երկու կարևոր համաձայնագիր, ինչի արդյունքում Անկարան կախվածութ-

⁹⁷ Lederer I. and Vucinich W., The Soviet Union and the Middle East. The Post World War II Era, Stanford, 1974, p. 28.

⁹⁸ Hostler Ch., Turkism and ..., p. 71.

⁹⁹ Öztürk K., Cumhurbaşkanlarının Türkiye ..., s. 387.

յան մեջ է հայտնվել Վաշինգտոնից¹⁰⁰: Նկատենք, որ ԽՍՀՄ-ը Անկարայից ունեցած իր հավակնություններից պաշտոնապես հրաժարվել է 1953 թ. մայիսի 30-ին:

¹⁰⁰ Атаёв Т., США, НАТО ..., с. 204–205.

ԱՍՓՈՓՈՒՄ

Երկրորդ աշխարհամարտի ավարտին, երբ ակնհայտ էր Խորհրդային Միության և դաշնակից երկրների հաղթանակը, խորհրդային կառավարությունը Թուրքիայի նկատմամբ որդեգրեց ճնշում զործադրելու քաղաքականություն՝ սկիզբ դնելով «նյարդերի պատերազմին»: Դրա առիթը հանդիսացավ պատերազմի տարիներին «չեզորության» քողի տակ Թուրքիայի վարած հակախորհրդային քաղաքականությունը: Եվ, ահա, 1945 թ. մարտին ԽՍՀՄ-ը, ելնելով միջազգային նոր իրադրությունից, հայտարարեց 1925 թ. խորհրդա-թուրքական բարեկամության և չեզորության պայմանագրի չեղյալ հայտարարելու մասին: Իսկ հունիսին Սոսկվայում ընթացած խորհրդա-թուրքական բանակցությունների ընթացքում, երբ թուրքական կողմն առաջարկեց կնքել դաշնակցային նոր պայմանագիր, ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովը ներկայացրեց իրենց պահանջները, այն է՝ սեծովյան նեղուցների՝ Բուֆորի և Դարդանելի վերահսկման ու հայկական տարածքների (Կարսի ու Արդահանի) վերադարձման հարցերը: Պատերազմում հաղթանակած ԽՍՀՄ-ը 1945 թ. արդեն վերադարձել էր ցարական Ռուսաստանին պատկանող, բայց հետազայում կորցրած տարածքների մի մասը և բնական է, որ առաջ էր եկել նաև Կարսի ու Արդահանի հարցը: Տարածքներ, որոնք 1878 թվականից Ռուսաստանի կազմում էին, սակայն Սոսկվայի ու Կարսի 1921 թ. պայմանագրերով անցել էին Թուրքիային: Ինչ վերաբերում է սեծովյան նեղուցների խնդրին, ապա ԽՍՀՄ-ը այս կերպ իրականացնում էր «տարծովեր» դուրս գալու ռուսական դարավոր երազանքը:

Նկատենք, սակայն, որ ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջների հետ կապված երկու երկրների միջև պաշտոնական բանակցություններ չեն ընթացել. հունիսի 7-ին և 18-ին Սոսկվայում ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Սոլոտովի և Թուրքիայի դեսպան Ս. Սարպերի միջև կայացած հանդիպումներն առաջինը ու վերջինը են եղել: Սոսկվա-Անկարա երկխոսությունը հիմնականում ընթացել է Լոնդոնի և Վաշինգտոնի միջոցնով:

Թե՛ ԽՍՀՄ-ը և թե՛ Թուրքիան նեղուցների խնդիրը դիտարկում էին տարբեր տեսանկյուններից: Խորհրդային Սիությունը, հանդիսանալով Ռուսական կայսրության աշխարհաքաղաքական ավանդույթների պաշտոնական գաղափարախոսության իրավահաջորդը, որդեգրել էր այն բանաձևը, թե «Սև ծովը փակ խորհրդա-թուրքական լիճ է»: Դա, ըստ էության, նշանակում է, որ Խորհրդային Սիությունը և Թուրքիան համատեղ պետք է վերահսկեն նեղուցները: Իսկ դա հնարավոր էր միայն 1936 թ. Սոնտրոյի համաձայնագրի վերանայման դեպքում:

Ինչ վերաբերում էր Թուրքիային, ապա նա Սոնտրոյի համաձայնագիրը նախևառաջ դիտարկում էր որպես իր ազգային անվտանգության գոտի: Այս տեսանկայունից Սև ծովի անվտանգությունն անցնում էր հետին պլան՝ առաջնային պլան մղելով Մեծ տերությունների միջև ընթացող իշխանության համար պայքարը: Դա էլ բացառում էր նեղուցների խորհրդա-թուրքական համատեղ վերահսկաման հնարավորությունը: Բացի այդ, նեղուցների համատեղ վերահսկաման դեպքում Թուրքիան կորցնելու էր իր ինքնիշխանության որոշ մասը: Դա է պատճառը, որ 1945-1946 թթ. Սոնտրոյի համաձայնագրի վերանայման Խորհրդային պահանջը, փաստորեն, մերժվեց Թուրքիայի և Արևմուտքի կողմից:

Արդյունքում՝ սևծովյան նեղուցների հարցը դուրս եկավ Սոսկվայի և Անկարայի բանակցային գործընթացից ու դար-

ձավ միջազգային քննարկման թեմա: Պոտսդամում խորհրդաժողովում ընդունված որոշման համաձայն՝ 1946 թ. օգոստոսի 7-ին և սեպտեմբերի 24-ին Խորհրդային Միությունը Թուրքիային է փոխանցել նեղուցների ռեժիմի վերաբերյալ իր նոտաները: Անկարայից շուտ՝ օգոստոսի 19-ին և հոկտեմբերի 9-ին, Մոսկվային իր նոտաներն է հանձնել պաշտոնական Վաշինգտոնը: Թուրքիայի կառավարությունը պատասխան-ներով հանդես է եկել օգոստոսի 22-ին և հոկտեմբերի 18-ին: Իր նոտաներում թուրքական կողմն արտահայտում էր ամերիկյան դիրքորոշումը, ինչը խոսում է այն մասին, որ նոտաների փոխանակումն հիմնականում ընթացել է ոչ թե ԽՍՀՄ-ի և Թուրքիայի, այլ ԽՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի միջև:

Ի տարբերություն սևծովյան նեղուցների խնդրի՝ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջատիրության վերաբերյալ Թուրքիային պաշտոնական փաստաթուղթ երբեք չի ներկայացրել, սակայն հարցը քննարկվել է այդ տարիներին Մեծ տերությունների դեկավարների ֆորմալ և ոչ ֆորմալ բոլոր հանդիպումների ընթացքում: Ավելին, խնդրի լուծման գործում Մոսկվան մեծ տեղ է հատկացրել հայկական եկեղեցուն և Սփյուռքին: Արդյունքում՝ ԽՍՀՄ-ն ակտիվացրել է շփումները վերջիններիս հետ: Դա ընդամենք բավականին հեռու գնացող ծրագրի մի մասն էր, այս կերպ Կրեմլը եկեղեցուն և սփյուռքիայերին ծառայեցնում էր ի նպաստ սեփական շահերի:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային, ապա վերջիններս 1945 թ. սկզբին դիտորդի դերում էին և նախընտրում էին միջամտել միայն սևծովյան նեղուցների հարցում: Թուրքական կողմը նույնիսկ ԱՄՆ-ին մեղադրել է ԽՍՀՄ-ի տարածքային պահանջատիրության հարցում անտարբերություն ցուցաբերելու մեջ: Դաշնակից պետությունները, սահմանազատելով տարածքային պահանջատիրության հարցը նեղուցների խնդրից, առաջնությունը տալիս էին վերջինիս: 1946 թ. ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը փոխ-

վում է, ինչն էլ ավելի է ամրապնդում Անկարայի դիրքերը: Եթե պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը, Սեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն համագործակցում էին ու ֆաշիստական բլոկի երկրների դեմ պայքարում հանդես էին գալիս որպես դաշնակիցներ, ապա պատերազմից հետո դրությունն այլ էր. նախկին դաշնակիցները հայտնվել էին տարբեր ճամբարներում:

Ներկայացնելով, այդ տարիների միջազգային իրավիճակը պետք է նախ նշել, որ Գերմանիան, Ճապոնիան և Խուալիան հայտնվել էին պարտվողների ճամբարում և կորցրել իրենց նախկին ռազմաքաղաքական ազդեցությունը: Ինչ վերաբերում էր Ֆրանսիային, ապա Վերջինս չնայած դասվում էր աշխարհի հինգ մեծ պետությունների շարքին, սակայն դա ընդամենը ձևական բնույթ էր կրում: Տնտեսական ճգնաժամի խորացման և զաղութների մեծ մասի կորստի հետևանքով՝ զգալիորեն թուլացել էր նաև Սեծ Բրիտանիան: Նա այլև այն հզոր տերությունը չէր, ինչպիսին էր մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Ավելին՝ միջազգային ասպարեզում իր դիրքերը զիշել էր ԱՄՆ-ին, որն էլ դարձել էր աշխարհի առաջատար ուժը: Պատերազմից հետո ԱՄՆ-ն տնտեսական և ռազմական առումով լիարժեք գերտերություն էր: Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպան Ա. Զարիմանն իր հիշողություններում գրում է, որ Ու. Չերչիլն անկեղծության պահին իրեն խոստովանել է. «Այժմ իշխանության կենտրոնը Վաշինգտոնում է»¹:

Միջազգային ասպարեզում իր դիրքերն ամրապնդել էր նաև ԽՍՀՄ-ը: Չնայած պատերազմում ունեցած ծանր կորուստներին՝ նա դարձավ Եվրասիական համաշխարհային գերտերություն, առանց որի գործուն մասնակցության չեր կարող իրականացվել համաշխարհային քաղաքականությունը:

¹ Abramson R., Spanning the Century: The life of W. Averill Harriman. 1891–1986, New York, 1992, p. 59.

Եվ եթե Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև զուգահեռներ ենք անցկացնում, ապա ԱՄՆ-ն, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, տնտեսական և ռազմական առումով ավելի քան հզոր էր: Նա ուներ ատոմային ռումբ, ինչը մեծ առավելություն էր տալիս նրան: Ըստ խորհրդային դիվանագետ Ա. Գրոմիկոյի (այդ տարիներին ԱՄՆ-ում ԽՍՀՄ-ի դեսպան, ավելի ուշ՝ ԽՍՀՄ-ի արտգործնախարար) հուշերի՝ խորհրդա-ամերիկյան հարաբերություններում լարվածությունը նկատվել է նախազահ Ֆ. Ռուզվելտի մահից անմիջապես հետո: Նա զրում է, որ 1945 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում կայացած խորհրդաժողովում դժվարությամբ է ճանաչել Հ. Տրումենին, մի մարդու, որը ոչ վաղ անցյալում սիրալիության խորհրդանիշ էր: Գրոմիկոյի գնահատմամբ՝ նրա պահվածքը պայմանավորված էր ամերիկյան ատոմային ռումբի առկայությամբ, ինչը, ԱՄՆ-ի նախազահի կարծիքով, Վաշինգտոնին թույլ էր տալու իր կամքը թելադրել Մուկվային²: 1945 թ. օգոստոսին Ճապոնիայի Ճեռուիմա և Նազասակի քաղաքների ատոմային ուժակոծումից հետո ի լուր աշխարհի Տրումենը հայտարարել է. «Մենք դուրս եկանք այս պատերազմից որպես աշխարհի ամենահզոր տերություն, թերևս, ամենահզորը մարդկության պատմության մեջ»³: Այդ տարիներին աշխարհի քարտեզի վրա գոյություն ունեցող 64 երկրներից 42-ի հետ Վաշինգտոնը ռազմական դաշինք էր կնքել, դրանց թվում էր նաև Թուրքիան:

Այն, որ ատոմային ռումբը որոշակի դեր խաղաց համաշխարհային քաղաքականության ուղենիշերի վրա, անհերետի է, սակայն փաստ է նաև այն, որ դա չստիպեց Մուկվային հրաժարվել իր աշխարհաքաղաքական ծրագրերից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհը քաժանվեց

² Громыко А., Лавров С., Лучше десять дней переговоров, чем один день войны, М., 2009, с. 38.

³ Truman H., Memories by Harry Truman ..., p 156.

երկու հակադիր քևեռների. Խորհրդային Միությունը գերիշխում էր Արևելյան Եվրոպայում, ԱՄՆ-ն՝ Արևմուտքում: Արդյունքում՝ 1946 թ. սկսված «սառը պատերազմը», նաև 1947 թ. «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» իրագործումը Թուրքիայում բացասական անդրադարձ ունեցան և՝ նեղուցների վերահսկման, և՝ հայկական տարածքների վերադարձման գործում:

Թուրքիան, ի դեմս ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, ձեռքբերելով դաշնակիցներ՝ հնարավորություն է ստացել ԽՍՀՄ-ի պահանջների հարցում լինել անզիջում, չընդունել նրա առաջարկներից և ոչ մեկը: Փոխարենը ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան Թուրքիայի տարածքում կառուցեցին իրենց ռազմական հանգրվանները և պարտավորվեցին պաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Մտեղծված պայմաններում ԽՍՀՄ-ը ստիպված էր որոշ ժամանակով սառեցնել թե՝ սեծովյան նեղուցների, և թե՝ սահմանի վերանայման իր ծրագրերը: Իսկ Ի. Ստալինի մահից հետո Սոսկվան պաշտոնապես հրաժարվեց Թուրքիային ներկայացրած պահանջներից:

ОТНОШЕНИЯ МЕЖДУ СССР И ТУРЦИЕЙ:
АРМЯНСКИЙ ВОПРОС, ПРОБЛЕМА
ЧЕРНОМОРСКИХ ПРОЛИВОВ И СОЮЗНЫЕ
ГОСУДАРСТВА (1945–1947 ГГ.)

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

Резюме

В феврале 1945 г. Турция формально объявила войну Германии, но боевых действий против нее не вела. С 1941 г. турецкая внешняя политика была явно прогерманской. Весь период Великой Отечественной войны Турция рассматривалась Москвой как потенциальный союзник рейха. За четыре дня до нападения Германии на СССР был подписан германотурецкий договор о дружбе. Угроза со стороны Турции стала еще более реальной летом 1942 г., когда германская армия стремительно приближалась к Сталинграду, угрожая отрезать Кавказ и Закавказье от остальной части СССР. Взаимоотношения СССР и Турции до предела обострил также пропуск Турцией через черноморские проливы германских и итальянских военно-морских сил в июне 1941 г. в Черное море, а в 1944 г., когда исход войны был уже более или менее ясен, — в обратном направлении.

В конце Второй мировой войны правительство СССР было полно решимости наказать южного соседа — Турцию. 19

марта 1945 г. Советский Союз денонсировал советско-турецкий договор о дружбе и нейтралитете 1925 г., а следом выдвинул на повестку дня проблему контроля над черноморскими проливами и вопрос о возврате Советской Армении Карса и Ардагана в послевоенный период, мотивировав этот шаг изменениями, произошедшими в ходе Второй мировой войны. В Анкаре это было расценено как предупреждение об ужесточении политики СССР по отношению к Турции. Самым страшным для турок стали территориальные претензии, касавшиеся Карса и Ардагана. Сталин официально заявил на Потсдамской конференции, что Турция должна вернуть Армении и Грузии их территории, захваченные в период военно-политической слабости Советской России. Речь шла, как минимум, о восстановлении российско-турецкой границы 1914 г. Москва, действуя осторожно, использовала тот факт, что после победы СССР над фашистской Германией среди армян, проживающих в Америке, Европе, на Ближнем и Среднем Востоке, возросла вера к разрешению Армянского вопроса и депатриацию их в Советскую Армению. В связи с этим в ноябре 1945 г. Политбюро ЦК ВКП(б) разрешило депатриацию зарубежных армян в Армению. Принятием этого решения СССР хотел продемонстрировать западным союзникам и всему миру твердость своей позиции в вопросе территориальных требований к Турции, утвердить в общественном сознании тезис, что эти территории необходимы для расселения депатриированных армян, поскольку территория Армянской ССР недостаточна, чтобы вместить всех желающих приехать. Иными словами, под видом восстановления исторической справедливости Сталин избрал для Турции наилучший способ наказания, в результате Советский Союз мог расширить свою территорию.

Правительство Турции со своей стороны отвергла все советские предложения и приступила к планомерной работе

